

Հ. Գ. Թ Ո Ւ Ր Ե Վ Ա Ն

ՍԱՐԳԱՐԱՊԱՏԻ
ՀԵՐԱՍԱՄԱՐՏԻ

“ՀԱՅԱՍՏԱՆ”

Հ. Գ. ԹՈՒՐՇՅԱՆ

ՍԱՐԴԱՐՎՊԱՏՔ
ՀԵՐՈՍԱՄԱՐՏՔ

324 682

“ՀԱՅԱՍՏԱՆ” ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1965

1917 թ. ձմռանը Կովկասյան ոտղմաճակատի քայլայման հետևանքով՝ թուրքական Հնարավոր արշավանքի հաջողությունը սպառնում էր ոչ միայն ունչացնել ոռւսական ռեզուլցիայի նվաճումները Անդրկովկասում, այլև ֆիդիկական մաճ բերել հայ ժողովրդին:

Ալեքսանդրապոլի անկումով հայկական բնօրրանը կարվեց Թիֆլիսից, մենակ, ինքն իրեն մնալով, ժողովրդական տարերային պատերազմ սկսեց թուրք օկուպանտների դեմ և բնական կամ արհեստական ամրություն չունեցող Սարդարապատի հարթավայրում ոչ միայն հերոսաբար կանգնեցրեց, այլև շախատից ու հո շարտեց թուրքական բանակը:

Ընթերցողի ուշագրությանը ներկայացվող այս աշխատության մեջ հեղինակը շարադրում է 1918 թվականին հայ ժողովրդի մշած այդ հերոսական ինքնապաշտպանության պատմությունը:

ТУРШЯН АРУТИОН ГЕВОРКОВИЧ
ГЕРОИЧЕСКОЕ СРАЖЕНИЕ
ПОД САРДАРАБАДОМ

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1965

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

2. Թուրշյանի ներկա ուսումնասիրության նյութը հայ ժողովրդի պատմության նշանակալից էջերից մեկն է՝ Սարդարապատի հերոսամարտը՝ վերապատկերված 1917—1918 թթ. Անդրկովկասում կատարված իրադարձությունների սերտ առնշությամբ։ Հեղինակը բնութագրում է Հոկտեմբերյան ռեզուլցիայից հետո Անդրկովկասում ստեղծված մենշևիկամուսավաթ-դաշնակցական բլոկի հակառակությունը քաղաքականությունը և այդ քաղաքականության հետևանքով երկրամասում սրված ազգայնական ներհակությունները։ Նա մերկացնում է այն իրողությունը, որ բուրժուա-կալվածատիրական այդ բլոկի գործունեությունը բացահայտ կամ շպարված պայքար էր Սովետական Ռուսաստանի և դեպի Սովետական Ռուսաստանը կողմնորոշված անդրկովկասյան ժողովուրդների ռեզուլցիոն ընդէղումների դեմ։ Նա նշում է, որ այդ ընդէղումների գլխավոր հանդիպանը մինչև 1918 թվականի կեսերը հանդիսանում էր Բաքվի բանվորների, զինվորների ու կարմիրնավատորմայինների սովետը և Բաքվի կոմունան։

Գրքում բերված փաստերը ցույց են տալիս, որ պայքարի մեջ մտնելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեզուլցիայի և անդրկովկասյան ժողովուրդների ռեզուլցիոն շարժման դեմ՝ բուրժուա-կալվածատիրական կուսակցությունների բլոկը չցանկացավ պահել ուղմաճակատը և, ազգայնական փոխադարձ անվտանգությամբ համակածած

վարանութ ու անողջամիտ քաղաքականությամբ նպաստեց թուրք-գեղմանական օկուլանուների ներխուժմանն Անդըրկովկաս:

Հիրավի, Բրեստ-Լիտովսկի պաշտանագրի մերժումը անդըրկովկասյան բլոկի կողմից, վերջինիս երես առ երես զրեց Գերմանիայի և Թուրքիայի հետ: Գերմանացիները և թուրքերը կարող էին ներխուժել Անդրկովկաս՝ արհամարժելով Բրեստում նախատեսված ուսութուրքական սահմանագիծը և, ի պատասխան սովետական կառավարության բողոքների, հայտարարել թե՝ «Մենք կվերցնենք այն, ինչ կկարողանանք վերցնել, մենք չենք խախուսմ Բրեստի հաշտությունը, որովհետեւ անդրկովկասյան բանակն այն չի ճանաշում, որովհետեւ Կովկասն անկախ է»¹:

Որչափ անդրկովկասյան բլոկի գործունեությունն ամբողջովին ուղղված էր Հոկտեմբերյան ռեվոլյուցիայի և նրան արձագանքող շարժումների դեմ, նրա մեջ մտնող կուսակցությունները իրապես ոչ միայն շարեցին իրենց ուժերը դեպի Անդրկովկաս շարժվող թուրք բանակի դեմ, այլև լայնորեն բացեցին նրա առաջ Անդրկովկասի դռները՝ Բաքուն գրավելու համար: «Այդ քաղաքականությունը վաղուց էր պատրաստվում, — ասում էր Ստ. Շահումյանը 1918 թ. հունիսի 7-ին Բաքվի սովետում իր ունեցած ելույթում: — Եվ իզուր չեր Սեյմում Օնիաշվիլին հայտարարում, որ ոռուսական օրինատացիան ունակցիոն է և որ պետք է ուրիշ օրինատացիա փնտրել, իսկ Զիսեիձեն պաշտպանեց այն հայտարարությունը, թե լավ է ընկնել Թուրքիայի, քան բոլշևիկների գիրկը»²:

Հարկ է նշել, որ Զիսեիձեից անկախ թուրքերի հովանակորությունը խնդրելու տրամադրությունը արտահայտել էին դաշնակցականները սկսած 1918 թվականից: Եվ եթե սկրզնապես այդ «տրամադրությունը» կարող էր լինել թուրքերի վստահությունը գրավելու դիվանագիտական ժեստ, հետագայում դա դառնալու էր հայ բուրժուազիայի և նրա դեկավար կու-

նակցության՝ դաշնակցության վարած քաղաքականության անխուսափելի հետևանքը, այդ կուսակցության բախտախնդիր գործունեության միակ «ուսեալիստական ուղեցուցյը»:

Կասկած չկա, որ բլոկի կուսակցություններին միավորող հիմնականում ունելլուցիոն Ռուսաստանին դիմակայիլու մտահոգությունն էր: Սակայն, Անդրկովկասում աճող ազգայնական հակամարտությունների մթնոլորտում բլոկի կուսակցությունների առաջ չէր գծագրվում արտաքին քաղաքականության միասնական վարքագիծ: 1918 թվականի սկզբներին, Անդրկովկասի և Թուրքիայի միջև ծագած պատերազմի պահին, աղբերշանական կալվածատերերի ու բուրժուազիայի շահները ներկայացնող մուսավաթը երկրամասի օկուպացումը թուրքական բանակի կողմից նախ և առաջ դիտում էր որպես Սովետական Ռուսաստանին դիմադրելու և Բաքվի պրոլետարիատին ընկածելու միակ հուսատու միջոցը: Նման հույսներ վրաց մենշևիկները կապում էին եթե ոչ թուրքերի, ապա նրանց դաշնակցցների՝ գերմանական իմպերիալիստների ուազմական միջամտության հետ և նրանց քաղաքականությունը մի պահ սպառնում էր գերմանական իմպերիալիստների գաղութ գրաձնել Վրաստանը:

Եթե հիմնականում հայ բուրժուազիայի սեփականատիրական դիրքերը Հոկտեմբերյան ռեվոլյուցիայից փրկելու մտայնությունն է, որ դաշնակցական դեկավարներին նետում էր մենշևիկա-մուսավաթական բլոկի գիրկը, ապա անդրկովկասյան ժողովուրդների շահների տեսակետից մենշևիկա-մուսավաթ-դաշնակցական բլոկի վարած քաղաքականության կատարյալ սնանկությամբ պիտի բացատրել այն խայտառակ «պատերազմը», որ վարեց 1918 թվականին այդ բլոկը Թուրքիայի դեմ՝ անընդհատ նահանջելով երդնկայի ուազմագծից մինչև Երևանի մատուցները: Այդ նահանջը անխուսափելի դարձավ Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի, ինչպես և Անդրկովկասում ստեղծված ազգային խորհուրդների գլուխ անցած բուրժուական-կալվածատիրական կուսակցությունների փոխադարձ անվնահության ու հակամարտության մըթնողութում: «Անդրկովկասի ներսում՝ ըստ աղջությունների

1 Վ. Ի. Անդրեյ, Երկեր, հ. 27, էջ 462:

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 275—276:

սահմանագծվելու քաղաքականությունը, ազգային տերիտորիականի վերաբերյալ վեճերը, ազգային գնդերի ստեղծումը և դրանով իսկ կովկասյան, մինչ այդ եղբայրական, բանակի ընտանիքի մեջ երկպառակություն մտցնելը, այս բոլորը, — գրում էր Ստ. Շահումյանը, — փոխանակ բոլոր ազգությունների դեմոկրատիայի միության հանուն ունուցիչի և սուցիալիզմի ընդհանուր մեծ գաղափարների, ստեղծեց ազգային մեկուսացման, թշնամանքի մթնոլորտ, և հող է պատրաստել Անդրկովկասում արդեն անխուսափելի ազգային պատերազմների համար¹:

Հ. Թուրշյանի գրում ուսումնասիրության նյութ է դարձել այն դիմադրությունը, որ ցույց տվեց հայ ժողովուրդը թուրքական բանակին 1918 թվականի մայիսի 22—26-ին տեղի ունեցած Սարդարապատի ճակատամարտում:

Գրի հեղինակը արձանագրում է այն իրողությունը, որ ըստ էության այդ ճակատամարտը 1918 թվականի թուրքանդրկովկասյան «պատերազմի» դրվագներից մեկը չէր, այլ ժողովրդա-պատագրական իսկական պատերազմ, որի շարժից ուժը թուրք ջարդարանների դեմ տարերայնորեն ուժք ելած հայ ժողովուրդն էր: Սարդարապատի ճակատամարտի այդ բնույթը պարզվում է մանավանդ շնորհիվ այն բանի, որ հեղինակը նրան հանդիպադրում է երգուումի, կարսի և Ալեքսանդրապոլի անկման պատմությանը: Միայն սպառազինված այդ բերդաքաղաքների կապիտուլացման տխուր հանգամանքների վերլուծությունն է, որ ընթերցողներին նախապատրաստում է Սարդարապատի հերոսական պաշտպանության առանձնահատկությունների նիշտ ընկալմանը:

Գրում առաջ է քաշված ու հիմնավորված գլխավոր այն դրույթը, որ Սարդարապատի ճակատամարտը օրյեկտիվորեն հանդիսանում էր թուրք ինտերվենտների դեմ 1918 թվականին Բաքվի կոմունայի ցույց տված դիմադրության մեջ հայ ժողովրդի ունեցած մասնակցության նախընթացը:

1 Ստ. Շահումյան, Ընտիր երկիր, Հայութնրատ, 1948, էջ 548:

Աշխատության մեջ լուսաբանված փաստերից ու իրադարձություններից իրոք դժվար չէ համոզվել, որ եթե ոչ իր սոցիալ-դասակարգային բովանդակությամբ ու նպատակամղումով, գեթ իր ուղղմական ու քաղաքական օրյեկտիվ նշանակությամբ, Սարդարապատի ճակատամարտը ընդառաջում էր և միազդովում ունուցիչոն այն պայքարի հետ, որ մեծ Հոկտեմբերի գրոշի տակ նույն այդ պահին արծարծում էր Բաքվի հերոսական կոմունան՝ կյանքի ու մահու կոփկ մզելով թուրքական բանակի հետև թաքնված անդրկովկասյան բլոկի հակառելուցուցիոն քաղաքականության դիմ: Փաստերի ցցուն տրամաբանությամբ ու համոզիլ լեզվով ակներեւ դարձնելով այն, ինչով Սարդարապատի ճակատամարտը պատմականորեն առնչված է ու հանգուցավորված Բաքվի պրոլետարիատի ունուցիչոն էպոփեայի հետ, հեղինակը անհերքելի է դարձնում այն իրողությունը, որ հանուն հայ ժողովրդի գոյատեսության ու ազատության, հերոսարար դիմադրելով թուրք ջարդարաններին, Սարդարապատի մարտիկները փաստորեն պատերազմում էին այն ուժերի դիմ, որոնք պատրաստվում էին հայ ժողովրդի կրծքավանդակի վրայով նետվել Անդրկովկաս՝ նորատակ ունենալով արյան մեջ խեղդել Բաքվի կոմունան, տիրանալով նաև Բաքվի նավթին, որի կարիքն օդի ու ջրի պես զգում էր թուրք-պերմանական կոռալիցիան:

Թուրշյանի ուսումնասիրությունը վերջ է դնում դաշնական գրչակների հերյուրած սնապարծ այն լեզենդին, թիբր 1918 թվականի մայիսի 28-ին Թիֆլիսում հոչակված Հայաստանի «անկախությունը» դաշնակցական գործիչների քաղաքական իմաստության, նրանց կազմակերպական շնորհների և ի վերջո նաև Սարդարապատի հաղթության դափնիով պատված նրանց ուղղմական սիրանքների հարազատ ծնունդն է: Թուրշյանի գիրքը կասկած չի թողնում, որ Սարդարապատում ուժքի ելած հայ ժողովուրդը զենք էր վերցրել թուրք ջարդարանների դեմ անդրկովկասյան բլոկի ու դաշնակության թիֆլիսի գեկավարների ունակցիոն քաղաքականությունից անկախ ու ըստ էության թուրքերի հետ հաշտության

բանակցություններ՝ վարելու ուղղությամբ նրանց և անդրկովկասյան բլոկի տարած քաղաքականության դեմ: Ընթերցողն ուշադրությանը հանձնվող սույն հետազոտությունը Սարդարապատում նվաճված հաղթության փառապատճեռ պոկում է դաշնակցության սույն ասպետների ճակատից և այն վերադարձնում իսկական տիրոջը՝ հայ ժողովրդին:

Թուրչյանի ուսումնասիրությունը ցույց է տալիս այն իրողությունը, որ Սարդարապատի ուղմանակատում կավում էին հայ ժողովրդի տարրեր խավերի ու հոսանքների պատկանող աշխարհազորայինները և արևմտահայ ազատագրական շարժմանը մասնակցած հին և նոր պարտիզանները: Հեղինակը նշում է, որ Սարդարապատի աշխարհազորայիններին միացել էին ոուսական բանակի հայկական զորամասեր, հայ, ոուս ու այլազգի սպաներ, որոնք և ստանձնել էին մարտի ընդհանուր ղեկավարությունը: Աշխարհազորայինների մեջ մտել էին նաև կոմունիստական ու սպարտակայան կազմակերպությունների շատ անդամներ: Նրանց մասնակցությունը պատահական չէր: Ռուսաստանի Ս. Դ. (թ) պարտիայի Կովկասյան երկրային կոմիտեն, աշքի առաջ ունենալով Կովկասի ժողովուրդներին գերմանա-թուրքական օկուպանտների կողմից սպառնացող վտանգը, Անդրկովկասի աշխատավորներին կոչ էր անում զենքը ձեռքներին դիմադրել օտարերկրյա զավթիչներին: Ընդսմին բոլշևիկները պարզաբանում էին աշխատավորությանը, որ միայն սովետական իշխանությունը կարող է նրանց փրկել օտարերկրյա զավթիչներից¹:

Սարդարապատի ուղմադաշտում տարրեր դասակարգերի ու հոսանքների, այդ թվում նաև դաշնակցական շարքային մարտիկները լցված էին այն գիտակցությամբ, որ խուժելով Արարատյան դաշտը՝ անդրկովկասյան բլոկի հակածողովը դական ու անհամերաշխ գործունեության պատճառով ուժ ստացած թուրք զարդարաբները Արևելյան Հայաստանում շարունակելու էին հայերի մասսայական զարդի այն քաղա-

քականությունը, որ իրագործել էին Արևմտյան Հայաստանում 1915 թվականին: Եվ հենց այս գիտակցությունն է, որ խորապես համակելով ու միավորելով Սարդարապատի հերոսամարտի մասնակիցներին, նրանց դիմադրության մղեց թուրքական ինտերվենտների դեմ:

Բաքվի կոմունարները շատ լավ էին գիտակցում Սարդարապատում, Ապարանում և Ղարաքիլսայում թուրքերի դեմ հայ ժողովրդի մղած մարտերի դրական նշանակությունը: Նրանք ուշի-ուշով հետևում էին այդ մասին ստացվող հաղորդագրություններին: «Քակինսկի ռաբուշ» թերթը զետեղեց Դիլիջանից մայիսի 26-ին հայ ժողովրդին ուղղված զենքերալ նազարեեկովի կոչը, ուր, հիշատակելով Ալեքսանդրապոլի գրավումը թուրքերի կողմից և հայ զորքի անկանոն նահանջը, ասված է «Մեր նենդամիտ թշնամուն մնում է մի բան՝ շարունակել հարձակումը հայ երկրի խորքը, հարկադրելով բնակչությանը պոկ զալ իր բնակավայրից և զրկել իր ունիցվածքից, մատնվելով սոսկալի շքավորության ու ստրկական նոր կախման մեջ ընկնել թուրքերից: Աստծու ողորմությամբ Երևանի քաջարի ջոկատը, որի դեմ թուրքերը, չնայած կնքված դինադադարին, հարձակման անցան, շերերաց ու ետ մղելով հակառակորդի գրոհը, հակահարձակման անցավ և երկօրյա մարտից հետո դեռ շպրտեց թուրքերին և ներկային հետապնդում է նրանց: Երևանի ջոկատի տարած հաղթությունը զինվորներին ոգևորեց: Ալեքսանդրապոլի ջոկատից կազմվեցին վաշտեր, գումարտակներ, գնդեր, որոնք արագորեն ետ դարձան՝ տարված մի մտքով և մի ցանկությամբ՝ հաղթել կամ մենոնել... Հայեր... եթե չեք կամենում, որ հայ ժողովուրդն ամբողջովին կրծանալի, թող որ ամենքը, ովքերը ընդունակ են զենք կրելու, ամեն մեկդ, ով զենք ունի և փամփուշտ, հնգօրյա ուտեստի պաշարով ելնի ժողովրդի պաշտպանության, մինչեւ որ այստեղից կկարողանանք կանոնակոր պարեն հասցնել զորքին²: Ինչպես պարզված է թուրչյանի գրքում, զենքերալ նազարեեկովը ընդհանուր ոչինչ շուներ տարերայնորեն պայքարի ելած ժողովրդական մաս-

¹ «Бакинский рабочий», 1918, № 109.

սաների հետ։ Այնուամենայնիվ, նրա ստորագրությամբ հայապարակված կոչը ցայտուն վկայություն է Սարդարապատի հերոսամարտի ժողովրդա-ազատագրական բնույթի մասին։

Հեղինակի գրքում նկարագրվում է շշմեցուցիչ այն պարտությունը, որ մայիսի 22—26-ին Սարդարապատի մարտերում հայ աշխարհազորայիններն ու նրանց միացած կանոնավոր զորախմբերը հասցրին թուրքական բանակին։ «Բակինսկի ռարոշի» թիրթի մեր հիշատակած համարում տպված է մայիսի 28-ին Ալագյազ կայարանից Թիֆլիսի Հայոց աղքային խորհրդին ուղղված հեռագիրն այն մասին, որ հայկական զորամասերից շարդ կրած և կրնկակոխ հետապնդվող թուրքերը խուճապահար փախչում են, որ դասալիք եղած հայ զինվորները իրենց զենքերով վերադառնում են զորամասերը և որ զորամասերում արտակարգ խանդավառություն է տիրում։

Սակայն, հետապնդելով նահանջող թշնամուն, Սարդարապատի հերոսները, դժբախտաբար, անկարող եղան օգտվել տարած հաղթությունից։ Իր կյանքի ու աղատության համար զենք առած և երևանի մատուցներից թուրքական զորքերը ետ շպրտած հայ ժողովուրդը թիկունքից ծանր հարված ստացավ դաշնակցական զեկավարներից։ 1918 թվականի հունիսի 4-ին Բաթումում թուրքերի և դաշնակցականների միջև կնքված պայմանագրի ուժով՝ թուրքերի թելադրությամբ մայիսի 28-ին ստեղծված «ազատ ու անկախ Հայաստանի» հանրապետական կառավարությունը պարտավորություն էր ստանձնել գործուն կերպով հակազդել որպեսզի ոչ մի բանդա շկադմավորվի և շղինվի իր [այսինքն՝ Հայաստանի。—Ա. Հ.] տերիտորիայի սահմաններում, ինչպես և դինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ։ Հայաստանի կառավարության ստանձնած այս պարտավորության դիմաց, իթթիհատականների զլխավորած օսմանյան կառավարությունը, իր հերթին, պարտավորվում էր՝ «Զենքի ուժով օգնություն ցույց տալ Հայկական հանրապետության կառավարությանը այն դեպքում, եթե վերջինս այդ օգնությունը կիսնդրի նրանից՝ երկրում կարգն ու հանգստությունն ապահովելու համար։

Օսմանյան կառավարությունը օգտագործեց Բաթումի պայմանագրիը հայ զինվորներին հեռացնելու անդամ Բաքվի ուղղմանակատից։ Բաթումի պայմանագրի համաձայն, Հայաստանի նորաթուխ կառավարությունը պարտավորություն ստանձնեց Բաքու քաղաքից անհապաղ էվակուացնել բոլոր հայկական զինվորական ուժերը։

Դաշնակցականները ջանքեր շինայեցին ի կատար ածելու Բաթումում ստանձնած պարտավորությունները և կասեցնելու Բաքվի կոմունայի տրամադրության տակ գտնված հայ զորամասերի՝ թուրքերին ցույց տված դիմադրությունը։ Տագնապալի վիճակ ստեղծելով թուրքերի դեմ կովող Բաքվի զորքերի մեջ, բանակի հրամանատար գեներալ Ավետիսովի բերանով դաշնակցականները 1918 թվականի հունիսի 30-ին առաջարկում էին՝ անմիջապես սպիտակ դրոշակ բարձրացնել և հաշտության բանակցություններ սկսել թուրքերի հետ։ Հաջորդ օրը դաշնակցական Ա. Գյուլխանդանյանը կրկնում էր նույնը, հայտնելով Բաքվի Հայ ազգային խորհրդի որոշումը՝ «Դրոշակ բարձրացնել և անձնատուր լինել հաղթողների գթարտության»¹։

Թուրք իմպերիալիստների հետ անդրկովկասյան կառավարությունների կնքած պայմանագրի գործադրումը հայ ժողովրդին հնարավորություն շտվեց ուղղմական անմիջական կապ ստեղծել Բաքվի պրոլետարիատի հետ՝ թուրք-գերմանական ուժերը երկրամասից դուրս քշելու և Սովետական Ռուսաստանի հետ միանալու համար։

Հ. Թուրքականի աշխատությունը գրված է 1917—1918 թվականների իրադարձությունները հայ ժողովրդի կենսական շահերի տեսագծով վերագնահատողի գրչով։ Դժվար է վերհիշել մի այլ ուսումնասիրություն, ուր այնքան փաստալից և միաժամանակ այնքան դիպուկ կերպով բնութագրված լիներ շարունակ հայ ժողովրդի անունով երդվող և իրապես միայն հայ ժողովրդի համար դժբախտությունների աղբյուր դարձած դաշնակցականների 1917—18 թվականների գործունեությունը։

Հնիթերցողին հանձնարարվող այս գիրքը բանուկ սխճամաներով գրված կամ տրորված ուղիներով քայլող կոմպիւլսացիա չէ, այլ վավերագրերի ու փաստերի ցուցմոնքներով ամրապնդված պատմա-քննական հետազոտություն։ Չբավականանալով Սարդարապատի ճակատամարտին մասնակցողների, այդ թվում նաև իր իսկ տեսածով ու ինացածով, հեղինակը թերթել է իրեն զրադեցրած նյութին վերաբերող մամուն ու դրականությունը և օգտագործել արխիվային վավերաթղթեր՝ թշնամու առաջ անդրկովկասյան զորամասերի իւայտառակ նահանջը և Անդրկովկասյան կոմիսարիատի ու Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի պատվիրակների Տրապիզոնում և Բաթումում թուրքերի հետ վարած բանակցությունները և հատկապես դաշնակցական ղեկավարների հակառակությունն, հակառակովրդական և հակազգային գործունեությունն ու վարքագիծը՝ հաճախ նրանց իսկ անմիջական վկայություններով կամ ուշացած խոստովանություններով բնութագրելու համար։

Հակառակորդի մերկացումը հեղինակի կանխամտածված նպատակը չէ, այլ կատարված փաստերի քննական ուսումնասիրման ու վերապատկերման արդյունքը։ Պատմական իրողությունները հեղինակը ներկայացրել է դրանց հետ առնչված վկայությունների բազմակողմանի լրացարանությամբ՝ դիտավորություն չունենալով պատմական երևոյթները կամ պերսոնաժների գործողությունները անպատճառ ներկելու սոսկ սպիտակ ու սև գույներով։ Նա չի խուսափում պատմական ղեկարերի ու ղեմքերի անհատականացումից։ Երբեմն հակառակորդի բանակում իսկ նա նշմարում է գործիչներ, որոնց դիմագծերը այս կամ այն չափով դրականապես տարբերանշվում են իրենց կուսակիցների մռայլ կերպարներից։ Այսպես, օրինակ, հեղինակը չի շրջանցում այն փաստը, որ մասսաների ճնշման տակ 1914—1915 թվականներին դաշնակցության արևմտահայ կազմակերպությունները առարկում էին ցարական կառավարության ու կովկասահայ բուրժուազիայի նախաձեռնությամբ կազմակերպված ու հրահրված հայ կամավորական շարժմանը։ Հեղինակն

արձանագրում է նաև այն, որ Հայ քանվորական մասսաների ճնշման տակ Բաքվի սովետին և Բաքվի Հայոց ազգային խորհրդի գաշնակցական գործիչները Ռուսական գիտակությամբ սկզբնապես նպաստավոր դիրք էին ընդունել իշխանությունը Բաքվի սովետին անցնելու օգտին։ Ենթարկ դնելով այն իրողության վրա, որ դաշնակցությունն ի վերջո վճռապես թշնամական դիրք բռնեց հանդեպ սովետական իշխանության ու Բաքվի կոմունայի, հեղինակը այնուամենախիվ շի անտեսում այն փաստը, որ մի պահ նույնիսկ Թիֆլիսի և Երևանի դաշնակցական որոշ գործիչներ կշռագատում էին «սովետական օրինատացիա» ընդունելու հնարավորությունը։ Ուշագրավ են այդ տեսակետից նաև հեղինակի դիտողությունները հանրահայտ Արամ Մանուկյանի դիրքավորման մասին։

Տարածուն վերսիան «դիկտատորի» հոչակ է ընծայել դաշնակցական այդ գործին։ Սակայն չի սխալվում հեղինակը, եթե հերթում է դաշնակցության այդ Համելիտի «գիկտատոր» լինելու վերսիան։ Ի տարբերություն հայ ազգայնականների բազմաթիվ այլ լիդերների, որոնք միայն հեռակացից էին դատում «երկրի» մասին, Արամ Մանուկյանը երկարժամանակ ապրել էր Վանում և հանդիսացել մեկը դաշնակցության արևմտահայ կազմակերպությունների տրամադրություններն անդրադանող այն գործիչներից, որոնք երբեմն, — օրինակ, կամավորական շարժման հարցում, — դեմ էին լինում իրենց կուսակցության կենտրոնի՝ Կովկասյան արևելյան բյուրոյի քաղաքական ավանտուրիստական վճիռներին, որոնք այնքան սուղ էին նստում մանավանդ արևմտահայ ժողովրդին։

«Դիկտատորի» անվճռականությունը դրսեռվեց նաև հետագայում։ Հաշվի առնելով 1917—1918 թվականի ձմռան ու գարնան ամիսներին Անդրկովկասում ստեղծված ծանր իրազրությունը՝ Մանուկյանը մեկն էր եղել դաշնակցական այն գործիչներից, որոնք հակած էին կողմնորոշվելու դեպի Սովետական Ռուսաստանը և, ինչպես մատնանշում է մեր հեղինակը, հանգել էր այն տեսակետին, թե մի պահ Ռուսական կողմից հանձնարարված «Ռուսաստանի կողմնորոշման» քա-

դաքականությունը միակ ճիշտ ուղեղիծը կարող է լինել Հայ ժողովրդի փրկման համար։ Բայց, ինչպես ցույց է տրված Հեղինակի իսկ գրքում, այս հարցում ևս «դիկտատորն» ի վերջո ընկրկեց կուսակցության ռեակցիոն հրահանգի առաջ։

Նախքան կավարտենք մեր ասելիքը՝ հանձնարարվող այս աշխատության մասին՝ մի երկու դիտողություն։

Սարդարապատի հակատամարտի և հարակից անցքերի կապակցությամբ հեղինակը հիշատակում է այն տարածայնություններն ու բախումները, որոնք գնում էին արևմտահայերի ու արևելահայերի և առաջին հերթին դաշնակցության արևելահայ ու արևմտահայ կազմակերպությունների ու դեկավարների միջև։ Աշքի առաջ առնելով երկրի սիրտը խուժով թշնամու դեմ բռլոր դիմադրող ուժերը միավորելու խնդիրը, հեղինակը դատապարտում է նշված տարածայնություններն ու բախումները՝ «ամոթալի» համարելով դրանք։ Դժբախտաբար նա չի բացահայտում «ամոթալի» այդ երևույթի ակունքները կամ դրա հասարակական-քաղաքական աստառը։ Մեր խնդրից դուրս նկատելով հարցի սպառիլ լուսաբանությունը, այնուամենայնիվ ավելորդ շենք համարում դիտելու, որ հիշատակված երևույթն իրեն զգալ է տվել հայ ազգային շարժման բռլոր էտապներում՝ երևան գալով մերթ «երկրի գործիչների» և «կովկասահայ զեկավարների», մերթ «հին» և «վերակազմյալ» հնշակյանների, մերթ մի՞րանական և հակամի՞րանական, կամավորական և հակակամավորական խմբավորումների միջև ծագած տարածայնությունների ու բախումների ձևով։ Երբեք կանոն, բռլոր այս դեպքերում արևմտահայերի սուր տրատունջները ծայր էին առնում նրանց կացությանն անծանօթ կամ նրանց կարիքները շրջանցող կովկասահայ ազգայնական կազմակերպությունների ու գործիչների գաղաքականության, Զնկատել «ամոթալի» բախումների այս կողմը՝ կողմը՝ կողմերը ընկատել հայ ժողովրդի մոտիկ անցյալի պատմության ուշագրական օրինաշափություններից մեկը։

Աշխատության հեղինակը նշագակում է դաշնակցական զեկավարների «անպետական մտածողությունը», նրանց մտքի

«վարժապետական» սահմանափակությունը։ Հիրավի, չի սըսխալվում հեղինակը, երբ հայ բուրժուազիայի կամ նրա գործակատարների վարքագիծը բացատրում է ոչ միայն Անդրքակովկասում տարբեր ազգությունների բախտը տնօրինող բուրժուակալվածատիրական դասակարգերի հակամարտությամբ կամ նրանց տրամադրության տակ գտնված ուժերի ունալ հարաբերակցությամբ, այլև այդ դասակարգերի քաղաքական նավը վարող գործիչների անձնական հատկություններով, որոնց մեջ երբեմն վերջին տեղը չէր բռնում նրանց քաղաքական անձարակությունը։ Սակայն, դժվարանում ենք ձայնակցել հարգելի հեղինակին մի շարք դեպքերում, ուր նա տրամադրություն է ցույց տալիս անձարակության վերագրել գործիչների այն քայլերը, որոնց շարժառիթը կովկասահայ բուրժուազիայի և նրա հակառակուլյուցիոն քաղաքականությունը ղեկավարող «մայր կուսակցության» դասակարգային նեղմտությունն էր և դրանով պայմանավորված նրա շարաշար վնասաբեր դիրքավորումը հանդեպ հայ ժողովրդի և Անդրքովկասի աշխատավորության։ Դաշնակցական գործիչների 1917—18 թվականներին ցուցաբերած անձարակությունը բնական հետեւանք էր ռեակցիոն և անծողովրդական այն քաղաքականության, որ անխուսափելի պիտի լիներ մենշեկամուսավաթական հակառակուլյուցիոն բլոկին գործակցող կուսակցության համար։

Թուրքյանին անհայտ չէ այն իրողությունը, որ թուրքերի հետ բանակցող հայ պատվիրակները ստորագրեցին Բաթումի պայմանագիրը՝ տեղյակ վիճելով Սարդարապատի հաղթանակին։ Բայց կարո՞ղ էր էական փոփոխություն մտնել պայմանագրի մեջ, եթե հայ պատվիրակները իրազեկ լինեին Սարդարապատի իրադարձություններին։ Ի վիճակի՞ էր Քաջազնունիների ու Խատիսյանների կուսակցությունը խղել Բաթումի բանակցությունները և, թիկունք գարձնելով մենշեկամուսավաթական բլոկին, գլխավորել տարերայնորեն ծագած ժողովրդական շարժումը։ Այս հարցին չի կարող դրական պատասխան լինել։ Բաթումի բանակցությունների օրերին հայ ժողովրդի քաղաքական մեկուսացումը կատարված փաստ էր

Անդրկովկասում և նրա բախտը տնօրինողներն այնքան էին արդեն կաշկանդված իրենց պարտնյորների հետ ունեցած կապերով, որ անկարող էին արդեն ետ կանգնել նրանց հետ մեկտեղ որդեգրած հակաժողովրդական և հակառակոլյուցիոն ուղեգծից: Անզամ եթե դաշնակցականները կամենային փոխել իրենց դիրքավորումը՝ մետասաներորդ ժամին անհնարին պիտի լիներ վերակառուցվել կազմակերպչորեն և Բաքվի կոմունայի հետ Հայաստանում ու Անդրկովկասում պայքարի համատեղ ճակատ հարդարել թուրքերի դեմ:

Անդրկովկասի հակառակոլյուցիոն բլոկին մասնակցելով՝ հայ բուրժուազիան և նրա կուսակցությունը թաթումի պայմանագրով թիկունքային տմարդի հարդած էին հասցնում ոչ միայն Սարդարապատի խանդավառ մարտիկներին, այլև Բաքվի հերոսական պրոլետարիատին: Ճիշտ է, որ առանց Բաքվում գտնված հայկական զորքերի մասնակցության դյուրին չէր լինի 1918 թվականի մարտին սովորական իշխանության հաղթանակը Բաքվում, բայց ճիշտ է նաև այն, որ թաթումի պայմանագրից հետո Բաքվի ուազմանակատում դաշնակցականների կատարած ուսակցիոն շրջադարձը մեծապես նպաստեց հայկական զորքերի բարոյալքմանը և քայլքայիշ ազգեցություն ունեցավ Բաքվի կոմունայի պաշտպանության գործում: Թաթումի պայմանագրի շատ թանկ նստեց հայ ժողովրդին: Խուժենով Բաքու՝ թուրքական բանակը կազմակերպեց նրանուն հազար հայերի մասսայական ջարդն ողիակապուտը:

Ոչ միայն պրոլետարական Բաքուն ազատ կմնար կոմունայի վաղորդայնին կատարված և կոմունայի անկմանը հաջորդած արյունահեղություններից, այլև անդրկովկասյան բոլոր ժողովրդները չէին ենթարկվել 1918—1920 թվականների աղետներին, չէին լինի ոչ միայն թուրքական կրկնակի ներխուժումներն Անդրկովկաս, այլև հայ-ադրբեջանական և հայ-վրացական անմիտ զինաբախումները, եթե 1917 թվականին անդրկովկասյան ժողովրդների քաղաքական բախտը տնօրինող կուսակցությունները շհակադրվելին Պետրոգրադում և Սոսկվայում հաղթանակած ուսեղծելու

ժողովրդական ընթացքով՝ Անդրկովկասը ասպարեզ չդարձնեին նախ գերմանա-թուրքական և ապա անգլո-ամերիկյան ինտերվենցիային: Հայ ժողովրդի համար այդ պահին ճակատագրական եղավ մասնականդ դաշնակցականների վարքագիծը:

Եթե դաշնակցությունը որպես կուսակցություն որևէ չափով արտահայտիչը լիներ հայ ժողովրդական մասսաների կենսական շահերի, նա պետք է որ հրաժարվեր մինչ այդ վարած իր քաղաքականության արատավոր, վնասարեր ուղիներից ու կապեր հայ ժողովրդի բախտը ուսւական ռեոլյուցիայի ընթացիկ երթին, ընդառաջեր Հոկտեմբերյան ռեոլյուցիայի հաղթանակին: Սակայն նա մի անգամ ևս դրսուրեց իր մտքի դասակարգային սահմանափակությունը և շարունակեց իր հին ուղեգիծը, և այս անգամ կախվելով վրաց մենշևիկների ու ազրբեջանական մուսամքաթականների պոչից, մի անգամ ևս ապացուցեց, որ իբրև կուսակցություն նա իր բախտը ընդմիշտ կապել է հայ բուրժուազիայի բախտի հետ, և որ ոչինչ ավելի թանկ չէ իր համար, քան բուրժուական սեփականատիրությունը: Ցայտուն կերպով մերկացավ դաշնակցականների բուրժուական և հակառակությունն էությունը մանավանդ մի տարի անց, երբ ի պատասխան Սովետական Ռուսաստանի կողմից անդրկովկասյան հանրապետություններին արած դիմումին՝ պայքարի միասնական ճակատ ստեղծելու Դինիկինի և անգլիացիների դեմ՝ անդրկովկասյան ռեակցիոն բլոկի մյուս կուսակցությունների՝ մենշևիկների ու մուսավաթականների հետ միասին դաշնակցությունը ոչ միայն մերժեց այդ առաջարկը, այլև, իր այդ պարտնյորների պես բռնելով անգլիացիների և Դինիկինի փեշը, շարունակում էր իր պայքարը Սովետական Ռուսաստանի դեմ, բռնելով մի ուղեգիծ, որ որևէ առնչություն չուներ հայ ժողովրդի կենսական պահանջների հետ:

Դաշնակցականների դիրքավորումը դատապարտելի էր ոչ թե այն բանի համար, որ պարտված կողմ համարելով իրենց՝ ստորագրեցին թաթումի պայմանագիրը, այլ այն բանի համար, որ կողմնորոշվելով դեպի Անդրկովկասի հակառա-

Առաջին ուժերը, նրանք վերջ ի վերջո հարկադրված պիտի
լինեին ստորագրել խայտառակ այդ պարմանագիրը:

Փորձելով իրենց վարքագիծն արդարացնել թուրքական
ուժերի գերազանցությամբ՝ դաշնակցական գործիչները տա-
կավին 1918 թվականին էին վարագուրում այն փաստը, որ
արտաքին ուժերի պարտադրող գերազանցությունը Անդրկով-
կասում ստեղծվել էր հենց իրենց գործակցությամբ: Անդըք
կովկասի օրյեկտիվ կացությունը հնարավորություն էր ստեղ-
ծում ռեռլուցիոն տակտիկայի հաղթության համար, սակայն
դաշնակցությունը վարեց մի քաղաքականություն, որ հանգեց
Անդրկովկասի ու Հայաստանի ռեռլուցիոն ուժերի գեմ ուղղա-
ված Բաթումի պայմանագրին: Այդ փաստն ի նկատի ուներ
Շահումյանը, երբ Բաքվի սովետում մեղադրելով դաշնակ-
ցականներին՝ ասաց.

«Անդրկովկասում կար հսկայական զինված ուժ, որը
պատրաստ էր դուրս գալու թույլ թուրքիայի դեմ: Միմիայն
Հայկական ուժերը բավական էին թուրքերի հետ հաշիվ տես-
նելու, — սակայն դուք մենշևիկների ու մուսավաթականների
հետ կազմալուծեցիք զորքերի շարքերը, ոչ թե այն զորքերի,
որոնք երեք տարվա պատերազմից հետո հաշտության էին
ծարավի, այլ այն հայկական զորքերի, որոնք պատրաստ էին
մեռնել ու պահել իրենց երկիրը: Դուք այլասերեցիք այդ զոր-
քերը, — ահա թե ո՞րն էր ձեր մեղքը, ահա թե ո՞րն էր ձեր
ոճրագործությունը»¹:

Իր այս մեղադրականը Շահումյանն ուղեց դաշնակցա-
կաններին տակամին տեղեկություն շունենալով Սարդարա-
պատի ճակատամարտի մասին: Սարդարապատի հերոսա-
մարտը ցույց տվեց, թե որքան ճիշտ էր գնահատել Շահում-
յանը թուրքական բանակին դիմադրելու հնարավորությունը,
և թե որքան արդարացի էր նա, եթե մատնաշում էր ոչ թե
դաշնակցականների «անճարակությունը», այլ նրանց ոճրա-
գործությունը:

Հանձնարարվող ուսումնասիրությունը կարդացվում է

լարված հետաքրքրությամբ և ընկալվում որպես պատմական
ցնցող ողբերգություն: Դժվար է վանել այն միտքը, որ Սար-
դարապատի շիկացած ավազուտներում կատարված այդ ող-
բերգությունը հայ ժողովրդի նոր պատմության համար ավելի
նշանակալից է և այժմեական, քան վերագրվում է նրա հին
պատմության մեջ այն ողբերգությանը, որ կատարվել էր
Ավարայրի դաշտում՝ Տղմուտի ափին:

ԱՇԽԱ ՀՈՎՃԱՆՆԻՍՅԱՆ

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 229.

1. ԱՆԴՐԿՈՎԻԱՆԻ ԱՆՁԱՏՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ԵՎ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՅՈՒՄԸ

1917 թվականին ռուսական փետրվարյան ռևոլյուցիան նոր իրադրություն ստեղծեց նաև Անդրկովկասում: Կառավարման փոխարքայական ձեզ վերացվեց և ժամանակավոր կառավարության նշանակած Անդրկովկասյան հատուկ հանձնաժողովը (Օղակոմ) Խառլամովի նախագահությամբ մարտի 22-ին* ժամանեց Թիֆլիս: Անդրկովկասյան հատուկ հանձնաժողովի մեջ բացի նախագահից, որ ռուս կադետ էր, մտնում էին նաև պետական դումայի անդամներից երկու վրացի, մեկ ադրբեջանցի և մեկ հայ: Օղակոմի հայ անդամը՝ Միք. Պապաջանյանը կադետ էր: Նրա նշանակությունը իշխանության վերոհիշյալ օրդանում արագորեն նսեմացավ, նախ, այն պատճառով, որ ռևոլյուցիայի զարգացմանը զուգընթաց կադետները հյուսիսում իրենց տեղը զիջեցին Էսեռներին, երկրորդ, այն պատճառով, որ նա հայ իրականության մեջ գործող առավել մասսայական կուսակցության անդամ չէր, չէր կարող հենվել նրա վրա ու վայելի նրա պաշտպանությունը: Օղակոմի մեջ գնալով ավելի ուժեղացավ վրաց մենշևիկ Ակ. Զիսենկելու դերը: Զիսենկելու դերի ուժեղացումը շատ պատճառներ ուներ: Մենշևիկների պար-

տիան Պետերբուրգում Կերենսկու կառավարության օրոք աղփեցիկ դիրք էր գրավում, մահավանդ հանձնիս իր վրացի դեկավարների՝ Շերեթելու և Զիսենկելի: Մյուս կողմից, մենշևիկները վրաց իրականության մեջ այդ ժամանակաշրջանում ամենաազդեցիկ պարտիան էին, և Զիսենկելին վայելում էր վերջինիս պաշտպանությունը: Բացի այս, կար նաև մի այլ հույժ կարևոր պարագա: Անդրկովկասում գոյություն ունեցող աղքային հակոտնչա շահերի ու ստեղծված իրարամերժ հարաբերությունների պայմաններում վաղեմի տրադիցիայով ապահովված էր վրաց-մենշևիկների «Հաշտարար» դերն Անդրբկովկասում: Այս իրողությունը թե էր տալիս Զիսենկելուն: Անդրկովկասում մուսուլման բնակչության մեջ մինչ այդ և այդ ժամանակ ուժեղ էր բեկական հողատիրական ազնվականությունը: Վրաց իրականության մեջ եթե ոչ տնտեսապես, ապա իր կադրերով աղքեցիկ էր թավաղական հողատիրական ազնվականությունը: Հայ իրականության մեջ ուժեղ էր առևտըրա-արդյունաբերական բուրժուազիան, որը թեպետև հասարակական զարգացման տեսակետից պրոգրեսիվ ուժ էր թավաղա-բեկական ազնվականության համեմատությամբ, բայց իր հերթին արգելակում ու սահմանափակում էր վրացական ու մուսուլմանական երիտասարդ բուրժուազիայի զարգացումը: Այս հակասություններն էլ հենց պատճառ են դառնում, որ Անդրկովկասում իշխող դասակարգերի ներհակությունները վերաճում են ազգային ներհակությունների, որոնք մեծապես ուժ էին տալիս վրացական-մուսուլմանական ունակցիոն բլոկին՝ ազգային մեկուսացման դատապարտելով հայ ժողովրդին: «Արդեն ոչ ոքի համար գաղտնիք չէ,— գրում էր այդ օրերին Ստ. Շահումյանը,— որ Անդրկովկասում գոյություն ունի վրացական-մուսուլմանական կոնտրուլյուցիոն ազնվականական բլոկ, և եթե երեկ ուրիշներն էին դեկավարում այդ բլոկը, ապա այժմ կոնտրուլյուցիոն ազնվականական բլոկի ոգին է Ակակի Զիսենկելին» (Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 65): 1917 թվականի ապրիլից մինչև նոյեմբեր ամիս Ակակի Զիսենկելին, օգտագործելով Օղակոմի ամենաազդեցիկ անդամի իր դիրքը, նոր իրադրության մեջ, մենշևիկների

* Բոլոր ամսաթվերը բերված են նոր տոմարով:

ու մուսավաթականների դաշինքի նոր ձևով, կոռում ու կոփում էր այդ բլոկը:

Մենցեիկների ու մուսավաթականների այդ բլոկն ստեղծված էր ոչ թե հատկապես հայ ժողովրդին մեկուսացնելու համար: Ընդհակառակը, կոնտրուլուցուցիոն բլոկը հիմնականում ուղղված էր Սովետական Ռուսաստանի դեմ և այդ նպատակով հետամուտ էր նաև հայ բուրժուազիայի և նրա առավել ազգեցիկ կուսակցության՝ դաշնակցության ուժերի օգտագործմանը: Բայց եթե ուղիղ է, որ ուղղուցիոն Ռուսաստանի դեմ անդրկովկասան բոլոր ռեակցիոն ուժերի համախմբումից տուժում էին Անդրկովկասի բոլոր ժողովուրդները, ապա անուրանալի է նաև այն իրողությունը, որ ռեակցիոն բլոկի գործունեությունից առաջին հերթին տուժում էր և տուժեց հայ ժողովուրդը:

Դաշնակցությունը, որն այդ օրերին հայ իրականության մեջ գործող առավել մասսայական կուսակցությունն էր և հայ ժողովրդի շահերի պաշտպանությունը հայտարարում էր իր մենաշնորհը, Օղակոմի մեջ չուներ իր ներկայացուցիչը: Ասենք այն էլ, որ եթե անգամ այդ իրավունքը վերապահվեր նրան, այնուամենայնիվ, նա պետականորեն մտածող ու գործող կադրեր իսկ չուներ ղեկավար դիրքեր գրավելու համար: Այդ օրերին դաշնակցությունը խոր ճգնաժամ էր ապրում: Ռուսական ուղղուցիան հրապարակ էր հանել նոր խնդիրներ, բաց էր արել հասարակական ու պետական գործունեության լայն ու գրավիչ ասպարեզ: Գործունեության այդ ավելի լայնածավալ ասպարեզի և նոր խնդիրների դեմ՝ հանդիման գոհացուցիչ հանձնարարական շէին դաշնակցության «սոցիալիստական» կարկատանված ծրագրը կամ թե նրա երբեմնի հայուկային պրակտիկան: Դաշնակցության առաջ ծառացել էր «ի՞նչ անելու» պրոբլեմը: Նա, մեկ կողմից, իր գիրկն էր առնում և անմիջապես ղեկավար աշխատանքի էր կարգում փոխարքա Վորոնցով՝ Դաշկովի պալատում «մեր մարդ» ճանաշված հատիսովին, հայ խոշոր բուրժուազիայի ճառախոսության ասպետին, և նոյնի բնորոշմամբ «պատեհուկան» և «սնամեջ» մարդուն («Անցյալից», էջ 357),

իսկ մյուս կողմից, արքեստականորեն «աշխատավորական» թե էր ստեղծում, որպեսզի մի կերպ իր շարքերում պահեր դեպքերի բերումով ձախացող երիտասարդությանը: Այդ ժամանակ դաշնակցությունը թիֆլիսում «Հորիզոնից» բացի, որ նրա կենտրոնական օրգանն էր Անդրկովկասում, կազմակերպել էր «Աշխատավոր», իսկ երեսում՝ «Հայաստանի Աշխատավոր» օրաթերթերը, որոնք համարվում էին նրա «ձախ» թեր օրգանները: Սակայն «ձախ» թեն ու նրա «ձախ» օրգանները գրությունը չէին փրկում: Երիտասարդությունն այլևս չէր խանդակավում դաշնակցության ո՛չ ծրագրով և ո՛չ էլ պրակտիկայով: Եթե 1905 թվականի ուղղուցիայից հետո նարողներական տրամադրություն ունեցող ոչ քիչ թվով ինտելիգենտներ հեռացել էին դաշնակցության շարքերից և մտել էսեռական պարտիայի մեջ, ապա 1917 թվականի փետրվարից հետո ուղղուցիոն տրամադրություն ունեցող երիտասարդության մի զգալի համարված անցավ կոմունիստական պարտիայի շարքերը:

Սակայն ճիշտ այնպիս, ինչպես ավելի քան մի տասնամյակ առաջ եկեղեցական գույքերի բռնագրավումը և հայթաթարական կոփեներն ուժեղացրել էին դաշնակցության դիրքերն Անդրկովկասում, ավելի շուտ՝ կործանումից փըրկել էին այդ արդեն սնանկացած կազմակերպությունը և «գործունեության» ասպարեզ ստեղծել նրա համար, այնպիս էլ փետրվարյան ուղղուցիայից հետո թուրքական արշավանքի հեռանկարը, որ շուտով իրականություն պիտի դառնար՝ ավերածություն ու ֆիզիկական մահ բերելով հայ երկրին ու ժողովրդին, նորից միաժամանակ պիտի ամրապնդեր դաշնակցության արդեն խարխուզ դիրքերն իր ցավալի հետևանքներով: Դաշնակցությունն այդ ամենակրիտիկական օրերին՝ հակառակ ամեն տեսակ բարի խորհուրդների, համառորեն շուզեց հասկանալ, որ թուրքական օկուպացիան ո՛չ միայն սպառնում էր ուղղուցիայի գեմոկրատական նվաճումներին, այլև միաժամանակ մահ ու ավերածություն էր բերում հայ ժողովրդին ու հայ երկրին: Ինչպես այդ օրերին գրում էր Անաստաս Միկոյանը, «Գերմանա-թուրքական զորքերի ար-

շավանքը Անդրկովկասի խորքը և նրա գրավումը կարող են հանգեցնել ո՛չ միայն սովետական իշխանության ոչնչացմանը և ու ունեակցիայի հաղթանակին, այլև երկրի երեսից կզնչեն ամեն մի կուլտուրա: Գեղեցիկ Կովկասը կվերածվի մոխրակույտի ու ավերակույտի: Գերմանացիների և թուրքերի հաղթանակը մեզ ետ կտանի մի քանի հարյուրամյակով: Ահա թե ինչու մենք այլ ընտրություն, այլ ելք չունենք, բացի գերմանա-թուրքական հրոսակախմբերին զինված հակահարված տալուց: Ահա թե ինչու բոլոր բանվորներն ու գյուղացիները, բոլոր ազնիվ ռեպուտացիներները և ճշմարիտ դեմոկրատները պետք է պայքարեն այդ սրբազն գործի համար» („Известия Бакинского Совета“, 1918, № 94):

Այդ ահեղ օրերին վրացական մենշևիկների և ադրբեյշանական մուսավաթիստների բլոկին,— մի բլոկ, որ բոլոր միջոցներով նպաստում էր թուրքական արշավանքի հաջողությանը,— պետք էր հակադրել բոլոր բանվորների ու գյուղացիների, բոլոր ազնիվ ռեպուտացիների և ճշմարիտ դեմոկրատների դաշինքը: Մեկ կողմից, Ռուսաստանի կենտրոնում ռեպուտացիայի խորացման, իսկ մյուս կողմից, թուրքական արշավանքի վտանգի ուժեղացման բարդ իրադրության մեջ, երբ Անդրկովկասի թավադա-բեկական տարրերը գլուխ էին բարձրացրել, և սրանց զաղափարախոսները ոչ միայն հրաժանքով ավետում էին թուրքական արշավանքի փրկարարությունը (վրաց ազնվականության և թուրք բեկերի «Возрождение» ուսուերեն օրգանը Թիֆլիսում), այլև բացեիրաց դիվերսիաներ էին նախապատրաստում տաճիկների օգտին, հայ ժողովրդի աշխատավորական հոծ զանգվածների միակ փրկությունը սերտ դաշինքն էր նոր Ռուսաստանի հետ: Պատմության ընթացքը հրամայաբար այդ էր թելադրում հայ ժողովրդի աշխատավորական զանգվածներին, որոնք պետք է ո՛չ միայն անվերապահորեն որդեգրեին այդ ուղեգիծը, այլև նպաստեին անդրկովկասյան ժողովուրդների աշխատավորական զանգվածների համախմբմանը Սովետական Ռուսաստանի շուրջը: Միայն ուժերի այդպիսի համախմբումը կապահովեր հայ ժողովրդի պրոգրեսիվ դերն Անդրկովկասում:

Սակայն աղգային նեղ շրջանակներում գործող դաշնակցությունն ի վիճակի շէր գիտակցաբար և հետևողականորեն քայլելու այդ ուղիով: Իբրև հայ բուրժուազիայի սպասավոր, նա անկարող էր ճիշտ ըմբռնել իրադրությունը և ուժերի հարաբերակցությունն ու անցնել պատմական այն գործոնի կողմը, որ կոչված էր գլխավորելու Անդրկովկասի, և ո՛չ միայն Անդրկովկասի, այլև համայն Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների, բոլոր ազնիվ ռեպուտացիոններների ու ճշմարիտ դեմոկրատների դաշինքը, տվյալ դեպքում թուրքական օկուպանտների դեմ, որոնք սպառնում էին մեր երկրի ժողովուրդներին ետ տանել մի քանի հարյուրամյակով:

Վերահաս ահեղ վտանգն այդ օրերին ճիշտ տեսնում էր միայն կոմունիստական պարտիան: Ռեպուտացիոն թաքվում «Ռուսավաթի» վրա գրո՞հի նախապատրաստվող թաքվի սովետըն իր Ռեպուտացիոն պաշտպանության կոմիտեի 1918 թվականի մարտի 24-ի կողի մեջ ասում էր.

««Ռուսավաթը» ո՛չ միայն բեգական պարտիա է: Դա այն պարտիան է, որը ցանկացել է և ցանկանում է օժանդակել, որ կալվածատիրական, ֆեոդալական թուրքիան լափի Կովկասը, ամբողջ գյուղացիական Կովկասը...»

«Ռուսավաթի» հաղթանակն անխուսափելիորեն հող կպատրաստեր թուրքիայի հաղթության համար: Թուրքական զորքերը գործում են կովկասյան ճակատում, իսկ ամուսավաթը՝ թիկունքում:

«Ռուսավաթի» դավադրությունը, մուսավաթականների զինված գրո՞հը հասարակ ավանտյուրա չէ: Դա որոշակի քաղաքականություն ու ծրագիր է, դա բացահայտ լկտի հարձակում է ռեպուտացիոն Ռուսաստանի վրա, Գերմանա-թուրքական շտարի ծրագրերի բացահայտ դրսերումը» (Ե. Տօքարյան, Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, стр. 54—55):

Թաքվի սովետի 1918 թվականի մայիսի 29-ի ընդայնված նիստի բանաձևում այդ նույն հարցի մասին կարդում ենք.

«Ինչպես Բաքվի դեմոկրատիան, այնպես էլ ամբողջ Անդ դրդկովկասի բանվորներն ու գյուղացիները ոչ մի դիպքում շեն հաշտվի ուղղուցիոն Ռուսաստանից Անդրկովկասի անշատման հետ և զենքը ձեռքին կպայքարեն ինչպես թուրք-գերմանական օկուպանտների, այնպես էլ նրանց դաշնակիցների՝ դավաճաններ Զիսինկելու, Զիսիհձի, Խան-Խոյսկիների և ընկերության դեմ» (նույն տեղը, էջ 77):

Ճիշտ այսպիսի զնահատություն ենք գտնում դեռևս դրանից վեց ամիս առաջ, 1917 թվականի դեկտեմբերի վերջերին Թիֆլիսում տեղի ունեցած Անդրկովկասյան բանակային շրջանում առաջի բանաձևում, որն ընդունվել էր համագրւմարի կոմունիստական մեծամասնության քվեներով: Կոմունիստները գտնում էին, որ բեգական «մուսավաթը» ուղղուցիչի համար առաջին թշնամին է Անդրկովկասում, որ թուրքական արշավանքի սպառնալիքով ստեղծված բացառիկ օրհասական իրադրության մեջ հայ ժողովրդի ճնշման տակ դաշնակցությունը պետք էր անցներ սովետական օրինտացիայի, որ անգամ վրաց մենշենկիների մեջ, շարքային անդամների ճնշման տակ, կարող էին գտնվել սովետական օրինտացիան թուրքական օկուպացիայից գերադասողներ:

Այս հարցի վրա մեծ լուս է սփոռվմ Ստ. Շահումյանի որդու՝ Ս. Ս. Շահումյանի «История двух писем» շահեկան հոդվածը («Օգոնեկ», 1962, № 17): «Բաքվի դրությունը, — գրում է Վ. Ի. Լենինը Ստ. Շահումյանին ուղարկած երկրորդ նամակում, — միջազգային ախակետից դժվարին է: Դրս համար էլ խորհուրդ կտայի փորձել բլոկ կնքել ժորդանիայի հետ, եթե ճնարավոր չէ—պետք է խուսանավել և երկարածել որոշումը, մինչև որ կամրապնդվի ուղմական տեսակետից: Զգաստ հաշվառում և դիվանագիտություն երկարածման համար—հիշեցեք այս բանը»: «Եսկապես, որ,— հարց է տալիս Ս. Ս. Շահումյանը, — Վ. Ի. Լենինը, ստեղծված դժվարին պայմանների բերումով, ճնարավո՞ր էր համարում «փորձել բլոկ կնքել ժորդանիայի», վրաց մենշենկիների պարագիսի հետ: Այո՛, ճնարավոր էր համարում: Այդ է հաստատում ավելի ուշ, 1921 թվականի մարտի 2-ին Գ. Կ. Օրջոնիկիձեին

ուղարկված Վ. Ի. Լենինի նամակը, որտեղ լենինը գրում է «...վիթխարիորեն կարևոր է ընդունելի կումպարումիս որոնել ժորդանիայի կամ նրա նման վրաց մենշենկիների հետ բլոկ կնքելու համար... Կա նաև մի ուրիշ ապացուց: Թիֆլիսի բոլշևիների ղեկավարներից մեկի՝ Հ. Մ. Նազարեթյանի 1918 թվականի հունիսի 8-ի նամակը Ստ. Շահումյանին: Այդ նամակը վկայում է, որ Շահումյանն իրոք վլադիմիր Իլյիշից նամակ է ստացել, որի հիման վրա պարտիայի կովկասյան երկրումի անդամներ Պ. Շահվերդովը և Բ. Մդիվանին բանակցություններ էին վարում ժորդանիայի հետ» («Օգոնեկ», 1962, № 17, էջ 8):

Թուրքական արշավանքը հաջողությամբ ետ մղելու համար կոմունիստներին միանգամայն պարզ էր, որ գրա համար պետք էր նախապես մեկուսացնել և պարտության մատնի «մուսավաթը», որը 5-րդ շարասյան դեր էր կատարում Անդրկովկասում: Դաշնակցությունը ոչ միայն շհասկացավ այս ճշմարտությունը, այլև փորձեց թուրքական արշավանքին դիմագրավել՝ բլոկի մեջ մտնելով «մուսավաթի» հետ և մերժելով կոմունիստների առաջարկած դաշինքը:

Դաշնակցությունն այդ դաշինքին շղիմեց նաև այն ժամանակ, երբ թուրքական ճնարավոր օկուպացիայի ուրվականը ունեալ դառնալու նախօրյակին Ստ. Շահումյանը, որ սովետական կենտրոնական իշխանության կողմից 1917 թվականի դեկտեմբերի 16-ին կարգվել էր Կովկասի ժամանակավոր արտակարգ կոմիսար և դիմավորում էր ուղղուցքով Բաքվի սովետը, արհամարհելով մահը, 1917 թվականի դեկտեմբերի երկրորդ կեսին հերոսական անցում կատարեց Բաքվից (մուսավաթականներն այդ պահին արդեն իրենց վերահսկողության տակ էին առել Բաքու—Թիֆլիս երկաթուղին և վագոնները մտնելով սպանում էին հատկապես հայերին) և ժամանեց Թիֆլիս, որպեսզի լուծեր սովետական կենտրոնական իշխանությունը ճանաշելու հարցը և կրկին ու կրկին անգամ թե՛ գործով և թե՛ խոսքով ցույց տար թուրքական օկուպացիայից Անդրկովկասը փրկելու միակ ճիշտ ուղին:

Սակայն Մտ. Շահումյանի՝ բոլցեփեների շանքերն ապարդյուն անցան:

Թուրքական արշավանքի սպառնալիքն այնքան ուեալ էր այդ ճգնաժամային օրերին և դաշինքը մենշեփեների հետ, որոնք արդեն լեզու էին գտել մուսավաթի հետ, այնքան անհույս էր, որ որքան էլ բացասական լինի մեր կարծիքը դաշնակցության ղեկավարների քաղաքական իմաստության մասին, այնուամենայնիվ, նրանց շարքերում անդամ չէին կարող ըինել առանձին մարդիկ, որոնք շտեսնեին իրենց բռնած ուղղու կործանարարությունը հայ ժողովրդի համար:

Դաշնակցության պարագուիներից Արշակ Զամալյանը, որը գնացել էր էրզրում ու Երզնկա և սեփական աշքերով տնել էր ու գիտեր, թե վրաց մենշեփեները հայկական թույլ դինված ուժերի համար ինչպիսի՝ անբարենպաստ իրադրություն էին ստեղծել ոչ միայն Թիֆլիսում, այլ նաև ուազմահակատում, բժիշկ Հ. Զավրիել, որն այդ նույն բանը չէր կարող չիմանալ, որպես գրավված վիլայեթների կառավարչի հայ տեղակալ և Ռ. Տեր-Մինասյանը, որը կազմակերպում ու ղեկավարում էր դաշնակցության դինված ուժերը (իրենց կողմն ունենալով Արամ Մանուկյանին, որն այդ ժամանակ առաջին դեմքն էր Երևանի նահանգում և ղեկավարում էր հայկական դինված ուժերի կազմակերպումը հայկական բնօրբանում), սովետական օրիենտացիայի անցնելու խնդրի շուրջը Թիֆլիսում 1917 թվականի ղեկտեմբերի վերջին և 1918 թվականի հունվարի առաջին տասնօրյակին բանակցություններ են սկսում Մտ. Շահումյանի, Ս. Կասյանի և Գ. Շահվերդյանի հետ: Բանակցող կողմերը համաձայնության եղուի են գտնում և հանգում են որոշակի պայմանավորվածության և նույնիսկ մշակում են տակտիկայի հարցերը: Սակայն վերջին պահին դաշնակցության ղեկավարների մեծամասնությունը մենշեփեների ու մուսավաթականների հետ անբնական և հայ ժողովրդի համար կործանարար դաշինքը գերազանցում է միակ փրկարար՝ սովետական օրիենտացիայից: Ի՞նչ տեղի ունեցավ: Չէ՝ որ Ռ. Տեր-Մինասյանը հայկական դինված ուժերի տեր:

ու անօրենն էր Թիֆլիսում, իսկ Արամ Մանուկյանը՝ Երևանում: Չէ՝ որ Արշակ Զամալյանը և թժ. Հ. Զավրիելը դաշնակցության բոլոր բյուրոների կողմից ճանաշված էին որպես այդ կուսակցության արտաքին հարաբերությունները տնօրինողներն ու վարողները: Ի՞նչ պատահեց, որ ուեալ ուժի և արտաքին հարաբերությունների այս տեր ու տնօրենները տեղի տվին ղեկավարների ձևական մեծամասնության հակընթաց կողմնորոշման առաջ:

Ծուսական ունվագուցիան շատ արագ զարգացում ունեցավ: Պատմությունը, շարունակվող համաշխարհային և ծավալվող քաղաքացիական պատերազմների իրադրության մեջ, շատ շուտ մերկացրեց մինչ այդ իշխող և Ծուսատանի ծայրամասերում իշխանությունը ժամանակավորապես զավթած պարտիաների հակաժողովրդական բնույթը: Մանրբուժության պարտիաներն արագորեն անցան խոշոր բուրժուազիայի կողմը և, — բուրժուական պարտիաների անժողովրդականության պայմաններում, — դարձան կոնտրունվացիայի մարտաշունչ փողհարներ: Եվ դաշնակցությունը ապրում էր Հոկտեմբերյան ունվագուցիային դիմագրավող կոնտրունվացիայի մարտական պարտիա դառնալու նույն պրոցեսը: Նրա ղեկավարությունը դասակարգայնորեն չէր կարող ընդունել և լընդունեց սովետական օրիենտացիա:

Մյուս կողմից, «կարճատես, օր-օրի վրա ապրող, շոշափումներով առաջ գնացող, պատահականությունների վրա քայլաքականություն կառուցող, համաշխարհային կյանքի տեսքենցը նկատի շունեցող և շրմրոնող դաշնակցական քայլաքակտները» (Ս. Ատենյան-Կասյան, «Ո՞ւր է ելքը», 1919 թ., էջ 61) հեշտությամբ խաղալիք դարձան Անտանտի և գլխավորապես ամերիկյան իմպերիալիզմի ձեռքին՝ վտանգի տակ գնելով անդամ հայ ժողովրդի փիզիկական գրյությունը:

ԱՄՆ-ը, իրեն դիտելով որպես թուլացող Անգլիայի օրինական ժառանգությունը, ժառանգում էր նաև նրա մերձավորական քաղաքականությունը: Դեռ Հոկտեմբերից առաջ, Կերենսկու օրոք, եթք ուսական բանակն սկսում էր կորցնել իր մարտունակությունը, ԱՄՆ-ը, սկզբում ծածուկ, մտմտում

Էր Անդրկովկասն անջատել Ռուսաստանից, իսկ Հոկտեմբերից հետո արդեն բացեիրաց ձգուում էր Անդրկովկասը հակագրել սովետական իշխանությանը: Թիֆլիսի ամերիկյան հյուպատոս Մմիտը, ինչպես հաղորդում է Վահան Թոթովենցը («Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը», էջ 238)*, Պետրոգրադի ամերիկյան դեսպանի սանկցիան ստանալով, այդ ուղղությամբ եռուն գործունեություն էր ծագալել դեռևս 1917 թվականի ամառվա ամիսներից: ԱՄՆ-ի թիֆլիսի հյուպատոսը, ինչպես ինքն է հավաստիացրել, անձամբ ծանոթ էր վրաց դեկավարների հետ և դիտեր նրանց տրամադրությունները: Հայ-վրացական, այսինքն՝ մենշևիկների ու դաշնակցականների սերտ դաշինքի չափագով ձևանալով, նա աշխատում է շահել նաև Անդրանիկի, այսինքն՝ արևմտահայերի գինված ուժերի համաձայնությունը: Անդրանիկի հետ խոսելիս նա դիվանագիտորեն մուսավաթի անունը շի տալիս սակայն, որպես Անդրկովկասին լավ իրազեկ անձ, դիտեր մենշևիկների սերտ կապը մուսավաթի հետ: Եվ դաշնակցականներին եղբայրացնելով մենշևիկների հետ՝ նա ապահովում էր անդրկովկասյան երեք գլխավոր կոնտրուլուցիոն պարտիաների դաշինքը սովետական իշխանության դեմ: Այդ ժամանակ ամերիկյան իմպերիալիզմի համար կարևոր հակառողշնիկյան բլոկի ստեղծումն էր նաև Անդրկովկասում, այլ ոչ թե ռազմաճակատի պաշտպանության կազմակերպումով հակառակորդի ինչ-որ մի երկու դիվիզիա զբաղեցնելու հսկ եթե թուրքերին հաջողվեր գրավել ո՛չ միայն Անդրկովկասը, այլև ամբողջ Կովկասը և սովետներին զրկել նավթից, ապա՝ ավելի լավ. չէ՝ որ դրանով մեկ զարկով երկու նապաստակ սպանված կլիներ: ԱՄՆ-ը, դեռևս 1907 թվականին, Համիդի օրոք էր փորձել ամբողջ Թուրքիան առնել իր տնտեսագործական ոլորտի մեջ և Թուրքիային ուժեղացնելով կասեցնել ոռուների առաջխաղացումը դեպի հարավ: Պատմական անհրաժեշտությամբ ոռուսական օրինատացիային

* Վ. Թոթովենցի հիշյալ գիրքը տպագրվել է 1932 թ. Բելըութում, առանց հեղինակի անվան հիշատակության: — Մ. Հ.

ապավինող հայ ազգային քաղաքական գործիչներին միշտ էլ կարելի էր հեշտությամբ խարել նյութական օգնության ծխածածկութով և լավամարդ երևալ նրանց աշքին: Հայ ազգային գործիչներից և ոչ մեկի մտքով չէր էլ անցնի, որ թարմ ուժերով պատերազմի մեջ նոր մտած հարուստ ԱՄՆ-ի համար շատ ավելի հեշտ էր Խաղաղ ու Հնդկական օվկիանոսների և Պարսկաստանի միանգամայն անվտանգ ճանապարհներով երթային կարգով, առանց գումարի, մի երկու դիվիզիա շտապ նետել Անդրկովկաս, — քանի որ Կովկասյան ճակատում արդեն պարենամթերքի կուտակված պաշարներ կային ոչ թե մի-երկու, այլ ավելի քան երկու տասնյակ դիվիզիայի համար, — քան թե գերմանական սուզանավերի կողմից խիստ վտանգված Ատլանտյան օվկիանոսով, հենց ճանապարհին մեծ կորուստներ տալով, Ֆրանսիա զորք փոխադրելը: Հիշենք, որ Պարսկաստանի ճանապարհը բաց էր ամբողջ 7 ամիս, որ թուրքերը Թավրիզ մտան միայն 1918 թվականի հունիսի կեսերին:

Այսպիսով, «մուսավաթի» հետ արդեն վաղուց խոսքը մեկ արած մենշևիկները, ամերիկյան գործակալի աշակցությամբ ապահովելով նաև դաշնակցականների համաձայնությունը, Հոկտեմբերից անմիշապես հետո, 1917 թվականի նոյեմբերի 24-ին, վերացրին Օզակումը՝ իրրե թե շեզոքացնելով նրա ամենազոր թթքոֆիլ անդամին՝ Ակակի Չխենկելուն, և Անդրկովկասյան կոմիսարիատի կառավարություն կազմեցին այս անգամ «Հայասեր» Եվգենի Գեղեցկորու գլխավորությունը՝ իրրե թե հայերի համար բարենպաստ իրազրություն ստեղծելով Անդրկովկասում: «Հայասեր» Գեղեցկորին հայ և վրաց «գեմոկրատիայի» և հատկապես հայկական զինված ուժերի վրա «անկեղծորեն» հենված պետք է կազմակերպեր և գլխավորեր ռազմաճակատի պաշտպանությունը Թուրքիայի հնարավոր ներխուժումից և սանձահարեր երկրի ներսում արդեն գլուխ բարձրացրած բեղական կոնտրուլուցիան: Այդքան ընդառաջումներից և զիջումներից հետո էլ ի՞նչ պետք է ուղեին դաշնակցականները: Եվ «դաշնակցության պարագությունները, — ինչպես ասում է Ատենյանը (Ս. Կասյանը), — այնքան

էին առաս քաղաքականության մեջ, որ ծծերների միամտությամբ հավատում էին, թե մուսավաթականներն ու մենչկենարը խարված կատարում են հայ բորժուազիայի կողմից գաշնակցության վրա դրված «ազգային գործը» («Ո՞ւր է ելքը», էջ 47):

Հայ ժողովրդի համար ստեղծված այդ կրիտիկական օրենքն Ստ. Շահումյանն իր «Նացիոնալիզմը Կովկասում և ուղղամաճակատի մերկացումը» հոդվածում (1917 թ. դեկտեմբերի 17) գրում էր:

«Կովկասյան նացիոնալիզմի ամենացավալի հետևանքը ուղղամաճակատի կազմալուծումն է: Քանի դեռ հաշտություն չի կնքվել, պարզ է, զորքերը պետք է պաշտպանեն ուղղամաճակատը, սակայն կովկասյան նացիոնալիստների ստեղծած մթնոլորտում կա՞ն արդյոք ուժեր, որոնք կարողանային ուում զորամասերին իրենց դիրքերում պահել:

Մենք ասում էինք նրանց. դուք գրավեցիք այնպիսի զիրք, որը ձեզ կխորտակի. դա անխուսափելիորեն կհանգեցնի ուղղամաճակատի մերկացմանը: Բանակը, — ասում էինք մենք, — ձեր նացիոնալիստական քաղաքականությունից դրժգուհի, տարերայնորեն, անկազմակերպ կհորդի ուղղամաճակատից և կսրբի ու կհեղեղի ձեզ...

Ի՞նչ միջոցներ կարող են ձեռք առնվել կանխելու համար այն աղետները, որոնք կարող են պատահել այդպիսի մասսայական տարերային շարժման դեպքում: Դժբախտաբար, մեզ թվում՝ է, որ արդեն ուշ է և ոչ մի միջոց չի օգնի:

Երբ դեռ ուշ շեր, մենք ասում էինք՝ հրաժարվեցեք ձեր նացիոնալիստական ու պարտիկուլյար քաղաքականությունից, ճանաշեցեք ժողովրդական Կոմիսարների Սովետի ռազմությունը, կիրառեցեք լյանքում նրա հողային ու բանվորական գեկրետները և բանակի դեմոկրատացումը, խզեք ձեր կապերը Կարառուվից ու Կալեդինից, մաքրվեք ձեր կոնտրուռություն շտարից, որին գլխավորում են Պրժեվալսկին ու Գոնսկոյը, արշավի գնացեք Հյուսիսային Կովկասի կոնտրուռությունից դեմ, ձեր ձեռքը վերցրեք երկաթեւլին Հյուսիսային Կովկասում, որպեսզի բանակն ու բնակչություն

նը առանց Հայի շթողնեք, — այն ժամանակ բանակը վատանակությամբ կտողութիւնի դեպի ձեզ և կարող է նանաշել ձեր իշխանությունը այնպես, ինչպես բանակը վստահրւամ է արկմարտյան ուղղամաճակատում ժողովրդական Կոմիսարների Սովետին և կատարում է իր ռեռլուցիոն պարտքը՝ պաշտպանելով ուղղամաճակատը մինչև հաշտություն կնքվելը» (Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 510—511):

Երեք օր հետո Ստ. Շահումյանը «Կովկասյան բանակի ետ քաշվելու առթիվ» հոդվածում (1917 թ. դեկտեմբերի 20) կրկին անդամ անդրադառնալով օրվա այդ ամենացավոտ հարցին, նորից նախազգուշացնում էր, թե՝ «Բայց որքան էլ քիչ հավանական լինի պատերազմի վերսկսումը (որ փետրավարյան ռեռլուցիոնից հետո ինքնարերաբար դադարել էր թուրքական ուղղամաճակատում. — Հ. Թ.), այնուամենայնիվ, անհրաժեշտ է ուղղամաճակատում գեթ որևէ պաշտպան զորամաս: Եթե թուրքական բանակը չի ուզում և չի կարող պատերազմել, ապա բաց տեղում առաջ շարժվել նու ազատ կերպով կարող է» (Երկ. Ժող., հ. 3, էջ 37):

Դաշնակցությունը կոշված էր լցնելու այդ բաց տեղը, բայց նա ընտրեց խորապես սխալ և հայ ժողովրդի համար կործանարար ուղի: Թուրքական առաջինացումն սպառնուել էր հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և ռեռլուցիոնից նվաճումներին: Այս իրադրությունից հայ ժողովրդի համար բխում էր Ռուսաստանի սովետական կառավարությունը ճանաշելու հրամայական անհրաժեշտությունը: Այնինչ դաշնակցությունը ականջ դնելով ամերիկյան իմպերիալիզմի թերագոանքին, համառորեն գերադասեց վրաց մենշերիների և Ադրբեյջանի մուսավաթականների հետ մեկտեղ լծված մնալ անդրկովկասյան սեյմի սայլակին, որի արտաքին գործերը վարում էր վերոհիշյալ տիրահոշակ Ակալի Զիսենկելին:

«Կային մարդիկ, — գրում է այդ առթիվ Ս. Վրացյանը, — որոնք այդ օրերին ցույց էին տալիս խորհրդային Ռուսաստանի ճամփան՝ առաջարկելով ձեռք մեկնել բոլշեվիկներին, որոնց առաջապահները դեռ մնում էին Բաքվում և Սովում: Այս տրամադրությանը որոշ շափով նպաստում էին և

Թիֆլիսում ստացվող աղոտ լուրերը, որ, թե՛ թե՛, կենինք առանձին դեկրետով հայտարարել է Հայաստանի անկախությունը։ Սակայն այդ մտքի անհեթեթությունը այնքան էր ակներև, որ նույնիսկ, նրա հեղինակները լուրջ քայլեր շարին այդ ուղղությամբ։ Ռուսաստանը շատ էր հեռու Հայաստանից, իսկ բոլշևիկների ուժը՝ ավելի քան խնդրական» («Հայ. Հանր.», էջ 85)։ «Լուրջ քայլերի» շդիմելու այս պատճառաբանությունը ճիշտ չէ։ Երկու տարի հետո, 1920 թվականի ապրիլ-մայիսին, միենույն վտանգավոր իրադրությունն էր ստեղծվել Անդրկովկասում, բայց Սովետական Ռուսաստանը արդեն ոչ միայն շատ հեռու չէր, այլև շատ մոտիկ, իսկ որովհեկան ուժը «խնդրական» էր, այլ անվիճելի, ամայն դաշնակցությունը նորից վարեց հայ ժողովրդի մեկուսացումը խորացնելու այն նույն կործանարար քաղաքականությունը, որ ընդամենը երկու տարի առաջ ֆիզիկական աշնացման դուռն էր հասցըել հայ ժողովրդին։

Դաշնակցությունը, հակառակ իր բոլոր ճամարտակություններին, հանդիսանում էր կոնտրուլյուցիոն բուրժուազիայի կամակատարը և որպես այդպիսին թե՛ 1921 թվականի փետրվար-մարտին, թե՛ 1920 թվականի մայիսին ու թե՛ 1917 թվականի դեկտեմբերին հավատարիմ մնաց իր ռեակցիոն էությանը և իր պարտիական-թայֆայական շահերը գերազանց հայ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովումից Գեղեցկորի՛ թե՛ Շահումյան երկրնտրանքի ժամանակաշրջանում նրա ցուցաբերած կողմնորոշումը բացահայտ դավաճանություն էր հայ ժողովրդի շահերին։ Այդ դիրքավորումը միաժամանակ մերկացնում էր դաշնակցության քաղաքական մտքի մանրբութուական սահմանափակությունը։

Օղակոմից Անդրկովկասյան կոմիսարիատին, այսինքն՝ Գեղեցկորու կառավարությանն անցնելու ժամանակի, 1917 թվականի նոյեմբերին, Անդրկովկասում ամենից ավելի շատ շոշափելի զինվորական ուժ կարող էր հրապարակ հանել հայ ժողովրդը, այնինչ դաշնակցությունը, որ Հայոց ազգային խորհրդի միջոցով տնօրինում էր այդ շոշափելի զինված ուժը, Անդրկովկասյան կոմիսարիատի կոալիցիոն կառավարության

մեջ բավականացավ միայն շատ համեստ բանով՝ ֆինանսաների ու խնամատարության երկրորդական մինիստրություններով։ Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ մենշևիկների, մուսավաթականների և դաշնակցականների դաշինքում միայն հայ ժողովրդը պետք է անվերապահորեն ծառանար թուրքական արշավանքի դեմ և իր ֆիզիկական գոյության ապահովման հետ միաժամանակ պաշտպաններ նաև այսպես կոչված «Անդրկովկասյան դեմոկրատիան»։ Սակայն այդ կովին դուրս դալուց առաջ դաշնակցությունը ոչ միայն չէր ձգտում ապահովել հայ ժողովրդի թիկունքը, այլ, ընդհակառակը, այնպիսի գործակցության մեջ մտավ անդրկովկասյան իր պարտնյորների հետ, որ սկզբից ևեթ լայն դուռ էր բացում հայ ժողովրդի հետագա բոլոր դժբախտությունների առաջ։ Դաշնակցությունը կոալիցիայի մեջ մտավ Զինենկելու գլխավորած կոնտրուլյուցիոն բլոկի պարտիաների հետ, նրանց հանձնելով արտաքին գործերի, զինվորական և հաղորդակցության ճանապարհների մինիստրությունների զեկավարությունը։ Այդ նշանակում էր, թե ֆինանսների դաշնակցական մինիստր Կարճիկյանը պետք է միջոցներ ճարեր ու ֆինանսավորեր հաղորդակցության ճանապարհների մինիստր մուսավաթիստ բեկ Ամիր-Ասլանովին, որպեսզի նա Թիֆլիս-Ալեքսանդրապոլ գծամասում՝ Բորչալվում, Ալեքսանդրապոլ-Սարիղամիշ գծամասում՝ Աղբարայում, Ալեքսանդրապոլ-Երևան գծամասում՝ Ռզուխանլվում մուսավաթական բանդաներին ոտքի հաներ ու երկաթուղային երթևեկությունն անապահով դարձներ ուղղմանակատ մեկնող հայ զորքի համար, որ նա Թիֆլիս-Բաքու գծամասում Շամխորից մինչև Բաքվի մատուցները, իսկ Երևան-Ջուղֆա գծամասում Վեդուց մինչև Ջուղֆա հատվածը տրամադրեր միայն մուսավաթական բանդաներին ու երթևեկությունն իսպառ խափաներ ո՛չ միայն հայերի, այլև հայրենիք վերադառնություն ուղարկու համար։ Այդ նշանակում էր նաև, թե ֆինանսների դաշնակցական մինիստրը դրամ պետք է ճարեր և այն տրամադրեր սկզբում զինվորական մինիստր էսեռ Գոնսկոյին, իսկ ավելի կրիտիկական ժամանակաշրջանում՝ նրան փոխարինած մենշևի

Գեղրդաձեին ու նրա տեղակալ գեն. Օդիշելիձեին, որպեսզի նրանք այն առատորեն ծախսեին Անդրկովկասի ինքնապաշտպանությանը փաստորեն վնաս բերող դավաճան բարձր հրամակազմի վրա և սովոր պահեին խսկապես կովող հայ շարքային դինվորներին:

Խատիսովը իր օրերին իրը թե չէր նախատեսել ու չէր իմացել այս ամենը, և միայն տասը տարի անց խելքի գալով՝ գրել է.

«Հայկական գորարանակի կազմակերպմամբ ղբաղված էր Հայոց ազգային խորհուրդը, բայց միաժամանակ Անդրկովկասյան կոմիսարիատը կկազմակերպեր վրացական ու թաթարական գորարանակների Անդրկովկասյան իշխանության զինվորական ղեկավարությունը հայերի ձեռքը չէր, ուստի այն կծոռայեր հակահայկական, այսինքն՝ ուազմաճակատին հակառակ նպատակների: Որովհետև թաթարները պարզապես թուրքերի կողմն էին, իսկ վրացիներն անոնց ուժ կուտային փաստորեն: Անդրկովկասյան կոմիսարիատը իրավունք չէր տա զորահավաք ընելու, որուն համար կրերեր զանազան ձևական առարկությունների Եղավվայրկյան մը, երբ հայերը պատրաստ էին առանց կոմիսարիատի թուլլտվության, ինք- չագուխ կերպով, Հայկական զորահավաք ընել... պետք է նկատի ունենալ նաև, որ երկաթուղիներն ալ հայերու ձեռքը չէին, այլ թաթարներու և վրացիներու, որոնք կմերժեին մեղ վագոններ տալ դեպի ճակատ զորք փոխադրելու համար: Հայոց ազգինորհրդի նախագահն ու անդամները ամբողջ 48 ժամ ստիպված եղան սպասել Թիֆլիսի կայարանին մեջ, մինչև որ զնացք մը ստացան Կարս երթալու համար» (Ա. Խառիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, 1928 թ., Աթենք, էջ 20): Այն, ինչ ընդհանրա- շատ ձևով գրում է այստեղ բուրժուա Խատիսովը «թաթարնե- րից կամ «վրացիների» մասին, Հարկավ պիտի վերագրել միայն Դեղնշկորու կարինետում մեծամասնություն կազմող սթաթուց բների ու «վրաց» ազնվականների շահերը ներ- կայացնելով մինիստրներին:

Բնակչության գործունեության մասին գեթ մեկ սպառի

փաստ: Անդրկովկասյան հրամանատարության կողմից թուրք հրամանատարության մոտ բանակցություններ վարելու հա- մար Թիֆլիսից պառամենտայոր ուղարկված գեն. Կորպանովը գերի է բռնվում տաճիկների կողմից դեռևս չօկուպացված թորշալվում: Մուսավաթականների զինված բանդաները նրան բռնի ուժով պարզապես ցած էին իշեցրել զնացքից Սաղախլու կայարանում, —և նա Կարս է տարկվում ո՛չ թե որպես պառ- լամենտյոր, այլ որպես ռազմագերի:

Եվ այսպիսի «դաշնակիցներով» ու այսպիսի պայմաննե- րում դաշնակցությունը պիտի պաշտպաններ ուղամաճակատը Անգամ եթե համաձայնելու լինենք, որ անդրանկության իրավունքը ջրիկ ուսպնապուրով՝ ֆինանսների ու խնամատա- րության մինիստրությունների անզոր պոստերով վաճառելը ստոր գալաճանություն չէր, կմնա ընդունել, որ դա պարզ հիմարություն էր: Ինչպես կարելի է կովել, երբ երկաթուղին ու ճանապարհները, փոստն ու հեռագիրը, արտաքին ու ներ- քին գործերի և զինվորական մինիստրությունները ոչ միայն քո ձեռքին չեն, այլ նախապես հանձնել ես թշնամուդ: Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը հարյուր հազարանոց զորք էլ որ կարողանար հավաքել, միննույն է, նա չէր կարողանա հաջող կովել: Այսպիսով, զիկտեմբեր-հունվար ամիսներին դաշնակցությունը փաստորեն ջուր էր լցրել տաճիկների ջրա- զարգություն ու նախապես անհաջողության էր դատապարտել այն բոլոր հերոսական ճիգերը, որ իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար պիտի թափեր հայ ժողովուրդը:

Պատմաբան Լեռն խոսելով այդ օրերի մասին՝ գրում է:

«Այլ էր հայ ժողովրդի դրությունը: Նա շատ լավ ըմբռո- նում էր, որ իր համար ամենաիրականը ուսւական օրինտա- ցիան է և որ առանց Խուսաստանի նա չէր կարող գտնել հան- գրստուրյուն իր պատմական հայրենիքում: Դաշնակցությունը, կովկասյան ազգերի միացման գաղափարը փրկելու համար, Հարում էր մենշևիկ-մուսավաթյան համաձայնության, թեև մեծ հարց էր, թե ինչո՞ւ հայ ժողովուրդը պիտի գերադասեր մենշևիկյան սոցիալիզմը բոլշևիկյան սոցիալիզմից... Փո- խարկելով պաշտոնների բաժանումը սովորական պարզ լեզվի,

ստացվում էր այն իրականությունը, որ իրան հայ ազգի ամբողջությունն համարող դաշնակցությունը կրում էր մինոր շարաշար պարտություն, ստանձնելով երկրորդական դեր կովկասյան նոր իրականության մեջ: Այսպիսով հայ ժողովուրդը կորցնում էր իր ունեցած դիրքն ու նշանակությունը» («Անցյալից», էջ 365—366—367):

Բայց հայ լիբերալ մտավորականի համար հետին թվով ձեռք բերած այս քաղաքական խմաստությունը չի վերացնում այն իրողությունը, որ դաշնակցական դադարախոսությունից հեռացած կեռն անդամ այն ժամանակ դեռ ազատագրված չէր անպետական մտածողությունից: «Վրացինքը, — այսինքն՝ մենշևիկները, գրում է նա, — մեծ հույս ունեին հայ զորքերի և հայդուկային խմբերի քաջության ու դիմացկունության վրա: Նրանցից ոմանք մեզ ասում էին, թե իրանց սպասելիքը մեր զինվորներից ավելի շատ է, քան իրանց զինվորներից: Բայց էրզումի անկումն այն առաջին մեծ հարվածն էր, որ գալիս էր ցնցելու այդ հավատը, մը բան, որ հետո ավելի ևս զարգանալով, պիտի վերին աստիճանի խախուտ դարձներ հայ-վրացական զինակցության հնարավորությունները» («Անցյալից», էջ 382): Հայ զորքի պարտություններն էին խախուտ դարձնում հիշյալ զինակցությունը, թե՝ մենշևիկների-մուսավաթիստների ու դաշնակցականների դաշինքն էր կանխորոշում հայ զորքի պարտությունը: Առայժմ թողնենք այս հարցը, որովհետեւ մեր ամբողջ աշխատությունը նվիրված է հենց այդ թյուրիմացության մերկացմանը: Այստեղ ասենք միայն այն, որ դեկտեմբեր-հունվար ամիսներին, երբ տեղի էին ունենում սովետական օրիենտացիայի անցնելու բանակցությունները, Թիֆլիսում Հայոց աղդային խորհրդի տրամադրության տակ շատ հայ զորք կար, որի վրա կարող էին հենվել սովետական օրիենտացիայի կողմնակիցները: Այս հանգամանքը դուր չէր գալիս վրաց մենշևիկներին, որոնք համեմատաբար քիչ զինվորական ուժ ունեին: Նրանք ճգնում էին դաշնակցականների գլխի տակ փափուկ բարձ դնելով հայկական զինված ուժերը հեռացնել Թիֆլիսից և հեռացրին՝ արագորեն բոլոր կարևոր դիրքերն

ու հաստատությունները կ'ոցնելով իրենց ձեռքը: Ահա թե ինչու «նրանցից ոմանք» հայ զորքի ուժի գովքն էին անում, շմոռանալով միայն նրան շուտափույթ մատնացույց անել ուղմանակատի հանապարհը:

Թուրքերի արշավանքը ֆիզիկական մահ էր բերում հայ ժողովրդին, սակայն որպես քաղաքականություն՝ այն նախ և առաջ ուղղված էր բանվոր դասակարգի և նրա ուսուցչական ժողովրդին: Անհանգստացած Անդրկովկասում բարձրացող պրոլետարական ուսուցչացիայի և ազգարային շարժումների ալիքից, ազրբեջանական բեկերը զինվոր էին ուսուցչացիոն Բաքվի դեմ և օգնության էին հրավիրում թուրքերին՝ ամեն կերպ հեշտացնելով նրանց առաջինադացումը: Այդ պայմաններում վրաց թավաղները, ի՞նչ խոսք, ազրբեջանական բեկերի կամակատարներն էին, և Թիֆլիսը չոքեց Գանձակի առաջ, Բաքուն մնաց անդրդվելի՝ օրյեկտիվորեն դառնալով իր ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար մտահոգված հայ ժողովրդի դաշնակիցը:

Իսկ Թիֆլիսում դաշնակցությունը 1917—1918 թվականների դեկտեմբեր-հունվար ամիսներին ավելի շատ հնարավորություններ ուներ, քան Բաքվում 1918 թվականի մարտ-ապրիլին: Եթե դաշնակցության գլխավոր մտահոգությունը միներ հայ բուրժուազիայի դասակարգային շահերի պաշտպանությունը, և նա իր դասակարգի այդ շահերը չգերադասեր ամբողջ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանության պրոբեմից, եթե նա չգառնար իմպերիալիստական ուժերի կամակատարը, այլ զործեր միայն հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունն ապահովելու ուղղությամբ, ապա ապահովված կլիներ Թիֆլիսի դաշինքը Բաքվի հետ, որովհետև վրաց մենշևիկները ո՛չ միայն զինական շոշափելի ուժ չունեին այն խանգարելու համար, այլև, ինչպես տեսանք, հարցի այդ կողմն էլ կոմպարտիան հաշվի էր առել:

Այսպիսով, դեկտեմբեր-հունվար ամիսներին սովետական օրիենտացիայից հրաժարվելով և թավադ-բեկական կոալիցիայի կռջմն անցնելով, դաշնակցությունը ոչ միայն նախապես վիճեցնում էր հայ ժողովրդի ինքնապաշտպանու-

թյան գործը, այլև նրան ինքնապտակված ժողովրդի վիճաւ կի մեջ էր դնում Անդրկովկասում:

Եվ այս դառն ճշմարտությունն իր ուրույն ոճով ու ձեակերպումով խոստովանում է նույնիսկ դաշնակցական շեֆերից մեկը՝ Ռ. Տեր-Մինասյանը (Ռուբեն փաշան) ավելի քան երեք տասնամյակ անց: Նա գրում է:

«...Աղքերի, այսպես ասած, «ալան-թալանի» վայրկաւնին, երբ անհատի դերը մեծ էր, հայերը (այսինքն՝ դաշնակցականները, որովհետեւ Ռուբեն փաշան այդ դադախարները նույնացնում է. — Հ. Թ.) շունեին ո՞չ Պետերբուրգում և ո՞չ Էլ Կովկասում մի պաշտոնական անձ, ձեակերպելու և ընթաց տալու իրենց պահանջներին: Այս հանդամանքը շեշտեցի նրա համար, որովհետեւ Անդրկովկասյան երկրամասի ներկա սահմանային դրույթունները հետեանք են նեղափոխուրյան առաջին օրերի մեր (այսինքն՝ դաշնակցության. — Հ. Թ.) ցուցադրած ապիկարության և անկարողուրյան» («Հայ հեղափոխականի մը հիշատակները», հ. է, էջ 129—130):

Ամբողջ երեսուն տարի շահատակել քաղաքական գործունեության ասպարեզում և խաղալ մի ամբողջ ժողովրդի բախտի հետ և միայն այդպիսի ուշացումով գիտակցել սեփական ապիկարությունն ու անկարողությունը, — սա ոչ այլ ինչ է, քան քաղաքական սնանկության վկայագիր, տրված դաշնակցությանը՝ իր իսկ կողմից հեղինակավոր համարվող նրա գործիշներից մեկի ստորագրությամբ:

Որքան որ դաշնակցական այդ գործիշը հայ ժողովրդի բախտը կապում է ոչ թե կարող պարտիայի, այլ կարող անձի հետ, թող թույլ տրվի հիշեցնել այստեղ, որ տաղանդավոր հայ ժողովուրդն այդ աղետավոր պահին ուներ իր ոչ միայն պաշտոնական, այլև կարող անձը, որն աղատ ու երջանիկ ապագայի ուղին ցույց տվեց ո՞չ միայն հայ, այլև անդրկովկասյան բոլոր մյուս ժողովուրդներին: Սակայն դաշնակցությունը Ռ. Տեր-Մինասյանի բառերով ասած՝ իր «ապիկարության և անկարողության», իսկ մեր որակումով՝ կոնտրունկուտիվոն դավաճանության հետևանքով, թշնամի հայտարա-

րելով փորձեց չեղոքացնել նրան: Եվ Շահումյանը հարկադրված եղավ իր ճիշտ գիծը իրագործել միայն պրոլետարական Բաքվում և Բաքվի հերոսական ինքնապաշտպանությամբ բարձրացնել անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական պայքարի դրոշը ու միաժամանակ փրկել հայ ժողովրդի ֆիզիկական գոյաւթյունը բովանդակ Անդրկովկասում:

ռուսական զինվորական ծառայության մեջ ռազմունակ աղդ էր դարձել և ուներ շոշափելի քանակությամբ նաև սպայական կադրեր:

Սակայն Կերենսկին հայ ժողովրդի սիրուն աշքերի համար չէր արձակել այդ հրամանը: Նրա կարգադրությունը տարածվում էր ոռուսական բանակում ծառայող բոլոր պղությունների, անգամ շիխուլովակ ծագում ունեցող ռազմագերիների վրա: Իդուր դաշնակցականների մամուլը, ցուցաբերելով իր քաղաքական տհասությունը, այդ ակտի համար գովեսաններ շոայլեց Կերենսկու հասցեին: Այդ հրամանի համար դրվատելով Կերենսկու քայլը, Ս. Վրացյանը «հրախտագիտություն» այլ կերպ շի կարողանում որակել նրան, քան «ոռուսական հեղափոխությունը անձնավորող Քերենսկի» («Հայաստանի հանրապետություն», էջ 23). իսկ գործին ավելի մոտիկ կանգնած Ա. Խատիսովը, որը բժ. Զավրիեի հետ միասին, — ի գեպ շատ ուշ, Հոկտեմբերի վերջերին և նոյեմբերի սկզբ՝ բին, — գնացել էր Կերենսկուց խնդրելու թույլ տալ, որ արևմտյան ռազմաճակատի հայ զորքը Անդրկովկաս տարվի, հաղորդում է, «Հայոց ազգային խորհուրդը դիմեց վարչապետ Կերենսկիին, խնդրելով թույլ տալ արևմտյան ճակատի բոլոր հայ զինվորներուն վերադառնալ Կովկաս և կազմել հատուկ հայկական զորաբանակ մը, պաշտպանելու համար Կովկասյան ճակատը: Կերենսկին կդանդաղեր» (Ա. Խատիսյան, «Հայկական հանրապետության ծագումն ու զարգացումը», էջ 7): Կերենսկուն ազգային զորամասերն անհրաժեշտ էին ուրիշ բանի համար: Գեներալներ Բագրատունուն, Բաղրամյանին Պետերուրդի կայազորի և շրջանի պետեր կարգելով նա հույս ուներ, որ հայազգի գեներալները հուսալի նեցուկ կլինեն ժամանակավոր կառավարության համար: Սակայն Հոկտեմբերյան մեծ ունեցուցիան հօդս ցնդեցրեց Կերենսկու պլանները: Արևմտյան ռազմաճակատի հայ զորքը հնարավոր շեղավ առանձնացնել և կազմակերպված բերել Անդրկովկաս: Միայն Հոկտեմբերից հետո արևմտյան ռազմաճակատի հայ զորքի մի մասը, այդ օրերի համար ընդհանուր կարգով, այսինքն՝ տարերայնորեն, հայավեկավ և, Բաքու—Թիֆլիս երկաթու-

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմը դեռ չէր վերջացել, սակայն թե՛ արևմտյան և թե՛ թուրքական ռազմաճակատներում փետրվարյան ունեցուցիչից հետո մարտական գործողությունները փաստորեն դադարել էին: Վարչապետ դարձած էսեր Կերենսկին Անտանտի աշխում իր գլխավորած Համար 1917 թվականի հունիսին ընդհանուր հարձակման դիմեց արևմտյան ռազմաճակատում: Հարձակումն անհաջող անցավ և շատ թանկ նստեց ոռուսական բանակին: Ռուսացին տրամադրություններով համակված բանակը չէր ուզում կովել իրեն անհարազատ նպատակների համար: Այդ անհաջողությունը Կերենսկուն հանգեցրեց ազգային զորամասեր կազմակերպելու մտքին՝ ավելի «հուսալի» զորամիավորումներ ունենալու հաշվով: Հայկական առանձին զորամիավորումներ կազմակերպելու հրամանը Կերենսկին որպես վարչապետ և գլխավոր հրամանատար տվեց 1917 թվականի հունիսի 28-ին: Այդ ժամանակ մոտավոր հաշիվներով ոչ պակաս, քան 150 հազար հայ մարտիկներ կային երկու ռազմաճակատներում և, ինչպես ցույց տվեց 1917 թվականի նոյեմբերի 20-ին Երևանում գումարված հայ սպայության համագումարը, — ուազմական կրթություն ու մարտական կոփվածք ստացած մի քանի հազար հայ սպայություն: Այդ նշանակում էր, որ շատ դաշտերից ի վեր անկախությունը կորցրած հայ ժողովուրդը

դու կտրված լինելու պատճառով, կուակվեց թաքվում և տրամադրվեց թաքվի կոմունայի պաշտպանության գործին:

Աղջային զորամիավորումներ կազմակերպելու վերաբերյալ 1917 թվականի հունիսի 28-ի հրամանը հնարավոր էր իրավործել միայն թուրքական ռազմականատառում, որտեղ, ըստ մոտավոր հաշվարկումների, կար շուրջ 80 հազար հայ զորք կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը, ի կատարումն գերազույն գլխավոր հրամանատարի 1917 թվականի հունիսի 28-ի հրամանի, հայկական գնդեր ու ապա դիվիզիա և կորպուս կազմակերպելու վերաբերյալ լրացուցիչ հրամաններն արձակեց հունիսի 2—5-ին, նոյեմբերի 18-ին և դեկտեմբերի 13-ին:

Ո՞վ պետք է կենսագործեր այս հրամանը. Օղակոմի հայ անդամը, որն անհող և անզոր էր, Հայ աղջային խորհուրդը, որ հոկտեմբերի սկզբին նոր պիտի կազմակերպվեր, հայ սպայության ղեկավար մարմինը, որը նոր պիտի ստեղծվեր նոյեմբերի 20-ից հետո: Մնում էր միայն գրավված վայրերի նոր կառավարչի հայ տեղակալը, որի հետ շատ հույսեր էին կապում, բայց նա այդ օրերի մեծագույն թյուրիմացուաթյունն էր:

Փետրվարյան ունվարությունը հետո ժամանակավոր կառավարությունը նորանվաճ վայրերի կառավարումը վերցրեց Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության իրավասությունից, անմիջականորեն ենթարկեց կենտրոնական կառավարությանը և 1917 թվականի ապրիլի 26-ին «հայասեր» գեներալ Ավերյանովին կարգեց նորանվաճ վայրերի կառավարիչ, Գեներալ Ավերյանովին իր այս նոր պոստում իրեն քաղաքացիական գծով տեղակալներ կարգեց դաշնակցական բժիշկ Հ. Զավրիկին և մենշևիկ Գլունտիին: Եթե բժիշկ Զավրիկին ի վիճակի լիներ գլուխ հանելու իր պաշտոնից, ապա նա շատ բան կարող էր անել: Սակայն նա, հակառակ իր մեծ եռանդին և համառ բնավորությանը, չէր ըմբռնում իրադրությունը, չէր ճանաշում մարդկանց և բնավ օժտված չէր գործարար հատկություններով: Զավրիկի համախոհները՝ դրվատելու մտա-

նությամբ՝ մի առանին բավականությամբ նրան անվանում են նաև «միտտիկ»:

Կարո՞ղ էր արդյոք ընդհանուր փլուզման և ներհակ ուժերի թե՛ ծածուկ և թե՛ բացահայտ բախման խառն իրադրության մեջ, երբ դեռ Հայ աղջային խորհուրդը չէր կազմակերպության մասնակի և հայ սպայության համագումարը չէր գումարվել, կարո՞ղ վել և հայ սպայության համագումարը չէր գումարվել, կարո՞ղ էր, հարցում ենք, Արևմտահայաստանի «միտտիկ» կոմիտարնապահովել հայկական զորամասերի կազմակերպված առանձնացումը Կովկասյան ռազմաճակատում: Պարզ է, որ չէր կարող Սակայն այդ առանձնացումը շատ շնչին շափով կարող էր այսպիսի հակառակ գտնվող շուրջ 80 հազար հայ դորքից (Կովկասյան ճակատում գտնվող շուրջ 80 հազար հայ դորքից հնարավոր եղավ ռազմաճակատի առաջին գծի վրա պահել ու ավելի քան 2000 կադրային զորք) տեղի ունեցավ, բայց տեղի ունեցավ միայն տարերայնորեն: Օրինակ, 1918 թվականի հայկական ինքնապաշտպանության մարտերում երգընկալից մինչև Սարդարապատ իրեն փառքով պասկած գումարության մեջ իշխանության ներկայացուցչությունն իր սպայության մեջ իշխանության ներկայացուցչությունն իր սպայության մասնությունը և այդ պատճառով իր սպայության ատող ոռու գորքը Հոկտեմբերից հետո հաճախ ինքնապատաստաններ էր կազմակերպում սպայության գլխին: Երզնկայի շրջանում այդպիսի բացօթյա ինքնապատաստանների ժամանակ հերթը հասնում է նաև ախալցխացի երիտասարդ գնդապետ Կարո՞ղ ասանում է նաև ախալցխացի երիտասարդ գնդապետ Կարո՞ղ ասաբբաշյանին (Հասանփաշայանին): Սակայն զորքը նըկատի ունենալով նրա ընկերական վարչեցողությունն ու ռազմական սխրանքները, ոչ միայն ինքնապատաստանի չի ենթարկում երիտասարդ սպային, այլև նրան հոչակում է իրենց հրամանատար: Զորքի մեջ փոքր թիվ շէին կազմում իրենց հրամանատարը գորքի մեջ փոքր թիվ շէին կազմում իրենց հայ զինվորները, որոնք սերտորեն համախմբվում են իրենց գնդապետի շուրջը: Շուտով ոռու զինվորները մասսայաբար լքում են ռազմաճակատը, իսկ մոտակա այլ զորամիավորումների հայ մարտիկները գալիս համախմբվում են Դաստիարակյանի շուրջը: Այսպիսով կազմակերպվում է Դաստիարակյանի երզնկայի գումարտակը՝ կազմված մեծ մասամբ բաշխանի երզնկայի գումարտակը՝ կազմված մասամբ բաշխանի երզնկայի գումարտակը: Դեռ 1916 թվականին, ցարական իշխա-

նության օրոք, կամացորական գնդերի լուծարքից հետո, այդ գնդերի ոռուաճապատակ զինվորներից կազմակերպվել էին հայկական գնդեր, որոնց շարքերը շատ նոսր էին:

1917 թվականի սեպտեմբերի 28-ին Թիֆլիսում գումարվում է Հայոց ազգային համախորհրդակցությունը: Հոկտեմբերի սկզբին կազմակերպվում է Հայոց ազգային խորհուրդը, որը Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ Մատեֆան Մամիկոնյանին կարգում է ուսումնական գործերի լիազոր: Այդ կարեւոր պոստում Մամիկոնյանի նշանակումը, որ դաշնակցական չէր, բացատրվում է այն բանով, որ նա հարմարագույն մարդն էր հայազգի գեներալների հետ լեզու գրանելու գործում: Հայ գեներալները չեին սիրում իրենք իրենց «սոցիալիստ» հորջորջող դաշնակցականներին: Բայց սպավող պատերազմը գեներալների պատերազմ չէր: Հայազգի գեներալները սովոր էին թշնամու դեմ դուրս գալ ոռուական հզոր ու վիթխարի բանակի շարքերում, իսկ այժմ հարկավոր էր թշնամու դեմ դուրս գալ միայնակ: Ռուսական բանակի հայազգի գեներալներն այսպիսի պատերազմում անելիք չունեին: Նրանք կարող էին ավելի շուտ խանգարել գործին, և իրոք մեծ շափով խանգարեցին:

Ի դեպ, մի քանի խոսք ոռուական բանակի հայազգի գեներալների և հայ ստվարաթիվ սպայության մասին:

Ալեքսանդր Խատիսովը հաղորդում է, որ իր գլխավորած կարինետում զինվորական մինիստրի պոստը գրավող «Զորավար Հայվերգովը... հայերեն չէր դիտեր: Հայերեն չեին գիտեր նաև զոր. Միլիկյանը և զոր. Նազարեակյանը: Եվ ասիկա անկասկած մեծ թերություն մըն էր, որ անկարելի էր արդեն ուղղել» («Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը», 1928 թ., Աթենք, էջ 76): Բայց բանը միայն հայերեն իմանալը կամ շիմանալը չէր, այլ այն, որ, ինչպես պիտի տեսնենք, նրանք հայ-թուրքական պատերազմի վրա նայում էին որպես ոռու-թուրքական պատերազմի շարունակության վրա:

Հայոց ազգային խորհուրդը, օրինակ, Թիֆլիսից Բաքու է ուղարկում գնդապետ Եղիազարովին՝ այնտեղ հայկական 2-րդ պահեստի գունդ կազմակերպելու համար: Բաքվում

մի բանի ոռու սպա խոշընդուներ են հարուցում: «Մնում էր,— հաղորդում է Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահ զաշնակցական Ա. Գյուլիսանդանյանը,— դիմել բոնի միջոցի: Սակայն գնդապետ Ա. Եղիազարովը... համոզված էր, որ վաղը կամ մյուս օրը ցարը կգա և օրենքին հակառակ գնացողներին պատասխանատվության կենթարկի և խիստ կըպատժի» («Հայրենիք», 1941 թ., № 10, էջ 103): Իսկ Վահան Փափազյանը իր հուշերի մեջ պատմում է նույնիսկ, որ հայազգի գեներալ Թամամշենը սպանում էր կրակ բաց անել վանի նախավերջին գաղթի ժամանակ Չինգիլի լեռնանցքից Արարատյան դաշտն իջնող հայերի վրա:

Հայազգի գեներալների մեջ բացառություն էր կազմում միայն գեներալ Գամազյանը (Համասյանը), բայց նրան, երեկի հենց այն բանի համար, որ նա բացառություն էր կազմում, զիսավոր հրամանատար գեն. Նազարեակովը երբեք ըստ արժանվույն չօգտագործեց:

Հայ սպայության թիվը մեծ էր: Բայց հայ սպաների մեծ մասը Անդրկովկասում չէր, իսկ Անդրկովկասում գտնվողներից շատերը խուսափել էին զինվորական ծառայությունից, ուսաղիբները պոկել ու դարձել էին սովորական քաղաքացիներ: Այնուամենայնիվ, ուսումնակատում գործող զորամասերում և Ազգային խորհրդի տրամադրության տակ գտնվող հայ սպաների թիվն անցնում էր մեկ հազարից: Դա էլ շատ պատկառելի թիվ էր:

Նման բարձրաստիճան սպաներից շատերը նույնպես հայերեն չգիտեին և հայ կյանքից կտրված էին: Բացառություն էին կազմում մի քանի տասնյակ գնդապետներ ու փոխգնդապետներ, որոնք թեև գերադասում էին խոսել ոռուերեն, բայց շատ թե զիս հայերեն գիտեին, ոչ միայն չեին կորցրել իրենց ազգային գեմքը, այլև չերմ հայրենասերներ էին, իրենց ժողովրդին նվիրված մարդիկ: Կրտսեր սպայությունը՝ պրապորչիկները, պողպուշիկները, շտաբսկապիտանները և կապիտանները մեծ մասամբ հայերեն գիտեին և չերմ հայրենասերներ էին:

1917 թվականի նոյեմբերի 5-ին Հայոց ազգային խորհուրդը կատարում է իր առաջին ամենախոշոր ճակատագրական սխալը: Նա հայ-թուրքական պատերազմը ղեկավարելու համար միանգամայն անհամապատասխան ֆոմա նազարբեկովին վերակնքում է Թովմաս Նազարբեգյան և նշանակում է հայկական կորպուսի գլխավոր հրամանատար: Նոր գլխավոր հրամանատարն անմիջապես հանդես եկավ մի կոչով, որը նրա դիրքի սնանկության պերճախոս ապացույցն է: «Կատարենք, — ասում է նա իր կոչի մեջ, — մինչև վերջ մեր պարտը հայրենիքի (այսինքն՝ Ռուսաստանի. — Հ. թ.) և հայ ժողովը առաջ և թող պարզորեն տեսնեն Ռուսաստանը և մեր քաջարի ու հավատարիմ դաշնակիցները, որ մենք արժանի ենք նրանց վստահությանը» («Մշակ», 1917 թ. դեկտ. 28, № 272): «Քաջարի ու հավատարիմ» դաշնակիցներին 1918 թվականի օգոստոս-սեպտեմբերին մենք տեսնք Բաքվում, որտեղ նրանք ամենեին էլ սրաջարի» շեղան, իսկ 1918 թվականի նոյեմբերից և 1919 թվականին՝ ամբողջ Անդրկովկասում, որտեղ նրանք ոչ միայն հավատարիմ շգտնվեցին ու շնչառատեցին իրենց իսկ բերանով «փոքրիկ դաշնակից» հայտարարված հայ ժողովրդին, այլև բացահայտ թրբասիրական կուրս վարելով՝ ավելի շատ հայ կոտորել տվին Դարարաղում ու Նախիջևանում, քան 1918 թվականի թուրքական օկուպացիայի ժամանակ կոտորվել էր ամբողջ Անդրկովկասում: Իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա ո՞չ Հայոց ազգային խորհուրդը և ոչ էլ Նազարբեկովը Սովետական Ռուսաստանը ո՞չ ճանաչում էին, ոչ էլ ընդունում, իսկ նրանց ճանաշած և ընդունած «Ռուսաստանը» գոյություն չուներ և այլև շպիտի ունենար: Բայց ի՞նչ փուլիք: Թող գոյություն չունենար: Սակայն նրանք, անպետական մտածողության 20-րդ դարի հայ գոն-քիշուտները հայկական Ռուսինունտը հեծած պիտի շարունակեին ասպետական հավատարմությամբ ծառայել միմիայն անգո այդ Ռուսաստանին:

Մի քանի խոսք Կովկասում և Կովկասյան ուղղմանակատում մնացած ուսւասպառության մասին:

Ինչպես արդեն ասացինք, ցարական գերագույն հրամա-

նատարությունը անգամ սկզբնական շրջանում (1914 և 1915 թթ.) կեղծ հայասիրական քաղաքականություն վարելով, չեր մոռացել Կովկասյան ուղղմանակատը խճողել թաքուն և բացահայտ հայատյաց սպաներով, որոնք հավաքագրվուած էին սևարյուրյակին ունակցիոն տարրերից, վրաց թավաղներից, Կազանի թաթարներից, ինչպես նաև ուսւացած գերմանացիներից և լեհերից: Մրանց մեծ մասը, ինչպես ասացինք, թշնամի էր ոչ միայն Հոկտեմբերյան, այլև անգամ փետրվարյան ռեսլյուցիային:

Կովկասյան ուղղմանակատի մերկացումը տեղի ունեցավ հայկական զորամասերի առանձնացման ժամանակաշրջանում, մանավանդ 1917 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Ռուս զորքը հոկտեմբերից առաջ էլ բռնել էր մասսայական դասալքության ուղին: Ոչ պաշտոնական զինադադարը, որն սկսվել էր փետրվարյան ռեսլյուցիայից հետո և շարունակվեց մինչև 1917 թվականի դեկտեմբերի 18-ը, այսինքն՝ ամբողջ ինն ամիս, զորքին և սպայությանը մասսայարար արձակուրդներ տալու համարավորություն էր ստեղծել: Մեկ կողմից, հայրենիքում ծավալվող ռեսլյուցիոն իրադարձություններն ու հասարակական կյանքի խանդավառորեն տոնական աշխույժն էր գրավում հեռավոր իրամատներում վայրենացման դատապարտված երիտասարդությանը, մյուս կողմից, բարձր հրամանատարությունը, մանավանդ նկատի ունինալով թուրքերի կատարյալ անշարժությունը, ուղղմանակատը «անհանգիստ տարրերից» բեռնաթափելու անհրաժեշտություն էր զգում: Մասսայական պաշտոնական արձակուրդները հոկտեմբերից վերածվեցին մասսայական դասալքության: Հոկտեմբերյան ռեսլյուցիան ընդունելու և փաստորեն կենտրոնի սովետական իշխանությունից անշատվելու վերաբերյալ անդրկովկասյան կառավարության ունակցիոն որոշումից (1917 թ. նոյեմբերի 24) հետո ուղղմանակատի մերկացումը տարերային բնույթ ընդունեց: Ռուս զորքը տեղ-տեղ ամբողջ զորամիավորումներով, տեղ-տեղ էլ անսանձ հեղեղի նման լքեց ուղղմանակատը՝ բռնելով տուն վերադառնալու ուղին: Ինչպես նահանջի ուղիների անկանոնության և երկա-

թուղային սահմանափակ հնարավորությունների, այնպես էլ մանավանդ անդրկովկասյան կոմիսարիատի կառավարության թշնամական գործողությունների հետևանքով, ամբողջ զորամիավորումներով նահանջող զորքն էլ ճանապարհին, դեռ Թիֆլիս Հասած, վերածվեց խառնիճաղանց զանգվածի: Պետք է ասել, որ նման իրազրություն էր ստեղծված նաև գերմանական ռազմաճակատի ոռու զորքի մեջ: Այնուամենայնիվ, սովետական հրամանատարությանը, թեպետև շատ մեծ դժվարությամբ, հաջողվեց հոգնած զորքի որոշ մասը պահել ռազմաճակատում, ապա հերոսական մարտի տանել և պաշտպանել մայրաքաղաքը՝ Պետրոգրադը: Նոր իրադրությունը պահանջում էր հյանքի գնով պաշտպանել սոցիալիստական հայրենիքի մայրաքաղաքը, և ոռու զինվորը կատարեց այդ պարտականությունը: Հակառակ վիճակ էր ստեղծված Անդրբեկովկասում: Վրաց մենշևիկների և ադրբեջանական մուսավաթիստների բլոկը, որին միացել էին նաև զաշնակցականները, Սովետական Ռուսաստանից կտրվելու ակտով թթշնամական դիրք էր բռնել ոռու զորքի նկատմամբ: Դրա համար էլ Անդրկովկասին սպառնող թուրքական առաջխաղացման վտանգն այլևս ամենաին չէր հուզում այդ զորքին: Նա ոչ միայն ուզում էր տուն գնալ, այլև ձգտում էր հեռանալ Սովետական Ռուսաստանից անջատված ու նրան թշնամական դարձած Անդրկովկասից: Եվ մենշևիկյան-մուսավաթական բլոկն էլ ամեն միջոց գործադրում էր այդ զորքին մասսա ու մասսայաբար զինաթափելու համար: Շամխորի դեպքերն (1918 թ. հունվարի 18) սկ տառերով արձանադրված են պատմության մեջ:

Ոռու զորքը ռազմաճակատը լրում էր, թողնելով ռազմամթերքի ու պարենամթերքի վիթխարի պաշարներ, որ ինչպես ուսւական հրամանատարությունը, այնպես էլ գործող բանակին օժանդակող ամեն տեսակ կիսաքաղաքացիական կազմակերպությունները կուտակել էին Կովկասի, Արևմտահայաստանի տարրեր վայրերում: Ռուս սպայության ոեակցիոն հատվածը, կշռադատելով հայրենիքի փոթորկալից իրադարձություններից առժամանակ հեռու մնալու նպատակահար-

մարությունը և կուշտ կյանքը գերադասուելով թիկունքի սովորակությունից, պազզած մնացել էր Արևմտահայաստանում զիվված պարենամթերքի հարուստ պաշարների շուրջը: Սովորաթիվ սպանների հետ միասին մնացել էին միայն շատ սակավաթիվ զինվորներ: 1917 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ռազմաճակատը տարերայնորեն լրող զորքը հաճախակի ինքնադատատաններ էր կատարում զորքի կողմից առավել ատված առանձին սպանների նկատմամբ: Առանձնացվող հայկական զորամասերում կյանքն ավելի ապահով էր: Եվ երեկվա հայատքաց սպայությունը, որը հատկապես Կովկասյան ռազմաճակատ էր բերվել Հայաստանն առանց հայերի դարձնելու համար, ստեղծված նոր իրադրության մեջ հաճախ ասկավինում էր հայկական զներին ու գումարտակներին, անգամ հայրենիք վերադարձած արևմտահայերի կազմած աշխարհազորային երկրապահ զոկատներին:

Գեներալ Նազարենեկովն, իհարկե, այն մարդը չէր, որ հասկանար այս նոր «գաշինքի» անկայունությունը: Ինքը հայ ժողովրդից հեռացած, ոեակցիոն տրամադրություններով տողորված մի ցարական գեներալ, բնականաբար, չպիտի կարողանար ըմբռնել այդ «գաշինքի» վտանգավորությունը և, խորություն զնելով, ռազմաճակատի բոլոր կարևոր օջակների զեկավարությունը կենտրոնացնել միայն վստահելի ձեռքերում: Բայց, դժբախտաբար, գործի ընդհանուր դրվագքն այնպես էր, որ կամենալու դեպքում իսկ Նազարենեկովն էլ շատ բան անել չէր կարող: Դաշնակցությունն իր անմիտ ու դավաճանական ընթացքով արդեն նախապես անհաջողության էր դատապարտել ամեն մի ճիգ, ով էլ որ այն գործադրելու վիճեր:

Թոլորն էլ գիտեին, որ թուրքերի դեմ փաստորեն պիտի կովեին միայն հայ զինված ուժերը, սակայն մենշևիկների, մուսավաթիստների և դաշնակցականների զաշինքն այնպիսի անհեթեթ իրադրություն էր ստեղծել, որից ոչ ոք չէր կարող դլուխ հանել: Այսպես, սկզբնական շրջանում Անդրկովկասյան կոմիսարիատի զինվորական մինիստրն էսեռ Դոնսկոյն էր, որը շարունակ տաշում էր զոյություն շունեցող հին Ռուսաս-

տանի կողմը Դոնսկոյի տեղակալը դաշնակցական Պարույր Լեռնյանն էր: Էրզրումի անկումից հետո և Կարսի անկման նախօրյակին իրեն թե հայասեր Գեգհէկորին հրաժարական տվեց և Անդրկովկասյան կոմիսարիատի կառավարության նախագահ դարձավ բացահայտ թրքոֆիլ Ակակի Զիսենկելին: Եյս վերջինս ազատեց էսեռ Դոնսկոյին ու նրա տեղակալ Պարույր Լեռնյանին և զինվորական մինիստրի պորտֆելը հանձնեց ուն Գերգածեի՝ նրան տեղակալ կարգելով՝ ոչ անհայտ գեն. Օդիշելիձեին, որը ուազմաճակատի հրամանատարի պոստով նախապատրաստել էր էրզրումի անկումը, իսկ մինիստրի տեղակալի պոստով պիտի կազմակերպեր Կարսի վաճառքը:

Այսպես էր դրությունը զինվորական մինիստրությունում: Իսկ ինչ վերաբերում է հրամանատարությանն ու շտաբին, ապա այնտեղ դրությունն է՝ ավելի անմխիթար էր: Ցարի ու ժամանակավոր կառավարության ժամանակվանից մնացել էր Կովկասյան բանակի գերագույն հրամանատարությունն իր շատ ուռնացած կազմով: Ըստական բանակն այլևս չկար, սակայն նրա նախկին հրամանատարությունը շարունակում էր ոչ միայն պահպանել իր գոյությունը, այլև տնօրինել: Դոնսկոյի օրոք գերագույն հրամանատարը գեն. Պրժեկալսկին էր, որը 1918 թվականի ապրիլի սկզբին հրաժարական տվեց և զնաց Հյուսիսային Կովկաս՝ տիրահոչակ Կարառուլովի հետ սովորական իշխանության դեմ խռովություն կազմակերպելու համար: Նրան փոխարինեց գեն. Լեբեդինսկին, որը թեև շատ բան ճիշտ տեսնում էր, սակայն նոր մարդ էր այդ պոստով և կամապահամա լսում էր շտաբի պետին, որն անփոփոխ մնացել էր իր պոստով և ամեն ինչ կենտրոնացրել իր ձեռքում: Կովկասյան բանակի գերագույն հրամանատարության շտաբի պետը վրաց թավադ գեն. Սերգո Մդիվանին էր: Գեն. Մդիվանու մասին գաղափար կազմելու համար բակական է ասել, որ երբ 1915 թվականի գարնանը ուստական բանակը մտավ Թիթլիսի վիլայեթի Հյուսիսային շրջանը, 5-րդ կորպուսի շտաբի պետ՝ այն ժամանակ գեռ գնդապետ Սերգո Մդիվանին տեսնելով, որ Մշտ դաշտի հայությունը դեռ կո-

տորված չէ, նույն զորամասի հետախուզության պետ դաշնակցական Դնոյանի ձեռքով գրված տեղեկությամբ, գեներալ Թգանկովսկուն սարսափեցրեց թուրքական իրեն թե մոտեցող համալրումներից և կազմակերպեց ուստական զորքի անտեղի նահանջ: Արևմտահայերի Ապահովության խորհրդի նախագահ Վահան Փափաղյանին ու նազարբեկովի շտաբի հետախուզության պետ Դնոյանին անհայտ չպիտի լիներ Սերգո Մդիվանու այս հանցագործությունը: Սակայն 1918 թվականին գեն. Ս. Մդիվանուն մերկացնողը միայն Ստ. Շահումյանը եղավ: Շամխորի գեպբերի առթիվ իր «Ճշշմարտությունը ելիզավետպոլի իրադարձությունների մասին» հոդվածում («Բակինսկի ուարոշ», 1918 թ. ինտրուզի 21 և 22, № 30 և 31) Ստ. Շահումյանը գրում է.

«Մենք գիտենք նաև այն, որ Հունվարի 9-ի առավոտյան Ելիզավետպում հեռագիր է ստացվել վրահապատ գնացքի պետ Արխազավայի և մուսուլմանական վայրենի դիվիզիայի պետ իշխան. Մաղալովի* անունով, — մի մեծ երկիմաստ հեռագիր շտաբի պետ Մդիվանից, որ ստորագրած է եղել ուազմաճակատի կոմիսար Գորեշիան, այն մասին, որ գարնանը Շահումյան, Ծնոտիր երկեր, Երևան, 1948 թ., էջ 539): Ահա այս գեն. Ս. Մդիվանին, որ թիֆլիսում նստած մտածում էր միայն այն մասին, որ թուրքերի հարձակման ժամանակ մուսավաթական բանդաները հայ զորքի թիկունքում զինված լինեն նաև հետանիով, իր ձեռքումն էր կենտրոնացրել մինչև անգամ Երևանի պարետ կարգելու գործը: Սարիզամիշի և Կարսի անկումից հետո անգամ գեն. նազարբեկովը շեր կարողանում փոխել հուզ

* Երբ 1918 թ. Հունիսին նուրի փաշան ժամանեց Գանձակ և սկսեց կազմակերպել «իսլամի բանակը», իշխան Մաղալովն իր միսիսան ավարտված համարելով՝ իր «Վայրենի» դիվիզիան հանձնեց նուրի փաշալին, իսկ ինքը վերադարձավ իր հայրենի Վրաստանը և մենշեկների օրոք գործում էր արդեն «Մաղալաշվիլի» ազգանունով: — Հ. Թ.

Հերևոր դարձած Ալեքսանդրապոլի քերդի՝ գեն. Մղիվանոս
նշանակած պարետ լին գնդապետ Յանկևիչը:

Ընդհանուր փլուզման այդ ժամանակաշրջանում վտանգի
ահավորության առաջ ոռուսական բանակի սպաների մեջ էլ
զարթնել էր ազգային տարբեր պատկանելության բնազդը:
Ռուսացած լին ու ոռուսացած գերմանացին ցարական վիթ-
խարի բանակի զորեղ կազմակերպության մեջ ոռուսական
սպաներ էին: Բայց երբ այդ վիթխարի բանակը կազմալուծ-
վեց և նրա ամեն մի միավոր հարկադրված եղավ անձամբ
մտածել իր անձի պաշտպանության մասին, ոռուսացած լին
սպան դարձավ լին և ոռուսացած գերմանացի սպան դարձավ
գերմանացի: Օրինակ, Վանի ռազմաճակատում՝ բակական
թվով ոռուսացած գերմանացի սպաներ կային, և հրետանին
հանձնված էր նրանց: Ռազմաճակատի մյուս կետերի նման
քանի դեռ անհրաժեշտ էր տարերայնորեն նահանջող ոռու-
զորքի դատաստաններից պաշտպանություն գտնել հայկական
գորամասերում կամ նրանց առնթեր, Վանի ռազմաճակատի
ոռուսացած գերմանացի սպաները հայկական զինված ուժերի
հետ էին, իսկ երբ այդ վտանգն անցավ և սկսեց թուրքական
առաջխաղացումը, ապա այդ սպաները գերադասեցին անցնել
թուրքերի կողմը, առանց հրետանու թողնելով հայկական
զինված ուժերը:

Սակայն Կովկասյան ռազմաճակատում կային նաև ան-
կեղծորեն ինչպես հայկական զինված ուժերի մեջ մտած,
այնպես էլ իրենց փոքրիկ միավորումներով հայկական զին-
ված ուժերի հետ համագործակցող ոռուս սպաներ, որոնք մինչև
վերջը հերոսարար կովեցին թուրքերի դեմ: Այդպես էին ծա-
գումով ֆրանսիացի սպա Մորելը, որը Երզնկայից սկսած
միշտ էլ գտնվում էր առաջավոր գծում և ամենապատասխա-
նատու պոստերում, ծագումով հույն Սալելլարին՝ Իգդիրի,
Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերի հերոսը,
Կարսի հրետանու հմուտ պետ ոռուս գեներալ Դեկը, Սարդա-
րապատի ոռուս հերոսներ կապիտան Կլիչը, գնդապետներ Սի-
մինը, Պերեկլյուստկովը և ուրիշներ, Սարդարապատի և Բաշ-
Ապարանի հերոս կազակ փոխգնդապետ Կորուկովը: Այդպի-

սին էր նաև ոռուս գնդապետ Եֆրեմովը, որն ուներ 200 ռուս
սպայից և 100 ռուս զինվորից կազմված իր փոքրիկ, բայց
շատ մարտական զունդը, որն առանձնապես աշքի ընկալ
Սարիղամիշի համառ մարտերում, մասնակցեց Մեծ Ղա-
րաբիլիսայի (ներկայիս Կիրովականի) հերոսամարտին:

Ո՞չ գեներալ Նազարերկովը և ոչ էլ նրա առաջ քաշած
մյուս հայազգի զեներալներն ի վիճակի շենքու և ըմ-
բռունելու այս ամենը և ճիշտ կողմնորոշվելու այդ նոր, հայ-
թուրքական պատերազմում, որը թեև արտաքուստ նախկին
ոռուս-թուրքական պատերազմի շարունակությունն էր, բայց
ստեղծված նոր բարդ իրադրության մեջ, երբ ոռուսական ռես-
ուրցիայի ծավալման ու խորացման դեմ սանձազերծված
դասակարգային հակասություններն Անդրկովկասում գերաճել
էին ազգային սուր հակամարտության և սպառնում էին մե-
նակության դատապարտված հայ ժողովրդի ֆիզիկական գո-
յությանը, հայ ժողովրդի համար գոյամարտի բնույթ էր
ստացել:

Նոր պատերազմի այս ժողովրդական գոյամարտի բնույ-
թը սկզբից մինչև վերջը առեղծված մնաց ցարական բանակի
շարքերում դաստիարակված զեներալ Նազարերեկովի և նրա
շուրջը խմբված հայազգի և այլազգի ռեակցիոն զեներալների
համար: Դժբախտաբար, ոչ մի պարտություն նրանց խելքի
շրերեց: Այստեղ նորից մենք գործ ունենք դասակարգային
կուրության հետ: Ժողովրդի ինքնապաշտպանության արդար
գործը պետք է զեկավարեին ժողովրդի մարդիկ, և ոչ թե ցա-
րական հայսպատիկ կամ այլազգի ռեակցիոն զեներալները:

Նազարերեկովի ճակատագրական սխալն ավելի պարզորոշ
դարձնելու համար ասենք, որ քանի նա՛ էր զեկավարում և
իշխում էր նրա գիծը, հայ զորքը նահանջում էր՝ հեշտությամբ
թուրքերին հանձնելով համաշխարհային անուն ունեցող
անառիկ բերդաբաղներ, սակայն հենց որ Ալեքսանդրա-
պետի անկումից հետո ստեղծված նոր պայմաններում փաս-
տորեն վերացավ նրա զեկավարությունն ու գիծը և պատե-
րազմն ընդունեց ինքնապաշտպանության ժողովրդական գո-
յամարտի բնույթ, հայ զորքն ու աշխարհազորայինները կը-

վեցին շտեսնված հերոսությամբ և փայլում հաղթանակներ տարան ու «թուրքերին հարկադրեցին միառժամանակ փոխել իրենց քաղաքականությունը», հաշտվել Արարատյան հանրապետության գոյության հետ:

Իրարամերժ պարտիաների անվանական կոալիցիային ոչ ոք չէր հավատում: Ամենքն էլ գիտեին, որ Անդրկովկասյան կոմիսարիատն ամբողջությամբ վերցրած թշնամաբար է տրամադրված հայ ժողովրդի ճիպերին և ամեն կերպ աշխատում է ու կաշխատի վիժեցնել նրա զանքերը: Այդ նոր իրադրության մեջ իր հաստատում գծով և վճռական գործողություններով հայկական հրամանատարությանը և հայ գեներալներին օգնության պիտի հասներ Հայոց ազգային խորհուրդը, որի նախագահն էր Ավ. Ահարոնյանը: Մակայն չխոսելով նրա գրական հեղինակության մասին, շենք կարող շարձանագրել, որ այդ պատասխանատու պոստում նրա քաղաքագիտական հեղինակությունը կասկածելի էր անխտիր բոլորի, այդ թվում նաև նույնիսկ դաշնակցականներից շատերի համար: Վերջիններս կարծում էին, որ նրան կհաջողվի իր գրչի ուժով հուսու ու խանդավառության, հավատի ու կայունության կրակ վառել հայերի սրտերում, իսկ մնացածը կանեն մասնագետ գեներալները և հայուկային դպրոցն անցած երեկվա ֆիդայինները:

1917 թվականի գեկտեմբերի 16-ին, այսինքն՝ Բրեստի նախնական դիմադրաբի կնքման օրը, Թիֆլիսի հայկական «Մշակ», «Հորիզոն» և «Հայաստան» օրաթերթերում Ավ. Ահարոնյանի ստորագրությամբ լույս տեսավ Հայոց ազգային խորհրդի «Ահազանգը»: Թեև արդեն հայկական զորամասերի կազմակերպման և առանձնացման հրամաններ էին արձակվել Կերենսկու և նրա Կովկասյան հրամանատարության կողմից, թեև արդեն ավելի քան մեկ ամիս առաջ գեն. Նազարբեկովը նշանակվել էր հայկական կորպուսի հրամանատար, սակայն քայլայված ուղղմանակատներից տուն վերադարձած հայ սպաների ու զինվորների մեծ մասը նստած մնացել էր տանը ու շէր էլ մտածում մտնել հայկական զորամասերը: Անդը հոգածկառապան կոմիսարիատը, հասկանալի պատճառներով,

ձգձում էր զորահաղաքի հրամանի հրապարակումը: Հայ ազգային խորհուրդը պատրաստվում էր 1918 թվականի սկզբին հրապարակելու մասնակի զորահավաքի հրաման, որ կարելի էր իրագործել միայն հայաշատ վայրերում: Ավ. Ահարոնյանն շտապում էր իր հեղինակությամբ հայկական բանակի շարքերը հրավիրել տանը նստած դասավիքներին: Եվ փոխանակ պարզ ու հասկանալի լեզվով բացատրելու հայ ժողովրդի վրա կախված ահեղ վտանգը, ասելու, որ ուրիշ ելք չկա, քան նորից բանակի, այս անդամ հայկական գնդերի մեջ վերադառնալը, Ահարոնյանը նրանց դիմում է մի լեզվով, որն անհասկանալի էր ոչ միայն դասավիքներին, այլև անդամ ճոռոմ ոճի վարժված դաշնակցական մտավորականներին: Ահա մի հատված նրա «Ահազանգից», որի ոճը նրա մտածողության բնորոշ հայելին է:

«Եվ առաջին անդամ իմ կյանքում ես ատում եմ պատրանքը, ե՞ս որ միշտ այնպիս երազը սիրեցի, դյութական ծաղկը մեր ցավոտ պարտեղներում:»

Եվ գարձյալ հոգիս ալեկոծ է ոչ այս մութ սարսափից, որ մի հսկայական սարդ եռանդով հյուսում է մեր գոյության շուրջը, կազմալուծելով և պոկելով մեր կամքը, մեր եռանդը, մեր մտածումները, մեր հավատն իսկ. հոգիս ալեկոծ է ոչ այս ահազանգից, որի զողանքը ծովածավալ փովում է մեր աշխարհի վրա, այլ ես սոսկում եմ մտածելով՝ որ գուցի նրա շշմեցուցիլ շոփնդը շի հասնի հենց նրանց ականջին, ուժ համար հեկեկում է նզովված պղինձը:

Հանդարտ, սիրտ իմ, մի՛ թպրտա խելահեղորեն, թող որ խոսքս հնչվի վիթխարի ահազանգի պես:

Եվ այժմ ձեզ եմ ասում, բոլոր դասավիքներ: Հատուցման ժամն է հասել» («Հորիզոն», 1917 թ. դեկտ. 16):

Ինչպիսի հատուցման ժամ էլ որ հասած լիներ, այս «շոփնդը» շէր հասնի նրանց ականջին, «որոնց համար հեկեկում էր նզովված պղինձը», որովհետև այն արդեն նախապես շշմեցը էր հեղինակին և ահազանգի՝ նման ձեին ու ոճին հավանություն տվողներին:

Դեռ դեկտեմբեր ամիսն էր, թուրքական արշավանքը դեռ

չէր սկսվել, դեռ շատ ժամանակ կար մտածելու և գործը կազմակերպելու համար, սակայն վճատությունը տիրել էր ղեկավար խավին։ Պարզ է, որ նման Ազգային խորհուրդը չէր կարող տեր կանգնել իր իսկ հրավերով ոտքի կանգնած հայ գեներալներին ու սպայությանը և իր իսկ կոչով հայկական գնդերի մեջ մտած շուրջ երեք տասնյակ հազար հայ զորքին, որոնք Ստ. Շահումյանի բառերով «պատրաստ էին մեռնել և պահել իրենց երկիրը»։

Այդ ժամանակ շատերը մեծ սպասելիքներ ունեին արևմբտահայերից։

1914—1917 թվականներին Անդրկովկաս, Հյուսիսային Կովկաս և Հարավային Ռուսաստան էին ապաստանել ավելի քան 300.000 արևմտահայեր (հին Բայազետից, Ալաշկերտ—Բուլանըլ—Խնուս սանջակներից և Վանի ամրող վիլայեթից, որտեղ թուրքերին չէր հաջողվել համատարած կոտորածներ կազմակերպել, ինչպես նաև Մշից ու Սասունից և այլ վայրերից կոտորածից խուսափած տղամարդիկ)։

Փետրվարյան ունլյուցիցից հետո արևմտահայերն ավելի շուտ շարժվեցին, քան արևելահայերը։ 1917 թվականի մայիսի 6-ին Երևանում բացվեց նրանց առաջին համագումարը, որն ընտրեց Արևմտահայ խորհուրդ, որից առանձնացվեց Արևմտահայ բյուրո։

Արևմտահայ բյուրոն, որի նստավայրը Թիֆլիսը դարձավ, գրադկում էր արևմտահայերի հայրենադարձությամբ և արդեն հայրենիք վերադարձածներին օգնություն կազմակերպելով։ Սակայն նույն թվականի աշնան վերջերին, երբ ոռուական բանակը քայլեցվել էր և թուրքական առաջխաղացման սպառնալիքը դարձել էր ունալ, Արևմտահայ բյուրոն Թիֆլիսում գումարեց արևմտահայերի կոնֆերանս, որն ընտրեց իր Ապահովության խորհուրդը։

Ապահովության խորհրդի գլխավոր ֆունկցիան արևմտահայերի գինված ուժերի կազմակերպումն էր՝ անպաշտպան մնացած ընդարձակ տերիտորիան պաշտպանելու համար։ Արևմտահայ Ապահովության խորհուրդը առաջին հերթին շանք թափեց կանոնավոր զորքի տեսք տալու երկրապահ ջո-

կատներին, իսկ այնուհետեւ Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում և Հարավային Ռուսաստանում ձեռնամուկս եղավ զորահավաքի՝ կամավոր հիմունքներով։

Ժողովրդական հերոսի հոչակ վայելող Անդրանիկը կարգվեց Արևմտահայերի գինված ուժերի գլխավոր հրամանատարությունը նրան զառուցադրությանը գեներալ-մայորի աստիճան տվեց։ Պարսկաստանում գործող անգլիական բանակի հրամանատարությունը գեներալ Շորի գլխավորությամբ երեք գործակալ ուղարկեց Թիֆլիս—Երզրում, իսկ ԱՄՆ-ի երաշխավորությամբ Անդրկովկասյան կոմիսարիատը 60 միլիոն ոռություն անդրկովկասյան բոն տվեց Արևմտահայերի ապահովության խորհրդին։ Սակայն կամացուր զորահավաքը 1917—1918 թվականներին սպասված արդյունքը չտվեց։ Այդ անհաջողության գլխավոր պատճառներից մեկը 1914—1915 թվականների կամավորական շարժման մեջ պետք է որոնել։ Դեռ պատերազմից առաջ Անդրկովկասում և այլուր կային մեծ թվով պանդուխտ արևմտահայեր, որոնք 1914 թվականին խանգավառորեն համալրել էին կամավորական գնդերի շարքերը և շատ քաջագործություններ կատարել կովկասյան ուղղմաճակատում։ Յարական զորքի նահանջները, նվաճված հայկական վիլայեթներում նրանեակցիոն հրամանատարների վարած հայահալած քաղաքականությունը և կամավորական գնդերի կազմալուծումն ու վերակառուցումը 1916 թվականին՝ մարդկանց աշքերը բաց էին արել դեռևս անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի սպայմանագրի հրապարակումից առաջ։ Արևմտահայ բազմաթիվ քաջ մարտիկներ արդեն զոհվել էին, շատերը հուսալրիկներ ու անցել խաղաղ աշխատանքի, իսկ շատերն էլ այնքան էին վհատել, որ հայաշատ վայրերից հեռացել էին Ռուսաստանի խորքերը։ Կարճամիտների հրահրած անժամանակ խանդավառությունն սպառել էր մարդկային ուժերը և հիմա, անհրաժեշտ ժամին ժամանակապահ չունեցող, պաշտոնակատար։ Հ. Թ.

* Զանուրյան — դերակալ, պաշտոնը վարող, բայց իսկական կուռամբը չունեցող, պաշտոնակատար։

նախկին հավատացողների թիվը: Ընդհանուր հուսարեկության և հոգնածության մեջ այլևս մոդայիկ չէր կռվի գնալը:

Անդրանիկի զորակուր լայն արձագանք շգտավ նաև այն պատճառով, որ դաշնակցությունից հեռացածների և չհեռացածների, արևմտահայերի ու արևելահայերի ամոթալի հակամարտության հետեւանքով շարունակ բորբոքվում էին փոխադարձ դատավիետումները, որոնք չէին կարող բացասաբար շանդրադառնալ մարդկանց տրամադրության վրա:

Անդրանիկին հաջողվեց իր շուրջը համախմբել ոչ ավելի, քան 800 սվին, Երևանում վանեցիներից կազմակերպված գրնդերը՝ 1200 սվին կազմով, թեև անվանապես մտնում էին նրա հատուկ զորաբանակի մեջ, բայց մեծ տարածությամբ կտրված լինելու պատճառով փաստորեն հնթարկվում էին գեն. Միլիկովի Երևանի զորաբաժնին:

Վանում կը ունի Շաղոյանի ղեկավարությամբ գործում էին ոչ ավելի, քան 1500 երկրապահ ղինվորներ ու մի քանի հազար ասորի ջելոններ: Էրզրումի վիլայեթի արևմտյան կենտրոններում գործում էին Սերբաստացի Մուրադի և ուրիշների փոքրիկ խմբերը, բուն էրզրումում իր փոքրիկ զորամասն ուներ անհանգիստ թորգումը: Էրզրումի ամբողջ վիլայեթում երկրապահ աշխարհազորայինների թիվը, Արմենակ Միլորյանի միլիցիոնների հետ միասին, նույնպես չէր անցնում 1000 սվինից: Պետք է ասել նաև այն, որ դրանք մարտունակ աշխարհազորայիններ չէին: Նրանց մեծ մասը 1915 թվականի մեծ կոտորածի ժամանակ անտառներն ապավինած, երբեմն Դերսիմի քրդերի մոտ ապաստան գտած և շարդերի սարսափն ապրած խարբերդցիներ, սերբաստացիներ ու էրզրումցիներ էին, մինչ այդ ամենեին հրացան շտեսած խաղաղ արհեստավորներ ու մտավորականներ: Արևմտահայ երկրապահ աշխարհազորայինների մեջ իրենց մարտունակությամբ աշք էին ընկնում անպարտիական Սմբատի շուրջը հավաքված մշեցիները, սաստենցիները, ալաշկերտ-խնուսցիները, որոնց ընդհանուր թիվը հասնում էր մինչև 3000-ի: Սմբատը, որ հետագայում սովետական օրինուս ցիա ընդունեց և վերադարձ Սովետական Հայաստան, կարողացավ ապահովել

Տարոն-Տուրուբերանի քրդերի չեղոքությունը և ակտիվ պատերազմական գործողություններ մղել Դիարբեքիրի վիլայեթից եկած թուրքական գերազանց ուժերի դեմ: Սմբատը պարտություն չկրեց, այլ նահանջեց, միայն ընդհանուր հրամանով, երբ էրզրումի անկումով հյուսիսից վտանգվում էր նրա թիկունքը: Հետագայում, նահանջ կատարելով դեպի Սուրմալու, Սմբատն իր ավելի քան 3 հազար զորքով միացավ Զավախիք վերադարձած Անդրանիկին, որի զորքի թիվը չէր հասնում մեկ հազարի: Անդրանիկի անվան հետ կապված պատմական նահանջ բյուրոցի ժամանակ արևմտահայ զինված ուժերի ճնշող մեծամասնությունը շարունակ կապված է, եղել Սմբատի հետ:

Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ղինվորական բաժնի պետ Ստեփան Մամիկոնյանը պաշտպանում էր այն տևակետը, որ արևմտահայերի սակավաթիվ զինված ուժերով հնարավոր չէ պաշտպանել գրավված ընդարձակ տերիտորիան, որ անհրաժեշտ է նախօրոք կազմակերպված ձևով ետ քաշել եղած բոլոր ուժերը և արևելահայերի զինված ուժերի հետ համատեղ պաշտպանել 1914 թվականի ուսությունը Ստեփանական սահմանը, որ 1878 թվականից ի վեր, ամբողջ 36 տարի շարունակ, ամրացվել էր: Սակայն Մամիկոնյանի շնաջողվեց համոզել բոլորին և վերացնել տարերայնության պարագան, որ տիրում էր ուղղմածակատի պաշտպանությունը կազմակերպելու գործում: Տիրող քառսային մթնոլորտում Ստ. Մամիկոնյանի տեսակետի պաշտպաններն իջան խորականության՝ արևելահայերի և արևմտահայերի հակադրման տիրու մակարդակին և հնարավորություն շտվին ըստ արժանային հաշվի առնելու քաղաքագետ Ստ. Մամիկոնյանի ծրագիրը: Դեպքերի հետագա ընթացքը հաստատեց նրա տեսակետի ճշտությունը, սակայն զահավեժ իրադարձությունների, ինչպես նաև մինչ այդ ստեղծված անհասկացողության ու հակառակության պայմաններում, ինչպես կտեսնենք ստորև, շատ տիրու հաշվեհարդարով միայն վերջ պիտի տրվեր անըմբոնողության արգասիք վեճին:

և Սասունի դաշնակցական գործիչների հետ առանձին հանդիպումներ ունենալով, նրանց հանգստացրել էր, ասելով, թե թուրքական «Հեղափոխության» շահերի տեսակետից առայժմ նպատակահարմար չէ քրդերին զրկել իրենց արտոնյալ գորամիավորումներից։ Այսպիսով, դեռ տասը տարի առաջ նրան հաջողվել էր միամտացնել դաշնակցական գործիչներին, թեև վերջիններին անհայտ չէր, որ Համիդը քրդական արտոնյալ հեծելազորը («Համիդիկն») կազմակերպել էր հիմնականում հայ ժողովրդի գեմ գործելու համար։

Թուրքական Արևելան ուղմանակատի հրամանատար ֆերիկ Վեհիբը 1917 թվականի դեկտեմբերին դիմում է գեն. Օդիշելիձեին (որ Կովկասյան ուղմանակատի հրամանատարն էր և նստում էր Էրզրումում), առաջարկելով զինադադար ինքել ինչպես ասացինք, փաստական զինադադար արգեն գոյություն ուներ փետրվարյան ունուցիայի առաջին խոկ օրերից։ Հապա ի՞նչ էր հետապնդում Վեհիբն իր այս առաջարկությամբ։ Մուսավաթականների ջանքերով նա իրազեկ էր Անդրկովկասի դրությանը՝ ուղմանակատի փլուզմանը և հայերի հուսակտուր մեկուսացմանը։ Նա իր առաջարկությամբ ձգտում էր նախ՝ ավելի արագացնել ուղմանակատի գաղաքայումը, ապա՝ քնացնել հայերին, որոնք միա՛յն պիտի շարունակեին ուղմանակատի կայունացման ճիգերը։ Թուրքական կառավարությունը որոշել էր օգտվել ուստական գործի կազմալուծումից և իրագործել Անդրկովկասը, իրանական Ատրապատականը և ավելի հեռավոր թրքարնակ հողերը գրավելու իր պանթուրքիստական ծրագրը, որ 1914—1915 թվականներին նրան չէր հաջողվել իրագործել։ Բայց հիմա Թուրքիան էլ բավականաշափ զինված ուժեր չուներ այդ նվաճումները կատարելու համար։ Գերմանիան, որի կրտսեր գաշնակիցն էր Թուրքիան առաջին համաշխարհային պատերազմում, չէր խրախուսում Թուրքերի այդ միտումները։ Գերմանիայի համար Թուրսաստանը շարքից դուրս եկած պարտված թշնամի էր. մնում էին Անգլիան ու Ֆրանսիան և նրանց օգնության շտապող Ամերիկան։ Հարկավոր էր Արևելյան ուղմանակատում պարտության մատնել անգլիացիներին ու ֆր-

3. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐԾԱՎԱՆՔԸ

Երիտասարդ թուրքերի Թուրքիան շհապաղեց օգտվելու ուստական կովկասյան բանակի կազմալուծման հետևանքով ստեղծված պատեհ առիթից՝ իրագործելու համար իր պանությունի ծրագրությունը, որ խորտակվել էր 1914 թվականի դեկտեմբերի վերջին և 1915 թվականի հունվարի առաջին օրերին Սարիղամիշում։ Սակայն Թուրքիան, որ շարունակում էր կոփվ մղել մի քանի ուղմանակատում, քայլքայլած ու խիստ հոգնած էր և տասը ամսում (1917 թ. ապրիլից մինչև 1918 թ. հունվար) հազիվ կարողացավ մի քանի բղկտված դիվիզիա առանձնացնել Կովկասյան ուղմանակատում ակտիվ գործողություններ սկսելու համար։ Չեռնամուխ լինելով նոր արշավանքի, երիտասարդ թուրքերը Կովկասյան ուղմանակատի հրամանատար են կարգում ֆերիկ (մարշալ) Վեհիբին, որը ոչ միայն Գերմանիայում զինվորական կրթություն ստացած հմուտ զորավար էր, այլև հայ իրականությանը քաջ ծանոթ քաղաքագետ, որովհետև նրանց համար գաղտնիք չէր, որ այդ նոր արշավանքի ժամանակ երիտասարդ թուրքերը գործ պիտի ունենային հիմնականում հայերի հետ։ 1908 թվականի հուլիսյան հեղաշրջումից անմիջապես հետո երիտասարդ թուրքերի կուսակցությունը Վեհիբ բեյին (որն այն ժամանակ դեռ փաշա ու ֆերիկ չէր) ուղարկել էր Թիթլիսի վիլայեթը՝ կատարված հեղաշրջումից դժողոհ քրդերին հավաստիացումներ տալու համար։ Նույն այդ տարին Վեհիբ բեյը Մշու-

րանսիացիներին, որից հետո Հաշտության վեհաժողովում ինքնաբերաբար կլուծվեր Թուրքիայի արևելյան ձգտումների հարցը: Առաջմ հարկավոր էր ուժ շվատնել այդ ուղղությամբ և հարվածն ուղղել միայն այն կողմը, որտեղ ուժեղ էին Անդիան ու Ֆրանսիան, այսինքն՝ Թուրքիայի համար գլխավորը համարել Պաղեստինի և Միջագետքի ռազմաճակատները: Մյուս կողմից, ինչպես ասում է Լյուդենդորֆը, «Այդ ձեռնարկումները շպետք է մեզ համար դժվարացնեին հումքի գոխադրումը Կովկասից, որն, ինչպես մենք սպասում էինք, պետք է մեծապես հեշտացներ մեր վիճակը: Էնվերի խնդիրն էր՝ պայքարել Անդիայի դեմ և, ամենից առաջ, Պաղեստինի ճակատում: Ես հեռագրագծով շարունակ այդ րանը հիշեցնում էի նրան... բայց էնվերը և Թուրքական կառավարությունն ավելի մտածում էին իրենց պանխուամական նպատակների մասին Կովկասում, քան թե Անդիայի դեմ մղվող պատերազմի մասին: Այդ հարցի հետ կապվում էին շատ ուշալ նպատակներ, գլխավորապես անդրկովկասյան հումքն օգտագործելու հետ կապված օգուտները: Որ գերմանական ռազմական տնտեսությունը դրանից ոշինչ չէր ստանա, այդ հասկանալի է ամեն մեկին, ով պատկերացում ունի քուրերի գործելակերպի մասին: Այդ կապակցությամբ մենք ակամայից հակասության մեջ ընկանք Թուրքերի հետապնդած նպատակների հետ» (Լյուդենդորֆ, Մոи воспоминания о войне 1914—1918, т. 2, Москва, 1924, стр. 187):

Գերմանիայի համար 1918 թվականին, երբ նրա թե՛ մարդկային և թե՛ նյութական ռեսուրսները խիստ սպառվել էին, Անդրկովկասից մի քանի տասնյակ հազար տոննա բամբակ և մի քանի միլիոն փութ նավթ ստանալը շատ ավելի բախտորոշ նշանակություն ուներ, քան Թուրքիայի տերիտորիալ վիթխարի նվաճումները, որովհետև Գերմանիան քաջ ծանոթ լինելով իր դաշնակցի բնավորությանը, շատ լավ գիտեր, որ Թուրք ասքերի գարշապարի տակ ընկած Բաքուց նա ոչ մի կաթիլ նավթ չէր ստանա և չստացավ, այնինչ Թուրքերը մեկնելեն ամիս տիրեցին Բաքվին:

Սակայն Թուրքիայի համար դեպի արևելք շարժվելը ճա-

կատագրական նշանակություն ուներ: Օսմանյան լիթհարի բազմազգ կայսրությունը փուլ էր եկել: Եվրոպական հողերից մնացել էր մի փոքրիկ էգիրնե, իսկ արաբաբնակ Աֆրիկան ու Միջագետքը, արաբախոս Պաղեստինը, Լիբանանն ու Սիրիան արդեն նվաճվել էին ու նվաճվում էին և այլևս չեին կարող Թուրքիայի կազմի մեջ մնալ: Մնում էր հույսը դնել Անդրկովկասի, իրանական Ասրպատականի և Անդրկասպյան հողերի նվաճման վրա:

Էնվերի գաղափարախոսական մունետիկ թեհաեղդին Շաքիրը Ա. Խատիսովի հետ զրուցի ժամանակ հարկ չի զգացել նրանից թաքցնելու իրենց այդ պանթուրքիստական ծրագիրը:

«Հայերը, — ասել է նա, — կանգնած են մեր համիսլամական և համաթուրքական սրբազն իդեալներու իրականացման ճամփու վրա, և մենք անխուսափելիորեն կրախվննք անոնց հետ: Ատիկա վեր է և դուրս է մեր անձնական դգացումներեն ու տրամադրություններեն: Մենք հարկադրված ենք տարերայնորեն ոչնչացնել մեր ճամփու վրային այն ամենը, ինչ որ արգելք կհանդիսանա մեր ազգային սրբազն իդեալներուն: Եվ հետո դուք միշտ ոռւսներուն հետ եք. դուք անոնց առաջապահն եք, իսկ ոռւսները մեր սիերիմ թշնամիներն են: Պատմական թշնամիները» (Ա. Խատիսյան, «Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը», էջ 60):

Այս նույն բանը հետագայում ֆերիկ Վեհիբն էլ է, առանց դիվանագիտական կեղծ ու պատիր, քաղցրումեղցը լեզվի դիմելու, բացեիրաց ասում Խատիսովին: Սակայն, քանի դեռ ռազմաճակատի գիծն անցնում էր Երզնկայից էլ գեպի աւամուտք, Վեհիբը դեռևս հարկադրված էր խոսելու դիվանագիտական լեզվով, որովհետև իր ունեցած չնշին ուժերը նրան հնարավորություն չեին տալիս զենքի լեզու բանեցնելու:

Զինադադար կնքելու առաջարկությունն ընդունվեց, և 1917 թվականի դեկտեմբերի 18-ին կնքվեց Երզնկայի զինադադարը, որով կողմերը պարտավորվում էին դեմարկացիոն գիծը խախտելուց երկու շաբաթ առաջ իրար նախազգուշացնել:

Վճռական հաղթանակներ տանելու համար շոշափելի քանակությամբ զինվորական ուժեր չունենալով, թրքական հրամանատարությունը Երզնկայից մինչև Սարդարապատ միշտ նախապատվությունը տալիս էր դիվանագիտությանը, որի մեջ թուրքերը շատ ուժեղ էին: Երզնկայի զինադադարով վեհիրը տարավ միաժամանակ մի քանի հաղթանակ: 1917 թվականի դեկտեմբերի 3-ից Բրեստ-Լիտովսկում բանակցություններ էին սկսվել ավստրո-գերմանական բլոկի Երկրների և Սովետական Ռուսաստանի միջև: Թուրքիան մասնակցում էր այդ բանակցություններին: Սակայն Երզնկայի բանակցություններով և զինադադարորվ թուրքիան, նախ, Սովետական Ռուսաստանից ոչ միայն դե ֆակտո, այլև դե յուրէ անջատեց Անդրկովկասը՝ մեկուսացման դատապարտելով նրան, երկրորդ, գեկտեմբերը ամսին թուրքական ռազմաճակատում դեռ սուսական զորք կար: Այս նույն ամսի երկրորդ կեսին իշխամագումարն էր անցկացնում Թիֆլիսում. Երզնկայի զինադադարը բոլորովին քայլայեց սուսական զորքի շարքերը և տարերայնորեն անկազմակերպ դարձրեց նրա հեռացումը ռազմաճակատից և, երրորդ, բարձ դրեց ոչ միայն մենշևիկ Գեգեշկորու դեկավարած Անդրկովկասյան կառավարության դվիսի տակ, որն առանց այն էլ որոնում էր այդ բարձը, այլև՝ նորաստեղծ Հայոց ազգային խորհրդի և նրա զինվորական մարմնի գլխի տակ, որն անխոռվ քնեց շուրջ երկու ամիս և դարթնելու նշաններ ցուցաբերեց միայն այն ժամանակ, երբ էրզրումի անկումն արդեն անխոռափելը էր դարձել:

Կովկասյան ռազմաճակատում թուրքերի և հայերի զինված ուժերի հարաբերակցության մասին տարրեր հեղինակներ տարրեր թվեր են բերում:

Ռուս սպա Պ. Մուրատովը, որն իր վկայությամբ «Կարսից մեկնել է ապրիլի 25-ի կեսօրից հետո ժամը 2-ին՝ հայկական զորամասերից մեկի հետ», հետագայում կոնդոնում անգիտացի Ու. Ալլընի հետ հրատարակել է չկովկասյան ռազմադաշտերը» աշխատությունը: Այդ աշխատության մեջ ասված է, որ վրացիներն ունեին շուրջ 10 հազար զորք, հայերը՝ շուրջ 21 հազար, իսկ թուրքերը, Անդրկովկասի մեծ մասի:

օկուպացումից հետո Անդրկովկասում կազմակերպած զորամասերի հետ միասին՝ ոչ ավելի, քան 45—50 հազար զինվոր (տես «Հայրենիք», 1955 թ., № 10):

Ս. Վրացյանը և գեներալ Գ. Ղորղանյանը (Կարգանովը), որոնք ի պաշտոնի պետք է անձամբ սեփական ազբյուրից իրազեկ լինեն ուժերի հարաբերակցությանը հայ-թուրքական ռազմաճակատում, այդ հարաբերակցության մասին խոսելիս բարվոր են համարում բերելու ֆրանսիացի գնդապետ Լարշեի՝ հետին թվով նրանց մատուցած տվյալները:

«Բայտ գնդ. Լարշեի, 1918 թվականի սկզբին վեհիր միաշացի հրամանատարության տակ կային (Յ-րդ բանակը) հազվիվ 10.000 կովողներ, որոնց թիվը մասսայի 25.000-ին նույն լարշեի հաշվով, զոր. Նազարբեգյանը վեհիր փաշայի բանակի դեմ ուներ ոչ ավելի քան 17.000 զինվոր՝ Կարս—Սարիղամիշ ճակատի վրա (քաղված է զոր. Գ. Ղորղանյանի գրքից, Ս. Վրացյան, «Հայաստանի հանրապետություն», էջ 71):

Սովետական զինվորական պատմաբան Կադիշելը խոսելով թուրքական զինված ուժերի մասին, հաղորդում է.

«Մարտի վերջերին թուրքական զորքերը մոտեցան 1914 թվականի պետական սահմանագծին: Նրանց թիվն այդ ժամանակ չէր անցնում 25.000-ից. ըստ որում, զրանք բզեցված, սակավ մարտունակ զորքեր էին... հայկական զորքերի թիվը մոտ 15 հազար էր» (Ա. Կաdiшев, «Интервенция и гражданская война в Закавказье», Москва, 1960, стр. 49—50):

Սակայն իր ժամանակին, ինչպես այդ խոստովանում է Կ. Սասունին, «թրքական բանակի ճշգրիտ թիվը չգիտեինք»: Շատ բան ասող այս կարևոր խոստովանությունից հետո նա իրենց աններելի պարտությունը հետին թվով արդարացրած լինելու համար շարունակում է.

«Սակայն ութ ամիս հետո, երբ անոնք հարկադրվեցան թողնել Կովկասը, Թաթումի գծով միայն 80.000 զինվոր ետքաշեցին: Եթե այս թվի վրա ավելացնենք այն զորամասերը, որ Հայաստանի սահմաններու վրա, Կովկասի թաթարական

շրջաններու մեջ կգտնվեին, կունենանք մոտ 120.000 հասնող բանակ մը: Այս բանակին, առնվազն 50—60.000 հոգի կմասնակցեին 1918-ի փետրվարյան թրքական արշավանքին, որ տեղի ունեցավ Տաճկահայաստանի ամբողջ ճակատի վրա (Ա. Սասունի, «Տաճկահայաստանը ոռւսական տիրապետության տակ», էջ 122—123):

Թուրքերը 1918 թվականին Կովկասյան ճակատում այսպիսի մեծ ուժ չեն ունեցել և չեն էլ կարող ունենալ: Կարող է պատահել, որ մեծ թվով դիվիզիաներ են ետ տարվել թաթումի վրայով, սակայն այդ դիվիզիաները մեծ պատերազմի վերջին տարում, ինչպէս ետ դառնալիս, այնպես էլ առաջխաղացման ժամանակ, շատ նոր կազմ ունեին: Կարո Սասունու պատմաբան դառնալու այս ճիգն ունի իր տիսուր բացատրությունը: Նա 1918 թվականին արևմտահայերի գինվորական կազմակերպության՝ Ապահովովության խորհրդի քարտուղարն էր և այդ պոստում, երբ այդ խիստ անհրաժեշտ էր, շատ ավելի քիչ եռանդ ցուցաբերեց, քան երեք տարի՝ հետո՝ փետրվարյան ավանտյուրացի օրերին, երբ այդ եռանդը միայն վնաս էր բերում հայ ժողովրդին: Կարո Սասունու այս լեղաճարությունը շատ բնորոշ է Ապահովովության խորհրդի դեկավարների համար:

Արխիվային երկու նյութ շատ պարզ գաղափար են տալիս թուրքերի ուղղմական ուժի ու կարողության մասին: Նախ բերենք Կարսի անկման օրինակը:

Երգրումն ու Սարիդամիշը գրավելուց և այդ հենակետերի ուղղմական ու պարենային ավարին տիրանալուց հետո էլ թուրքերը շատ չեն ուժեղացել, որովհետեւ համապատասխան կադրեր, մասնավանդ թնդանոթածիգներ, չունեին: Հարցի այս կողմի վրա մեծ լույս է սփոռում Կարսի բերդի պարետ գեներալ-մայոր Դեկի գեկուցը:

Գեներալ Դեկը տեղական հույներից հավաքագրված փոքրաթիվ զորքով (հելլենական գումարտակ) և բանակցություններին մասնակցող ոռու ու հայ սպայության ու պաշտոնեւթյան հետ մնացել էր Կարսում՝ բերդաբարձրի հանձնումն էրադարձական կարգով կատարելու և ոռուսական կարգով:

Իին պատկանող ուաղմական հարստությունների էվակուացիան թուրք զորքի մուտքից հետո ևս իրեն թե շարունակելու համար: Կարսի գրավումից (1918 թ. ապրիլի 25) երեք օր հետո, ապրիլի 28-ին, գեներալ Դեկին առաջարկվում է ձեռնունայն հեռանալ Կարսից: Նույն օրը 1100 հոգուց բաղկացած քարավանի գլուխ անցած նա մեկնում է Ալեքսանդրապոլ: Այդ մեծ խմբի մեջ հայ գինվորականների և պաշտոնեւթյան թիվը մոտ 50 հոգի էր, մնացածը հույներ էին, ոռուներ և էստոնացիներ: Թիֆլիս հասնելով գեներալ-մայոր Դեկը մայիսի 10-ին (այսինքն՝ Ալեքսանդրապոլի անկումից դեռ 5 օր առաջ) Կովկասյան ուղղմաձակատի հրամանատար գեն. Լերեղինսկուն մանրամասն գեկուցյ է ներկայացնում Կարսը թուրքերին հանձնելու հանգամանքների մասին (տե՛ս Հայկական ՍՍԾ պնտարիսիվ, ֆոնդ 45, գործ 42, թիրթ 24—27):

Կարս բերդաբարձրի վրա, ըստ այդ գեկուցյի, գրոհում էին թուրքական ընդամենը երեք դիվիզիա, բայց քանի որ դիվիզիաները լիարժեք չեն, գեներալն շտապում է ավելացնել. «Գնդերի կազմը 1000—1200 սվին էր, յուրաքանչյուր գունդ ուներ 4 լեռնային թնդանոթ և 12 գնդացիր... Բացի դրանից, թուրքերին օգնում էին քրդերի հեծյալ և հետևակ ավագակախմբեր՝ ընդհանուր թվով 3—4 հազար հոգի»: Այսպիսով, բերդաբարձրի վրա գրոհող թուրք զորքի ընդհանուր թիվը, հաշված նաև քուրդ բաշիրողուկներին, 12—13 հազարից ավելի շի եղել, որոնք ունեցել են ընդամենը 36 լեռնային հրանոթ և 108 գնդացիր:

Բերդաբարձրից գուրս կանգնած էր գեն. Արեշովի զորամասը, իսկ բերդում՝ գեն. Տեր-Ակոպովի զորամասը, միասին վերցրած ավելի քան 6 հազար սվին. բացի այդ հետևակ ու հեծյալ զորքից, «Յերդի հրետանին,— կարդում ենք գեներալի գեկուցյի մեջ,— կազմված էր Կարսի բերդային հրետանու մեկ գումարտակից և էրգրումի հրետանային զնդի մեկ զումարտակից. այդ զորամասում կար մոտ 1700 զինվոր և 80 սպա, դրանց մեծ մասը հետևակային սպաներ էին, իսկ զինվորները համարյա մարզված չեին»:

Բերդաբարձրն ուներ շատ հարյուրավոր հին ու նոր թըն-

դանոթներ, սակայն հայկական Հրետանային անձնակաղմք կարողացել էր մարտի պատրաստ վիճակի մեջ դնել 162 թընդառնթ, ըստ որում այդ թվից 100-ը միայն դաշտային հեռածիգ թնդանոթ, և մոտ 70 գնդացիր:

«Թերդի ինժեներական նախապատրաստությունը, — եղբափակում է գեներալը, — պետք է համարել միանգամայն բավարար:»

Կար մի քանի ամսվա ինդենտանտական պարենային պաշար:

Բերդն ապահովված էր սանիտարական միջոցներով»:

Հայկական զինված ուժերի հրետանային գերազանցությունը հազթա՞րած լինելու համար թուրքերը բանակցությունների ընթացքում համառորեն պահանջում են դեմարկացիոն գիծը սահմանել բերդից միայն երկու կիլոմետր՝ հեռավորության վրա, որպեսզի հնարավոր լիներ գործի զնել իրենց լեռնային հրետանին: Այդ բանը նրանց հաջողվում է, և թուրքերը առանց կովի մոտենում են սահմանված դեմարկացիոն գծին, սակայն կանգ չեն առնում այդ գծի վրա և շարունակում են առաջանալ:

Այդ ժամանակ, ապրիլի 24-ին, բերդապահ հայ Հրետանավորները, որոնց մեծ մասը Թիֆլիսի միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտներ էին, և որոնց մասին գեներալն ասում է՝ «Համարյա մարդկած չէին», հրետանային ջախջախիչ կրակ են թափում թուրքերի վրա:»

«Ժամը 11-ին, — հայտնում է գեներալն իր զեկույցի մեջ, — կրակ բաց արին գրեթե բոլոր թնդանոթները... Թուրքերը դադարեցրին հարձակումը և հրետանային կրակ բաց արին ինչպես հարավային, այնպես էլ արևմտյան ամրոցների վրա: Թշնամին միայն լեռնային հրետանի ունեթ, որի արկերը կորուստ չէին պատճառում բերդի պաշտպաններին: Հրետանային մարտը տևեց մինչև մուտք ընկնելը. իսկ հայ կական երկրորդ գնդի բռնած Սեղանասարի առաջավոր գիրաքերում հրացանային փոխհրաձգություն էր տեղի ունենում: Երկրորդ գնդի զրոյամասերը երեկոյան կողմ սվինամարտով թուրքերից մաքրեցին հիշյալ լեռը» (Թերթ 30):

Այսպիսով, Հայկական բարձր հրամանատարությունը միշտ տեղի է տվել ու նահանջել, նահանջի հրաման է տվել նաև այն ժամանակ, երբ զորքը կովել է ու հաղթել: Այս հաղթանակի հաջորդ օրը Կարսը առանց կովի հանձնվեց թուրքերին:

Դա ամենակին էլ ռազմական հաղթանակ չէր, այլ միայն դիվանագիտական, իսկ դիվանագիտության ասպարեզում թշնամու գերազանցությունն անվիճելի էր:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ուսական բանակի տեխնիկական ուժերի մեջ կային որոշ թվով ֆրանսիացիներ, որոնցից ոմանք մտան հայկական զորքերի շարքերը: Այդպիսին էր ավիատոր զը Գուբերտին, որը 1918 թվականի մայիսի 27-ին Ղարաբիլիսայի ճակատամարտում գերի է ընկնում և մինչև օգոստոսի 5-ը ներկալված մնում է էրզրումում: Գերությունից ազատվելուց հետո զը Գուբերտին Թիֆլիսի հայկական միսիայում ցուցմունք է տալիս թուրքական թիկունքի մասին:

«Ալեքսանդրապոլից երգրում երկաթուղու շարժական կազմը, — ասում է նա, — չի նորոգվում և կարող է ամենաշատը ծառայել 2-3 ամիս:»

Թուրքերի գլխավոր պակասությունը հատկապես բերդացին հրետանին է և մասնագետ սպաները. մեզ շարունակ առաջարկում էին թուրք սպաներին հրահանգավորել և սովորեցնել բերդային հրետանու գործը: Կարծում եմ, որ Կարսի ամրոցները նրանց ձեռքին անօգնու են՝ գիտուն սպաներ չունենալու պատճառով: Սարիդամիշում, էրզրումում և ճանապարհին ոչ մի տեղ ոչ մի ուղերձ չկա: Հովհանի կեսերին էրզրումի վրայով Կարս (գուցե և ալելի Գեռուները) փոխագրվեց 10-րդ դիվիզիան: Տեսա սովորիների մի գունդ, երկու լեռնային մարտկոց (բորովիա), մեկ թեթև հրետանու մարտկոց (4 հրանոթ) և հետևակի մի զորամաս: Օ շտուսի 4-ին Մուրադ բեյի դիվիզիան համարվեց և ուղարկվեց Սարգարապատ՝ դեպի Նախիջևան:

Էրզրումում փամփուշտի, արկի ու հրացանի պաշար կա, սակայն պարենամթերք չկա: Բայրուրդից հն բերում: Էրզրու-

մի կայազորը կաղմված է հիվանդ, գղղոված ասքերներից, թվով մոտ 200 հոգի, և կարգապահական գումարտակից (գառսալիքներից): Գասալբությունը շատ է ուժեղացել:

Թիկունքային զինվորներին կերակրում և հագցնում են շատ վատ, ծառայությունից դժգոհ են, սպաները 9 ամիս ոռճիկ չեն ստացել:

Թուրք սպաների ասելով Վեհիր փաշային հանել են այն բանի համար, որ Զավիդ բեյի դիվիզիան (11-րդ) շտապ կարգով անզիացիների գեմ ուղարկելու փոխարեն, տարվել էր գեն, Նազարբեկովին հետապնդելու գործով և Թիֆլիսի գրավումով, Բաթումում կանգնած է Յ-րդ կորպուսը, Ալեքսանդրապոլում՝ 9-րդ կորպուսը:

Գատելով Մուրադ բեյի դիվիզիայով, վաշտերում կա 40 շարք, Հարյուրյակներում՝ 40—45 շարք:

Երկաթուղիներում (այստեղ ձեռագիրն անընթեռնելի է, — Հ. Թ.) բացակայության պատճառով, գնացքները շարժվում են հեռախոսով, որի գծերը փոված են գետնին ու հաճախ կտրվում են: Գծերի նորոգումն ալզում է գնացքների շվացուցակի վրա. Էտապային գծեր չկան: Երկաթգծերը և կամուրջները չեն պահպանվում. էրզրումից մինչև Տրապիզոն և Բայրութ ամեն ինչի, ներառյալ նամակների փոխադրումը, կատարվում է եղներով: Երբ ես խնդրեցի արագացնել մեր հղումը, էրզրումի պարետ Հաններ բեյն ասաց. «Չեզ մոտ Ռուսաստանում, զուք ունեք ավտոմոբիլներ, հեռախոս, երկաթուղի, իսկ ես ունեմ-շումեմ մի զույգ վեց ունեմ, այն էլ իշրող է ճանապարհին սատկել» (Հայկ. ՍՍԾ պետարխիվ, գոնդ 200, գործ 53, թերթ 48):

1920 թվականին Քյազիմ Կարաբեքիր փաշայի արևելյան բանակը ավելի զորեղ ու մարտաշունչ էր, քան ֆերիկ Վեհիրի կովկասյան բանակը 1918 թվականին, որովհետեւ 1920 թվականին Հյուսիսային Կովկասում, Ադրբեյչանում և այլուր պարտված մուսուլմանական ոհակցիալի մանավանդ երիտասարդ ուժերը մենշևիկյան Կրաստանի վրայով անցել էին էրզրում ու Տրապիզոն: էրզրումումն էին կենտրոնացել նաև Մուրմալիից, Կարսի շրջանից, ինչպես նաև Բաթումի,

Արդաշանի, Արդվինի շրջաններից փախած մուսուլման երիտասարդները: Դրանք թարմ համալրում էին տվել Քյազիմ Կարաբեքիր փաշայի զորքին, այնինչ Վեհիր փաշայի ժամանակ այդ համալրումը դեռևս չկար, մնում էր թուրքական քայլայված բանակի հոգնած զորքը: Ինչպես հաղորդում է մինույն ֆրանսիացին, Թուրքիայի վերագրաված էրզրումի, Տրապիզոնի, Թիֆլիսի ու Վանի վիլայեթների թուրքերը, պատերազմի երեք տարիների ընթացքում շատ տուժած լինելու պատճառաբանությամբ, յոթ տարով ազատվել էին զինվորական ծառայությունից: Սարդարապատում կրած ջարդից հետո Կարսի շրջանի թուրքերն էլ աշխատում էին արժանանալ այդ արտօնությանը: «Օկուպացված վիլայեթների բնակիչները, — հաղորդում է նույն աղբյուրը, — բողոքելով ստացել էին 7 տարի զինվոր չտալու իրավունքը: Այդ իրավունքի համար պայքարում էին նաև կովկասյան թուրքերը» (Հայկ. ՍՍԾ պետարխիվ, գոնդ 200, գործ 53, թերթ 48):

Երգնկայի զինադադարի ժամանակ ուազմաճակատում արգեն ուսւական զորամասներ չեն մնացել, սակայն թուրքերը հարձակման անցան միայն 1918 թվականի փետրվարի առաջին տասնօրյակին, այսինքն՝ ուազմաճակատում զորքերի հեռանալուց երկու ամիս հետո: Այդ ժամանակամիջոցում նրանք կարողացան շարժման մեջ զնել Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթներում զտնվող քայլայված, սակայն մարտունակ զորամասերը՝ Ալի Խասան փաշայի հրամանատարությամբ (4-րդ բանակ), որոնք առաջ շարժվեցին Վանա ծովի հարավային և Հյուսիսային ափերում: Ալի Խասան փաշան իթթիհաղականների պանթուրքիստական բնդհանուր պլանի համաձայն հույսը զնելով թրքախոս իրանական Ատրպատականում տեղական համալրումներով իր բանակն ուժեղացնելու վրա, իր համեմատաբար ավելի մարտունակ զորամասները տվել էր Վանա ծովի արևմտյան և Հյուսիսային ափերու շարժվող Մյուրսել փաշային (5-րդ դիվիզիա), իսկ ինքը անմարտունակ զորքով Ոստանի, Վանի, Աղեակի և Ուրմիա վրայով շտապել էր Թավրիզ, որտեղ հասավ հոմնիսի կեսին: Նրա զորքի թիվը, — որ կտրել էր անմարդաբնակ դար-

ձած երկար ճանապարհ, — շուրջ շորս հաղար էր: Իրանական Աստրապատականում նա հուսախար եղավ, որովհետև շկարողացավ ո՛չ տեղական համալրումներով՝ ուժեղացնել իր բանակը, ու էլ Ալեքսանդրապոլ—Զուլֆիա երկաթուղով ստանալ խոստացված օժանդակ ուժերը: Այդ պատճառով էլ նրան չհաջողվեց Հյուսիսային Պարսկաստանում ծավալել իր առաջխաղացումը, և անգլիացիները կարողացան շատ շնչին ուժերով օգոստոսի սկզբին հասնել Բաքու: Ալի իհսան փաշայի 4-րդ բանակի ընդհանուր կազմը, հաշվելով նաև Մյուրսել փաշայի 5-րդ դիվիզիան, չէր հասնում 10.000 սվինի:

Սև ծովի ափերից մինչև Սարիղամիշ ընկած ճակատում գործում էր թուրքական 3-րդ բանակը, որի կազմի մեջ սկզբանական շրջանում մտնում էին Կարարեքիր փաշայի առաջին կորպուսը և Շեվքի փաշայի երկրորդ կորպուսը: Վկայություն կա, որ Կարարեքիր փաշան երգրում է մտել ու ավելի, քան 4 հազար զորքով: Երգրումում նրա զորամասը համալրվում է քաղաքում թաքնված շուրջ 5 հազար ասքերով: Այսպիսով, նրա կորպուսի կազմը նույնպես հասնում է մոտ 10 հազարի: Նույնքան և ոչ ավելի ասքեր ուներ Շեվքի փաշան, որն առաջ էր շարժվում Սև ծովի ափերով և ապրիլի 15-ին մտավ Բաթում և հասավ մինչև Օզուրգեթը, որն արդեն բուն վրացական հող էր և չէր մտնում Բրեստ-Լիտովսկի պայմանագրով զիշկելիք տերիտորիայի մեջ: Օզուրգեթի գրավման համար վրաց մենշևիկները մհծ աղմուկ բարձրացրին:

Քանի որ «գերմանացիներն ու թուրքերը կովկասը բաժանել էին Վրաստանի և Աղրեջանի» (Հայկ. ՍՍՌ պետարիխ, ֆ. 57, գ. 582, թերթ 11—Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նամակը Երևանի Հայոց ազգային խորհրդին), Օզուրգեթի գրավումից հետո թուրքերը կանգ են առնում վրացական ճակատում, և Շեվքի փաշայի զորամասը Արդահանի վրայով շտագ փոխադրում են Կարսի ճակատը, որտեղ թուրքերը հայերի ուժեղ դիմադրություն էին սպասում: Այսպիսով, Կարսի ճակատում թուրք զորքի թիվը ապրիլի երկրորդ կեսին հասավ շուրջ 20.000-ի: Եթե այս թվին գումարենք Ալի իհսան և Մյուրսել փաշաների ունեցած շուրջ 10 հազար զորքը, ապա

Հայկական ճակատում գործող թուրքական զորքի թիվը կլինի ու ավելի, քան 30.000*:

Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաբղիլսայում թուրքերը կորցրին սպանված ու վիրավոր ավելի քան 7 հազար զինվոր:

1918 թվականի հունիսի 7-ին հանդես գալով Բաքվի սովորում՝ Ստ. Շահումյանն ասում էր:

«Ես արդեն ասացի, որ թուրքերը շունեին խոշոր ուժեր, որոնք լինեին սարսափելի: Դաշնակցական պարտիայի տըկյալների համաձայն ամբողջ ճակատում—սկսած Սև ծովից մինչև Պարսկաստան, թուրքերը ունեին 18—20 հազար հոգնած, կազմալուծված զորք» (Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948 թ., էջ 640):

Հայկական զինված ուժերի թիվն ըստ Ստ. Շահումյանի հաշվարկումների շուրջ 30 հազար էր:

Թուրքերը, ինչպես ասացինք, Կարսում մեծ դիմադրություն էին սպասում Հայերի կողմից: Սակայն Բաթումի նման Եարսն էլ հեշտությամբ գրավելուց հետո (25/IV—18 թ.) նըրանք, այլևս վերջացած համարելով Հայկական դիմադրությունը, ձեռնամուխ եղան իրենց շատ հեռուները զնացող պանթուրքիստական ծրագրի իրագործմանը: Այդ նպատակով նրանք Կարսում ապրիլի վերջին օրերին իրենց զինված ուժերի վերաբամբակորում կատարեցին: Երբորդ բանակի կազմի մեջ ստեղծվեց Հարվածային «Կարսի զորախումբ», որի հրամանատար կարգվեց Յաղուր Շեվքի փաշան: Այս զորախմբում Քյազիմ Կարարեքիր փաշայի հրամանատարությամբ հատուկ զորամաս առանձնացվեց Ալեքսանդրապոլ—Զուլֆիա երկաթուղով հյուսիսային Պարսկաստան անցնելու և Ալի իհսան ու Մյուրսել փաշաների զորքերի հետ ամբողջ իրանա-

* Թուրքերի արևելյան բանակի կազմի և տեղաշարժերի, ինչպես նաև 1918 թ. ապրիլի 29-ին Կարսում ավարտված և հունիսի 5-ին Բաթումում վերակազմավորումների վերաբերյալ տվյալները քաղլած են Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի դասախոս Ե. Լուկշավելյանի Թուրքիան 20-րդ դարում՝ առաջմ անտիպ աշխատությունից*

կան Աստրապատականը նվաճելու համար Նույն այդ Կարսի գորախմբում Հիլմի փաշայի հրամանատարությամբ առանձին, ավելի մեծաթիվ զորամաս առանձնացվեց Գանձակ անցնելու և Բաքվի վրա արշավելու համար: Կարաբեքիր և Հիլմի փաշաների առաջ նանապարհը բաց անելու համար Շեվքի փաշայի տրամադրության տակ մնում էին նաև էսադ և Զավիդ փաշաների զորամասերը: Մայիսի 15-ին թուրքերը հեղտությամբ գրավեցին նաև Ալեքսանդրապոլը: Սակայն Ալեքսանդրապոլի անկումից հետո Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաբիլսայում հայկական համար դիմադրությունը արնաբամ է անում ոչ միայն էսադ ու Զավիդ փաշաների զորամասերը և Շեվքի փաշայի «Գելիբոլու» դիվիզիան, այլև Քյազիմ Կարաբեքիր և Հիլմի փաշաների այսպիս ասած պահստային ուժերը, որոնք առանձնացված էին ավելի հեռավոր ռազմաբեմում գործելու համար:

Հունիսի 5-ին, Բաթումի պայմանագրի կնքումից մեկ օր հետո, Վեհիր փաշայի վրա խիստ ջղայնացած, Բաթում է ժամանում էնվեր փաշան:

Հայկական դիմադրության հետևանքով իր գրեթե բոլոր ուժերն արնաբամ անելու համար էնվեր փաշան անմիջապես պաշտոնագրելում և արխիվ է նետում Վեհիր փաշային:

Այնուհետև, — թեև ընդամենը մեկ ամիս ու մի քանի օր էր անցել թուրքական զինված ուժերի վերջին վերախմբավորումից, — էնվեր փաշան հարկադրված է լինում ձեռնարկել իր զինված ուժերի նոր խմբավորմանը:

Բաքվի վրա արշավելու համար նա Գանձակում տեղական ուժերից կազմակերպում է «հսկամի բանակ»: Հյուսիսային Պարսկաստանի ու Լենքորանի վրայով հունիսի 2-ին, 25 սպայի ուղեկցությամբ, արդեն Գանձակ էր ժամանել նույն փաշան: Սուրմալվում միակ թարմ մնացած Մյուրսել փաշայի 5-րդ դիվիզիան, — քանի որ Հիլմի փաշայի զորամասն այլևս գրեթե գոյություն չուներ, — իրանական Աստրապատական ռւղարկելու վոխարեն, նպատակահարմար է համարվում երկաթուղված և Դիլիջանի ձորով տանել Գանձակ: Այդ դիվիզիան էլ «Կովկասյան հատուկ դիվիզիա» անունով դարձավ նույն

փաշայի՝ տեղական ուժերով համալրվող «հսկամի բանակի» կորիզը:

Այնուհետև, քանի դեռ Բաքուն կանգունէր, և թուրքերը հարկադրված էին հայ-թուրքական զինակցության առաջարկություններ անել խարպելու միշտ պատրաստ դաշնակցականներին, էնվեր փաշան նպատակահարմար է գտնում էսադ, Զավիդ և մանավանդ Շեվքի փաշաներին հեռացնել Հայաստանի սահմաններից: Նա Բաթումում կազմակերպում է 9-րդ բանակ, որի հրամանատար է կարգում Յաղուր Շեվքի փաշային: Միջագիտքի ճակատի հրամանատար Խալիլ փաշան թուրքական ռեռլյուցիայի առաջին շրջանում վանում իրեն թե բարեկամացել էր Արամ Մանուկյանի հետ: Էնվերը նպատակահարմար էր համարում նրան փոխադրել Անդրկովկաս և նշանակել Հայաստանի սահմանների վրա կանգնած թուրքական զորքերի հրամանատար: Ալեքսանդրապոլ—Զուլֆա երկաթուղին պայմանագրով անցել էր թուրքերին, սակայն Հյուսիսային Պարսկաստան բանակ ուղարկելու համար առանձին զորք չէր մնացել Քյազիմ Կարաբեքիրի տրամադրության տակ: Այդ երկաթուղագիծն ապահովելու համար օգսուտուամսին էրգրումից բերվում է Մուրադ բեյի զորքամասը, որը հազիվ կարողանում է հասնել Զուլֆա: Քյազիմ Կարաբեքիր փաշան հովիսի երկրորդ կեսին թափրիդ է հասնում առանց զորքի, միայն սակավաթիվ սպաների ուղեկցությամբ:

Օրը թուրքերը ջախջախիլ հարված ստանալով և մեծ կորուստներ տալով խուճապահար փախչում էին Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատներում, իսկ Ղարաբիլսայում հայ զորքի կրած պարտության լուրը դեռ չէր հասել երկան, արևմտահայ դաշնակցականների իրազեկ օրդան «Աշխատանքն» ինքնավստահ գրում էր.

«Այժմ մեզ դեմ ամբողջ ճակատի վրա տաճիկը ներկա պայմաններում չի կարող դուրս բերել մինչև իսկ 10.000-անոց կանոնավոր սպառազինված մի բանակ:

Ահա այն ուժը, միակ ուժը, առաջին և վերջին ուժը, որ նա կարող է հանել մեր դեմ: Ճշմարիտ է, երգրումի, Ղարսի և Ալեքսանդրապոլի հաջողություններն ու պահեստները մի

փոքր թարմացրին նրան։ Ճշմարիտ է, վերջին օրերի գեղքերն առժամանակյա լքում առաջացրին մեր մեջ և հույս ներշնչեցին նրան, բայց այդ երևույթներն արդյունք չէին նրա զինվորական առավելության կամ ռազմական հզորության, այլ հայտնի ապացուց մեր դիվանագիտական հանձնարի սնանկության, և որ ավելի պախարակելին է, ստրկական երկյուղի» («Աշխատանք», 1918 թ. մայիսի 29):

«Աշխատանքի» բերած թիվը մտացածին չէ։ Սիլիկովի շտարում հիանալի էր դրված հետախուզությունը, որը դեկավարում էր ոռուսական ծառայության սպա, ծագումով ֆրանսիացի փոխգոնդապետ Շնեուրը, որը գնդապետ Մորելի նման նվիրված էր հայկական ինքնապաշտպանության գործին։ Փոխգոնդապետ Շնեուրը իրզրումում էր նրա անկման օրերին, սակայն, շատ-շատերի նման շնուրահատվեց և «շխոռվեց», այլ անմիջապես երևան եկավ և հայկական բնօրբանուն անձնուրացորեն նվիրվեց հետախուզության կազմակերպման գործին, այդ գործում ներգրավելով սպա Երվանդ Գևորգի Բաշինչաղյանին։ Նա ճիշտ պատկերացում ուներ թուրքական ուժերի մասին։ Ինչպես ստորև իր տեղում կտևսնենք, թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշան Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերից հետո խոստովանում է «Հերիքները գեշ կեռվին, ձեռքս 12.000 հոգի ունիմ միայն, ետիս բնավ պահեստի ուժ չունիմ» (Մ. Ավետյան, «Հուշամատյան», Փարիզ, էջ 193)։

Այս ամենի վրա մեծ լույս է սփոռում այն անվիճելի փաստը, որ Բաթումի հունիսի 4-ի պայմանագրից հետո, երբ թուրքերն իրենց ուզած ձևով լուծեցին հայկական հարցը և ճանապարհ ստացան Բաքվի վրա զորք տանելու համար, Մյուսյուլու կայարան հասած Բաքվի զորքերի դեմ հունիս ամսի երկրորդ կեսին թուրքերը կարւղացան հանել միայն Մյուրսել փաշայի դիվիզիան, որի սվինների քանակը չէր անցնում 5 հազարից։ Մինչև օգոստոսի 4—6-ը Բաքվի դեմ, բացի Մյուրսել փաշայի այս դիվիզիայից, գործում էին տեղական ուժերից կազմված նուրի փաշայի «հաւամի բանակը» և Դաղստանի իմամի զորքերը։ Օգոստոսի 4—6-ի պարտու-

թյունից Հետո թուրքերը Հարկադրված եղան եվրոպական ուղմարենից Բաքվի վրա տանել 19-րդ, 20-րդ, 25-րդ, 26-րդ, 46-րդ և 50-րդ հետևակային դիվիզիաները՝ սեփական մայրաքաղաքի մատուցների պաշտպանությունը վստահելով դաշնակից բոլղարական զորքերին։

Հունիսի 16-ից մինչև սեպտեմբերի 15-ը, ուղիղ երեք ամիս, հերոս քաղաքը փոքրաթիվ զորքով համառ դիմադրություն ցուց տվեց թուրքական օկուպանտներին։ Բաքվի օրինակը պերճախոսուրեն վկայում է, որ անհրաժեշտ կամք ու ողի ցուցաբերելու դեպքում Կարսը, որն անառիկ բերդաքաղաք էր, կարելի էր սպանդանոց դարձնել թուրքական օկուպանտների համար և Անդրկովկասը զերծ պահել թուրքական օկուպացիայից ու նրա պատճառած մեծ աղետներից։

1918 թվականին թուրքերն իրար հետևից կործանիչ պարտություններ էին կրում Պաղեստինի ու Միջազգետքի ուղմանակատներում և բոլորովին ի վիճակի չեին քիչ թե շատ կանոնավոր և մեծաթիվ զորք բերել կովկասյան ուղմանակատ։ Վանի վիլայեթի վրայով Պարսկաստան մտած Ալի Իհսան փաշան շուտով հարկադրված եղավ հեռանալ Պարսկաստանից և գնալ Մոսուլի ճակատը։ Ինքնապաշտպանության համար հայերի ու վրացիների ունեցած զորքի բավարար թիվը և իր զորքի քայլաված լինելն ու անմարտունակությունն էր, որ Վեհիբ փաշային շարունակ ստիպում էր ուղմական ամեն մի նոր ձեռնարկության հաջողությունը նախապես ապահովել դիվանագիտական հերթական խաղով։

Երզնկայի զինադադարը նրա առաջին դիվանագիտական հաղթանակն էր։ Վեհիբի այդ և հետագա հաղթանակների դեմ-հանդիման դաշնակցականները չգիտեին, թե ինչ պիտի անեին, մինչդեռ, ինչպես խոստովանում է ինքը Ս. Վրացյանը, «Վեհիբ փաշան և կովկասյան մահմեդականները շատ լավ գիտեին թե ինչ են անում։ Նրանք ձգտում են խառնախնթորել կովկասը, կազմալուծել ճակատն ու թիկունքը և այդպիսով

Հեղտացնել թուրք զորքերի հառաջինադաշումը, որն սկսվեց հունվարի վերջերին» («Հայաստանի հանրապետություն», էջ 70):

Բայց ավելի լավ է, խոսքը տանք սովետական դինվորական պատմաբանին:

«Քանի թուրքիայի կողմից ամիշական վտանգ չէր սպառնում Վրաստանին, վրացական մենշևիկները մարտական պողա էին ընդունում և ճոճում էին խավաբարտե սուրբ, իսկ հետո համաձայնության գալուք գերմանացիների հետ, Վրաստանը դրին Գիրմանիայի հովանավորության տակ: Մուսավաթիստները սեպարատ բանակցություններ էին վարում թուրքերի հետ, ամեն կերպ աշակցում էին նրանց և անհամբեր սպասում թուրքերի գալուն, որպեսզի նրանց օգնությամբ իրենց տիրապետությունը հաստատեն Անդրկովկասում:

Այդ պայմաններում Հայաստանը մենակ մնաց հարձակվող թուրքերի գերակշիռ ուժերի դեմ հանդիման: Ամբողջ Անդրկովկասյան ռեսպոբլիկայի նման Սովետական Ռուսատանից կորված, նա զրկված էր հաջող պատերազմ մղելու համար անհրաժեշտ տնտեսական ռեսուրսներից: Նա շուներ նաև հեղինակավոր իշխանություն, որն ընդունակ լիներ թուրքական զորքերի դեմ մղելու ժանր պայքարում գլխավորելու հայ ժողովրդին» (Կաdiшев, «Интервенция и гражданская война в Закавказье», стр. 45, ընդգծումը մերն է.—Հ. Թ.):

Երգնկայի զինադադարից շուրջ մեկ ամիս հետո, 1913 թվականի հունվարի 14-ին, Վեհիբը գիմեց Անդրկովկասյան կոմիսարիատին, առաջարկելով՝ բանակցություններ սկսել հաշտության պայմանագիր կնքելու համար: Հունվարի 28-ին Անդրկովկասյան կոմիսարիատը տվեց իր համաձայնությունը: Սակայն Տրապիզոնի կոնֆերանսը բացվեց միայն մարտի 14-ին, այսինքն՝ Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից թուրքական հարամանատարության առաջարկն ընդունելուց միայն մեկեկն ամիս հետո: Թուրքերը ձգձգում էին կոնֆերանսի բացումը:

«Որպեսզի առաջիկա բանակցություններում Անդրկով-

կասյան կոմիսարիատն ավելի զիջող լինի,— գրում է սովետական զինվորական պատմաբանը,— թուրքերը կոպտաբար խախտելով թե՛ Բրեստի և թե՛ Երզնկայի զինադադարի պայմանները, փետրվարի 12-ին անցան հարձակման: Թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշան այդ հարձակումը բացատրում էր այն բանով, որ ուղմանակատում ուսւագրին գորքերն իբրև թե՛ բռնություններ էին գործադրում թուրք խաղաղ բնակչության նկատմամբ: Թուրքական հրամանատարությունը հավաստիացնում էր, որ հարձակումը շի խախտում զինադադարի պայմանները և որ այն չպետք է դիտվի որպես թշնամական ակտ ուսւական բանակի նկատմամբ, որ թուրքական զորքերին խիստ հրաման է տրված խուսափելու ընդհարումից ուսւական բանակի հետ, բայց հայկական զորքերին շի ընդունում որպես ուսւական ոեզույար զորքեր: «Այս գործողությունը,— կեղծավորաբար գրում էր Վեհիբ փաշան,— ձեռնարկվում է սոսկ ելնելով անհրաժեշտությունից և մարդասիրության ու քաղաքակրթության պարտքից» (նույն տեղը, էջ 42):

Երգնկայում հայկական զինված ուժերի թիվը շեր անցնում 1200 սիլինից, այնտեղ էին գտնվում Երզնկայի սակավամարդ գումարտակը, ուսւասպաների մի ջոկատ և Սեբատացի Սուրբադի աշխարհազորայինները: Երզնկան շատ էր հեռու Անդրկովկասից, նրան էրզրումի հետ կապող կոմունիկացիաները վտանգված էին տեղական քրդերի և թուրքերի կողմից: Նման պայմաններում նահանջից բացի ուրիշ ելք շեր մնում: «Փետրվարի 13-ին,— գրում է Ա. Կադիշեր, — թուրքերը գրավեցին Երզնկան: Հայկական զորամասերն սկըսեցին նահանջել էրզրում: Հայկական զորամասերի թիկունքում գործում էին թուրքերի ստեղծած ջոկատները, որոնք հարձակվում էին խաղաղ բնակչության, գնացքների վրա, կտրում էին կոմունիկացիաները, ոչնչացնում էին կապի գծերը, կազմակերպում էին զիվերսիաներ և դրանով դժվարացնում էին հայկական զորամասերի գործողությունները:

Այսպես՝ Երգնկայի ջոկատի նահանջի վերաբերյալ զեկուցագրում նշված է, որ ճանապարհին ջոկատը գնդակոծու-

թյան է եթարկվել քրդերի կողմից: Կորուստների պատճառով ջոկատը հարկադրված է եղել թողնել թնդանոթները: Զորութեան խճուղու վրայի 30 սաժեն երկարությամբ կամուրջը պայմանագիրը էր: Զոկատը հարկադրվում է թողնել գումակն ու գնդացրերը: Նահանջը տեղի էր ունենում բուք ու բորանի պայմաններում: զորքերին միանում են նաև գաղթականները: Գաղթականների ու զորքի թվից մի քանի հարյուր հոգի ցըրտահարվում են:

Սովախնյա ուղղությամբ հարձակում էին զործում թուրքերի 2-րդ կորպուսի զորամասերը, իսկ հարավում, վանա լճի ուղղությամբ՝ 4-րդ կորպուսի զորամասերը: Առաջ շարժվելով էրզրումի ուղղությամբ, թուրքերը փետրվարի 22-ին գրավեցին Մամախսթունը:

Անդրկովկասյան կուլիցիոն կառավարությունը միահամուռ էր Անդրկովկասի ուղղուցիոն շարժման և Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում, բայց նրա անդամների մեջ չկար և չէր կարող միասնություն լինել Անդրկովկասի պետական կառուցվածքի և արտաքին քաղաքականության հիմնական հարցերում: Անդրկովկասյան կառավարությունը, ներքին հակասություններով ծվատված, ի վիճակի չէր համախմբելու նրան մասնակցող պարտիաներին, առավել ևս կազմակերպելու Անդրկովկասի ժողովուրդներին՝ թուրքական արշավանքը ետ մղելու համար... Այնինչ թուրքերը շարունակում էին հարձակումը: Նրանք գրավեցին Տրապիզոնը, Գյումուշիստաննեն, Բարերգը և պատրաստվում էին գրոհելու Բայումի ու էրզրումի վրա» (նույն տեղը, էջ 44—45):

Անառիկ բերդաքաղաք էրզրումը Անդրկովկաս տանող ուղիների հանգուց ու դարպաս է: Էրզրումի հաջող պաշտպանությունն Անդրկովկասը կապահովեր թուրքական ներխուժումից: Սակայն այն կրակորական գերը, որ դաշնակցությունը կամովին ստանձնել էր մենշեկիլների ու մուսավաթականների հետ Թիֆլիսում կնքած դաշինքով, իր տխուր արտացոլումն էր գտել նաև էրզրումում և նախապես վտանգել, անհնարին էր դարձրել նրա հաջող պաշտպանությունը:

Կովկասյան բանակի գերագույն հրամանատարության

շտարի պետ գնն. Սերգո Մդիվանին Փետրվարյան ռևոլուցիայից հետո Սամարգանդի պաշտպանագործ դարձած գեներալ-նահանգապետ գեն. Օդիշելիձեին կարգում է Կովկասյան ռազմաճակատի հրամանատար: Գեն. Օդիշելիձեի նստավայրը էրզրում բերդաքաղաքն էր, որտեղ նա հենվում էր ուսակցիոն ուսու սպայության վրա և բացահայտորեն վիճեցնում ռազմաճակատի պաշտպանության ուղղությամբ հայ զինվորականների գործադրած բոլոր ջանքերը: Ազգեցիկ գեն. Օդիշելիձեին էրզրում բերդաքաղաքի № 1 ամենազոր իշխանությունն էր:

Ժամանակավոր կառավարության օրոք էրզրումի քաղաքապետ էր կարգվել մենշեկիկ Ստավրովսկին, որը նույնպես գերադասում էր ավելի շատ մնալ Թիֆլիսում, քան էրզրումում: Սակայն Ստավրովսկու քարտուղար աշարացի Ալի Բեյ Պեպինովը միշտ նստած մնաց էրզրումում և այնքան սիրեց իր նոր նստավայրը, որ էրզրումում մնաց նաև թուրքերի գալուց հետո էլ: Մենշեկիների, մուսավաթականների և դաշնակցականների Թիֆլիսի ուսակցիոն դաշինքին էրզրումում ևս տուրք տալու կազմալուծիլ քաղաքականության հետևանքով քաղաքապետության քարտուղար Ալի Բեյ Պեպինովի իշխանությունը շարունակ ուժեղացավ:

Բացակա քաղաքապետի միշտ ներկա քարտուղար Ալի Բեյ Պեպինովը էրզրումի № 2 իշխանությունն էր: Թե էրզրումի № 2 իշխանության ինչպես էր նպաստում քաղաքի պաշտպանության գործին, քավական է ասել, որ այս Ալի Բեյ Պեպինովը թուրքերի գալուց հետո մնաց էրզրումում և իրանական Ատրպատականի ու Սալյանի վրայով էրզրումից Գանձակ վերադարձավ միայն որպես նուրի փաշայի ուղեցուց, թարգմանիլ և քարտուղար:

Էրզրումում մնացած ուսու սպայության մեծ մասը, շուրջ 400 զինվորական, հավաքվել էին էրզրումի և Դեվերոյունի ամրությունների՝ գեն. Օդիշելիձեի կարգած հրամանատար՝ հրետանու շտաբս-կապիտան Տվերդովլեբովի շուրջը: Այդ սպաներն ապրում էին բերդին առնթեր թուրքական թաղամասում՝ թուրքերի տներում: Նրանցից ամեն մեկը պահում

էր 3—4 թուրք ծառաչ մեծ մասամբ ռազմադների թվից՝ Փետրվարի 26-ին (մարտի 11-ին), այսինքն՝ քաղաքի անկաման նախորդ օրը, հաղորդում է Տվերդոխլեբովը, «գնդապետ Մորելից ևս բերանացի հրաման ստացա հարձակվողների վրա հրետանու կրակ բացել, սակայն ևս աննպատակ համարեցի այդ ուղղությամբ կրակ բացել» (Ճեմալ փաշայի հուշերը, էջ 80): Իսկ մինչ այդ, երբ դեռ էրդումը թողնելու մասին խոսք չկար, նույն Տվերդոխլեբովը սկզբանուրյակային սպայության գաղտնի ժողովներ է գումարում, որտեղ որոշում են սարուածի ենթարկել գնդ։ Մորելի կարգադրությունները և վիճեցնել նրա միջոցառումները։ Այդ ժամանակ էրդումի արևմտյան սանցակներից նահանջելով էրդում է մտնում մի նոր հրետանային գումարտակ, որի դավաճան հրամանատարին գնդ։ Մորելը փորձում է փոխել: Տվերդոխլեբովն ու յուրայինները անմիջապես գործի են անցնում և պաշտպանում են պաշտոնավորվող հրամանատարին: «Մենք ծածուկ որոշեցինք, — գրում է Տվերդոխլեբովը, — որ մենք փոխադարձաբար իրար պետք է օգնենք... մահմեդականների հետ ամենալավ հարաբերությունների մեջ էինք» (նույն տեղը, 72—73):

Հենց այս Տվերդոխլեբովն էլ քաղաքապետ Ստավրովում կուց, գեն. Օդիշելիձեից հետո երրորդ իշխանությունն էր էրդումում: Նրա կարգադրությամբ ուս (սկզբանուրյակային) սպանների պահակախումը էր շրջում քաղաքում, ինքը՝ Տվերդոխլեբովը բանտարկում է հայ ենթասպա Կարագետյանին, որը փորձել էր անմիջականորեն, առանց Տվերդոխլեբովի կարգադրության, կատարել ավելի վերադաս գնդ։ Մորելի հրամանը (նույն տեղը, էջ 70), չի ճանաչում հրետանային գնդի տեսուչ կարգված գնդապետ Դոլուխանյանին. «Ես նրան պատասխանեցի, որ լինելով ի պաշտոնե դիվիզիայի հրամանատարի աստիճանում, ես պետերի կարիք չեմ զգում» (նույն տեղը, էջ 71): Այսպես է նա վարվում նաև հրետանու շտաբության ջանփոլադյանի հետ (նույն տեղը, էջ 71—72):

Ամեն օր և ամեն ժամ քաղաքի պաշտպանությունը ջլատող այս երեք փաստական իշխանությունների կողքին կար-

նաև մի ուրիշ զորեղ իշխանություն՝ մուսավաթիստ Սեիդովի իշխանությունը: Գեն 1915 թվականի երկրորդ կեսին Ռուսաստանի մուսուլմանները ցարին հատուկ բողոք էին ներկայացրել, թե իբր գրավված վայրերում հայերը կոտորում են մուսուլմաններին: Այդ առթիվ ստուգող խառն հանձնաժողով էր ուղարկվել գրավված վիլայեթները՝ տեղում քննություն կատարելու համար: Այդ նույն ժամանականից Ռուսաստանի մուսուլմանական բարեգործական հաստատրությունները Արևմտահայաստան էին ուղարկել իրենց գործակալները՝ «տուժյալ» մուսուլմաններին տնտեսական և այլ օգնություն ցույց տալու համար: Գեն. Օդիշելիձեն առաջին խոկ օրից Սեիդովին ընդունում է գրկաբաց և ամեն տեսակ աջակցություն ապահովում նրա ձեռնարկումներին: Քաղաքապետ Ստավրովսկին և նրա քարտուղար Ալի Բեյ Պետիոնվը Սեիդովին ընդունում է աջակցում են որպես իրենց մարդու: Էրդում քաղաքի և մարզի կոմիսար Տիգրան Աղամալյանը, ելնելով անդրկողկայացած իշխող պարտիաների կողմից հայության կրավորականությամբ հավատարիմ մնալու՝ Թիֆլիսում որդեգրոված կործանարար պրակտիկայից, նույնպես իր հովանավորությունն է ապահովում Սեիդովին: Պահեստների գոները, — որոնք այնքան էլ ամուր չեին, — բացվելու են Սեիդովի և նրա գործակալների առաջ:

Այսպիսով՝ մուսավաթիստ Սեիդովն իր հաստիքով և մուսուլմանական բարեգործական ընկերությունների՝ բոլոր բնակավայրերում գտնվող գործակալներով կազմում էր էրդումի շորրորդ իշխանությունը:

Գեն. Ավելյանովի հայ տեղակալ բժիշկ. Հ. Զավրիկը էրդում գնաց 1917 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, այնուհետև նա Թիֆլիս վերադարձավ, Պետրոգրադ գնաց և կրկին անգամ էրդում վերադարձավ Անդրանիկի հետ 1918 թվականի մարտի 1-ին: Զավրիկը էրդումի կրմիսար էր կարգել Տիգրան Աղամալյանին, որը գինվորական էլըտաց վարժապետ: Քաղաքական հարցերում բորիկ ու անգործիմաց Տիգրան Աղամալյանը էրդումում գործող հինգերորդ իշխանությունն էր:

Էրզրումի վեցերորդ իշխանությունը դաշնակցական միավորակետ Արմենակ Միրոյանն էր: Սա պետք է կարգ պահպաներ քաղաքում, վերահսկեր մարդկանց, պահեստների ապահով պահպանմանը, ինչպես նաև պայքարեր դասալքության դեմ: Օդիշելիձերի, Ստավրովսկու, Սեբովի, Տվերդոյլի և նմանների պնդմամբ, նույնպես ելնելով 1917 թվականի փետրվարին հռչակված «ղեմոկրատական հավասարության» սկզբունքներից, սկզբնական շրջանում տեղական թուրքերից մի պաշտոնակից է կարգվում այս հայ միլպետին, բայց այդ պաշտոնակիցը տեսնելով, որ ինքը կարող է խանգարել Արմենակ Միրոյանի թրքանվեր գործունեությունը, նրա պատականարմար է գտնում հրաժարվել, միլպետի միահեծան պոստը թողնելով Արմենակ Միրոյանին: Այս Միրոյանը պարեն բաց թողնելու հետ մեկտեղ հովանավորում է զինքն վաճառքը տեղական թուրքերին, և ամենաանհրաժեշտ ժամին իր կուտակած ոսկեներն առած փախչում է կնոջ հետ: Վըճուական թեժ կովի պահին, երբ շի երևում Արմենակ Միրոյանն իր միլիցիական զրամասով, հրամանատարներն իրարհարցնում են, թե ի՞նչ եղավ նրա հետ, դաշնակցական Սեպուհը պատասխանում է:

«—Վերջին բողեին ան մեզ դավաճանեց. իր զինվորները պատրաստված էին կովին մասնակցելու իր գլխավորությամբ, սակայն ան կնոջ խոսքին անսալով, կնամարդի և վատողիուրեն կինն առավ և ծլկալ» (Սեպուհ, «Էջեր իմ հուշերեն», Հ. Բ., էջ 70):

Հայ սպայության երեանի համագումարից (1917 թ. նոյեմբերի 20) հետո կազմակերպված Հայ զինվորական միունիքան էրզրումի անձարակ կոմիտեն էրզրումի 7-րդ իշխանությունն էր: Զինվորական միության հիմնական խնդիրը կադրերի ընտրությունն էր գործող բանակի համար, սակայն կադրերը ճեմում էին էրզրումի կոմիտեի իրավասության սահմաններից հեռու՝ թիֆլիսի փողոցներում:

Բազմիշխանության և անիշխանության այդ քառոսում իր հերթին և իր ուժը ներածին չափով իշխանությունն էր անում ամեն մի կոմիտե ու միություն, ամեն մի պահեստ ու լազ-

րեթ, հեռախոսայիտյանն ու կայարանը: Հայ զինվորն ուներ միայն հրացան և ուրիշ ոչինչ, հրետանին նրան չէր սպասարկում, հեռախոսը նրան չէր լսում, կազմակուծված բուժ-սանիտարական ծառայությունը նրան չէր ընդունում, իսկ նրա անմիջական հրամանատարությունը նրան չէր կարող պաշտպանել թշնամաբար տրամադրված բարձր հրամանատարության առաջ:

Այս բոլորի հետ միասին էրզրումը վառողի տակառ էր: Քաղաքը վառողի տակառ էր ոչ միայն բազմաթիվ զինապահեստների առկայությամբ, այլև մինչև ատամները զինված թուրք 25.000 բնակչության ներկայությամբ: Հիշենք, որ քեմալական շարժման զորավիզ հանդիսացած առաջին կոնգրեսը գումարվեց էրզրումում, 1919 թվականին:

Մուս զորքը 1916 թվականին էրզրումը գրավեց պաշարումից հետո և նրա բնակչությունը մնաց իր տեղում: Պարտված կայազորի շատ զինվորներ ու սպաներ գերությունից խուսափելու համար ապաստան էին գտել ու թաքնվել քաղաքի բնակչուների անհրում: Նրանց թիվը ոչ պակաս, քան հինգ հազար էր: Մուսավաթիստ Սեբովը կապ էր պահպանում ու պարեն էր հայթայթում թաքնված զորքին: Երբ ոսւսական բանակը քայլավեց և լքեց ուղղմանակատը, այդ զինվորները, Օդիշելիձերի և համախուների բացահայտ հովանավորության բարենպաստ իրադրության մեջ, հաճախ դուրս էին գալիս և սպառազինվելու մասին մտածում էին ոչ միայն ծածուկ զնումների, այլև պահակներին ունշացնելով զինապահեստները թալանելու միջոցով: 1917 թվականի վերջին ամսին և 1918 թվականի առաջին ամիսներին էրզրումում կուտակվել էր մոտ 15 հազար հայ զորք ու քաղաքացի. քաղաքացիների մեծ մասը տղամարդ էր և զինված: Հայ զինվորներն ու քաղաքացիները տեսնում են, որ տեղական թուրքերը զինվում են և պատրաստվում են ներքին ապստամբությամբ զրավելու քաղաքը և կոտրելու հայերին: Հայերն սկսում են խուզարկություններ, սակայն Օդիշելիձեն, Ստավրովսկիին, Սեբովը, Տվերդոյլերովը, հովանավորելով թուրքերին, ձերբակալում են հայ զինվորներին, աշխարհազորայիններին, դատեր են

Հաղմակերպում: Այս պայմաններում զորավար Թորգոմը, որը փայլուն ֆրանսերենի շնորհիվ ինտիմ կապեր էր հաստատել ուս բարձր սպայության հետ, դեռևս Կերենսկու օրոք Պետրովորդ է գնում՝ գերազույն հրամանատարության առաջ սեփական նախաձեռնությամբ պարզելու էրզրումի պաշտպանության պրոբլեմը: Պետրովորդից վերադարձին նոր իրադրության մեջ նա ավելի անհույս է գտնում էրզրումի պաշտպանությունը: Օդիշելիձեի և նրա համախոհների սե աշխատանքը բնում խեղդելու համար Թորգոմը, անհանգիստ, բայց մաքուր մի մարդ, առաջնակին զորամաս է կազմակերպում և 1918 թվականի հունվարի 25-ին հայկական անկախություն է հռչակում էրզրումում: Այդ ակտի համար Օդիշելիձեն նրան քշում է Թիֆլիս, որտեղ Թորգոմը Արևմբարձայ ապահովության խորհրդի նախագահ Վահան Փափազյանին և Անդրանիկին պատմում է էրզրում բաղադրին և նրա հայ բնակչությանն ու զորքին ներսից սպառնացող իրական վտանգը: Անդրանիկը նրան՝ շհամաձայնեցված անկախության ակտի համար, իշեցնում է տասնապետի աստիճանի, սակայն 170 զինվոր տալով, նորից շտապ ուղարկում է էրզրում և ինքն էլ արագացնում է իր մեկնումը: Փետրվարի 28-ին Անդրանիկն ու Հ. Զավրիկը վերջապես ժամանում են Սարիղամիշ՝ մեկ հազարի շհասնող զորամասով: Սոսկալի ցուրտն ու բուք-բորանը դժվարացնում են զորքի փոխադրումը էրզրում: Անդրանիկը մի քանի հետևողներով ավտոմոբիլով շտապ մեկնում է և մարտի 2-ին հասնում է էրզրում, որտեղ նրան անհամբեր սպասում էին: Գեն. Օդիշելիձեն իր հապճեպ մեկնումով ավելի էր կազմալուծել բաղադրի պաշտպանության գործը: Նա չէր սպասել Անդրանիկին, որ գործերը հանձներ նրան, այլ Երզնկայից նահանջած գնդ. Մորելին անվանապես կարգելով էրզրումի ամրությունների ժամանակավոր հրամանատար, շտապել էր Սարիղամիշ, որտեղ հասել էր Թիֆլիսից եկող Անդրանիկի հետ միևնույն օրը: Էրզրումում Տվերդոխլեբովը չէր լսում Մորելին, իսկ Սեիդովը տեղական թուրքերին և նրանց տներում թաքնված հինգ հազար ուղմագերիներին շտապեցնում էր ապօս-

տամբություն բարձրացնել: Սակայն Անդրանիկի ժամանելու սոսկ միայն լուրը կաշկանդում է նրանց ու փրկում քաղաքի հայերի ու հայ զորքի կյանքը: 9 օրվա ընթացքում Անդրանիկը եռուն գործունեություն է ծավալում էրզրումում՝ այդ տաքարյուն ու դյուրաբորբորք մարդու համար զարմանալի պաղարյունությամբ ու համբերատարությամբ, սակայն ստեղծված արդեն անհուսալի իրադրության հետևանքով նրան չի հաջողվում կանխել բերդաբաղաքի անկումը: Օդիշելիձեն հեռանալիս էվակուացիայի և քաղաքը թուրքերին հանձնելու կարգադրություն էր արել: Նրա մեկնումից անմիջապես հետո գնդապետ Մորելը թեև փոխել էր այդ կարգադրությունը, սակայն փախուստն արդեն սկսվել էր: Անդրանիկը կարգադրում է զենք վերցնելու ընդունակ տղամարդկանց թույլ շտալ հեռանալ քաղաքից: Անդրանիկը փորձում է իր ձեռքում կենտրոնացնել ամբողջ իշխանությունը, սակայն ընդհանուր անբարենպաստ պայմաններից բացի առաջին հերթին նրան խանգարում են բժիշկ Հ. Զավրիկը և մարզային կոմիսար Տիգրան Աղամալյանը:

Անդրանիկը տեսնում է, որ թշնամու համար գործող ուժերն ու հաստատությունները շարունակ հեռախոսային ուղիղ կապով կապված են հարձակման անցած թուրք զորքի հրամանատարության հետ: Նա կարգադրում է կտրատել բոլոր հեռախոսային գծերը: Դրանից հետո Սեիդովն սկսում է կապը պահպանել սուրճանդակների միջոցով: Անդրանիկին հաջողվում է բռնել Սեիդովի երկու նամակը, որոնց բովանդակության հետ ծանոթանալուց հետո որոշում է կալանավորել և պատժել Սեիդովին: Դաշնակցական Տիգրան Աղամալյանը Սեիդովին փախցնում է Թիֆլիս: Անդրանիկը փորձում է ճակատ ուղարկել Բեժանըեկի հրամանատարության տակ գըտնըող հայկական Ա. և Բ. գնդերը, որոնք մտնում էին նազարեկովի հայկական կորպուսի կազմի մեջ: Բեժանըեկը խոստանում է, բայց նրա խոստումը իրականություն չի դառնում: Արևմտահայ գաշնակցականների օրգան՝ Երևանի «Աշխատանքը» հատուկ թղթակից ուներ էրզրումում, որը հիշյալ թերթի էջերում սրտացավ ականատեսի իրաղեկությամբ:

պարբերաբար լուսաբանել է ինչպես էրզրումի արևմտյան մատուցներում մղված համառ կոխվները, այնպես էլ բերդաքաղաքի անկման մանրամասնությունները: Ավելի սպառիշ նկարագրություն մենք շենք գտնում օրվա մյուս թերթերում:

«Ի՞նչո՞ւ նահանջեցինք», հարց է տալիս «Աշխատանքի» թղթակից Պողոս Հյուսյանը:

«Բայց, որ թշնամի գերազանց ուժն էր, որ մերոնց հարկադրեց քաղաքը թողուլ.— ո՛չ երբեք, որովհետև անիկա հազիվ 4000 հոգի ըլլար, իսկ մեր զինվորներուն թիվը 9—10.000 կհասներ. ըսել որ պետք եղած անհրաժեշտ ռազմամթերք կպակասեր, ամեննեին ոչ, որովհետև այնքան ռազմանութ կար, որ նույնիսկ նսկողության տակ պահել կարելի չէր. ըսել որ թշնամի դիրքերը մերոնցմե շատ ավելի նպաստավոր էին, նույնպես ճիշտ չէ, որովհետև մերոնք 500-ի ավելի թնդանոթներով ապահովված բերդերով շրջապատված էին, մինչդեռ թշնամին բաց դաշտին մեջ կգտնվեր...

Մոտ 15.000 հոգի, ջախջախիչ մեծամասնությամբ տղամարդք բոլորն ալ զինված, բայց կատարյալ խուճապի մատնրված, կնահանջեն ջանալով վայրկյան մը առաջ քաղաքն հեռանալ, իրար կհրմտեն ու կկոխկրտեն... Քաղաքին մեջ մնացին միայն քանի մը ուսւ օֆիցերներ, գթության քույրեր, թնդանոթաձիգ գնդապետ Դվյորդախլեպով, որոնց առաջարկված էր հեռանալ քաղաքն, բայց անոնք մերժելով... կուզեն մնալ» («Աշխատանք», 1918 թ. մայիսի 18, № 95):

Երբ մարտերը դեռ տեղի էին ունենում էրզրումի արևմտյան մատուցներում, Սեպուհը տեսնելով, որ գործերը վատ են ընթանում, մատնացուց անելով իր թիկունքում բարձրացած անառիկ ու անվանի բերդը, որ շրջապատված էր խոր խրամատներով և 3—4 մետր լայնությամբ փշալարերով, հրամանատարներից մեկին դառնալով՝ ասում է.

«Ահա այս ամրություններու մեջ է որ պիտի փորձենք մեր վճռական բախտը: Հապա՝ բերդերը, որոնք աննման կերպով կազմակերպված են և օժտված են կանոնավոր և արդիական թնդանոթներով: Սակայն գիտե՞ս թե այս բոլորը որու հանձնված են... ուսւ գնդապետ Խելպնիկովին (կարդալ՝

Տվերդոինիկերովին.— Հ. Թ.), մարդու մը՝ որ բարի համբավ չի վայելեր: Տեղեկություններ ունեմ, որ գնդ Խլեպնիկովը հարթերություններ կպահե թաթար Սեհիդովի հետ, սակայն չեմ գիտեր թե Աղամալյան այս մասին լուր ունի՞ թե ոչ (Սեպուհ, «Էջեր իմ հուշերեն», հ. Բ., էջ 31):

Երանելի՞ միամտություն: Ուրեմն որ Աղամալյանը լուր ունենար, ապա ամեն ինչ կկանխվեր: Աղամալյանը շատ փրքու մարդ էր: Հայ ազգային խորհուրդն էլ, Նազարեկովն էլ լուր ունեին, և դեռ Անդրանիկին ուղարկելուց առաջ ասվել էր Նազարեկովին, թե անհրաժեշտ է Անդրանիկի փոխարքան հրետանավորների մի հայկական զորամաս ուղարկել էրզրում, որ տեր կանգնի բերդի թնդանոթներին, սակայն ո՛չ Նազարեկովը, ո՛չ Աղդային խորհուրդը ոչինչ չէին արել: Ինչո՞ւ Աղետը, աղետի մեծությունը գիտեին, դժվար չէր այդ բանն իմանալ: Սակայն աղետի առաջն առնելու շնորհք, կարողություն չունեին, պատմականորեն, դասակարգայնորեն չունեին, տեղն էլ ուրիշների չէին զիջում: Այստեղ է ողբերգությունը:

Էրզրումի անկումից հետո դաշնակցության պարագլուխները ամբողջ երկու տարի բարվոք են համարում մոռանալիրենց երեկվա եռանդուն ընկերոջը և ճիշել նրան միայն մահվան ժամանակ՝ իրենց զինավոր օրդանում մի էջ նվիրելով նրա հիշատակին, որտեղ ոչ անհայտ վ. Ն.-Ն բժ. Զավրիկին անվանում է «հավիտենական իդեալիստ», «հայ ժողովրդի քափառական հրեա», իսկ պաշտոնական կենսագիրն ավելացնում է՝ «Գաղափարների աշխարհում Զավրիկյանը ումանափիլ էր բարի անհնալայն առումով: Այստեղ նրա երեակայությունը սահման չուներ, երազի թևերով նա թուրք էր հեռու-հեռուները, հաճախ կարվում էր կյանքից և շատ անգամ զո՞ւ դառնում իր ցնորդներին» («Հառաջ», Երևան, 1920 թ. ապրիլի 18): Այստեղ ընդգծումներից բացի մեղմնում է ասել միայն այն, որ հայ ժողովրդի համար ամենաեղերական և ամենաբախտորոշ 1914—1918 թվականներին բժ. Զավրիկը դաշնակցության առաջին զութակը չէր միայն նրա համար, որ այդ պարտիան չուներ և պատմականորեն չէր կարող առաջին զութակ ունենալ, սակայն նրա ամենա-

ձեռներից և ամենաեռանդուն գործիչն էր, որը շարունակ աղետավոր ճանապարհներով էր տանում միայն աղետավոր ճանապարհներով քայլելու ընդունակ բախտախնդիրների այդ պարտիային:

Էրզրումի անկումը ազգային աղետ էր, ողբերգություն: Դա սոսկ ուազմական հաղթանակ չէր մեկ կողմի համար և ուազմական պարտություն՝ մյուս կողմի համար: Դա թուրքերի համար միաժամանակ նաև քաղաքական ու հոգերանական հաղթանակ էր: Այդ ժամանակ վազուց արդեն սկսված պիտի լիներ Տրապիզոնի հաշտարար կոնֆերանսը, սակայն թուրքերը նրա բացումը ձգձգում էին՝ սպասելով էրզրումի գրավմանը, որը պիտի շատ ամրապնդեր նրանց դիրքերը: Հայ ժողովրդի համար էրզրումի անկումը ուազմականի հետ նաև քաղաքական ու հոգերանական պարտություն էր: Եթե երեկ դաշնակցականները անդրկովկասյան զիխավոր կոնտրուլյուցին պարտիաների իրարամերժ դաշինքում ոչ միայն մեղակից, այլև խարված կողմ էին, ապա էրզրումի անկումից հետո նրանք հանցավոր կողմ էին միայն և նրանց խանգարիչ ներկայությունը բացահայտորեն անհանդուրժելի էր դարձել անգամ մենշևիկների ու մուսավաթականների համար: Ավելին: Եթե երեկ դաշնակցականները, իրեն ուազմական ուժի տերեր, դեռ կողմ էին համարվում, ապա Հիմա էրզրումի անկումից հետո, ոչ միայն մենշևիկներն ու մուսավաթականները, այլև անգամ իրենք՝ դաշնակցականները սկսեցին շավատալ իրենք ուազմական ուժին և նահանջել Կոմիսարիատի կառավարության մեջ և սեյմում կողմ ճանաչվելու իրենց երկշոտ հավակնությունից անգամ:

Էրզրումի անկումը դաշնակցության սնանկության ապացույցներից ամենաանվիճելին էր: Սակայն, հայ ժողովրդի համար իր հետեանքներով այնքան աղետավոր ու եղերական այդ իրողությունը դաշնակցության իսկ օրգանի էջերում երգիծանքի առատ նյութ տվեց: 1920 թվականին Երևանի «Հառաջ» թերթում ձեռնամուխ լինելով «1918 թվի կովկասյան անցքերու պատմության», կեռ-Կամսարը գրում էր.

«Կարնո մեջ կար 600 թնդանոթ, անսպառ ոռւմք և Տա-

ճիկի ունեցածեն ավելի զորք, ուշենաք նե ջարդ ու փշուք կըներ զայն, սակայն Հայաստանի նպատակը չեր կազմեր մարմնական պատիժներով խելքի բերել հակառակորդն, այլ կրթիչ միջոցներով, նուրբ ձեերով հասկացնել իր միտքը: Այս պատճառով հրաման տվավ բերդապահ թնդանոթային գընդին՝ Տաճիկի երևալուն բնավ չկրակել, այլ դատարկ թնդանոթներու բերանները շնչտակի հառել թշնամուն աշքի մեջ, որ ամշնա ու քաշվի:

Հետո: Կարնո մեջ կար անսպառ մթերք, հագուստ և ուսելիք: Հայաստանը մտածեց ներսեր փոխադրել զանոնք գժրախտ պարագային Տաճիկին ձեռքը շիյնալու համար: Իայց որովհետև այդ անսպառ մթերքը կրելով չէր հատնիր, ուստի Խնամատարական, Եղբայրական օգնության, Գյուղատնտեսական, Զինվորական միության, Որբախնամ և այլ կոմիտեներեն թվով 68 կոմիտե շտկեց, ու Կարին դրկեց, որ այդ մթերքները տեղն ու տեղը... ուտեն:

Մինչդեռ Հայաստանն այս պատրաստություններով էր զրադաշտ, Տաճիկը Մամախաթունին մեջ դարձավ իր խոհապարին և ըսավ.

— Դուն օճախը կպցուր, կերակուրը դիր վրան, ևս երթամ Կարին գրավեմ՝ գամ ուտեմ:

— Կուշանաս, ճանըմ, կերակուրը կպաղի, — առարկեց խոհարարը:

— Դու կերակուրիդ սոխը շբրդած ևս հոս եմ»:

Այնուհետև «Ահավոր ճակատամարտ էրզրումի տակ» ենթագլխում կեռ-Կամսարը շարունակում է.

«Մեր ամբողջ ուժը կրաղկանար երեք հաղար զինվորներ, 68 ուտիչ մարմիններ և 600 բաղաձայն թնդանոթներ, որք կոշված էին իրենց բարոյական ազգեցությունը ի գործ զնել անկիրթ թշնամու վրա:

Դրությունն այսպիս էր, երբ Տաճիկը հրաման ըրավ առաջ շարժվելու: Անոր ուժը կրաղկանար 300 զինվորներ, որոնց կառաջնորդեին նույն թվով շվաքներ առաջնին ինկած: Խորամանկ Տաճիկը իր հարձակման ատենները դիտմամբ երեկո էր ընտրեր, երբ շվաքները երկար կըլլան և ահարկու ծրբ

Տաճիկը Կարնո պատին մոտեցավ, 600 թնդանոթները մեկեն... և լոեցին: Տաճիկը զարմացավ և զարմանքը թնդանոթներու լուր հայացքներու տակ անկարգ բռքիչի փոխվեցավ: Տաճիկը ուշքի եկավ և նորեն հարձակվեցավ: Մարտը բորբոքելով՝ երկուստեք իրար վրա խոյացան անհնարին հարվածներով: Կովին հաջողությունը մեր կողմն էր դարձել, երբ արևի տաք ժամանակ հանկարծ մեր զորաց շվաքները դափանանությամբ կովողներու ետևն անցան: Այս դեպքը լքումն առաջացուց մերիներուն մեջ և զորքը կոնակ դարձնելով փախավ:

Տաճիկը մեր թնդանոթներու տեղատարափ լռության տակ քաղաք մտավ» (Լեռ-Կամսար, «Աղգային Այբբենարան», էջ 79, 80, 81):

Իսկ Անդրկովկասի իրարամերժ կոնտրուլուցիցն պարտիաների դաշինքի մասին Լեռ-Կամսարը հեգնաբար ասում է՝

«Եվ ժողովի նստան կովկասյան եղբայրները Թիֆլիսին մեջ, թե ինչպիս ընեն, որ առանց կովելու հաղթեն Տաճիկին» (նույն տեղը, էջ 70):

Թեև Հայոց աղգային խորհուրդը դեռևս հունվարի եկորին զորահավաք էր հայտարարել Անդրկովկասի հայաշատ վայրերում, սակայն այդ զորահավաքն այնքան էլ շոշափելի արդյունք չէր տվել: Էրզրումի անկումը սթափեցրեց հայ ժողովրդին, և այս անգամ կամավոր զինվորագրությամբ արագորեն հայկական զորամասեր կազմակերպվեցին և ուղարկվեցին Կարս ու Սարիղամիշ: Այդ նոր համալրման մեջ աշքի ընկնող տեղ էին գրավում բարձր դասարանների աշակերտները, որոնք պատանեկան խանդավառությամբ արհամարժ հում էին ամեն դժվարություն ու մահ և անձնուրացորեն կովի նետվում: Թուրքերը էրզրումից Սարիղամիշ հասան և այն գրավեցին 21 օրում: Սա մեծ նվաճում էր հայկական զորքի համար, եթե հիշենք, թե նա ինչպիսի արագությամբ էր թողել էրզրումը և ինչպիսի արագությամբ պիտի թողներ Կարսը Սակայն հրամանատարության պահկարության և ուղմանա-

կատին կցված դաշնակցական պարագլուխների անձարակության հետևանքով Սարիղամիշն էլ ընկավ (1918 թ. ապրիլի 5-ին), որից հետո օրակարգի կենտրոնական հարցը դարձավ Կարսի պաշտպանությունը:

Սարիղամիշի շրջանում հրամանատարության ուղղակի դավաճանության ու ապիկարության և դաշնակների էլ ավելի դավաճանական անձարակության մասին պերճախոս հուշեր ունի դաշնակցության ոչ-անհայտ պարագլուխներից, Սրբամբառայիշերի ապահովության խորհրդի նախագահ Վահագան Փափազյանը:

«Սերաստացի Մուրադն ու Սեպուհը կուղեին մաքրել Կաղզվան-Օլթի տարածության մեջ գտնվող թուրք և քուրդ ավաղակային տարրերը և մեկ գիշերվա մեջ անցք բանակ դեպի թուրք բանակի թիկունքը... զարնել ետևեն և խուճապի մատնել, միևնույն ատեն մեր զորքը հարվածե նաև Սարիղամիշի ճակատեն: Այս ծրագիրը ինծի կթվեր իրականանալի Կարծեմ վռացյանը և Նավասարդյանն ալ կրածնեին: Նույն գիշեր զորավար Արեշովին հայտնեցինք ծրագրի մասին և անոր հաջող իրականացման հավանականությունները: Զորավարը խակ և վնասակար համարեց Մուրադի և Սեպուհի «Հեթաներով» գործ տեսնել: «անկանոն ուժեր են, որոնց կարելի չեն վստահել, իսկ ծրագիրը զինվորական տեսակետեն անգործադրելի»... Ապադյուն վեճերեն վերջ վերադարձանք ժխտական պատասխանով: Զայրացած Մուրադը և Սեպումը իրենց ձիավորներով բողին Սարիղամիշը և նեռացան» (Վ. Փափազյան, «Իմ հուշերը», հ. Բ., էջ 471—472):

Բայց պատմությունն ասում է, որ Սերաստացի Մուրադը և մեծ մասամբ դաշնակցության հայդուկային դպրոցն անցած շատ ուրիշ արևմտահայ զինված ուժեր, որոնք, հակառակ դավաճանական ղեկավարության ամեն տեսակ սադրանքներին, կովել էին էրզրումի արևմտյան մատուցներում: Հրոդին ու շնեռացան, այլ նրանց նեռացրին Սարիղամիշից:

Մեկ կողմի վրա թողնելով Արդահանը, 1918 թվականի մարտի երկրորդ կեսին հայկական զինված ուժերը Արևմտահայաստանի տարրեր վայրերից ետ էին քաշվել և հավաքվել

Սարիղամիշի շրջանում, որտեղ դեռ Արեշովի կանոնավոր գործից բացի մի քանի հազար արևմտահայ մարտիկներ կային: Ընդհանուր գումարով շուրջ 10 հազար սվինը միանգամայն բավական էր պաշտպանողական մարտեր մղելու համար և, ինչպես նշեցինք, Սարիղամիշի շրջանում թուրքերը կանգ առան շուրջ երեք շաբաթ (12/III—5/IV):

Խախտելով Երզնկայի զինադադարը և ետ գրավելով ոռուսների նվաճած վիլայեթները, Վեհիր փաշան Անդրկովկասյան հրամանատարության բողոքին, ինչպես տեսանք, պատասխանել էր, թե «Հայկական զորքերին չի ընդունում որպես ոռուսական ոեգույցար զորքեր», թե «Թուրքական զորքերին խիստ հրաման է տրված խուսափելու ընդհարումից ոռուսական բանակի հետո»: Սեյմում և նրա կառավարության մեջ թուրքիայի դեմ պայքարել ցանկացողների թվից շատ ավելի էր թուրքիայի գաղտնի և բացահայտ գործակալների թիվը, որոնք տարածում էին այն միտքը, թե թուրքերը կանգ կառնեն 1914 թվականի սահմանի վրա, որովհետև այդ սահմանադին անցնելով նրանք պատերազմ հայտարարած կլինեն Անդրկովկասյան սեյմի կառավարությանը: Ուրիշն, անհրաժեշտ էր Սարիղամիշում ունենալ ոեգույցար զորք:

Էրզրումի անկումով վարկարեկվել էին արևմտահայ զինված ուժերը: Հայոց ազգային խորհուրդը, նրա զինվորական բաժնի վարիչ Ստ. Մամիկոնյանը, Անդրկովկասյան սեյմին ընդունած լինելու համար, ժամանակը պատեհ են համարում «ազատվելու» արևմտահայ զինված ուժերից, որպեսզի Վեհիր փաշան իր առաջ միայն ոեգույցար զորք տեսնելով կանգ առնի 1914 թվականի սահմանի վրա: Հայկական կորպուսի հրամանատարությունը, որն ամբողջությամբ գրտնը վում էր ցարական ոեակցիոն գեներալների ձեռքին, արդեն նախապես պատրաստ էր «ազատվելու» այդ «շեթաներից»: Ընդհանուր տրամադրությունն այնպես էր, որ ոչ ոք չէր տեսնում, թե դա ինքնասպանության ինչպիսի ակտ էր հանուն ինչոր շատ կասկածելի նկատառման:

Այդ ժամանակ, Թիֆլիսում բացված ենթասպայական դպրոցում սովորելու պատրվակով, արևմտահայերի ջոկատնե-

րից հավաքեցին և Սարիղամիշից Թիֆլիս տարան ավելի քան երկու հարյուր գրագետ տասնապետների և առհասարակ խանդավառ երիտասարդների, որոնք շարքային մասսանին կապում էին առանձին հրամանատարների հետ: Այդ իսկ քայլով և դրա կազմալուծիչ ազգեցության տակ նուրացավ արևմտահայերի ջոկատների կազմը: Այնուհետև արևմտահայ ջոկատներն ուազմաճակատի առաջին գծից ետ տարան Կարս և Ալեքսանդրապոլ, որտեղ պարզապես անոթության մատնելով մարտիկներին ու նրանց ձիերին՝ քայլքայեցին նրանց շարքերը: Ոմանց առաջարկեցին մտնել հայերեն շիմացող սպաների զորամասերը:

Կազմալուծված արևմտահայ զինված ուժերի մի մասը բարձրացավ Արագածի հարավ-արևմտյան լանջերը, մի մասն էլ Անդրանիկի «Նահանջ բյուրոցից» դեռ մոտ երկու ամիս առաջ մտմտում էր բոնելու Պարսկաստանի ճանապարհը՝ իրեւ թե անզիիացիներին հասնելու համար, իսկ մի մասն էլ մեծ ու փոքր խմբերով գնաց Թիֆլիս, որտեղից անցավ Հյուսիսային Կովկաս: Անզեն ու առանց դրամի Թիֆլիս հասավ նաև Սերբաստացի Մուրադը, որը քաջ գիտակցելով հերոսական Բաքվի համառ դիմադրության վճռական ու բախտորոշ նշանակությունը հայ ժողովրդի համար՝ սակավաթիվ զինակիցներով Հյուսիսային Կովկասի, Հարավային Ռուսաստանի և Աստրախանի վրայով գնաց Բաքու՝ միանալու Ստ. Շահումյանի գլխավորած պայքարին:

Արևմտահայ զինված ուժերի այս ջլատումից ու մեկուսացումից հետո Սարիղամիշն անմիջապես ընկավ, և թուրքերը տեր դարձան ծով հարստության: Շուրջ երեք շաբաթ Սարիղամիշի մատուցցներում կանգ առած Քյազիմ Կարարեքիր փաշան իր հուշերի մեջ գրում է, որ իր դանդաղ առաջխաղման պատճառը, — ինչպես դեռ իր ժամանակին զեկոսել էր Վեհիր փաշային, — հայ պարտիզանական ջոկատներն էին, որոնք թևերից ու երեմն էլ թիկունքից հարվածում էին իրեն ու քայլքայում իր մարտակարգերը: Այդպիսով, արևմտահայ «շեթաների» նկատմամբ ցուցաբերած այդ դավաճանա-

կան ակտով որոշեց ո՞չ միայն Սարիղամիշի բախտը, այլև կանխորոշվում էր Կարսի ու Ալեքսանդրապոլի բախտը:

Գեներալ Արեգովի մասին, որը շարունակ դիմումներ էր տալիս Նազարենկովին՝ խնդրելով իրեն ազատել ու ազմանակատի այդ հատվածի հրամանատարի իր պոստից, Փափաղ-լուն իր հուշերի մեջ, նրան ազգասիրաբար վերակնքելով «Արեցյան», գրում է.

«Դժբախտաբար, Արեցյանի պես հրամանատարի մը հանձնված էր այդ ճակատը, որ անջիղ, Հայաստանի և Հայության հետ շկավված, ձևապաշտ, անտարբեր ու բյուրո-կրատ մարդ մըն էր: Ավելի շատ հետաքրքրված էր թուրք զինվորներու և գերիներու անվնաս պահպանությամբ և խը-նամքի խնդրով, քան ճակատի դրությամբ» (նույն տեղը, էջ 468—469):

Ապրիլի սկզբին, Ալեքսանդրապոլի խորհրդակցության նախօրյակին, Հայոց ազգային խորհրդի ամբողջ ղեկավար կազմը և Հայկական կորպուսի զինավոր շտաբը գեն. Նազար-բեկովի գլխավորությամբ այցելում են Սարիղամիշի ու ազմանակատը:

«Սարիղամիշը,— գրում է այդ ստվարաթիվ խմբի անդամ Ս. Վրացյանը,— գտանք քառսային վիճակի մեջ՝ Քաղաքը դատարկվել էր: Բնակիչները թողած տուն ու տեղ՝ հեռացել էին: Մնացել էին կասկածելի մարդիկ, որոնք գիշեր ու ցերեկ թալանով էին զբաղված: Զինվորական պահեստները մնացել էին անպաշտպան. անհաշիվ հարստություն էր ամ-բարված—զենք ու ռազմամթերք, զինվորական ու քաղաքա-ցիական հագուստ, երկրագործական գործիքներ և մեքենա-ներ, խճուղիների և կամուրջների շինության մեքենաներ, ան-սպառ գեղորայք, ալյուր, շաքար—տասնյակ միլիոնների արժեքով հարստություն» (Ս. Վրացյան, «Կյանքի ուղիներով», էջ 206):

Եվ սակայն, ինչպես քիչ հետո կտեսնենք, գեն. Նազար-բեկովի իսկ վկայությամբ, Սարիղամիշից Կարս նահանջած հայ զորքը սովոծ էր ու տկլոր: Պահեստներում ալյուր կար ու շաքար, զինվորական ու քաղաքացիական հագուստ, սա-

կայն զորքը ոտաբորիկ էր ու Շագին շոր շուներ, փորն էլ՝ քատարկ:

Սարիղամիշի ճակատում թուրքերն անցնում են հարձակ-ման: Բայց դրությունն սպառնագին չէր, ընդհակառակն, ինչ-պես տեսանք, Մուրադն ու Սեպուհը դեռևս ուզում էին հա-կագրո՞նի գնալ: Սակայն Ազգային խորհրդի նախագահը, կորպուսի հրամանատարն ու իր շտաբը, փոխանակ իրենց ներկայությամբ ողի ու կորով ներշնչելու զորքին, դեռ զորքը նահանջի նշաններ ցույց շտված, այնպիս են զլուս կորցրած փախում և իրենց խայտառակ փախուստով վհատություն սերմանում ու քայլայում ռազմաճակատը, որ Վրացյանն անգամ ոչ այդ ժամանակ, ոչ էլ հետագայում չէր կարողանում իր համար պարզել, թե ի՞նչը ի՞նչպես եղավ:

«Ինչպես եղավ, ո՞վ որոշեց— Հասակացա, — գրում է նա շուրջ շորս տասնամյակ անց:— Բայց իմացա, որոշվել էր: Հայոց ազգային խորհրդի անդամները և զոր. Նազարբեկյանի սպայակույտը անմիջապես պետք է մեկնեին և Սարիղամի-շում պետք է մնային Ապահովության խորհրդից՝ Վահան Փա-փիազյանը, Հայոց ազգային խորհրդից՝ ձեր խոնարհ ծառան և վահան Նավասարդյանը: Մեր զերը պետք է լիներ սիրտ տալ և աջակցել զոր. Արեցյանին պաշտպանելու ռազմաճակատը, որ բնավ պաշտպանվելու տրամադրություն ցույց չէր տալիս» (Ս. Վրացյան, «Կյանքի ուղիներով», էջ 205):

Իսկ մենք կարծում ենք, որ միայն գլխավոր հրամանա-տարի ուռնացած շտաբը բավական էր ռազմաճակատի մեջ կարմոր հատված պահելու համար: Սակայն, ինչպես տեսնում ենք այս մեջքերումներից, ոչ ոք սրտանց կպած չէր ռազմա-ճակատի կայունացման գործին: Վրացյանի, Փափազյանի և Նավասարդյանի բախտից գեն. Արեցովը և գնդ. Բեյ-Մամի-կոնյանը գրչի մարդ չեն եղել, թե չէ նրանք էլ իրենց հուշերը գրի կառնեին՝ ցույց տալով վերոհիշյալ երրորդության կա-տարյալ անհարությունն ու ավելորդությունը ռազմաճակա-տում:

Ապրիլյան համառ մարտերի ժամանակ, երբ թշնամին

մոտենում էր Կարսին, Ալեքսանդրապոլում խորյա խորհրդակցություն գումարվեց (ապրիլի 19—21-ը), որտեղ պետք է լավեին ինչպես Տրապիզոնից ձեռնունայն վերադարձած պատվիրակության, այնպես էլ տեսչական ստուգմամբ ու պատմաճակատներն այցելած Կովկասյան բանակի ընդհանուր հրամանատար գեն. Լեռդինսկու և Հայկական կորպուսի հրամանատար գեն. Նազարբեկովի զեկուցումները: Խորհրդակցության վայր ընտրված էր Ալեքսանդրապոլը, որպեսզի վերոհիշյալ գործունյա պատվիրակներն ու նրանց նմանները իրեւ թե ավելի երկար ժամանակով կտրված շմային ու պատմաճակատի տարրեր հատվածներից, որոնց «կցված էին» նրանք:

Գեներալ Նազարբեկովն այդ խորհրդակցությունում գանգատվում է, թե «Այժմ ամբողջ ճակատում ունենք 6 հազար զինվոր, որը մեծ թիվ չէ, իհարկե, քանի որ նախաձեռնությունը պատկանում է թշնամուն: Մենք շունենք հետախուզություն: Կարսի պաշտպանության համար եղած ուժերը քիչ են: Մեզ հարկավոր են նոր ուժեր: Զորքը շունի բավարար հագուստ, սնունդը նույնպես գոհացուցիչ չէ: Զորամասերը հողած են, նոր ուժերով չեն թարմացվում: Մենք մենակ թշնամուն դիմադրել չենք կարող: Տաճկահայերից էլ առանձին օգնություն չենք տք է սպասել» (Հայկ. ՍՍՌ գիտ. ակադեմիայի պատմության թանգարան, ձեռագիր № 7, էջ 336):

Պատմաբան Լեռն, որը որպես Տրապիզոնի պատվիրակության էքսպերտ՝ մասնակցել է Ալեքսանդրապոլի խորհրդակցությանը, իր «Անցյալից» գրքում հաղորդում է.

«Գնդերը մաշված ու հյուծված էին, ամեն մեկի մեջ հազիվ 200-300 հոգի մնացած լինեին, դրանք էլ գրեթե բորին էին ու քաղցած, ամիսներից ի վեր գտնվում էին դիրքերում անփոփոխ: Պատերազմական գործողություններն արդեն Կարսի մոտենալուն էին մղվում, Սարիղամիշն արդեն թողնված էր: Յայց և այնպես, այդ փոքրարիվ, զգզգված բանակի մեջ դիո մնացել էր զինվորական ողի, իրանց բազույթյամբ և դիմացկունությամբ աշխի էին ընկնում լեռնցիները, մանավանդ դարաբաղցիները, որոնց ուղմական բարեմասնություն-

ները ժռղովի առաջ վեր Էանեց զինավոր հրամանատար գեներալ Լեռդինսկին: Ամենամեծ զժքախտությունն այն էր, որ կովող հայ զինվորը բալորովին նեցուկ չուներ ազգաբնակչության մեջ: Մի հարգելի հայ օֆիցեր դրությունը պատկերացնում էր այսպիս: — Մինչդեռ թուրք ասքերը պատերազմ էր գնում աջից ու ձախից ունենալով մի-մի զինված քուրդ կամ թուրք, հայ զինվորը դաշտում կովելիս, տեսնում էր, որ իր թիկունքում գտնվող հայ գյուղացիները, մինչև ատամները զինված, փախչում են, տանելով իրենց հետ իրանց ընտանիքները, ալյուրի պարկերը: Այս ճիշտ որ մեծ աղետ էր, Շիրակի ժողովրդի այս վատարի փխրունությունը, որ երկու անգամ կորստի մատնեց իր բնակված և ուղմագիտական ահազին նշանակություն ունեցող երկիրը» (Լեռ, «Անցյալից», էջ 395):

Հասարակական պարտքի կատարումից խուսափելն ընդհանուր երկույթ էր: Թիկունքի հայ բնակչությունը զերմացնող որևէ կապ չեր պահպանում ուղմաճակատի հետ: Դասալքությունը բանակից բնական երևոյթ էր, մանավանդ որ մոքիլացված հայ գյուղացին գիտեր, որ թուրքերի անդրկովկեայան գործակալների բացահայտ թշնամական գործունեության հետևանքով իր հայրենի գյուղն էլ ուղմաճակատ էր դարձել և իր սեփական ընտանիքն էլ իր սեփական տան մեջ անապահովության էր դատապարտվել:

Այնուամենայնիվ, հերոսաբար կովող հայ զորքի մշտական հակագրուների շնորհիվ թուրքերին հաջողվեց Սարիղամիշից Կարս հասնել միայն 20 օրում: Կարսում և նրա մատուցներում 7700 կովող զորք կար: Կարսի մարտկոցների հրամանատար, ուսւ գեներալ Դեկեր բարեխողնորեն հիանալի հրետանավորներ էր պատրաստել հատկապես Թիֆլիսի բարձր գասարանների պատանի աշակերտներից, որոնք արդեն գիտեին անվրեպ կրակել թշնամու վրա:

«Կարսը պաշտպանող հայկական կորպուսի զորամասերի ուժեղը մոտավորապես երկու անգամ քիչ էին թուրքական ուժերից: Կարսի մատուցներում և բերդում կար մոտ 6000

գինվոր, և դա միանգամայն բավական էր հաջող պաշտպանության համար, — գրում է Ա. Կաղիշևը: — Կարսի ամրոցներից երկու կիլոմետր հեռավորության վրա մարտական գործողությունները դադարեցնելու դիմ սահմանելու վերաբերյալ Վեհիր փաշայի առաջարկության ընդունումը Զիսենկելիի կողմից ըստ էության կանխորոշում էր Կարսի բախտը, որովհետեւ թուրքերը գրավելով Զալդըրի լեռնաշղթայից Աղքարա լեռը ձգվող դիմը, շատ նպաստավոր դիրք էին ստանում Կարսի վրա ուժեղացված գրոհ կատարելու համար: Նրանք էլ հենց այդ էին ուզում: Թուրքերի համար կարենոր էր Կարսը գրավել նախապես շպայմանավորվելով այն էվակուացնելու մասին, որովհետև Կարսում վիթխարի քանակությամբ ուղղմական գույք կար:

Թուրքերը Կարսի վրա հարձակում սկսեցին դեռևս ապրիլի 22-ին: Հայկական զորքերը հրահանդի համաձայն ապրիլի 24-ին սկսեցին քաշվել դեպի Կարս: Զարգացնելով հարձակումը, թուրքերը մոտեցան Կարսի ամրոցներին, ապրիլի 24-ին հայկական կորպուսի հրամանատարը պառլամենտյուրներ ուղարկեց թուրքերի մոտ՝ առաջարկելով բանակցություններ սկսել: Սակայն թուրքերը շարունակում էին առաջ շարժվել դեպի Ալեքսանդրապոլ տանող երկաթուղին, որպեսզի այն գրավելով կտրեին Կարսը: Այդ ժամանակ բերդի արևմտյան և հարավային ամրոցներից հրետանային կրակ բացվեց թուրքական զորքերի վրա: Միայն դրանից հետո թուրքերը դադարեցրին պատերազմական գործողությունները:

Դիշերվա ընթացքում բանակցություններ տեղի ունեցան Կարսը էվակուացնելու պայմանների մասին: Ապրիլի 25-ին կայազորը թողեց Կարսը, և թուրքերը գրավեցին այն: Անդրկովկասյան կառավարության զորքերը ետ բաշվեցին Արփաշայի մյուս ափը և Ալեքսանդրապոլ (Ա. Կաdiшев, „Интервенция и Гражданская война в Закавказье“, стр. 53):

«Այս տողերը սպորագրողը, — գրում է Լոնդոն անցած Մուրատովը, — մեկնել է Կարսից ապրիլի 25-ին կեսօրից հետո ժամը 2-ին հայկական զորամասերից մեկի հետ: Կարսի

թերոի պաշտպանությունը վստահված էր ոուս Հարտար զորավար Դեկին: Եվ զոր. Դեկը, և՛ հայկական ճակատի ընդհանուր հրամանատար զոր. Նազարբեկյանը վճռել էին պաշտպաններ Կարսը: Եվ Կարսը կարող էր պաշտպանվել. թե որքա՞ն երկար, ես չգիտեմ. գուցե մի քանի շաբաթ, գուցե մի քանի օր: Բայց 1918-ի այն արհավրալից օրերում թուրքական բանակի արշավը օրերցվ, էլ շեմ ասում շաբաթներով, կասեցնելը անշափելի արժեք ուներ Շիրակում և Արարատյան դաշտում խմբված հայության գոյամարտի կազմակերպման համար: Թուրքերի առաջին ու վերջին հարձակումը Կարսի մարտկոցների դեմ տեղի ունեցավ ապրիլի 24-ին և այդ հարձակումը սուղ նստեց թուրքերին, մանավանդ Հարամ-Վարդան մարտկոցի դեմ արշավող թուրք զորամասերին: Կարսը կարող էր պաշտպանվել համենայն դեպս այնքան երկար, որ հնարավոր դառնար կանոնավոր նահանջը, առանց թշնամու ձեռքը թողնելու ուղղմամթերքի ու սննդի այն հսկայական պաշարը, որ կուտակված էր Կարսում: Բայց Կարսի բախտը այդ ճակատում կովող հայկական ուժերի և հայ հրամանատարության ձեռքը չէր, այլ Անդրկովկասյան հանրապետության կառավարության վարիչների՝ վարչապետ Ա. Զիսենկելիի և դինվոր. նախարար զոր. Օդիշելիձեի ձեռքը» («Հայրենիք», 1955 թ., № 10, էջ 37):

Ապրիլի լույս 25-ի գիշերը Կարսը էվակուացնելու վերաբերյալ բանակցությունների ժամանակ Ակալի Զիսենկելին, որն Անդրկովկասյան կառավարության նախագահ էր դարձել Եվգենի Գեղեցկորիի հրաժարականից հետո, և գեն. Օդիշելիձեն, որը Զիսենկելու կազմած նոր կառավարության մեջ գինվորական մինիստր Գեորգաձեի տեղակալ էր նշանակվել, զեներալ Նազարբեկյանը կարգադրում են Կարսը հանձնել թուրքերին, իսկ գեներալ Նազարբեկովը միանգամայն անդրագեկ այն ուժգին և արդյունավետ հականարվածին, որ հայ զորքը տասներկու ժամ առաջ, ապրիլի 24-ին, տվել էր հարձակող քուրքական զորքին, հապճեպորեն քաղաքը հանձնելու հրաման է տալիս և ճակատագրական հրամանը տալուց հետո

նոր միայն սթափվում է ու փորձում կապվել Թիֆլիսի Հայ ազգային խորհրդի կամ նրա ներկայացուցիչների հետ, բայց արդեն ուշ էր:

Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը կետ շուներ Կարսն անմիջապես թուրքերին հանձնելու մասին։ Այս-տեղ Կարսի, Արդահանի և Բաթումի բախտի որոշումը թողնը-ված էր հանրաքվեի, որի ե՛րք և ի՞նչ պայմաններում կատար-վելու մասին պետք է առանձին համաձայնություն կայացվեր։ Թուրքերը Անդրկովկասյան կառավարությանը հարկադրելով պաշտոնապես շնչանաշել Սովետական Խուսաստանը և նրա կնքած պայմանագիրը, կամայականորեն զավթեցին Կարսը։ Թուրքերը տասն օր առաջ գրավել էին Բաթումը և ապա Օզուր-գեթին, որը բուն վրացական հող էր և Բրեստի պայմանագրի հիմքում դրված 1877 թվականի ոռու-տաճկական սահմանից այս կողմն էր գտնվում։ Զիսենկելին կարծում էր, որ ի կատա-րումն Բրեստի պայմանագրի Կարսը հանձնելով՝ թուրքերը ետ կփաշվեն Օզուրգեթից, սակայն Կարսը հանձնելուց անմիջա-պես հետո, երբ նա պաշտոնապես դիմեց թուրքական հրա-մանատարությանը՝ խնդրելով ետ քաշվել Քութաիսի նա-հանգի Օզուրգեթի գավառից, ֆերիկ Վեհիրը մայիսի 3-ին պատասխանեց, որ այդ բանը կարվի Բաթումի բանակցու-թյունների, — որոնք վերսկսվելու էին մայիսի 11-ին, — հա-ջող ավարտումից հետո միայն։

Կարսը կարող էր երկար պաշտպանվել։ Կարսի մատուց-ները կարող էին գերեզմանոց դառնալ թուրքերի համար։ Կարսի երկարատես պաշտպանությունը շատ բան կփրկեր և շատ բան կփոխեր Անդրկովկասում։ Ռեոլուցիոն Բաթուն այդ ժամանակ հաջող հարձակման էր անցել, և սովետական անմար փարոսը Անդրկովկասի աշխատավորությանը, այդ թվում և հայ ժողովրդին, մատնացուց էր անում փրկության առաջատար ուղին։ Սակայն դաշնակցականները, որոնց վրա է ընկնում Կարսի 1918 թվականի անկման պատասխանա-տը վությունը, հետին թվով շքմեղանում էին սոսկ կեղծ դիմա-խաղով։

«Այս բոլոր հրամաններն ու կարդադրությունները, — գը-րում է Ս. Վրացյանը, — կատարվեցին Կովկասյան բանակի ընդհանուր հրամանատար կերեղինսկից անկախ, Սիյմից և հրավիրված նոր նախարարներից գաղտնի, միայն Զիսենկելու անձնական պատասխանատվությամբ։ Ոչ ոք տեղեկություն չուներ Զիսենկելու արած քայլերի մասին։ Եվ, ինչ որ պակաս տարօրինակ չէ, հեռագրական սովորական կապն էլ հայկա-կան կորպուսի և Հայոց ազգային խորհրդի միջև կտրված էր, և Թիֆլիսում ոչ ոք չգիտեր, թե ինչ է կատարվում Հայկական ուղմանակատում, մինչդեռ այնտեղ զարգանում էին հայ ժողովրդի համար ողբերգական հետևանքներ ունեցող դեպ-քեր» (Ս. Վրացյան, «Հայկ. հանր.», էջ 90):

Իսկ ո՞վ էր մեղավոր, որ Զիսենկելին, վրացական թա-վանների և աղբերեցանական բեգերի երդվալ հավատարմա-տարը, կարտ բլանշ էր ստացել՝ թե՛ գաղտագողի և թե՛ բա-ցահայտ դավ նյութելու Անդրկովկասի բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի դեմ։ ո՞վ էր մեղավոր, ո՞ր կապը կտրված էր Հայոց ազգային խորհրդի և Հայկակա-կորպուսի միջև։ ո՞վ էր մեղավոր, որ անդրկովկասյան ժողո-վուրդների համար ողբերգական հետևանքներ ունեցող դեպ-քեր էին զարգանում ուղմանակատում։ Մի՛թե Շահումյանը դեռևս շրոսուկես ամիս առաջ Ս. Վրացյանին և նրա ընկեր-ներին թե՛ գրավոր և թե՛ բանավոր չէր նախազգուշացրել, որ Զիսենկելին ներկայումս վրացական-մուսուլմանական աղ-նը վականական կոնտրուլյուցիոն բեակցիոն բլոկի ղեկա-վարն է։ Մի՛թե ինքը՝ Ս. Վրացյանը չէ գրել, որ «հեղափոխու-թյան առաջին օրերից սկսած մինչև վերջը թուրք-վրացական» (այսինքն՝ մուսավաթականների և մենշևիկների. — Հ. Թ.) ընդհանուր ճակատը հայերի հետ առնչություն ունեցող բոլոր դեպքերում մնաց փաստ» (Ս. Վրացյան, «Հայ. հանր.», էջ 21):

Քանի զեռ Անդրկովկասում կար ոռոսական ռեոլուցիոն բանակը, կոնտրուլյուցիոն այդ բլոկը շէր կարող տեղից շարժվել, իսկ հիմա ո՞վ պիտի խանգարեր նրան, երբ իրենք՝ զաշնակցականներն էլ օգնել էին բլոկին՝ ազատվելու ոռոս-կան բանակի ներկայությունից։

Ապրիլի 19—21-ի խորհրդակցությունը Ալեքսանդրապովում էր գումարվում Հատկապես նրա համար, որ «ղեկավարը ընկերները», որոնց ամբողջ ծաղկեփունջը և երեք բյուրոյականներին մենք տեսանք Սարիդամիշում, թեկուզ 4—5 օրով կտրված շմնային ռազմաճակատից, որ ռազմաճակատը զըրկված Ալիներ նրանց ներկայությունից: Հապա այդ վճռական պահին Կարսոսմ կամ Նազարբեկովի շտաբում ոչ ոք չկա՞ր Հայոց ազգային խորհրդից, որ կանխեր դավաճանական կարգադրության ի կատար ածումը:

Հետագայում դաշնակցականնեցը, ջանալով մի կերպ սքողել ուստական ուսուլուցիայի և հայ ու անդրկովկասյան աշխատավորության նկատմամբ ցուցաբերած իրենց վարքագիծը և Հատկապես 1918 թվականի հայ-թուրքական պատերազմի ժամանակ իրենց բռնած դիրքը, փորձում են արդարանալ թրեստի պայմանագրի առկայությամբ: Սակայն թրեստը և կարող հիշատակվել որպես ինքնարդարացման հիմք: Դաշնակցականները և նրանց մենշեկիկ պարտնյորները սկզբից ևեթ մերժել էին թրեստի պայմանագրը և մասամբ էլ հենց այդ պատճառով պատերազմի մեջ մտել թուրքիայի հետ: Ուստի և թրեստի պայմանագրի առկայությունը չի կարող պատճառ նկատվել թուրքական ճակատում տեղի ունեցած նահանջների և մասնավորապես Կարսի անկման: Իրավացի է Կասյանը (Ատենյանը), երբ նա «Ո՞ւր է ելքը» գրքում անդրադառնալով այդ ժամանակաշրջանին, գրում է:

«...Կտրել Անդրկովկասը բանվորա-գյուղացիական Ռուսաստանից... Անդրկովկասյան իշխող դասակարգերի բաղադանքին համապատասխանող այդ սկ մտքին խեցգետնի նըման կպչում են գեմովրատիայի անունից ճառող դաշնակցականներն ու մենշեկիները՝ առանց հաշվի առնելու այն սոսկալի հետևանքը լայն խավերի համար, որ հավանականորեն առաջ պիտի գար երեք խոշոր ազգությունների ազգային իշխող տարրերի հակադիր շահերի ու ձգտումների անբնական կուլիցիայից: Այդ կուսակցությունների խենթ ու դավաճանակուն էր, որ հնարավորություն տվեց արտաքին իմակերիավուտական աշխարհին խաղալիք դարձնել և արյունով ներկել

Անդրկովկասն ու Հայաստանը» (Ս. Ատենյան, «Ո՞ւր է ելքը», էջ 43—44):

«Իշխող տարրերի հակադիր շահերի ու ձգտումների անբնական կուլիցիայի» մեջ կամավոր կերպով մտնելուց հետո դաշնակցությունն այլևս իրավունք չունի պարտությունների մեղքն ուրիշի վրա բարդելու:

4. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՆԿՈՒՄԸ

Քանի դեռ թուրքերը չէին գրավել 1877 թվականի սահմանի հողերը՝ Կարսը, Արդահանը և Բաթումը, որոնց պատկանելությունը ըստ Թրեստի պայմանագրի պիտի որոշվեց միայն ռեֆերենդումի միջոցով, նրանք Անդրկովկասյան կոմիսարիատից պահանջում էին ոչ միայն բանակցություններն հիմք ընդունել Թրեստի պայմանագրիրը, այլև անմիջապես իրենց հանձնել Կարսը, Արդահանը և Բաթումը, իսկ եթե նորանց հաջողվեց փաստորեն օկուպացնել այդ հողերը, ապա նրանք, շարունակելով առաջ շարժվել, ներկայացնում էին շատ հեռուներ գնացող նորանոր պահանջներ։ Ամենից առաջ նրանք պահանջում էին Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղին՝ իրեր թե իրանական Աստրապատական զորք փոխադրելու համար։

Կարսի գրավումից երեք օր հետո, 1918 թվականի ապրիլ 28-ին, Վեհիր փաշան Անդրկովկասյան կառավարությանը հաղորդում է, որ Թուրքիան ճանաչել է Անդրկովկասյան կառավարության անկախությունը և որ հաշտության բանակցություններ վարելու համար շուտով Բաթում կժամանի թուրքական պատվիրակությունը Խալիլ բեյի գլխավորությամբ։ Մայիսի 11-ին Բաթումում վերսկսվում են բանակցությունները։ Մայիսի 13-ին թուրքական պատվիրակությունն առանձին հուշագրով պահանջում է իրենց տրամադրել Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղին՝ իրեր թե անդիմացիների դեմ իրանական Աստրապատական զորք փոխադրելու համար։

«Թուրքերի այդ նոր պահանջի նպատակը,— գրում է Ակադիշերը,— միանգամայն պարզ էր. նրանց հարկավոր էր հիմնավորել այդ երկաթուղային կարեռը մագիստրալի գավթումը։ Ալեքսանդրապոլ—Երևան—Ջուլֆա երկաթուղին Հայաստանի միակ երկաթուղագիծն էր, որ նրան կապում էր Վրաստանի հետ։ Այդ երկաթուղով էին կատարվում Հայաստանի մատակարարումը, երկաթուղային փոխադրումները դրանով էր կապ պահպանվում Հայաստանի տարրեր շրջանների միջև։ Այդ երկաթուղու տերը լինել նշանակում էր Հայաստանի տերը լինել։ Այդ երկաթուղին գրավելով Թուրքիան հպատակության մեջ էր պահում ամբողջ Հայաստանը» (Կածիշև, ստ. 55):

Թուրքերի այս նոր պահանջը, որ շատ հեռուն էր գնում Թրեստի պայմանագրից, փաստորեն մահ էր բերում հայ ժողովրդին։ Անդրկովկասյան պատվիրակության հայ անդամներ Հովհաննես Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղին՝ լինել պետք էր, 1918 թ. մայիսի 13-ին, երկումկես ժամ զորոյց են անում թուրքական պատվիրակության նախագահ։ Խալիլ բեյի և Կովկասյան ճակատի հրամանատար Ֆերիկ Վեհիրի հետ։ Թուրք պատվիրակներին հաջողվում է խարել դիվանագիտության մեջ խիստ անփորձ հայ պատվիրակներին և վերջիններիս համոզել, որ առանց դիմադրության ամբողջ երկաթուղու հանձնումը մինչև անգամ ձեռնտու է հայերին։ Քաջազնունին և Խատիսովը թուրքերի այս նոր պահանջն անմիջապես շեն հաղորդում Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին, թեև նոտաններիի* վրայով այդ բանն անելու հնարավորություն ունեին։ Հովհաննես Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղին ավելի ուշ, եթե բանը բանից անցել էր, Ազգային խորհրդին ներկայացրած իր զեկուցման մեջ ճգնում էր Ազգային խորհրդի անդամներին նույնիսկ համոզել, որ թուրքերը «շեն ստում»։ «Եթե երկաթուղին շրջանը,— պնդում էր նա, — ապա Վեհիրը կգնա երթային մարդու լուսական համար ասաց՝ «շքերթով»), այնքան քիչ է հավա-

* Բաթումի մոտակա երկաթուղային կայարան, որը գտնվում էր վրաց զորքի ձեռքին։

մեր դիմադրունակությանը: Բայց վախենում է, որ քառագների ու գյուղերի միջով զորքերի այդպես անցնելու ժամանակ ինքը չի կարողանա կարգ պահպաննել և որ երկրամասի բնակչությունը կարող է շատ լուրջ աղետների ենթարկվել:

Խալիլի և Վեհիբի խոսքերից անձամբ իմ մեջ (կարծեմ նաև Խատիսովի մեջ) այն համոզմունքը դոյցավ, որ թուրքերն այս անդամ չեն ստում, որ նրանց իսկապես որ խիստ անհրաժեշտ է ըստ Հնարավորին շուտ անցնել Թավրիզ, և որ տվյալ, Համենայն դեպս, պահին նրանք ուրիշ նկատառումներ ու դիտավորություններ շունեն» (Հայկ. ՍՍԾ պետարքիվ, Փոնդ 68/200, գործ 11, թիրթ 11):

Սա արդեն դաշնակցականների համար սովորական դարձած հերթական դավաճանությունից անցում է ուղղակի հակառակորդի կողմը և նրա դիվանագիտական լեզվի ու ոճի յուրացումը հայ ժողովրդին թթացնելու համար—Երկրամասի, այլ ոչ թե նայ բնակչությունը: Ուրեմն թուրքերը, Վեհիբ փաշան՝ չեն ուղում «Հքիրթով» անցնել Պարսկաստան, որպեսզի, քավ լիցի, Ալինի թե Երկրամասի բնակչությունը լուրջ տուժեր: Վեհիբ փաշան ուրիշ ոչ մի նկատառում ու դիտավորություն շուներ, նա միմիայն վախենում էր, որ իր զորքը, Հակառակի իր կամքին, Հարկադրված Ալիներ աղետ պատճառել Երկրամասի բնակչությանը, մի բան, որ երբեք չի եղել ո՛չ թուրք զորքի պրակտիկայում, ո՛չ էլ թուրքիայի պատմության մեջ:

Բայց այս արաւավոր ինֆորմացիան էլ, ինչպես ասացինք, Քաջաղնունին թիֆլիսի Հայոց աղքային խորհրդին հաղորդում է շատ ուշ, երբ բանը բանից անցել էր և Ալեքսանդրապոլն արդեն ընկել էր:

Երկու օր հետո, մայիսի 15-ին, թուրքերը երկաթուղին պահանջելու այդ նույն վերջնագիրը պարսկերենով, որ հնարավոր Ալիներ այն կարդալ, ներկայացնում են Ալեքսանդրապոլում կանգնած հայ զորքի հրամանատարությանը: Նրանք պահանջում են երեք ժամվա ընթացքում հանձնել քաղաքը և զորքը 25 կիլոմետր հեռացնել երկաթուղագծից: Սակայն շտարում պարսկերեն կարգացող չկար և զրության անհականալի պարսկերենը մեծապես նպաստեց թուրքերի գործին:

Ալեքսանդրապոլի բնորդապահ¹ զորքի պաշտոնական թիվն էր 506 սպա և 5576 զինվոր, որոնք ունեին 100 գնդացիր և 134 թնդանոթ, սակայն թուրքերի հարձակման անցնելու պահին բերդում կար միայն շուրջ հարյուր սպա, իսկ առկա զորքի թվի մասին ոչ մի հավաստի տեղեկություն չունենք: Հավանաբար, զորքի թիվը նույնպես շատ պակաս կլիներ պաշտոնական թվից:

Բացի այդ, Ալեքսանդրապոլում և նրա շրջակայքում էին դասավորված Հայկական առաջին դիվիզիան, Հայկական միացյալ զորամասը, Անդրանիկի հատուկ զորամասը, պաշտոնական թվով ընդամենը 16.000 զինվոր և 1100 սպա: Սակայն թուրքերի գրոհի պահին քաղաքում և նրա շրջակայքում կար ընդամենը ոչ ավելի, քան 7 հազար զորք: Ինչո՞ւ: Որովհետև թուրքերն այս հաղթանակն էլ նախապատրաստել էին դիվանագիտական յուրահատուկ խաղով: Ամբողջ քան օռ բուրքերը ոչ մի թշնամական շարժում չկատարելով՝ հայկական հրամանատարությանը հանգստացրել էին, թե մեր ուղածը 1877 թվականի սահմանն է, այլև այն կողմ չենք անցնի: Ամբողջ 20 օր ոչ միայն թշնամական որեւէ ոտնձգություն չէին կատարել, այլև «բարեկամացել» էին և հաճախակի բարեկամական այցելություններ էին կատարում՝ Ալեքսանդրապոլ ուղարկելով սպայական փոքրիկ խմբեր: Մյուս կողմից, էրզրումի, Սարիղամիշի, Կարսի և այլ վայրերի պարենամթերքի պաշարները կորցնելուց հետո հայկական հրամանատարությունը ավելի էր վատացրել սնունդի գործը: Զորքը կիսաքաղց էր: Թուրքերը գրոհի համար ընտրել էին զատկի օրը, երբ զորքի մի մասը, կարգապահության ընդհանուր թուլության այդ օրերին, «տուն» էր գնացել «թաթախլելու»:

Մայիսի 14-ի երեկոյան գե՛՛րալ Արեշովն էլ իր մոռ «թաթախլելու» էր հրավիրել զորամասերի հրամանատարներին, որոնցից ոմանք գիշերով վերադառնում են իրենց զորամասերի գասավորության շրջանը, իսկ ոմանք էլ մնում են քաղաքում: Գնդապետ Կորգանովի բրիգադն էլ, հայկական

¹ 1918 թ. հայ-թուրքական պատերազմին մասնակցել են մի քանի կորպանովներ (Դորդանյաններ) և մի քանի Փիրումյաններ: Փիրումյան-

գիրքերի իր հատվածը թողած, դասալիքներ էր որոնում քառարում և շրջակայրում, թե՛ զրբքը և թե՛ բնակչությունը տուգրված էր տոնական անհոգությամբ:

Մայիսի 15-ի վաղ առավոտյան թուրքերը բերդաքաղաքն ու երկաթուղին հանձնելու վերաբերյալ վերոհիշյալ պարսկերն գրությամբ փակ ծրարն ուղարկում են բերդի պարեռ գնդ. Յանկևսկուն: Գեն. Նազարեկովը դեռևս քաղաքումն էր. Յանկևսկին ծրարն առնում ու շտապում է նրա մոտ: Եվ այդ կրիտիկական պահին ֆորմալիստ գեներալը առիթը բաց չի թողնում դպրոցական խրատաբանության դաս կարդալու պարեռ Յանկևսկու գլխին, որին նա չէր սիրում, բայց և չէր կառողացել հանել պաշտոնից: Գեներալն ասում է, թե իմ շտարն արդեն մեկնել է, թե ևս այստեղ սոսկ ժամանակավոր հյուր եմ, ինքդ ինքնուրուցնություն ցույց տուր,— այդ իրավունքը ես տվել եմ քեզ, բաց արա ծրարը և պատասխանիր: Պարեռ Յանկևսկին առարկում է, թե թուրքերը ծրարը հասցեագրել են ձեզ, թե ձեր բացակայության դեպքում միայն ես իրավունք ունեմ այն բաց անելու, թե, վերջապես, ես չեմ էլ հասկանում, թե ինչ լեզվով է գրված, թարգմանիչ շունեմ:— Նման դեպքերում, պատասխանում է գերիմաստուն գեներալը, ես թարգմանիչ որոնում եմ քաղաքում. կիրառի՛ր իմ փորձը: Գնդապետ Յանկևսկին պարտականությունների ծանրության տակ գլուխը կորցրած, հանելուկային ծրարը ձեռքին նտ է դառնում: Վճռական ժամին հնարավոր դասալիքությունը կանխած լինելու համար ուժեղ պահաներ է կարգում ուղեփակոցներում և գրությունը բերած թուրք սպայի հետ գնում է թուրքերի դասավորության շրջանը, որպեսզի նրանցից իմանագրության բովանդակությունը: Գայլն ինչ է ուզում, եթե ոչ ամպ օր: Թուրքերը հարմար առիթթը բաց չեն թողնում: Հենց որ տեսնում են, թե այդ վճռական պահին բերդի պարեռը սեփական ոտքով իրենց դուռն է եկել, այսինքն՝ թշնամութերդը մնացել է առանց հրամանատարի, անմիջապես սկսում ներիշ երեքը գնդապես են, մյուսներն ավելի կրտսեր սպաներ, իսկ Կոռդանովներից մեկը գեներալ է, երկուսը՝ գնդապետ և մեկն էլ՝ կապիտան: — Հ. թ.

Են ոմբակոծել քաղաքը, և ուարրեր ուղղություններով հարձակման անցնել: Գեներալ նազարեկովը հապճեպ մի քանի կարգադրություններ է անում, ընդհանուր հրամանատար է կարգում դեն. Արեշովին— որի ինչ լինելը տեսանք Սարիղամիշում,— իսկ ինքը ավտոմորիլով փախուստի է դիմում՝ հանապարհին խանգարելով ամեն տեսակ փոխադրական միջոցներով և հետիւտն նահանջող բնակչությանը: Օրթաքիլիսա գյուղի մաս գեներալը կանգ է առնում: Այդ ահավոր պահին անգամ իրենց սրախոսությունից շրաժական գյումրիցիները նրա երեսին ասում են՝ «Գեներալ նազարեկով չեղավ, գեներալ նազար բեգում եղավ». Կարու ոսկով ծախեց թուրքին, էդ քիչ էր, հիմա էլ Գյումրին ծախեց»: Հայերեն շիմացող գեներալը միայն թարգմանիչների օգնությամբ է իմանում, թե հուսահատ ժողովուրդն ինչ կշտամբանք է թափում իր հասցեին: Նա ամոթից իրեն կորցնում է և ապա շոփերին կարգադրում է ետ դառնալ Ալեքսանդրապոլ, շրտեղ իր հրամանատարության ապիկարության պատճառով հանկարծակի բերված, հաճախ առանց ղեկավարի մնացած հայ զորքը այնուամենայնիվ առանձին հատվածներում հերոսարար կըուվում էր: Գեն. Նազարեկովը վերադարձին քաղաքը գտնում է ավելի լավ վիճակի մեջ, քան առավոտյան, երբ ինքը փախել էր: Ժամը մեկին վերադառնում է Յանկևսկին՝ բերելով գրության թարգմանությունը:

Օղակման մեջ ընկած և հուսահատական դիմադրություն ցույց տվող հայկական առանձին զորամասերի համառությունը ևս իրենց համար ձեռնոտու ձեռվ կոտրած լինելու համար թուրքերը զնդապետ Յանկևսկուն ողորմածարար խոստանում են նաև շորս ժամով (մինչև երեկոյան 5-ը) դադարեցնել կրակն ու հարձակումը և դադարեցնում են: Այդ կարճատև զինադադարը բոլորովին քայքայում և կազմալուծում է այս ու այն հատվածում կովողների շարքերը՝ փախուստ-նահանջի հնարավորություն ընձեռելով նաև նրանց, և թուրքերի համար ապահովելով վեհիր փաշայի սպառնացած «շքերթը»:

Ալեքսանդրապոլի քաղաքային զումայի նախագահը Ա. Խատիսովն էր, իսկ նրա տեղակալը՝ Վահան Նազարետի-

նը: Թուրքական արշավանքի ժամանակ առաջինն առաջ էր քաշված և բանակցություններ էր վարում Տրապիզոնում ու ապա Բաթումում, իսկ երկրորդը այդ կրիտիկական պահին տեղումն էր: Նա միաժամանակ Հայոց ազգային կենտրոնական խորհրդի կողմից, Կարսի դառն դասից հետո, «կցված էր» գեն. Նազարեկովի շտարին և իբրև թե պիտի վերահսկեց նրան: Սակայն այդ վճռական ժամին Վահան Նավասարդյանի վերահսկողությունը արտահայտվեց միայն այն բանով, որ նա շարունակ տարված էր «Հայոց պատվի» գերի շընկնելու հոգառվ: Մայիսի 15-ի ցերեկվա կարճատես զինադադարի պահին նա շարունակ շտապեցնում էր Նազարեկովին, որ նա շուտ թողնի քաղաքը և մեկնի Ղարաբիլիսա: Երկաթուղային հանգուց բերդաքաղաքի անկումը ազգային խայտառակություն չեր նրա համար, բայց ապիկար գլխավոր հրամանատարի գերությունը՝ ըստ նրա՝ ազգային անդարմանելի խայտառակություն կլիներ: Վահան Նավասարդյանը Նազարեկովին շտապեցնելով, պետք է կարծէլ, ավելի շուտ և ավելի շատ մտածում էր նաև իր թանկագին անձի մասին, քանի որ իր գրաված երկու պոստերն էլ պակաս առնշված չէին... Հայոց ազգային պատվի հետ: Քաղաքային գումայի փոխնախագահին իր պարտականությունները ձեռաց թոթափելով իր վրայից, նա ու գեներալը զնդապետ Յանկեսկուն, այս անգամ քաղաքացիական պատվիրակության հետ միասին, նորից ուղարկում են թուրքերի մոտ, որ նրանք մշակեն քաղաքն ու բերդը հանձնելու «ոչ-ամոթալի» պայմանները, իսկ իրենք, շապասելով պատվիրակության վերադարձին, նորից հապճեպորեն գոնում են փախուստի ճամփան: Վ. Նավասարդյանն ավտոմեքենա չուներ, իսկ գեներալը «Մերսիդես» ուներ: Հայոց ազգային պատիվը փրկված էր:

Անկումն այնքան խայտառակ, փախուստն այնքան կայծակնային էր, որ նրանք չեն կարողանում անդամ մի կարգին հաղորդագրություն խմբագրել թերթերի համար: Փախուստի ճանապարհին գտնվելով, նրանք չեին էլ իմանում, թե ինչո՞ւ վերջացավ: Շտարի պետ գեներալ վիշինսկին մայիսի 15-ի առավոտյան իրադարձություններին միանգամայն ան-

տեղյակ, Ղարաբիլիսայում հաղիվ կաթողանոամ է հետևյալ կիսատ հաղորդագրությունը խմբագրել լրագրերի համար.

«Մայիսի 15-ի երեկոյան ժամը 5-ին թուրքերը մեր աջ թիվ վրա գրավեցին Օրթաքիլիսան, կտրելով երկաթուղագիծը և շարունակեցին հառաջանալ դեպի Զաջուռ. ձախ թիվ վրա թուրքերը գրավեցին Փոքր Ղարաբիլիսան և սկսան դուրս գալ Ալեքսանդրապոլի թիկունքը:

Ջինադաղարի հանկարծակի խախտումը քաղաքի և շըրջակայքի մեջ մեծ խուճապ առաջացրեց, ամբողջ բնակչությունը կփախչի, տանելով իր հետ նաև զինվորները, որոնք կաշխատին ազատել իրենց ընտանիքները: Կացությունն անհուսալի ըլլալու պատճառով հրամայվեցավ թուրքերու մոտ բանագնացներ ուղարկել քաղաքի և բերդի հանձնման պայմանները մշակելու համար: Պայմանները հետևյալներն էին՝

1) Ալեքսանդրապոլ քաղաքը և անոր մեջ եղած զինամթերքը կհանձնվի թուրք իշխանության. 2) Թուրք զորքի մեկ մասը պիտի մտնի քաղաք կարգը պահպանելու համար [sic!], իսկ մյուս մասը պիտի շարունակե իր առաջխաղացումը դեպի արևելք. 3) մեր զորամասերը Ալիուրյանեն պիտի ետ քաշվին 25 կիլոմետր. 4) երկաթուղային կայարանը, դեպոն, արհեստանոցները, շոքեմեքենաները և ամեն ինչ քաղաքի ու բերդի մեջ պիտի ողջ մնան: Մեր զորամասերը դիրքեր պիտի զրավեն Ալեքսանդրապոլեն արևելք» («Աշխատանք», Երևան, 1918 թ. մայիսի 22):

Սա Նազարեկովի շտարի պետ գեն. Վիշինսկու պաշտոնական ինֆորմացիան է, որովհետեւ նույն օրը Թիֆլիսի «Մշակում» ու «Հորիզոն» էլ նույնը տպել են միայն արևելահայ թարգմանությամբ:

Ալեքսանդրապոլի անկումը շատ ավելի աննպաստ դրություն ստեղծեց հայ ժողովրդի համար, քան էրզումի կամ Կարսի անկումը: Գեն. Նազարեկովն արդարանալու համար գրում է իր բացատրագիրը՝ ճգնելով բերդաքաղաքի անկման մեղքը բարդել ուրիշների վրա: Սակայն նրա մեղավորությունն այնքան բացահայտ է, որ բացատրագիրն առաջին հերթին

բրդվում է հենց նրա դեմ, մերկացնում է նրա կատարյալ անձարակոթյունը:

«Ալեքսանդրապոլի բերդի և շրջանի պաշտպանության թուլության վրա,— գրում է նա, — «Հ քիչ բացասական աղղոցով է գործել [Անդրկովկասյան ռազմաճակատի] գոլխավոր հրամանատարի [Լեբեդինսկու] կողմից՝ հայկական կորպուսի հրամանատարի և Հայոց ազգային խորհրդի գլխի վրայով՝ գնդապետ Յանկոսկուն անհաջող կերպով բերդի պարետ նշանակելը: Այդ կարճ [Կարսի անկումից մինչև մայիսի 12-ի ստուգատեսի օրը] ժամանակամիջոցում (16 օր) նա կարողանում է Թիֆլիս գնալ և պարզել իր որպես բերդի պարետի իրավունքները, ապա իր օգնական կապիտան Կորպանովին ծառայության գործերի պատրվակով տուն ուղարկել զատիկ կատարելու համար. Կորպանովն կապիտանը] այդ պատճառով էլ շմանակցեց բերդի պաշտպանությանը: Հետեւալ օրինակը պարզ ցուց է տալիս պարետ Յանկոսկունի փուլությունը: Ես գեներալ Վիշինսկու հետ ցանկություն հայտնեցի դիտելու բերդի և շրջանի պաշտպանական միջուցառումները: Ավտոմորիլով գնացինք և դիտելիս ես ու գեն. Վիշինսկին համոզվեցինք, որ պարետը գործով շատ ավելի քիչ բան էր արել, քան թղթի վրա ու խոսքով. ցավալի էր նրա իսկ բերանից լսել, որ ինքն անձամբ առաջին անգամ էր տեսնում դիրքի որոշ հատվածները: Այդ շրջագայությունը կատարվեց նոր տոմարով մայիսի 12-ին: Այդ անփութության համար ես նրան նկատողություն արի և նախազգուշացրի, որ հարկադրված կլինեմ խնդրել, որ ուրիշ մարդ նշանակեն (այնուհետև գեն. Նազարբեկովը տալիս է քաղաքի խառն վիճակի պատկերը, գնացքների անկանոն երթևեկությունը և այն, որ հարկադրված է լինում իր շտարն՝ շտարի պետ գեն. Վիշինսկու գլխավորությամբ ուղարկել Ղարաբիլիսա—Դիլիջան, իսկ ինքն առժամանակ մնալ Ալեքսանդրապոլում): «...Մայիսի 15-ի առավոտյան, — շարունակում է նա, — ժամը մոտավորապես 7-ին, ինձ զարթեցնում են՝ հայտնելով որ պարետն էքստերն գործով ուղում է ինձ տեսնել: Ներս հրավիրեցի: Նա գեկուցեց, որ մի թուրք սպա մի ծրար է բերել

և շուտափույթ պատասխան է պահանջում: Ես նրան ասացի, թե պետք դու ես, ինքո էլ պետք է բաց անես ծրարը և տեսնես, թե ինչ է գրված այնտեղ: շուտափույթ դեպքերում ծրարները բաց անելու արտոնությունը ես տվել էի: Թուրք սպաններն ասել էր, թե ծրարն ուղարկված է կորպուսի հրամանատարին, իսկ եթե նա չկա՝ ապա պարետին: Պարետը պատասխանեց, որ թարգմանիլ չունի. ես նրան ասացի, որ ինչպես եմ անում, թարգմանիլ պետք է նարել քաղաքում: Պարետը գնաց: Մի քանի բողք հետո ինձ գեկուցեցին, որ նա թուրքական սպայի հետ գնացել էր Կազաչի պոստ և խնդրել էր ավտոմորիլ ուղարկել իր հետեւից:

Այդ միջոցին աղմուկ լսվեց փողոցից. Հարցրի, թե ինչ է պատահել, ասացին, որ թուրքերը հարձակում են սկսել, աժողովուրդը փախչում է: Ենթադրելով, որ թուրք սպայի ժամանումն է իրարանցում առաջ բերել, արագ փողոց գուրսեկա և սկսեցի հանգստացնել ժողովրդին: Բայց, դժբախտաբար, տեսա, որ արկեր են պայթում քաղաքի վրա: Այդ միջոցին ինձ մոտ եկան գեն. Արեշովը, գնդապետ Կորպանովը և ուրիշներ: Գեն. Արեշովին կարգեցի ժամանակավոր պետ, և գնդապետ Կորպանովին կարգադրեցի գնալ, անմիջապես հայսկ գնդապետ իր բրիգադը (որը ցրված էր գասալիքներ որոնելու գործով) և գործել ձախ թևում: Ռոպեապես քաղաքը լցվեց գաղթականներով, սայլերով և պարետատնից ու բերդից ազատ արձակված գասալիքներով: Միլիցիան փորձում էր վերականգնել կարգը, բայց ոչ մի ուժ ի վիճակի շեր կարգ հաստատելու: Բոլորն էլ փախչում էին գետի ջաջուրի լեռնանցքը: Ես նույնպես մեկնեցի, բայց Օրթաքիլիսա հասնելով կարգադրեցի, որ գեն. Վիշինսկուն հաղորդեն, որ ես առաջմ մնում Ալեքսանդրապում, որ թուրքերի հարձակման մասին նա հայտնի Ազգային խորհրդին: Փոխսպազետ Եղիազարովի հետ Ալեքսանդրապու վերադառնալով՝ քաղաքը համեմատաբար կարգավորված գտա. այն համարյա դատարկ էր, սակայն կոիվը եռում էր, թեև բերդի հրետանին չեր գործում: Գեն. Արեշովն իր շտարով ղեկավարում էր մարտը: Պարետը գեռւու չեր վերադարձել: Կարգադրեցի, որ նրա տեղակալն ստանձնելու

Նրա պարտականությունների կատարումը: Գեն. Սիլիկովին հաղորդեցի թուրքերի հարձակման անցնելու մասին: Անդրանիկին կարգադրեցի անմիջապես շարժվել դեպի Ալեքսանդրապոլ և գործել թշնամու թիկունքում, որը շրջանցել էր մեր աշխեր: Բայց, ցավոք սրտի, կարգադրություններս չկատարվեցին: Մայիսի լույս 15-ի գիշերը գեն. Արեշովն իր մոտ՝ Ալեքսանդրապոլ էր հրամակիրել զորամասերի հրամանատարներին, որոնցից երկրորդ գնդի հրամանատար գնդ. Փիրումովը և 4-րդ գնդի հրամանատար գնդ. Հովսեփյանը գիշերով վերադարձել էին իրենց զորամասերի դասավորության շրջանը, իսկ առաջին գնդի հրամանատար փոխգնդապետ Կարաքեշիշյանը և երկրորդ գնդի հրամանատար գնդապետ Սամարցել մնացել էին քաղաքում: Առավոտյան, երբ թուրքերի ուժակոծությունից իրարանցում էր առաջ եկել քաղաքում, գնդապետներն շտապում են անցնել իրենց զորամասերի դասավորության շրջանը, բայց [Յանկևսկու կարգած] պահակները նրանց կանգնեցնում են ու թույլ չեն տալիս անցնել, կարծելով, որ նրանք աշխատում են դասալքել: Նրանց զորամասերն, այդպիսով, թուրքերի ճնշման ժամանակ մնում են առանց հրամանատարի: Առաջին գունդն առավոտյան իր սովորական վարժություններն էր կատարում, երբ թուրքերը հարձակման են անցնում և, ոչնչացնելով պահակներին, առաջ են շարժվում գնդի վրա: Առաջին գունդը չի դիմանում գրոհին և սկսում է նահանջել: Գեն. Արեշովն առաջին գնդի նահանջի լուրն առնելով, երկրորդ գնդին կարգադրում է օգնության հասնել առաջին գնդին, սակայն գեներալի կարգադրությունը մնում է անկատար և երկու գնդերն էլ [առանց հրամանատարի] նահանջում են Զաջուռի լեռնացքից այս կողմ: Պարետ [Յանկևսկին] վերադարձավ մոտավորապես ժամը 1-ին և հայտնեց, որ թուրքերն ուզում են երկաթուղային կայարանը, Զուլֆատանող երկաթգիծը, բայց չկարողացավ ճշգրիտ շարադրել թուրքերի բոլոր պահանջները: Նա թուրքերից խնդրել էր մի քանի ժամով դադարեցնել կրակը՝ պատասխան տալու համար: Ես նրան կրկին անգամ, — այս անգամ քաղաքի ներկայացուցիչների հետ, — ուղարկե՛րի թուրքերի մոտ՝ նրանց ճշշ-

գրիտ պահանջներն իմանալու համար: Պարետն ուշացավ-կովը վերսկսվեց: Մերոնք կովում էին համառորեն, սակայն երկու թեսերից էլ շրջանցված լինելու, ոեզերվներ չունենալու, ինչպես նաև մարտկոցների պետերից տխուր զեկույցներ ստանալուց հետո միայն ես որոշեցի մութն ընկնելուն պես դատարկել քաղաքը՝ եթե թուրքերի պահանջներն ամոթալի մինեին...

Պարետին շապասելով ես հեռացա քաղաքից» (Հայկ. ՍՍԾ պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ 120, գործ 11, թերթ 32—33):

Հայկական զորամասերը դիրքեր չգրավեցին «Ալեքսանդրապուրեն արևելք», այլ անկանոն նահանջեցին ուր որ կարողացան: Գնդապետ Զալիխովի հեծյալ գունդը, թվով 260 ձիավոր, երգնկայի և Մակվի գումարտակները, ընդհանուր թվով 700 սվին, նահանջում են դեպի Արարատյան դաշտը: Անդրանիկը առանձնացած իր զորամասով քաշվում է Զալալօղի (Ստեփանավան): Մնացած ամբողջ զորքը Շիրակի և Փամբակի հայ գյուղացիության անբարյացակամ վերաբերմունքից է՝ ավելի հիասթափված ու ընկճված, նահանջում է դեպի Մեծ Զարաքիլիսա (Կիրովական): Համամլվում, որտեղով էր անցնում Ապարանի վրայով երեան տանող խճուղին, խիզախ կապիտան Գուրգեն Մովսիսյանը նազարեկովից խնդրում է թույլ տալ իր մարտկոցով նահանջել դեպի երեան: Գլխավոր հրամանատարն իր հերթական հիմար կարգադրությամբ նրան արգելում է այդ քայլը՝ միանգամայն անպաշտպան թողնելով երեան տանող խճուղին: Նազարեկովն իր շտաբով ապավինում է Դիլիջանի անտառներին: Կազմալուծված հայ զորքը Մեծ Զարաքիլիսայումն էլ կանգ չի առնում և հրամանատարի հետեւից շարունակում է նահանջել դեպի Դիլիջան՝ դասավորվելով նիկիտինոյից մինչև Դիլիջան:

Երգնկան պահել հնարավոր չէր: Էրգրումը շուտ ընկայի գլխավորապես Օդիշելիձեների և Տվերդոխերովների դավով, իսկ Կարսը՝ Զիսենկելու դավադրության հետևանքով: Բայց Ալեքսանդրապոլը, որն ամեն գնով պետք էր պահպանել, ընկայ շատ ավելի շուտ և շատ ավելի խայտառակ ձևով, քան-

Ծրգնկան, էրզրումն ու Կարսը: Այստեղ ո՞ւմ մեղադրել: Զէ՞որ Կարսի անկումից անցել էր ամբողջ քսան օր: Այդ ժամանակամիջոցում կարելի էր ոչ միայն վերլուծել մինչև այդ թույլ տրված սխալները և կանխել դրանց կրկնությունը, այլև վերադասավորել և կարգի բերել զինված ուժերը:

Հայտնի է, որ ոռուների զնալուց հետո ամեն տեսակ ռազմամթերքի ու պարենի վիթարի պաշարներ էին մնացել վերազանցապես հայարնակ վայրերում (Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Քանաքեռում, Կարսում, Սարիղամիջում և Արևմտյան Հայաստանում): Օսմանյան կայսրությունից էլ համարյա բան չէր մնացել, բոլոր ճակատներում պարտվել ու ջախջախվել էին նրա զինված ուժերը: Ավելի նպաստավոր իրադրություն հայկական անկախության նվաճման համար դժվար է պատկերացնել: Բայց դաշնակցությունը ոչ միայն շկարողացավ օգտվել պատմության ներկայացրած առիթից, այլև անզոր գտնվեց անգամ պաշտպանական պատերազմի համար; Ալեքսանդրապոլի ամոթալի անկումը դաշնակցության անանկության վերջին սպառի ապացույցն էր.

Սակայն Ալեքսանդրապոլի անկումը շրջադարձային կետ հանդիսացավ հայ-թուրքական պատերազմի մեջ, որ մզվում էր բացառապես հերոս հայ զինվորի սպինով, բայց «ղեկավարվում էր» անդրկովկասյան իրարամերժ շովինիստական պարտիաների անկայուն բլոկի՝ Անդրկովկասյան կոմիսարիատի և ցարական բանակի մնացորդ հայազդի ու այլազդի ռեակցիոն գեներալների կողմից: Թուրքական փաշաների օկուպացիոն բանակի դեմ մզվող պատերազմը կարող էր վերածվել ժողովրդական արդար պատերազմի և հաջողությամբ կարող էր պատկերվել միայն այն ժամանակ, եթե դաշնակցության հանցագործ քաղաքականությամբ խրախուսված թշնամական տարրերը Հայաստանի և Անդրկովկասի զանազան վայրերում շկարողանային կաշկանդել հայ ժողովրդի նախաձեռնությունը: Ալեքսանդրապոլի, երկաթուղային այդ կարեռագույն հանգույցի անկումով դաշնակցության անփառությունը կտրված մնաց Թիֆլիսում, և հայ բնօրրանը կարողացավ գոնե առժամանակ ազատագրվել «ղեկավարե-

լու պարտականություն ու թյուրիմացություն ունեցող» շեֆերի հայ ժողովրդին միշտ թանկ նստած ու նստող հովանավորությունից:

Դաշնակցականների հակառեռլուցիոն կողմնորոշման, նրանց քաղաքական տհասության և քյալագողության հետեւ վանքով հայ ժողովրդի համար ստեղծված այդ ժանր օրերին «Սեյմի քաղաքականության և Անդրկովկասի դրության մասին» զեկուցումով հանդես գալով Բաքվի սովետի 1918 թվականի մայիսի 29-ի միացյալ նիստում, Ստ. Շահումյան ասում էր:

«Այն կրիտիկական դրությունը, որի մեջ դրվել են հայ մասսաները, դրում է հայ գյուղացիներին զենքը ձեռքին դուրս գալ ու տապալել իրենց անամոթ ղեկավարներին՝ դաշնակցականներին, որոնք խայտառակ կերպով դավաճանել են նրանց: Նրանց ձեռքին կար մոտ 30.000 հայ ճակատային զինուանց: Այդ ուժով հրաշքներ կարելի էր գործել, ես ել շեմ խոփոր: Այդ ուժով հրաշքներ կարելի էր գործել, ես ել շեմ խոսում զինված գյուղացիության հսկայական մասսայի մասին, որը մենակ կարող էր հաշիվ տեսնել թե՛ թուրքերի և թե՛ Անդրկովկասի բոլոր կոնտրուլուցիոն ուժերի հետ: Եթե հայ գյուղացիների գլուխ անցած լինեին ոչ թե Զիսինկելիից ու ժորդանիայից ոչնչով շտարբերվող դավաճաններ, այլ իսկական ուղղուցիոններներ, ապա ժողովուրդը նման խայտառակ վիճակի չէր հասնի:

Եվ եթե առաջ մեզ մոտ կարծում էին, թե տասնյակ տարիներու հայ ժողովրդի բախտը լուծող ու նրա համար այդքան դժբախտ վիճակ ստեղծող հին լիդերները որոշ վստահության են արժանի, ապա այժմ այդ մասսաները պատին սեղմած լինելով՝ պարզ հասկանում են, որ իրենց սպառնությունը կամ իսպառ ունշացում, կամ նրանք պետք է երես դարձնեն իրենց առաջնորդներից ու զենքը ձեռքին դուրս գան վերահաս վտանգի դեմ» (Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 224—225):

Նույն այդ նիստում, պատասխանելով Բաքվի սովետի դաշնակցական պատգամավոր Զարաֆյանին, Ստ. Շահումյանը եղրափակման խոսքում ասում է:

«Նրանք ասում են, որ Հարկադրված էին հապիտույացիս անել թուրքերի առաջ, իսկ ևս ասել եմ ու կրկնում եմ, որ օքակտիվ պայմաններն այնպես էին դասավորվել, որ Անդրկովկասում կար հսկայական դինված ուժ, որը պատրաստ էր գուրս դալու թույլ թուրքիայի դեմ: Միմիայն հայկական ուժերը բաժական էին թուրքերի հետ հաշիվ տեսնելու, սակայն դուք մենշեիկների ու մուսավարականների հետ կազմալուծեցիք զորքերի շարժերը, ոչ թե այն զորքերի, որոնք երեք տարվա պատերազմից հետո հաջողորդյան էին ծարավի, այլ այն հայկական զորքերի, որոնք պատրաստ էին մեննել և պահել իրենց երկիրը: Դուք այլասերեցիք այդ զորքերը, — ահա թե ո՞րն է ձեր մեղքը, ահա թե ո՞րն է ձեր ոնրազործությունը» (նույն տեղը էջ 229, ընդգծումները մերն են. — Հ. Թ.):

Երբ Ստ. Շահումյանը ուսուցիոն թաքվում արտասահնում էր այս մարդարեաշունչ խոսքերը, հեռագրական կապը կտրված լինելու պատճառով նա անմիջականորեն իրազեկ չէր հայ բնօրրանում սկսված ժողովրդական շարժման մանրամասնություններին: Ինչպես կտեսնենք ստորև, Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաբիլիսայի մարտերի մասին հաղորդագրությունը շատ մեծ ուշացումով էին թաքու հասնում: Սակայն լավ ճանաչելով հայ աշխատավոր ժողովրդին, Ստ. Շահումյանը վստահ էր, որ նահանջելիս-փախչելիս ալլուրի պարկի հետ նաև հրացանը շալակած հայ աշխատավոր գյուղացին իր և իր զավակների ֆիզիկական գոյությունը պահպանելու համար երեսը թշնամուն դարձրած կենաց ու մահուկուվ պիտի սկսեր լկտիացած թշնամու դեմ: Նրան պիտի էր օգնել ամեն գնով:

5. ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ալեքսանդրապոլի անկումից հետո, մայիսի 19-ին թուրքական պատվիրակության նախագահ Խալիլ բեյը թաթումում կան պատվիրակության նախագահի բնիքը և պարտված է, որ «Հայերը պարտված են և պետք է ենթարկվեն» (Հայկ. ՍՍԾ պետարխիվ, ֆոնդ 68/200, գործ 23, թիրթ 112):

Այս հայտարարությունից հետո հայ պատվիրակները (Խատիսով Ա., Քաջազնունի Հովհ.՝) համատեղ, ինչպես հաշվառված է Ա. Խատիսովը, «Հեռագրեցինք Կարճիկյանին՝ լորդում է Ա. Խատիսովը, ու Հեռագրեցինք Կարճիկյանին՝ խորհուրդ տալով ռազմական դիմադրություն ցույց շտալ թուրքերին» (նույն տեղը, ընդգծումը մերն է. — Հ. Թ.):

Այս «խորհուրդը» Թիֆլիսի վրայով հասնում է արդյոք Երևան թե ոչ, այդ կարևոր չէ, որովհետև ընդհանուր հուսալքման այդ օրերին Երևանի քաղաքային դուման ենթարկյանի նախագահությամբ իր մայիսի 18-ի ընդադարձական ված նիստում ընդունում է քաղաքագլուխ դաշնակցական թոշականի առաջարկությունը՝ քաղաքն առանց դիմադրության հանձնել թուրքերի ողորմածությանը: Երևանի թուրքական ազգային խորհուրդը, որի առանձին անդամներ մասնակցում էին քաղաքային դումայի նիստին, այս որոշումը թալինի վրայով շտապ հասցնում են Ալեքսանդրապոլ՝ թուրքական գործող բանակի հրամանատար Յաղուր Շեկբի փաշային: Երեսանի զորքագնին մնում է տիսոր որոշում կայացնել՝ Երևանի պարետ Ա. Շահիսաթունուն բնակչության հետ միասին թողնել:

Երեամնում, իսկ դինված ուժերը ետք բերել Սուրմալվից ու Էջամիածնից և բարձրանալ Կոտայքի բարձրավանդակն ու Սևանա լճի ավագանը և ամրանալ այդ աղքատիկ լեռներում:

Երեանի զորաբաժնի ուազմաճակատը ձգվում էր Վեդուց մինչև Սուրմալվի գավառը և նրա ունեցած գրեթե բոլոր զորքերը գտնվում էին Սուրմալվում և Ղամարլու-Ցուլա ճակատում: Այս նոր պլանի համաձայն Երեանի զորաբաժնի հրամանատար գեն. Սիլիկովը, որի շտաբը գտնվում էր Էջմիածնում, մայիսի 19-ին Սուրմալուն էվակուացնելու հրաման է տալիս իր տեղակալ և Սուրմալվի ուազմաճակատի հրամանատար գնդապետ Դանիել բեգ Փիրումյանին:

Մայիսի 16-ին տվարտելով Ալեքսանդրապոլի գրավումը՝ մայիսի 18-ին թուրքերն արշավանք են սկսում երեք ուղղությամբ: Մի զորաբանակ Զավախիքի և Լոռիի վրայով շարժվում է գեպի մուսուլմանաբնակ Բորշալու և Ազրուլաղ՝ Թիֆլիսի վրա գրոհելու համար: «Գելիբոլու» դիվիզիան Յաղուր Շեվքի փաշայի հրամանատարությամբ, աջ թերակ Կարսի շրջանի բաշիքողուկների օժանդակությամբ, երկաթգծով և Արագածի հարավային լանջերով շարժվում է Երեանի վրա: Զավիդ և էսաղ փաշաները երկաթգծի ուղղությամբ շարժվում են գեպի Ղարաբիլիսա, սակայն մայիսի 20-ին Համամլու հասնելով, էսաղ փաշան փոխում է իր զորամասի առաջխաղացման ուղին և Երեան տանող խճուղով շարժվում է Բաշ-Ապարանի վրա:

Մայիսի 21-ին, երբ Սուրմալվի հապճեալ էվակուացիան դեռ նոր էր ավարտվել, և հայ զորքի մեծ մասը դեռ գտնվում էր երկաթգծից հարավ ընկած գյուղերում, թուրքերը Ալեքսանդրապոլի կողմից երևում են Արարատյան դաշտում և առանց կովի գրավում Սարդարապատ կայարանն ու գյուղը:

Երկաթգծի ուղղությամբ Երեանի վրա արշավող ուժերը, թվով հինգ-վեց հազար կանոնավոր զորք և երեք հազար բաշիքողուկ, մայիսի 22-ին մոտենում են Ղամշլու (ներկայումս՝ Եղեգնուտ) կիսակայարանին, նպատակ ունենալով հասնել Կարխուն և մտնել Զանգիբրասար: Էջմիածին կայարանի մոտակա Կարխուն գյուղը, որը Զանգիբրասարի նախադուն էր, Ղամշլու կիսակայարանից գտնվում է ընդամենը 12 կիլոմետրի

վրա: Եղեկաթգծից դեռ հարավ գտնվող հայ զորքերը և հայկական գյուղերի բնակչությունը գտնվում էին Երեանից և էջմիածնից կտրվելու, գերի ընկնելու ու կոտորվելու սպառնալիքի տակ: Խնուսի, Ալաշկերտի և ապա Սուրմալվի վերաբնակիչների հետ միասին Մարգարայից մինչև Սարդարապատ գյուղերում շուրջ հարյուր հազար հայ գյուղաբնակչություն կար, որն աշեղ սպառնալիքի տակ տեղահան էր եղել և բռնել մեծ ու փոքր, նեղ ու լայն ճանապարհները: Մայիսի 22-ին երկաթգծից դեռ հարավ էր գտնվում Զեյթունցիների հեծյալ գունդը (300 ձիավոր)՝ Կարակալյահի գետանցի պաշտպանության դիրքերում և կապիտան Մամաջանյանի հապճեալ կազմակերպարայի գումարտակը մի քանի հարյուր սվին, փոխգնդապետ Կորուկովի, գնդապետներ Սիլինի և Պերեկոյոստկովի զորամասերը, միասին շուրջ 1700 սվին, գնդապետ Դոլուխանյանի 6-րդ գունդը՝ շուրջ 800 սվին, 5-րդ գնդի երկու գումարտակ՝ շուրջ 500 սվին, կապիտաններ Սակելյարին և Աթանեսյանի մարտկոցները, տրապիզոնցի Թոուցիկ Հովկի, բաշգյանցի Մակեդոնի, բուլանըցի Մուրադի և եղիդիների հեծյալ խմբեր՝ շուրջը 700 ձիավոր: Այսպիսով, ավելի քան չորս հազար զորք: Ընտիւր, շամանության ո'չ թե թուլության, այլ բացակայության այդ պայմաններում, երբ խախտվել էր ամեն ինչ և շկար կարգ ու հեղինակություն, բանակի շարքերում, զորամասերի մեջ մընացել էին անհուսալի իրագրությունը ճիշտ գիտակցող զինվորները և սպանները միայն, որոնք հակառակ բարձր հրամանատարության բացահայտ ապիկարության, գիտեին, որ միակ փրկությունը անձնազո՞ն պայքարն է: Այս հիանալի զորքին, որը գիտակցարար և ինքնակամ, — որովհետև մինչև այդ ոչ ոք և ոչինչ չէր կարող նրան խանգարել դասալքելու, — մնացել էր իր զորամասերում, գերի ընկնելու և կոտորվելու վտանգ էր սպառնում: Այսպիսով, իր զինված ուժերին, ինչպես նաև դեռ տեղահան շեղած հայ գյուղաբնակչությանը գերությունից և կոտորածից փրկելու համար գնդապետ Դանիել բեգ Արիսողոմի Փիրումյանին ուրիշ ոչինչ չէր մնում, քան պատվավոր մահվան ընտրությունը: Աշխարհազորայինները և Զհանգիր

աղայի հղիներն արդեն ինքնագլուխ դեռ լույս 22-ի գիշերը Մոլաբայզետ գյուղի շրջանում փոխհրաձգության մեջ էին մտել թուրքերի աջ թևում առաջ շարժվող բաշիրողուկների հետ: Այդ փախհրաձգությունը գնդապետներ Դոլուխանյանին և Պերեկրյոստկովին հնարավորություն էր ընձեռել մարտական կարգի բերելու իրենց գնդերը, իսկ կապիտաններ Սերգո Աթանեսյանին և Սակելյարիին՝ դասավորելու իրենց հրետանին: Եվ գնդապետ Դանիել բեր Փիրումյանը Մոլաբայզետից մինչև էվջիլար գտնվող իր զորամասերին հակածարձակման հրաման է տալիս Սարդարապատից հետո Գեշըրլու մտած և գեպի Դամշլու շարժվող թուրքական զորքի վրա: Մայիսի 22-ի առավոտյան սկսվում է բախտորոշ հակածարձակումը երկաթգծից հարավ ընկած հատվածում:

Ինչպես ասել ենք, ընդհանուր իրարանցման մեջ բոլոր ճանապարհները ըսնված էին նահանջողների սայլերով, դատարկում էին հինավորց շեն գյուղերը, գինու կարասները թողնված էին անտեր: Ռուս գնդապետ Սիլինը դեմ չէր, որ իր գինվորները կովից առաջ բոլորեին կարասների շուրջը և մի փոքր «տաքանալուց» հետո խոլական հակագործի դիմեին թշնամու կողմն անցած քրտական հեծելազորի վրա և այնպիսի ջարդ տային նրանց, որ Կարսի շրջանի մուսուլմանները ոչ միայն այլևս շմասնակցեցին թուրքերի մարտական գործողություններին, այլև իրենց լոյալ պահեցին հետագա երկու տարիներին, երբ հայ զորքը 1919 թվականի գարնանը մտավ Կարս և 1920 թվականի աշնանը կրկին անդամ դատարկեց Կարսը: Գնդապետներ Դոլուխանյանի Յ-րդ ու Պերեկրյոստկովի պարտիզանական գնդերը, կապիտաններ Սերգո Աթանեսյանի և Սակելյարիի մարտկոցների նախապատրաստությամբ, առաջ են շարժվում, շախջախում, փախուստի մատնում ու ոչնչացնում են թուրքական անվանի դիվիզիայի սեպածե առաջացած զորամասերը:

Տրապիզոնցի Թուրքիկ Հովսեփի, բուկանըցի Մուրադի բաշզյառնեցի Մակեդոնի հեծյալ զոկատները, հին հայուկներ Քոլոյի, Բարեի, Բաշզի, Եփրեմի, Մուրզի, Գրիգորի և շատ ուրիշների աշխարհազորային հետևակ խմբերը հետա-

խուղության պահանջի դեսպոս հետախուզություն էին կատարում, գործը հետապնդման հասնելիս առաջինն էին նետվում նահանջող զորքի և բաշիրողուկների վրա: Նրանք, զորամասերի այդ յուրատեսակ առաջապահները, թե՛ սեփական նախաձեռնությամբ և թե՛ հրամանատարության առաջադրանքներն անձնվիրաբար կատարելով, դարձել էին զորքի պարծանքն ու սիրելիները: Զհանգիր աղայի 300 եղդիները նախարձակ եղան Մոլաբայզետի կովում և նվաճեցին հայ ժողովրդի անկեղծ դաշնակիցների անունը:

Գաղթի բոլոր ճանապարհներին սայլերը կանգ առան, խուճապն ու վհատությունը փոխվեց խանդավառության: Ծատերը ետ դարձան իրենց տները: Իրար ձայն և օրինակ տալով, զենք ունեցող տղամարդիկ կազմեցին աշխարհազորայինների հոծ խմբեր և անմիջապես համալրեցին կովողների շարքերը: Իրենց ծանոթ վայրերում նրանք, խնայելով զորքին, սիրահոժար խանդավառությամբ ստանձնում էին դժվարին առաջադրանքների կատարումը: Այդ օրը հայ զորքը համարյա կորուստ շտվեց, կորուստի մեծ բաժինը վիճակվեց անձնուրաց աշխարհազորայիններին:

Մայիսի 22-է այդպես անցավ երկաթգծից հարավ ընկած հատվածում:

Դեպի Կոտայք ու Սևան էվակուացիայի պլանի համաձայն նպատակածարմար էր համարվել կաթողիկոսին և առաջարկել մեկնել Սևան: Հայ կյանքին անիրազեկ գեն. Սիւթիկովը, կարծելով, որ կաթողիկոսի ամառանոցը Սևանն է, մայիսի 20-ին ներկայանալով նրան՝ առաջարկել էր մեկնել իր ամառանոցը: Բայց քանի որ Ամենայն հայոց կաթողիկոսի ամառանոցը Բյուրականն էր, զրա համար հուշագրողներից ոմանց հուշերում սխալմամբ հոլովել է Բյուրականի անունը:

Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ Ե. Սուլենյանը մինչ այդ ոչ մի բանով առանձնապես աշքի շէր ընկել և չէր կարողացել նվաճել ժողովրդի համակրանքը: Երբեք ուսակցիոն եկեղեցական, նա սիրված շէր անգամ իր միաբանության բիշ թե շատ առաջադիմ մարդկանց կողմից: Գիտենք նաև 1920

թվականի մայիսյան ապստամբության ճնշումից հետո Նրա ունկցիոն դիմումը հայ ժողովրդին։ Սակայն արդարությունը պահանջում է ասել, որ ինչպես այդ օրհասական օրերին, այնպես էլ հաշտությունից հետո մինչև նոյեմբեր ամիսը, քանի դեռ թուրքական յաթաղանը կախված էր էջմիածնի ու Երեւանի վրա, այդ կաթողիկոսը ամուր կանգնած մնաց Երկրի ինքնապաշտպանության դիրքերում։ Երբ Քաջազնունու դահլիճի օրապակաս մինիստրները մրցում էին իրար հետ Հայաստան այցելող ավստրիական, գերմանական և թուրքական բարձրաստիճան սպաներին ավելի նվասուրեն քծնելու գործում, կաթողիկոսը միակ բացառությունն էր այդ գաճաների մեջ, որ կարողանում էր արհամարհական անտարբերություն ցույց տալ ինչ-որ ավստրիական իշխանի, գերմանական գեներալի կամ թուրքական փաշայի։ Այդ կրիտիկական օրը կաթողիկոսը սառն անտարբերությամբ ճամփու է դնում գեն։ Սիլիկովին, կայուն հաստատակամությամբ մերժում է հաջորդ օրը, մայիսի 21-ին Երևանից տարածամ եկած խորհրդատուներին՝ սանելով, որ եթե հայ զորքը հրաժարվում է կամ թե չի կարող պաշտպան կանգնել այս սուրբ վայրերին, ապա ինքը մենակ սուրբ կվերցնի և կընկնի մայր տաճարի գավթում, բայց չի հեռանա պատերից ավանդ մնացած Մայր Աթոռից։

Թշնամին դիմադրության չհանդիպելով, մտել էր Արարատյան դաշտը և առաջ էր շարժվում։ Դաշնակցության ղեկավարները կտրված մնացել էին Թիֆլիսում։ Գլխավոր հրամանատարը Ալեքսանդրովովի խայտառակ անկումով կաղմալուծված հայ զորքի բեկորների հետ ապավինել էր Դիլիջան։ Դաշնակցության անդամալուծության և այլ պարտիաների բացակայության այդ տարտամ և հոգեվարքային օրերին հայ զորքին խանդավառելու և ժողովրդին ինքնապաշտպանական կովի ոտքի հանելու գործում մեծ նախաձեռնություն ցույց տվին էջմիածնի հոգեմորականներից ոմանք, հատկապես Ճեմարանի տեսուշ, հայտնի հայագետ Գարեգին եպիսկոպոս Հովհաննելիով, էրզրումի առաջնորդ Զավեն եպիս-

կոպոս Մահտեսի-Բաբայանը, վարդապետներ Եղնիկը, Դանիելը և Թագեռուր։

Սուրբալվի էվակուացիայի հրամանից առաջ 5-րդ գումարը կանգնած էր Երկաթգծից հարավ՝ Ղուրդուղովի, Էջիլար, իսկ նրա նորակազմ վաշտը՝ Արաքսից էլ հարավ՝ Դաշրութուն գյուղերում։ Էվակուացիայից հետո, մայիսի 22-ին, գնդի հիմնականում ղարաբաղցիներից կազմված երկու գումարտակը, գնդի շտաբի ու հրամանատարի հետ միասին, Ղուրդուղուուց ետ էր քաշվել և հասել էր Երկաթգծից Հյուսիս ընկած Հայի ջեյվա գյուղը, որի մոտակա Քյորփալու գյուղում էր գտնվում Խորեն Իգիթիսանյանի ուժեղացված հրետանային մարտկոցը (10 թնդանոթ)։ Գնդի նորակազմ գումարտակը Դաշրութունից գետն անցել էր Մարգարա գյուղում՝ Երկաթգծից հարավ։ Երկաթգծից հարավ էր գտնվում նաև Էջիլարի գումարտակը։ Այս երկու գումարտակները գնդապետ Դանիել բեգ Փիրումյանի հրամանով արդեն պատրաստվում էին մարտական գործողությունների և շարժվում դեպի կրակի գիծը։ Կոփն արդեն սկսվել էր վաղ առավոտվանից և գնալով սաստկանում էր, սակայն 5-րդ գնդի՝ Երկաթգծից արդեն Հյուսիս անցած երկու հիմնական գումարտակները և գնդին կցված Իգիթիսանյանի մարտկոցը գեն լուս էին։

Գարեգին ու Զավեն եպիսկոպոսները մայիսի 22-ի վաղ առավոտյան ձի հեծած գնում են էջմիածնի մոտակա Հայի ջեյվա և Քյորփալու գյուղերը։ Վերջինս որպես Երզրումի առաջնորդ Երզնկայից մինչև Արարատյան դաշտը հաճախ էր եղել ուղմաճակատի առաջին գծերում, իսկ անշուր ու վտիտ Գարեգին եպիսկոպոսը, որպես գրքի ու գիտության մարդ, առաջին անգամն էր կովի դաշտ գնում։ Նրա զենքը պերճախոսությունն էր։ Կրակու հայրենասերը կարողանում էր ոգեվորել ունկնդիրներին։ Նա ոգեշունչ խոսքով դիմում է զինվորներին, բացարում է թշնամու անողոքությունը, վտանգի մեծությունը, օգնական ուժի և նահանջի ուրջների լիակատար բացակայությունը, հաղթելու կամ հայրենի սրբազն հողի վրա մեռնելու միակ պատվարեր հնարավորությունը։ Նա մահապարտներ է անվանում հայ ժողովրդին ու նրա զորքին։

Տ-րդ գունդը վերանվանում է Մահապարտների գունդ, և նրան երդի նշանակությունը կովկասի գուրս գալ անվախ ու աննահանջ: Երկու եկեղեցականները խաչը ձեռքին բարձր պահած ընկնում են զորքի առաջ և հրամանատար գնդապետ Պավել Փիրումյանի հետ միասին նրանց առաջնորդում գետի իմացյալ մահ:

Կապիտան Խորեն Իգիթիսանյանի մարտկոցը ցերեկվածամբ 12-ին իր տասը թնդանոթների կրակն ուղղում է Վերին ու Ներքին Կովկասիկու գյուղերը մտած և Ղամշլու կիսակայարանին հասնող թուրքական զորքի վրա և դիպուկ կրակով կանգնեցնում նրանց: Հրետանային հաջող նախապատրաստությունից հետո Մահապարտների գնդի գինվորաններն արևմտահայերի կոտորածի ժամանակ հորինված և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին վերափոխված «Վերան Բայրուրդ» («Գացողը ետ չեկավ, Բայրուրդ») դառն երգը երգելով շարժվում են զետի Վերին ու Ներքին Կովկասիկու գյուղերը և Ղամշլու կիսակայարանը:

Թուրք զորքի առաջխաղացումը կասեցված էր, մնում էր ընկճել նրան, կոտրել նրա դիմադրությունը և ոշնչացնել կայֆախուստի մատնել: Թիկոնքից շարունակ եկող աշխարհապատրաստի ակտիվ օժանդակությամբ Ստեփան Խաչատրույանի գումարտակին հաջողվում է՝ հարավից գնդապետ Պերեկրյոստկովի պարտիզանական գնդի համագործակցությամբ՝ Կովկասիկու գյուղերից մինչև Ղամշլու փոված բաց հարթության վրա, դեռ Գեղրուն ու Սարդարապատը ետ չգրաված, օղակի մեջ առնել և ամբողջությամբ ոշնչացնել «Գեղրության դիվիզիայի երկու վաշտ, շուրջ 500 թուրք ասքեր: Դիմակներէ տակ թաքնված մի քանի թուրք սպա ձեռքները վեր բարձրացրած աղերսում են խնայել իրենց կյանքը, պատճառաբանելով, թե իրենք ելքովական թուրքիայից են և չեն մասնակցել հայկական կոտորածներին:

Կաթողիկոսը ճամփու դնելով ամեն տեսակ խորհրդատուներին, որոնք նահանջի ուղի էին մատնացուց անում նրան, հաստատ ու աներեր քայլով հուսաղբելով ամենքին, վեհապահից իշնում է մայր տաճար հայոց միշտ խուլ աստծուն առաքելու ավանդական լալահառաջ «տեր ողորմյան»: Մայր տա-

ճարի զանգերը ղողանջում են: Շուտով մայր տաճարի զանգերին ձայնակցում են էջմիածնի բոլոր վանքերի, ապա մոտակա զյուղերի բոլոր եկեղեցիների զանգերը: Նույն օրը զանգահարությունը տարածվում է ամենուրեք, և մայիսի 22-ից մինչև մայիսի 29-ը, ութ օր շարունակ, Արագածի երկու լանջերից մինչև Արաքս և Սարդարապատից մինչև Սևան գիշերցերեկ անգամար զողանջում էին բոլոր եկեղեցիների զանգերը: Ահասարսուու ահազանգը զարթեցնում, զգաստացնում, սթափեցնում էր բոլորին, խանդավառում ամենքին համեստ զոհության և հերոսական անձնագոհության: Միաբանները ուղղության և համարական անձնագոհության: Միաբանները ուղղության և ներքինում, նրանք հորդոր կարդալով ետ են դարձնում նահանջողներին և կովկանակու կոչ են անում տղամարդկանց, եղնիկ, դանիիկ և թաղեռս վարդապետները ոչ միայն հորդություն, այլև անձնական օրինակ են ցուց տալիս Աղթամարա միաբանության անդամ Դանիիկ վարդապետը քաջ կովող և հայտնի նշանագիտ էր: Վանի ինքնապաշտպանության ժամանակիցի նըրբածած միաբանության գլուխը բարձրացած՝ իր զիպուկ կրակով հանձել էր թուրք թնդանոթածիգներին:— Պատանքներդ հանձել էր թուրք այդ օրը իրենց առաջնորդությամբ երեք վարդապետներն այդ օրը իրենց առաջնորդությամբ Սարդարապատի վրա կովկան տանում 500 պատանքավորուունք միջնադարյան կրոնական պատերազմների մարտիկների անձնագոհությամբ կովում էին Մահապարտների 5-րդ գնդի աջ թեում, թշնամու վրա արձակված ամեն մի գնդակի հետ երգելով այդ ժամանակ տարածված «Անտեր մնար Ճասան Ղալին, մեռնի էնվեր փաշի բալեն» երգը: Զենք էին վերցրել և զենք էին վերցնում ու Սարդարապատ զնում զենքի ընդունակ և շընդունակ բոլոր տղամարդիկ, ծերունազարդ թաղիանոս թաղիանոսյանից մինչև պատանի Ակսել Բակունցը: Այնտեղ կովում էին իրենց կյանքում առաջին անգամ զենք վերցնող ուսուցիչներ, ինչպես, օրինակ, լեզվաբանուսուցիչ, ապագա ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանը, տառեց ուսուցիչ Բահաթուր Բահաթուրյանը, խանդավառ աշակերտ-

ներ, Հոգի մշակներ և աղաներ, արհեստավորներ և բանվորներ:

Բարեբախտաբար, այդ վճռական պահին գեներալ Սիլի-
կովը «Խորհրդակցության» էր գնացել Երևան։ Նրա օգնական
և Սուրմալվի էվակուացիան իրավործող հմուտ ու խիզախ
գնդապետ Դանիել բեկ Փիրումյանը տարերայնորեն սկսված
կովի ընթացքում ստանձնում է Սարդարապատի ճակատի
հրամանատարությունը։ Նա արդեն Սուրմալվից էվակուաց-
ված և երկաթգծից դեռևս հարավ գտնվող 6-րդ գնդի, պարտի-
զանական հետևակ և հեծյալ գնդերի և բաշզյառնեցի Մակեդո-
նի, տրավիկոնցի թուուցիկ Հովսեփի, բուլանըզցի Մուրագի
հեծյալ խմբերի և եղդիների զինված ուժերի ընդհանուր հրա-
մանատարն էր։ Երկաթգծից հյուսիս գործող 5-րդ գնդի հրա-
մանատար Պավել Փիրումյանը նրա հորեղբոր որդին էր։ Նը-
րանք հասակակիցներ էին և մեծացել էին հարազատ եղբոր
նման։ Այդ ահեղ ժամին իրավասության և ենթարկման հար-
ցերը պրոբեմ չեն դառնում նրանց համար, և Դանիել բեկ Փի-
րումյանի իշխանությունը տարածվում է ամբողջ ճակատի
վրա։

Հայկական հրետանին կրակում էր անվրեպ, մեթոդիկուրեն ոչչացնելով թուրքերի նորանոր կրակակետերը: Հայ զորքն առաջ էր շարժվում հաղթելով վճռականության տենորկ բռնված և անակնկալ հաջողությունից հարրած: Խանդավառությունն աննկարագրելի էր:

Ծուտով կուլին մասնակցում է գնդապետ Կարաքեշի լույսի մասնի մարտկոցը:

Օրվա երկրորդ կեսին կովի վայրն է հասնում մինչ այդ
անհանգիստ Զանգիբարին վերահսկող կապիտան Կլին
իր մարտկոցով։ Անվրեալ նշանառու Կլին առաջին ոռութերն
ուղղում է Սարդարապատ կայսրանի ջրհան աշտարակի վրա
և դիպուկ կրակով խափանում է այն՝ այդ անջրդի անապա-
տում թուրք զորքին զրկելով ջրի միակ աղբյուրից։ Մարտկից
սրանցվող հոգնած թուրք զորքն սկսում է անկանոն փախուստ,
ըայց ոտքերը լին հնազանդում նրան՝ հարմար թիրախ դառ-
նալով 28 թնդանոթների ահարկու կրակին, Տաճար Հովակիմ-

յանի և ԹԱԿԻԼ Առաքելլանի գնդացրային վաշտերի Շնձի համազարկերին և մանավանդ կատաղի մոլուցքով առաջ խոյացող աշխարհագորայինների սնայպերական անվրեալ գնդակ-ներին:

Երեկոյան ժամը 7-ին գնդապետ Թերեկը յոստկովի պարտիզանական գունդը երկաթգծի հարավից առաջինն է մտնում Սարդարապատ գյուղն ու կայարանը։ Մահապարտների 5-րդ գունդը ամրապնդում է հաղթանակը։

Թուրքերը ջարդվում են, նահանջում, ապա փախուստի դիմում: Վաղ առավոտից սկսված, բայց միայն կեսօրից բռր-բռքված և հինգ-վեց ժամ տևած թեժ կովլից հետո նրանք Դամշլուից փախչում են մինչև Արաքս և Կարաբուրուն կայա-րանների միջև ընկած առապարներն ու բարձրությունները: Դամշլու կիսակայարանը հասած նրանց առաջապահները, ինչպես ասացինք, ամբողջությամբ ոչնչացվում են: Նրանց հիմնական ուժերը գտնվում էին Գեշրու և Սարդարապատ գյուղերում և Սարդարապատ կայարանում: Ուրիմն թուրքերը այդ օրը, ընդամենը 5—6 ժամում, նահանջում են 15—20 կի-լոմետր: Սա արդեն նահանջ չէր, այլ փախուստ: Հայկական հետեւակը չէր հասնում նրանց հետևից, և այդ օրը Սարդարա-պատ գյուղից ու կայարանից շատ այն կողմ շանցավ: Հեծյալ աշխարհազորայինները և փոխգնդապես Կորոլկովի հեծյալները ավարտում են ջարդը: Զարաշար պարտություն էր կրել թուր-քերի ամենալարնահիր զորամասը՝ Շեքի փաշայի հրամանատա-րությամբ գործող «Գելիբողու» (Դարդանելի) դիվիզիան:

Հայ զորքը կանգ առավ աշխարհազորայինների հենման
բնագծում և բնակավայրերից այն կողմ չանցավ։ Դժվար է
այդ քահը բացատրել բարձր հրամանատարության ուղղմա-
վարական նկատառումներով։ Պարզապես մինչ այդ շատ մեծ
էր եղել թուրքի սարսափը, սատանան թեև այնքան ուժեղ շեր,
ինչպես նրան պատկերացնում էին, սակայն նրա ուրվակա-
նը երգնկայից մինչև Սարդարապատ իշխան էր Հայ մտքի
վրա, որա համար էլ Հայ զորքը սիրտ չարավ մեծ խզում
առաջ բերելու իր դիրքերի և իրեն նեցուկ հանդիսացող Հայ
զյուղերի միջև։ Այդ հանգամանքը թուրքերին հնարավորու-

թյուն է տալիս ապավինելու և ամբանալու Արաքս կայարանից
5—6 կիլոմետր Հյուսիս-արևմուտք ընկած ջիմնի դըռ
(440-րդ) և թուլքի թափա բարձունքների վրա:

Սարդարապատը բախտորոշ գոյամարտ էր, հայ ժողովրդի կորիզի կենաց և մահու կոխի: Երեք տարի առաջ թուրքը կոտորել էր հայ ժողովրդի ամբողջ կեսը, այսօր եկել էր վերջ տալու նրա երկրորդ կեսին: Ինքնապաշտպանության դերագույն մղումով ոտքի էին ելել հայ ժողովրդի բոլոր դասերն ու դասակարգերը, հոսանքներն ու պարտիաները: Միապետականի հետ միասին կովում էր կոմունիստը, դաշնակցականների հետ միասին՝ հնչակյաններն ու ուամկավարները, հոգեւրականների հետ միասին՝ սպարտակիստները: Լեզենդար դարձած Սակելլարի մարտկոցի համարյա կեսը կոմունիստների էին՝ Արամ Կոստանյանը, Արաքս Մուրադյանը, հեծյալների իր դասակն էր ղեկավարում կորնետ Վանոն (ներկայումս Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյան), կրտսեր սպա Արտակ Վարդանյանը (ներկայումս գեներալ Վարդանյան) իր մարտական մկրտությունն էր ստանուած Սարդարապատում: Իր հայրենակից զամարլվեցիների հեռ Սարդարապատ էր եկել սպարտակիստ Հատիկ Ազիզյանը (ներկայումս «Պրավդա»-ի խմբագիրներից մեկը): Հեծելագրնդում թշնամուն հետապնդում էր կոմունիստ Լիպարիտ Աթարբեկյանը¹: Արհամարհանքով բոլշեկիյան անվանված 5-րդ դունդը զերակնքվել էր Մահապարտների գունդ և այդ նոր անունով էր կովի գնում: Արարատյան դաշտում վերաբնակված խնուսցիները և ալաշկերտցիները հաճախ կովում էին ամբողջ տոհմուի պատը, որդիները, թոռները, 14—16-ամյա ծոռները: Էպոսի քրդերեն հայոցյանքները ներկա թշնամուն հասցեագրելով էր իր ամեն մի գնդակն արձակում ու իր նորակազմ փոքրիկ խումբը ղեկավարում ալաշկերտցի Այվազը:

Ասորեստանցիների ու բարելոնցիների, հեթիթների ու փյունիկեցիների հետ պատմության ասպարեզ իշած, սակայն միայն ինքը փյունիկ մնացած, հին, բայց հավերժ նոր հայ

ժողովուրդը միահամուռ կամքով պայքարում էր այս արևի տակ իր տեղն ունենալու արդար իրավունքի համար: Նա ոչ թե սովորական կոփի, այլ գոյամարտ էր մղում և քաջության հրաշքներով զարմացնում ու սարսափեցնում թշնամուն:

Հայ ժողովրդի ապիկար ղեկավարների դավաճանության հետևանքով թշնամին կարողացել էր գրավել ընդարձակ տերիտորիաներ և անառիկ բերդաքաղաքներ: Հայ ժողովրդը բոլոր կողմերից եկել ու կծկվել էր Արարատյան դաշտում: Բոռնցքը սեղմվելու սահման ունի, որից հետո այն դառնում է քարի պես ամուր: Սարդարապատում թուրքերը դիմ առան հայ ժողովրդի քարի պես սեղմված բռունցքին, որ ջախջախիչ հարվածներ տեղաց նրանց գլխին:

Կրած մեծ կրուստները սասանել էին տաճիկներին:

Երգնկայից մինչև Սարդարապատ նրանք ոչ մի տեղ չհանդիպելով լուրջ դիմադրության, միշտ խուսափել էին լուրջ կովից և կարողացել էին գիվանագիտական հաղթանակով հեշտացնել իրենց առաջխաղացումը: Ալեքսանդրապուլ նրանք մտան, ինչպես սպառնացել էին, «շքերթով», սակայն Սարդարապատում շքերթը վերածվեց հուղարկավորության թափորի, որովհետև հեշտ հաջողություններից հարբած՝ նրանք շտապել էին և այս անգամ փորձ շեին արել դիվանագիտական խաղով հարթելու իրենց առաջընթացի ճանապարհը:

Թուրքերը Սարդարապատում մայիսի 22-ին չարաշար պարտություն կրեցին նաև նրա համար, որ նրանք այդ հատվածում ոչ մի դիմադրություն չեին սպասում: Եվ դա այն պարզ պատճառով, որ գիտեին Երևանի քաղաքային դումայի զավաճանական որոշումը (ի գեպ, Երևանի թուրք ազգային խորհրդի սուրբհանդակը Թալինի մոտ բռնվել էր միայն ետ փերադառնալիս): Երկրորդ, այն պատճառով, որ մի առանձին համարում շունեին Երևանի զորամասերի մարտունակության վրա: Թուրքերը գալիս էին միանգամայն անհոգ, վերևից Թալինը, Մաստարան, ներքենց Ղուրդուղուվին ու Կարակալան մնացել էին նրանց թիկունքում, իսկ նրանք երկաթ-

1 Հայտնի կոմունիստ Գեորգ Աթարբեկյանի կրտսեր եղբայրը: — 2. թ.

գծի նեղ շերտով հասել էին Դամշլու: Այդ անհոգությունը շատ թանկ նստեց նրանց:

Սարդարապատի մայիսի 22-ի առաջին շրջադարձին մեծ հաղթանակը և հետագա օրերի փայլուն հաջողությունները կրկին ու կրկին անդամ հաստատեցին այն պատման ճշմարտությունը, որ երբ կովում է ժողովուրդը ինքը, ապա նա կովում է խիզախ անձնուրացությամբ, անձնազուվիրվածությամբ և իրեն ու իր գործը զարդարում է փայլուն սիրագործության՝ շատերի համար անըմբոնելի օրինակներով: Սա անվիճելի է, շատերն են այս բանը նկատել ու խոստովանել, և առաջին հերթին հենց իրենք՝ թուրքերը:

Հայ զորքը ուազմամթերքի պակաս շզգաց նախ այն պատճառով, որ Սարիղամիշից և Կարսից որոշ պաշար,— երբ զրությունն այդ ճակատներում անհուսալի էր գարձել,— շատ մեծ դժվարություններով, բայց, այնուամենայնիվ, վազորոք բերվել էր Երևան: Առանց այդ էլ Քանաքեռում զգալի պաշար կար: Դրա համար դեռ Սարիղամիշի անկումից առաջ հոգ էին տարել Երևանի Ազգային խորհրդից առանձնացված Հատուկ հանձնաժողովը և նրա ղեկավար Արամ Մանուկյանը: Ոմանք այդ մարզու համար հնարել են դիկտատորի անուն: Նա, իհարկե, դիկտատոր լինելու շնորհքով օժտված չէր, սակայն դաշնակցական մյուս շնչերի համեմատությամբ օժտված էր քաղաքական հեռատեսությամբ և պետականորեն մըտածելու որոշ կարողությամբ: Արամ Մանուկյանը ժամանակին զգացել էր վտանգի մեծությունը և գիտակցել պաշար տեսնելու անհրաժեշտությունը: Հայ կովողները ուազմամթերքի պակաս շզգացին նաև այն պարզ, բայց Սիլիկովի և Սիլիկովների համար հանելուկ մնացած պատճառով, որ այդ խառն օրերին հայ զինվորը թեև մասսայաբար լքելու տուն էր վերադարձել ուազմամակատից, բայց նա տուն էր վերադարձել զինված ու երբ հերթը հասել էր նաև իր զյուղի նահանջին, նա նորից սայլի վրա ալյուրի պարկի կողքին գրել էր իր հրացանը և հաշվել իր ունեցած փամփուշտը: Ռազմամթերքի պակասություն շզգացվեց նաև այն պատճառով, որ, մերժելով բանակային խստավարժության անտառությունները և հոգեբանական

համազարկերի թանկ նստող պրակտիկան, հայ զորքն ու աշխարհազորայինները կոփը մզում էին ժողովրդական պատերազմի մեթոդներով՝ թանկ գնահատելով արձակված ամեն մի գնդակ: Մեծ թվով սնայպերների առկայությունը հնարավորություն էր տալիս հաջողությամբ կիրառելու ժողովրդական պատերազմի այդ մեթոդը:

Հայ զորքի կովին նպաստում էին բնությունն ու տեղանքը: Վարարած Արաքսը անգործության էր մատնել թուրքական 5-րդ դիվիզիան Արաքսի մյուս ափին՝ Սուրմալվում: Կարակալայից մինչև Բոյուկ Վեդի թուրքական 5-րդ դիվիզիան Արաքսն անցնելու անհաջող փորձ կատարեց միայն Յուվայի մոտ՝ Գայլի Դրունքում: Արաքսը հավատարմորեն պահպանում էր Երկաթգծից հարավ գտնվող հայ զորքի հարավային թիկունքը:

Տեղանքը թե՛ մատակարարման և թե՛ ուազմավարության տեսակետից բարենպաստ էր հայ զորքի համար և խիստ անքարենպաստ էր թուրք զորքի համար, մանավանդ նրա նահանջի պահին:

Հայ զորքն իր թիկունքում հենվում էր հայկական գյուղերի վրա, որոնք իրենց ամբողջ ունեցածը թե՛ կամավոր կերպով և թե՛ իրերի բերումով տրամադրել էին հայ զորքին:

Հակառակ դրան, Սարդարապատից դեպի Ալեքսանդրապոլ տանող տարածությունն այն ծամանակ անապատային և կիսանապատային, միանգամայն անմարդաբնակ «ղըռ» էր՝ շուրջ 50—60 կիլոմետր երկարությամբ և մոտ 20—25 կիլոմետր լայնությամբ, որտեղ երկաթուղային կայարաններից ու հարակից մի երկու շնչքից բացի, որոնք ընկած էին իրարից առնվազն 10—15 կիլոմետր հեռավորության վրա, մի տնակ անգամ չկար ցրտից կամ տապից պատսպարվելու համար, մի աղբյուր անգամ չկար, որ մի կաթիլ ջռը խմեիր, առվակ անգամ չէր անցնում, որ վլացվեիր ու թարմանացիր, մի ծառ անգամ չկար, որ նրա ստվերին նստեիր ու զովականացիր: Տեղեղատներ կային, որոնք անձրեկի ժամանակ դառնում էին ահավոր, բայց անմիջապես ցամաքում-շորանում էին: Թեև մայիսը նոր էր վերջանում, բայց օրերը շատ

տաք էին, թուրքական հենակետ զըռերը՝ չոր ու ցամաք: Կառ-
բարուրունից դեպի Արաքս կայարանն ընկած տարածությունն
աստիճանական վայրէջք է, եթե հարձակվողի համար դա
նպաստավոր տեղանք է, որովհետև հակառակորդը գտնվում
է ներքում և տեսանելի է ինչպես ափիդ մեջ, ապա նահան-
ջողի համար դա խիստ աննպաստ է, որովհետև վերընթաց
ձանապարհին նա շարունակ գտնվում է Սարդարապատում
դասավորված հրետանու տեսադաշտում: Հայկական հրետա-
նու դիպուկ կրակը, պարտիզանական գնդերի խոլական գրոհ-
ները, 5-րդ գնդի մեթոդիկ առաջխաղացումը և գնդացրային
հնձիչ կրակը, թե՛ ճակատից, թե՛ կողքից և թե՛ թիկոնքից
հարվածող հեծյալ խմբերն ու աշխարհազորայինները Արաքս
կայարանից դեպի կարաբուրուն տանող զըռերը մեծ գերեզ-
մանոց դարձրին «Գելիբոլու» դիվիզիայի համար, որ թուրքերի
ամենամարտական զորամասն էր: Մայիսի 22—26-ի կոիլ-
ների ժամանակ թշնամին այդտեղ թողեց 3500 դիակ: Դա
այնպիսի մեծ կորուստ էր թուրքական առանց այն էլ նոր
բանակի համար, որ ջղայնացած էնվերը Կովկասյան ուղ-
մաճակատի հրամանատար ֆերիկ Վեհիրին անմիջապես հա-
նեց իր պոստից և, հարկադրաբար հայասիրական կուրո-
ւնդունելով, հայ զորքի հետ դինակցություն կնքելու առաջար-
կություն անելով, Կովկասյան ուղմաճակատի նոր հրամա-
նատար նշանակեց Միջագետքի ուղմաճակատի հրամանա-
տար Խալիլ փաշային (ՀՀփոթել Բաթումի բանակցությունների
նախագահ Խալիլ թեյի հետ), որը, 1908—1909 թվականների
ունույուցիայի ժամանակ, երբ երիտասարդ թուրքերն ու դաշ-
նակցականները սիրաբանում էին իրար հետ, Վանի վիլայե-
թի ժանդարմերիայի պետ էր եղել և Արամ Մանուկյանին «յավ-
րում» (որդյակս) ասելով բանտից դուրս էր բերել ու կինտ-
րոնի հրահանգով եղբայրացել էր հետը: Նա շուտով Արամ
Մանուկյանին նորից «յավրում» ասելով «բարեկամական»
այցի պիտի գար երեան:

Ի դեպ, Սարդարապատի պարտությունն այնպես գցեց
ֆերիկ Վեհիրին, որ ոչ միայն էնվերն ու երիտասարդ թուրքե-
րը, այլև ամբողջ թրությունը երես դարձրին նրանից և ար-

խիվ նետեցին այդ հմուտ գորավարին, որն այդ ժամանակ
իր զինվորական աստիճանով ավելի բարձր էր էնվերից ու
Զեմալից և իրեն փոխարինող Խալիլ ու նորի փաշաներից:
Բայց ֆերիկի (մարշալ) բարձր աստիճանը շփրկեց նրան,
որովհետև Սարդարապատի խարանը անհնարին էր ջնշել նրա
վրայից:

Սարդարապատի մեծության համար բնորոշ է այն, որ
երբ հինգ ամիս հետո երիտասարդ թուրքերն ընկան և նախ-
կին բոլոր շնորհազրկված թուրք մեծամեծները շրջապատե-
ցին սուլթանին և բարձր պաշտոնների արժանացան, շնոր-
հազրկված ֆերիկ Վեհիրին ոչ ոք տեղ շտվեց սուլթանի նոր
շրջապատում: Այնուհետև, երբ նույնքան ժամանակ անց
Անատոլիայում սկսվեց միլլի շարժումը և այն գլխավորող Քե-
մալը հմուտ զինվորականներ էր որոնում հույների դեմ ծա-
վալված պատերազմը հաջող վարելու համար, և երբ բոլոր
կրկնակի շնորհազրկվածների զինը շատ բարձր էր Թուրքիա-
յում, նորից ֆերիկ Վեհիրի համար տեղ շտվեց կրկնաշնոր-
հազրկվածների այդ նոր բնում: Ֆերիկ Վեհիրը հարկադրված
եղավ, — առաջին դեպքը թուրքերի պատմության մեջ,—
դառնալ վարձկան մարզի քրիստոնյա թագավորի բանակում
և զնալ հեռավոր Հարեցստան, որտեղ էլ անփառունակ վախ-
ճան ունեցավ 1935—1936 թվականների իտալա-հարեշական
պատերազմի ժամանակ:

1918 թվականի հայ-թուրքական պատերազմը ցույց է
տալիս, որ թուրքերն ավելի լավ էին ճանաչում հայ ժո-
ղովրդին ու նրա պատեհնցիալ ուժը, քան դաշնակցականները
ու նրանց ապաշնորհ սպարապետ Նազարեկովը, որը Ղա-
րաբիլլիսայի ճակատամարտից առաջ Դիլիջանից հեռագործ
էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին, թե ոչ մի զինվոր
շունեմ, ընդունեցիք հաշտության ամեն մի պայման: Վանի:
Հերոսական ինքնապաշտպանությունը թուրքերին սովորեցրել
էր, որ հայ ժողովուրդը ընդունակ է նույնիսկ մի քանի հար-
յուր հրացանով հերոսական ու հաղթական ինքնապաշտպա-
նություն կազմակերպելու: Թուրքերը շատ լավ զիտեին, որ
Անդրեալիասյան սեյմի կուտավարության իրա-

ուամերժ գործողություններն էին ջլատում հայ ժողովրդի ինքնապաշտպանական կորովը և հեշտացնում իրենց հաղթանակը, սակայն, հուսահատության հասցված հայ ժողովուրդը վերջ ի վերջո պիտի ընդգներ ինչպես «զեկավարության պարտականություն և թյուրիմացություն ունեցողներու, այնպես էլ թուրքական բանակի դեմ»:

Թուրքերն այդ ժողովրդական դիմադրությունն սկզբու սպասում էին Կարսի տակ: Դրա համար էլ նրանք Բաթումի գրավումից (ապրիլի 14—15) անմիջապես հետո վրացական ճակատի դեմ գործող Շեկրի փաշայի բանակը ամբողջությամբ շտապ փոխադրեցին Կարսի ճակատը: Բայց Կարսը՝ սպառնալիք կարդալով, իսկ Ալեքսանդրապոլը՝ գեներալ նազարենիկովի դավաճանական անփութությունն ու միամտությունն օգտագործելով գրավելուց հետո էլ թուրքերը հայկական դիմադրության հավանականությունը չէին վերացրել իրենց հաշիվների մեջ և ամեն րոպե սպասում էին գրան: Դավաճանությունների անվերջ շարանի սպասումից հետո՝ պատմությունը այդ դիմադրությունը, շրջանցելով էրդրումն ու Սարիղամիշը, Կարսն ու Ալեքսանդրը, բերել հասցրել էր Արարատյան դաշտը: Եթե նրանց չհաջողվեր արագործն կոտրել այդ դիմադրությունը, ապա նրանք նախատեսել էին միառժամանակ հաշտվել անցանկալի հայկական հանրապետության գոյության հետ: Բաթումում ֆերիկ Վեհիրը մայիսի 11-ից, Խալիլ բեյի հետ, զլիսավորում էր հաշտության թուրքական պատվիրակությունը և ահարեկված հայ պատվիրակների հետ խոսում էր արդեն դիվանագիտությունը մի պահ մի կողմ դրած: Սակայն Սարդարապատի առաջին սկարտության գույժը առնելով, նա անմիջապես զլիսի ընկավ, որ սկսվել է հայ ժողովրդի ժողովրդական պատերազմը, Խալիլ բեյին թողեց դիվանագիտությունը և նույն օրը գիշերով, գերմանական «Մերսիդեսով», Արդահանի վրայով մեկնեց Ալեքսանդրապոլ անձամբ կոտրելու հայկական դիմադրությունը:

Սակայն արդեն շատ ուշ էր:

Հայ ժողովուրդն սկսել էր անպարտելի ժողովրդական պատերազմ:

Մեկ օրվա ընթացքում հայ ժողովուրդը հիմնովին կերպարանափոխվեց: Սարկական երկյուղով բռնված երեկվավատ նահանջողը և դասալիքը դարձան հաղթանակի հավատով տոգորված ուղղմիկ ու հարձակվող:

Սարդարապատի առաջին հաղթանակն ամենից առաջ մեկ օրվա ընթացքում ջնջեց արենելահայի և արևմտահայի, ավելի տգեղ ձևով՝ «հոլականի» ու «գաղթականի» այն ամութալի ներհակությունը, որ արևմտահայության համատարած կոտորածներից ու գաղթից հետո փոխադարձ դատափետումների հետևանքով սպառնալից կերպով սրվել էր մասավանդ այդ օրերին:

Սարդարապատի առաջին հաղթանակը, մոգական գավազանի մեկ հրաշագործ զարկով վերացնելով գաղթականի ու եռլականի տխուրը հակամարտությունը և հաղթանակի հավատով տոգորելով բոլորին, ժողովրդին դարձրեց միաձուլլ ու միակամ: Երկու օր հետո, մայիսի 24-ին, գեներալ Սիլիկովը էջմիածնից արդեն հեռագրում էր երևան՝ թե այն կամավոր շուղարկեք, ուղարկեցիք միայն սպա՝ տեղում հավաքածներին զորամասերի մեջ կազմակերպելու և ղեկավարելու համար: Սարդարապատի ինքնարուխ ժողովրդական ուռաները վերջ տվին համատարած ընդարձացմանը և մղձավանջից սառած արյունը կրկին սկսեց եռալ բոլորի երակներում:

Սարդարապատի հաղթանակը մեղմացրեց, նույնիսկ մի պահ վերացրեց փլուզումը և օրվա հրամայական պահանջին համապատասխանող որոշակի կերպարանք տվեց մինչև այդ հաճախ միայն անունով գոյություն ունեցող հասարակական կազմակերպություններին: Ազգային խորհուրդը միառժամանակ կյանքի կողմեց և իրոք դարձավ մի որոշակի կազմակերպություն, հանձնաժողովները՝ իրոք մասնագիտացված հանձնաժողովներ, պարետը՝ իրոք պարետ, շտաբն ու հրամանատարությունը՝ իսկապես շտաբ ու հրամանատարություն, ուղամաճակատին օգնող Քաղաքների միության տեղական բաժանմունքների մնացորդները և կանանց կոմիտեն՝ իսկապես որ ուղամաճակատին օգնող բաժանմունքներ և ուղամաճակա-

տում կովողների մայրերի ու քույրերի կոմիտեն թայց այս ամենը՝ տարերայնորեն և միայն միառժամանակ։ Սարդարապատում կովողներն այլևս Սարիղամիշում և այլուր կովողների նման մոռացության մատնված դատապարտյաներ չեն զգում իրենց, այլ Երևանի ու էջմիածնի, մոտակա ու հեռավոր հայ գյուղերի հարազատ զավակներ, որոնք գիտեին, թե ինչի համար են կովում և ամեն բոպե տեսնում էին թիկոնքից ամեն ինչով նրանց օգնող ժողովրդի ներկայությունը։ Մայիսի 22-ին, ժողովրդի ջերմ և հուղիլ օգնությունը Սարդարապատ հասավ առաջին իսկ օրը, առաջին կովը նոր վերջացած։ Երևանում ստացվեց առաջին հուսադիր հեռագիրը՝ թշնամու առաջխաղացումը կասեցված է, այնուհետև՝ թշնամին ետ է շարտված ու նահանջում է, ապա՝ մեր քաջարի մարտիկները ետ են գրավել Սարդարապատ կայարանն ու գյուղը, ոմբակոծության ժամանակ վնասվել է Սարդարապատ կայարանի միակ ջրհան աշտարակը, ջուր չկա, հաղթական զորքը ծարավ է... Քաղաքում այն ժամանակ ուղիղ չկար, հեռախոս կար միայն պաշտոնատեղերում։ Հավաքման գլխավոր վայրը բուլվարն էր՝ Աղային խորհրդի շենքի դիմաց։ Մեկ ակնթարթում ուղախ լուրը տարածվեց ամբողջ քաղաքում։ Ժողովուրդը ուղարկվել է, ինքնաբերաբար հանդես եկան կարգադրիչներ, և ժողովուրդը, որ ինքն էլ կուշտ չէր և օրապարենով հաց էր ստանում, աննկարագրելի արագությամբ հավաքեց հաց, շաբար, թեյ, ծխախոտ և կժերով ու ամեն տեսակ ամաններով Երևանի հիմնալի ջուր։ Ժողովուրդն ինքն էլ վազելով դրանք տարավ կայարան, գնացք կազմեց, մոտակայքում խոտի գեղ կար՝ մետաղալարերով սեղմ կապված խորձերով, րոպեապես խուրձերը քանդեց ու խոտը փոեց վագոններում՝ դասավորելով ջրի կժերն ու ամանները։ Մարտը դեռ նոր էր վերջացել, երբ թիկունքի առաջին համեստ նվերների գրնացքը հասավ Սարդարապատ՝ երկարածիգ սուլոցներով աղդարարելով իր ժամանումը։ Հոգեբանական մեծ նշանակություն ունեցան այդ դիլ սուլոցները, — պարտված և նահանջող թուրքերն ավելի սարսափեցին՝ կարծելով, որ գյա

վուրների նոր համալրում ժամանեց։ Գոհունակության ժպիտ փայլեց հայ զինվորների շուրթերին, ուրախության ցնծագին աղաղակներով իրար ողջագուրեցին ծարավ զինվորը և նրան ջուր մատուցող հայ աղջիկն ու մայրը, մեկն արտավաթոր աշքերով հուզված աղոթում էր ու շուշուտ խաչակնքում կուրծքն ու երեսը, մյուսը երգում էր «Գյուլի ջան» և պարի հրավիրում Երևանից ժամանած հարազատ քրոջը, երրորդը մաքրում էր զենքը, հաշվում փամփուշները և պատրաստվում մարտական հերթափոխի Ավելի սրտոտ հայուհիները փութեռանդ լավաշ ու ջուր էին տանում ամենաառաջավոր դիրքերը։

Զինվորներին նվերներ ու ջուր ուղարկելու գործում խախածենություն և աննկարագրելի եռանդցուցարերեցին հատկապես վանեցի կանայք ու աղջիկները՝ Արևմտահայ կանանց կոմիտեի ղեկավարությամբ, որոնք վանի ապրիլյան հերոսամարտի փորձով դիմված շատ բան արին այդ օրը և այդ օրերին։

Սարդարապատի ճակատամարտը, առաջին օրվա հաղթանակը հստակություն մտցրեց ուազմավարության մեջ՝ ճիշտ լուծելով կանոնավոր զորքի և աշխարհազորայինների փոխգործողության մինչ այդ անլուծելի մնացած կնճռոտ պրոբլեմը։ Երկաթգծից հարավ գործող թոռոցիկ Հովսեփի, Մակեղոնի, բուլանըցի Մուրագի ուռմացած խմբերը հենց կովի դաշտում ու կովի ընթացքում, ինչպես ասացինք, դարձել էին 6-րդ և պարտիզանական երկու գնդերի հետախուզուներն ու առաջապահները։ Նրանց հեծյալները շմիածուլվեցին, բայց միացան կազմակ փոխգնդապետ Կորոլկովի պարտիզանական հեծյալ զնդին և ավարտում էին նահանջող թշնամու ջախչախումը։ Երկաթգծից հյուսիս Եղնիկ, Դանիել և Թաղես վարդապետների առաջնորդած պատանքավորները գործում էին 5-րդ զնդի հետ միշտ համերաշխ և կովի հենց ընթացքում, զնդի հատկապես կրտսեր սպայության ցուցումով, երեք-շորս հոգով կցվեցին զնդի առանձին ջոկերին։ Իսկ հետաքա օրերին խմբերը թեև սեփական նախաձեռնությամբ, բայց միշտ ելնելով ամբողջ ճակատի իրա-

գրության հրամայական պահանջից, թուրքերին հարվածում էին նաև կողքից ու թիկունքից: Խազմաճակատի փաստական հրամանատար գնդ. Դանիել բնդ Փիրումյանը երբեք գեն: Սիլիկովի և ալլոց նման արհամարհական վերաբերմունք ցույց շտվեց աշխարհագորայիններին և խոստովանում էր նրանց մասնակցության մեծ արժեքը:

Սարդարապատի առաջին հաղթանակը լուծեց նաև զորահավաքի հարցը: Մինչ այդ Երևանի պարետը հաճախակի շուրջկալներ էր կազմակերպում և զինվորական տարիքի երիտասարդներին բռնելով ուղարկում էջմիածին կամ Քանաքեռ՝ եղած զորամասերը հապճեպորեն համալրելու կամ նոր զորամասեր կազմակերպելու համար: Սակայն մայիսի 22-ի հաղթանակից հետո այլևս շուրջկալներ չկազմակերպվեցին: Այդ երեկո և գիշերը ցուցակագրման սեղաններ դրվեցին Անգլիական (Ներկայումս՝ Կոմունարների) այգու մուտքի մոտ, Սկետինգ-ոինգում (հետագայում՝ Խորառադառի ակումբի տերիտորիայում, ներկայիս ունիվերժագի և հարակից սեստորանի բակում) և Սեմինարիայի շենքի (ներկայիս՝ պետհամալսարանի հին շենքի) դռանը: Ինքնակայց ցուցակագրվողներն այնքան շատ էին, որ այլևս ամենքին չեին ցուցակագրում, խիստ ընտրություն էին կատարում: Մարդիկ հաճախ ճարում էին մի հաստ գոտի, շալվարը հավաքում էին գուլպայի մեջ, որ գոռ տեսք տան իրենց և մերժման շարժանանան: Կամավորները ներկայանում էին մեծ մասամբ սեփական զենքով և փամփուշտի բավականաշափ պաշարով: Անգլիական այգում, Սկետինգ-ոինգի բակում և Սեմինարիայի շենքի ծառուղիներում ամբողջ գիշեր չոկատներ ու վաշտեր էին կազմակերպվում, որոնք մայիսի 23-ի լուսաբացին արդեն մեկնեցին էջմիածին:

Արամ Մանուկյանը, որը դժբախտաբար օժտված չէր վճռականությամբ, ընդունակ չէր ընդիմանալու իր շուզած հոսանքին, հակադրվելու նրան՝ առաջ բերելով իր հոսանքը, այլ միայն կարողանում էր տարերայնորեն սկսած ցանկալի հոսանքով անկեղծորեն խանդակառվել ու հմտորեն դեկավարել այն, այդ օրը նշանակալից քայլեր կատարեց: Առա-

չին հաղթանակով հուսադրված՝ նա իր մոտ կանչեց վանի ինքնապաշտպանության հասակավոր դիրքապետներին և նրանց պատվիրեց՝ կազմել խմբեր, ընտրել դիրքեր ու քաղաքը նախապատրաստել փողոցային կոփվների: Այս որոշումից հետո նա Երևանում գտնվող միակ զորամասը՝ Սարիղամիջի կովից հետո Կաղզվան—Կողբով Արարատյան դաշտ ու Երևան նահանջած Ղարաբիլիսայի գնդի մեկ գումարտակը, թվով 320 սվին, նույն գիշերը էջմիածին ուղարկեց և կարգադրեց մտցնել 5-րդ գնդի կազմի մեջ: 5-րդ գնդի քաջ շտաբս-կապիտան ջալալօղլեցի Վարդան Զաղինյանը նրանց միացրեց իր գումարտակին և մայիսի 24-ին կովի տարապէ:

Անգլիական այգու, Սկետինգ-ոինգի և Սեմինարիայի ժողովրդական զորաժողովներն այդ նույն օրը տեղի ունեցան նաև էջմիածնում, Ղամարլվում և մոտակա ու հեռավոր բոլոր գյուղերում:

Սակայն թուրքերը Երևանի վրա արշավում էին ոչ միայն Ալեքսանդրապոլ—Զովֆա երկաթգծի ուղղությամբ և Արագածի հարավային լանջերով, այլև Արագածի հյուսիսային լանջերով: Էսադ փաշայի զորամասը, որ հետապնդում էր գեպի Մեծ Ղարաբիլիսա նահանջող հայ զորքին, մայիսի 20-ին գրավելով Համամլուն՝ Երևան տանող խճուղով ետ է դառնում և Ապարանի վրայով շարժվում է դեպի Երևան՝ Աշտարակ—Եղվարդով Կոտայք դուրս գալու և Քանաքեռի գրավմամբ հայ զորքը զինաթափ անելու համար: Գլխավոր հրամանատար գեն, Նազարենիկովը, ինչպես ասացինք, միանգամայն անտես էր առել Արագածի հյուսիսային լանջով անցնող ալղի խճուղին: Համամլուից մինչև Երևան այդ ամբողջ ճանապարհի վրա ոչ մի հայ զինվոր շկար: Երիտասարդ հայրենասեր կապիտան Գուրգեն Մովսիսյանը գեն: Նազարենիկովից ավելի լավ հասկանալով այդ խճուղին միանգամայն անտեր թողնելու վտանգավորությունը Երևանի համար, ինչպես ասացինք, նրանից խնդրել էր թույլ տալ իր մարտկոցով նահանջելու այդ խճուղով: Այդ պատերազմի ընթացքում ոչ մեկ ճիշտ որոշում չկայացրած Նազարենիկովը հրամա-

յում է կապիտան Մովսիսյանին հետևել իրեն ու շնչալ երեւան տանող խճուղով: Երևանի գորախմբի ֆունկցիան Սուրբալվի ճակատի պաշտպանությունն էր: Նա Ապարանում զորք շուներ, ավելի ճիշտ՝ մինչ այդ Ապարանում ուղմանակատ չկար, որ նա այնտեղ զորք պահեր: Եյսպիսով, դեռ. Նազարբեկովի մեղքով Համամլու—Երևան խճուղին հույժ կարեւոր պահին բացարձակապիս անպաշտպան էր թողնվել:

Թուրքերը Համամլուից անարգել առաջ են շարժվում և մայիսի 22-ին մտնում են Բաշ-Ապարան ու շարունակում են առաջ գնալ: Երիտասարդությունը դինված հեռանում է գյուղից և այլ գյուղերից փախած երիտասարդության հետ կուտակվում է Քյուլուչա գյուղում, որտեղ այդ նույն օրը նդդիների հետ միասին թույլ դիմագրություն է ցույց տալիս թուրքերին՝ կոմունիստ Դավիթ Մելիքսեթյանի նախաձեռնությամբ: Շուտով Երևանից հասնում են մի քանի տասնյակ ապարանցիներ Արևեն Տեր-Պողոսյանի (Բաֆֆու Խենթի որդու) ղեկավարությամբ, դիմագրություն ցույց տվողներին իրենց խմբերով միանում են Մատթեոս Հովհաննիսյանը և Սեդրակ Զալալյանը: Ապարանի ճակատում մայիսի 22-ին և 23-ին տաճեկներին դիմագրություն են ցույց տալիս միայն աշխարհազորայինները: Սակայն երբ Սարդարապատի առաջին հաղթանակը հաջող ինքնապաշտպանության հավատ ներշնչեց հայ ժողովրդին և իմաստավորեց պատերազմի շարունակումը, և երբ աշխարհազորայինների նորանոր խմբերով արդեն ուժեղացած էր Սարդարապատի ճակատը, Երևանի գորաբաժնի հրամանատարությունը Սարդարապատի ճակատից վերցրեց 6-րդ մարտական գունդը, Կորուկովի պարտիզանական հեծյալ գունդը և նրանց հետ արդեն սերտորեն միաձուլված բուլանըցի Մուրադի և բաշդյաննեցի Մակեդոնի խմբերը, ինչպես նաև Սակելլարիի հրետանային մարտկոցը և շտապ ուղարկեց Ասլարանի ճակատը:

Մայիսի 23-ին, երբ Սարդարապատի առաջին հաղթանակի լուրը խանդավառել էր նաև Դիլիջան ապավինած Ալեքսանդրապոլի հայ զորքին, Մեսրոպ հայիսկոպոս Տեր-

Մովսիսյանը, որը որպես գաղթականությանն օգնող արտակարգ հանձնաժողովի նախագահ գտնվում էր Ղարաքիլսայի շրջանում, — գեներալ Գամազյանի (Համայանի) հետ դործի են անցնում Դիլիջանում: Մեսրոպ հայիսկառակար, Սարդարապատի օրինակը վկայակոչելով, շունչ ու ոգի է ներշնչում կազմալուծված հայ զորքին և Գարեգին եպիսկոպոսի նման կովի է առաջնորդում նրան: Գնդապետ Բեյ-Մամիկոնյանի հրամանատարությամբ հայ զորքը մայիսի 24-ին վերադառնում է Ղարաքիլսա և առաջ շարժվում դեպի Համամլու: Այդ առթիվ գեներալ Նազարբեկովը մայիսի 26-ին իր հերթական կոչի մեջ ասում է.

«Թվում էր, թե ամեն բան կորած է և մեր նենդ թշնամում մնում էր մի բան—շարունակել առաջիսաղացումը հայկական երկրի խորքը... Աստծու ողորմածությամբ Երևանյան քաջարի զորքը, որի ղեմ թուրքերը նույնպես, չնայելով զինադադարին, հարձակման էին դիմել, շտատանվեց և ետ մղելով հակառակորդի հարձակումը, ինքը հարձակման դիմեց և երկու օրվա կովի մեջ ետ շպրտելով թուրքերին, ներկայում հետապնդում է նրանց:

Երևանյան զորքի հաղթությունը ոգևորել է Ալեքսանդրապոլյան զորքի զինվորներին, կազմվել են վաշտեր, բատակոններ ու գնդեր, որոնք շտապով ետ են դարձել, ունենալով միայն մի միտք ու մի բաղձանք— հաղթել կամ մեռնելը («Հորիզոն», 1918, մայիսի 28, № 100, «Գեներալ Նազարբեկովի կոչո»):



Մայիսի 23-ին ֆերիկ Վեհրին արդեն Ալեքսանդրապոլյան էր: Տեղում ծանոթանալով Սարդարապատի պարտության մանրամասնություններին, նա իր կարիերայի համար խիստ ճակատագրական նշանակություն ունեցող սխալ է գործում, որի համար, ինչպես տեսանք, էնվեր փաշան արխիվ նետեց նրան: Սարդարապատի դասից հետո նրա մեջ մի սկան զինվորականը հաղթահարում է դիվանագետին, և

Նա հայկական ուժերի վրա չորս ուղղությամբ միաժամանակ՝ հարձակման հրաման է արձակում: Եվ հարձակման հաջողությունն արագացնելու համար Վեհիր փաշան ոչ միայն ջալալողութիւ (Ստեփանավանի) ճանապարհով թիֆլիսի վրա արշավող և արդեն Բորչալին մոտեցած ջավիդ փաշայի զրամական հրամայում է ետ դառնալ և կոնակից հարվածել Ղարաբիլիսայի ճակատում կովող հայ զորքին, ոչ միայն Մյուրսել փաշային հրամայում է ամեն գնով անցնել վարած մրաքսը, այլև Շեվքի փաշայի՝ Սարդարապատում ջախջախված զորքերը համալրելու համար հրամայում է օդապորտել Հիլմի և Քյազիմ Կարաբեքիր փաշաների զորամասերը, որոնք առանձնացված էին, ինչպես ասել ենք, Բաքվի վրա և իրանական Ատրպատական գնալու համար:

Մյուրսել փաշային շի հաջողվում իր 5-րդ գիվիդիան Սուլմալից անցկացնել Արաքսի ձախ ափը: Գետն անցնելու փորձ նա ձեռնարկում է Յուվա—Ղամարլի ճակատում «Գայլի դրունքում», սակայն այդ հատվածում դասավորված Վանեցիների գունդը՝ թուրքական ծառայության սպա Տիգրան Բաղդասարյանի հրամանատարությամբ այնպես է խափանում այդ փորձը, որ այդ շաջողված փորձից հետո այդ հատվածում այլևս ճակատ շի գոյանում:

Մայիսի 24—25-ին սկսվում է թուրք զորքի միաժամանակյա հարձակում Ղարաբիլիսայի, Բաշ-Ապարանի և Սարդարապատի ուղղություններով: Ստեղծված նոր պատերազմական իրադրության մեջ Բաշ-Ապարանը դառնում է հայ ժողովրդի ինքնապաշտպանության կենտրոնը, Ղարաբիլիսան՝ աջ թևը, իսկ Սարդարապատը՝ ձախ թևը:

Բաքվի վրա և իրանական Ատրպատական տանելու համար առանձնացված Հիլմի և Քյազիմ Կարաբեքիր փաշաների պահեստային ուժերով հիմնավորապես նորոգելով իր գլխովին ջախջախված ու կազմալուծված դիվիդիան, Յաղուր Շեվքի փաշան մայիսի 24-ին նոր հարձակում է ձեռնարկում Սարդարապատի ճակատում: Հայ զորքը, ինչպես ասացինք, մայիսի 22-ի հաղթանակից հետո կանգ էր առել Սարդարապատի արևմտյան մատուցներում և մայիսի 23-ին թուրքե-

րի հետ շփման մեջ մտնելու փորձ չէր կատարել, այնպես որ թուրքերի ապաստան հենակետերից՝ թուլքի թափա և Զիմնի զըռ (440-րդ) բարձունքից մինչև հայ զորքի դիրքերն ընկած էր 6—7 կիլոմետր մեռյալ տարածություն: Հրետանային կրակի պաշտպանության տակ թուրքերը մայիսի 24-ին իջնում են վերոհիշյալ բարձունքներից և առաջանում դեպի հայ զորքի դիրքերը: Մեկ օր առաջ ուժերի մի մասը Ապարանի ճակատ ուղարկելուց հետո Սարդարապատի ճակատում մնացել էին գնդ. Պ. Փիրումյանի Մահապարտների համալրված 5-րդ գունդը՝ շուրջ 1300 սվին, գնդապետներ Սիլինի և Պերեկրյոստիկովի՝ կամավորներով համալրված պարտիզանական գնդերը՝ միասին արդեն շուրջ 2000 սվին, հմուտ հրետանավորներ Աթանեսյանի, Կլիշի, Իգիթիանյանի և Կարաբեշիշյանի ուժեղացված հրետանային շորս մարտկոցները, թուրքիկ Հովսեփի և Պանդուստի հեծյալները՝ ավելի քան 300 ձիավոր, աշխարհազորացինների նորակազմ վաշտերը՝ ավելի քան հազար սվին:

Երբ թուրքերը մոտենում են հայ զորքի կրակագծին, Աթանեսյանի, Կլիշի, Իգիթիանյանի և Կարաբեշիշյանի մարտկոցները 20 թնդանոթներից դիպուկ հրետածգությամբ մահաբեր կրակ են թափում առաջացող թուրք զորքի վրա և արյան մեջ խեղդում հարձակման նրա փորձը, որն անմիշապես վերածվում է նահանջ-փախուստի՝ շարունակ հայկական հրետանու տեսադաշտի մեջ գտնվող վերընթաց անջրդի զըռներով, որոնք այս անգամ գերեզման են դառնում Հիլմի ու Քյազիմ Կարաբեքիր փաշաների ընտիր զորքի համար: (Փակագծերի մեջ ասենք, որ մայիսի 22-ին կրած ջարդի ժամանակ թուրքերին չէր հաջողվել հավաքել իրենց դիակներն ու վիրավորներին: Մայիսի 24-ին Արաքս և Կարաբուրուն կայարանների զըռներից նրանք շատ վիրավոր տարան Ալեքսանդրապոլ: Հայ զորքի կողմից կրած իրենց երկրորդ մեծ ջարդը Ալեքսանդրապոլի կայազորի ասքերներից և քաղաքի բնակչներից թաքցնելու համար թուրք հրամանատարությունը հնարում է «գնացքի խորտակման» ինչ-ոք

պատմություն, որին մենք ավելի հանգամանորեն կանդրադառնանք ստորև:

Հեծելազորի պակասը հայ զորքին հնարավորություն չի տալիս զարգացնելու իր հաջողությունը, և խուճապահար փախչող թուրքերը նորից կարողանում են ամրանալ իրենց ելման դիրքերում: Սակայն նրանց կրած մեծ կորուստները համարձակություն են ներշնչում հայկական հրամանատարությանը, և նա որոշում է հակահարձակման դիմել թուրքերի հենակետերի՝ թուլքի թափա և ջիմնի դրո բարձունքների վրա: Բայց մայիսի 25-ի հակահարձակումը բավական թանք է նստում հայ զորքին: Թուրք բանակի գլխավոր առավելությունը գերմանական կատարելազորությած գնդացիրն էր: Թուրքերն այն գործի են դնում: Հայ զորքի և աշխարհազորայինների գրոհները ետ են մղվում՝ զգալի կորուստներով: Հայ զորքի շարքերում նկատվում է երերում:— «Մահ իմացգալ անմահը թիժուն է»,— բացականշում է ջալալօղեցի անձնազնի շտարս-կապիտան Վարդան Զաղինյանը և իր ու հարևան գումարտակների սպաներին՝ ոռւս-թուրքական պատերազմի ընթացքում միայն սպայության աստիճանի բարձրացրած նեմարանավարտ և թեմականավարտ ուսուցիչներ դամարլվեցիներ Հակոբ Սիմոնյանին, Գրիգոր Մարգարյանին, Մանասեր Մանասերյանին, սուրբմալվեցի Ստեփան Թոփչյանին, գանձակեցի Արսեն Սարգսյանին, Աղրիանապոլսի թուրքական զինվորական ուսումնարանն ավարտած Երվանդ Տեր-Սիմոնյանին և տասնյակ այդպիսի այլ հայ մտավորական սպաների կարգադրում է գրոհի ժամին ատրճանակը ձեռքին ընթանալ զորքի շղթայի առջևից և անձնական օրինակով ոգևորել նրանց: Այդ օրը հերոսի մահով զոհվում են շտարս-կապիտան Վարդան Զաղինյանը, գանձակեցի Արսեն Սարգսյանը, իգդիրեցի Շահենը և շատ ուրիշ սպաներ: Սակայն գրոհը հաջողությամբ չի պսակվում: Հետեւալ օրը հրամանատարությունը դատապարտում է այդ նախաձեռնությունը և սպատրաստվում է գործի դնել ուղերմները: Կոշ գյուղում ախալցիացի երիտասարդ գնդապնտ Կարո Ղասարաշյանին հաջողվել էր իր՝ երդնկայի և Մանիկի՝ Մակի քայքայված

գումարտակների մնացորդներից ընդամենը մի քանի օրուն վերակազմավորել 700 սվինից կազմված մի գումարտակ, որն առաջադրանք է ստանում Արագածի փեշերով անցնել Զիմնի դրոի (440-րդ բարձունքի) թիկունքը: Գումարտակն սկսում է իր անցումը, սակայն դեռ տեղ չհասած, Փիրումյանի 5-րդ կ Պերեկրյոստկովի պարաիզանական գնդերն առանց որևէ դընդակ արձակելու արդեն գրավել էին հիշյալ բարձունքը: Հընչական մշեցի Պանդուխտը (Միքայել Սերյան), Վերին Թալինից ու Մաստարայից իշնելով իր 200 մշեցի հեծյալներով և աշխարհազորայիններով համալրելով իր շարքերը, մայիսի 26-ին թիկունքից գրոհել էր 440-րդ բարձունքի վրա, վերցրել մի թնդանոթ, գերել սպաների, կոտորել և փախուստի մատնել մնացածներին: Հետապնդման աղմուկուղազակի վրա սարերի ծերպերից իշնում են թուրքերի կողմից մինչև այդ օկուլացված Սոգութլու, Կըրմըզլու, Գաղալու և Գյովլու գյուղերի՝ սարերը փախած զինված տղամարդիկ և Պանդուխտի հեծյալներին միանալով հետապնդում ու շախազախում են «Գելիբրոլու» դիվիզիայի խուճապահար փախչող ասքերներին: Հայ կազրային զորքին մնում էր միայն ամրապնդել հաղթանակը, գրավել թշնամուց մաքրված տերիտորիան և մայիսի 28-ին հասնել Աղին կայարանը: Պանդուխտի այս փայլուն օպերացիան ճիշտ և ճիշտ այնպիսի օպերացիա էր, ինչպիսին, ինչպես տեսանք, Սեբաստացի Մուրադը ցանկացել էր կատարել Սարիղամիշում, սակայն զիներալ Արեշովը չէր ընդառաջել նրան, իսկ դաշնակցական շեֆերի անփառունակ զեկավարությունը չէր կարողացել հակազդել գեներալ Արեշովի վրա: Սա կրկին անդամ ապացուցում է նազարեկովի գծի անձշտությունը: Բարեբախտաբար, Սարգարապատում Պանդուխտին խանգարող չկար:

Մայիսի 26-ին բոլոր երեք (Ղարաբիլիսա, Բաշ-Ապարան, Սարգարապատ) ճակատներում էլ հաղթությունը հայ զորքի կողմն էր, բոլոր երեք ճակատներում էլ թուրք զորքը կորուստներ տալով նահանջում էր:

Ալեքսանդրապոլում նստած ֆերիկ Վեհիբն այս ամենը տեսնում էր: Հին, փորձված դինվորական ֆերիկ Վեհիբը

հասկանում է, որ հայ ժողովուրդը սկսել է ժողովրդական, անպարտելի պատերազմ։ Նա հիշում է Վանը և սարսափում ժողովրդական պատերազմի հեռանկարներից։ Ինչպես ինքն է Բաթումում ասել հայ պատվիրակներին, «խորհրդակցություններ» գումարելով հանգում է հայկական անկախությունը ճանաշելու, հայերին «զինակցության» առաջարկություն անելու եղանակացությանը։ Այսպիսով, տեսնելով, որ զենքի ուժով այլևս չի կարելի հաղթել հայերին, նա մայիսի 27-ին արգեն «հայասեր» դարձած՝ շտապ վերադառնում է Բաթում, որտեղ այդ ամենին և Վեհիրի նոր կուրսին միանգամայն անտեղյակ, Խալիլ բեյը մի օր առաջ անդրկովկասյան պատվիրակներին ներկայացրել էր իր ենորյա ժամկետով վերջնագիրը, որի վրա մենք կանգ կառնենք իր տեղում, իսկ հիմա շարունակենք պատերազմական գործողությունների ընթացքի տեսությունը Ղարաբիլիսայի և Բաշ-Ապարանի ճակատներում։

Ինչպես ասել ենք, էսադ փաշան Համամլվից իր ուղղությունը փոխել էր և Ապարանի վրայով գնում էր Երևան, իսկ գլխավոր հրամանատարի հետեւից անկանոն նահանջող հայ զորքը Ղարաբիլիսան էլ լքել էր ու գնացել Նիկիտինո-Դիլիջան։ Սարդարապատի օրինակով ոգեշնչված հայ զորքը Դիլիջանից ետ էր դարձել և մայիսի 24-ին մտել Ղարաբիլիսա, սակայն այդ նույն օրը ֆերիկ Վեհիրն ընդհանուր հարձակման հրաման էր տվել բոլոր ուղղություններով և կոռի մտած թուրք զորքին կարգադրել էր ետ դառնալ ու կռնակից գրոհել Ղարաբիլիսայի վրա։ Մայիսի 25—27 հերոսական դրվագներով լի ենորյա տաք կոիվներ են տեղի ունենում Փամբակի ձորում։ Առաջին երկու օրը հաջողությունը հայ զորքի կողմն էր, սակայն մայիսի 28-ին վրա է հասնում Լռուի մտած թուրք զորքը և Բաղվաղից իջնելով՝ շրջանցում է հայ զորքի աշ թեր, իսկ Բաշ-Ապարանի ճակատից վերցված երկու գունդը Գյաղա-Մալմեխի վրայով՝ շրջանցում է հայ զորքի ձախ թեր և Վարդանլու գյուղի մոտ կտրում է դեպի

Ղարաբիլիսայի կոիվների մասնակից մի հայժ իրազեկ

կապավոր սպա, որն այժմ գրում է իր ընդարձակ հուշերը, համառոտակի պատմում է հետեւյալը։

«1918 թ. մայիսի 15-ին Ալեքսանդրապոլը համարյա առանց կովի, ամոթալի կերպով, թուրքերին հանձնելուց հետո, այդ քաղաքում և նրա շուրջը գասավորված հայ զորքը, առանց թշնամու կողմից նետապնդվելու, գաղթականության հետ խառնված, փախավ դեպի Ղարաբիլիսա—Դիլիջան և երևան։

Նահանջը խուճապային էր, առանց որևէ ղեկավարության։ Թեև զգալիորեն հեռացած-կտրված էինք թուրքերից, բայց և այնպես զորքի և գաղթականության հեղեղը մայիսի 20—22-ին տարերայնորեն թողեց նաև Ղարաբիլիսան և կուտակվեց Դիլիջանում։ Նահանջելու տեղ այլևս չկար։ Աղբեցանի սահմանը հեռու չէր։ Մայիսի 23-ին ստանալով Սարդարապատի առաջին հաղթանակի ողբշունչ լուրը՝ բազմարդ միտինգ գումարվեց եկեղեցու բակում, որտեղ կենաց և մահու կովի կոչով հանդես եկան Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, գեներալ Համասյանը և ուրիշներ։ Նույն օրը երեկոյան գնդապետ Ա. Մելիք-Շահնազարյանի (հետագայում Սովետական Հայաստանի հայկական դիվիզիայի հրամանատարը) առաջին հեծյալ գնդի կապի երկու հարյուրական և նժողուժի հեծյալ խումբը առաջինը ետ դարձան Ղարաբիլիսա։ Մայիսի 24-ի առավոտյան Ղարաբիլիսա հասնելով, տեսանք, որ քաղաքում թուրք չկար։ Գետի երկու ափով առաջարժվելով մինչև Դարբագ և Արշուտ՝ նույնպես հակառակորդի շահնդիպեցինք։ Մայիսի 24-ի երեկոյան Ղարաբիլիսա վերադարձան գնդապետ Ա. Մելիք-Շահնազարյանի առաջին հեծյալ գունդը, որը միակ շկազմալուծված գունդն էր, շորս մարտկոց, տարբեր գնդերի մնացորդներից հապճեպորեն վերակազմավորված՝ գնդապետ Սամարցյանի հետևակային հավաքական գունդը, ինչպես նաև մի քանի խումբ։ Ղարաբիլիսայի ճակատի ընդհանուր հրամանատար կարգվեց գնդապետ-թեր-Մամիկոնյանը, որը հեղինակություն շունեցող զինվորական էր։ Մայիսի 24-ին մեծ կոիվ տեղի շունեցավ, միայն հետախուզական որոնումներ էին կատարվում Արշուտ գյուղի-

մոտ և առաջավոր զորամասերի կարճատև փոխհրաձգություն:

Մայիսի 25-ին Ղարաքիլիսայի ճակատը կազմակերպվեց հետևյալ կերպ.— ձախ թևում, Հաղիղարա գյուղի մոտ, կանգնած էր գնդապետ Սամարցյանի հավաքուկան գունդն իր մարտկոցով և գնդացրային դասակներով. կենտրոնում, Դաբրագ գյուղի մոտ, կանգնած էին գնդապետ Ա. Մելիք-Շահնազարյանի հեծյալ գունդը, կապիտան Գուրգեն Մովսիսյանի հրետանային մարտկոցը, հետևակային այլ հավաքական զորամասեր. և աշխարհազորայիններ. աջ թևում գընդապետ Կորգանովի Հրամանատարությամբ կանգնած էին նույնպես հավաքական հետևակային զորամասեր, մի մարտկոց, Նժդեհի և այլ խմբապետների հեծյալներ ու աշխարհազորայիններ։ Մայիսի 25-ին հայկական զինված ուժերի թիւվը, հաշված նաև աշխարհազորայիններին, չէր անցնում 6—7 հազար սպինից ու թիւից։

Առաջին հեծյալ գնդի հետիւոտն դարձած մի էսկադրոն մայիսի 25-ի ամբողջ օրը, առանց մարտ մղելու, պահում էր Դաբրագ գյուղից դեպի ձախ ընկած բարձունքը, որ կենտրոնի բանալի-դիրքն էր, բայց լույս 26-ի գիշերը հիշյալ էսկադրոն գիշերելու համար բարձունքից ցած իջավ Դաբրագ գյուղը, մարտական ընդհարումը դեռ չէր սկսվել, սակայն թևերում կարճատև փոխհրաձգություն տեղի էր ունենում։ Մայիսի 26-ի վաղ առավոտյան 4-րդ մարտկոցի հրամանատար կապիտան Գուրգեն Մովսիսյանը, որ մեր լավագույն հրետանավորներից մեկն էր, առաջին հեծյալ գնդի դասավորության շրջանը ժամանելով սպաներից խնդրում է իր մարտկոցը պաշտպանել թշնամու գնդացրային ուղիղ կրակից։ Այդ պահին Արշուտից Ղարաքիլիսա տանող ճանապարհին երևաց պայթուցիկ ոռմբերով հետապնդվող մի հեծյալ ջոկատ։ Թուրքերը հարձակման էին անցել։ Կապիտան Գ. Մովսիսյանը անմիջապես սլացավ դեպի իր մարտկոցը, որը կանգնած էր բանալի-դիրք բարձունքից ընդամենը կես կիլոմետր հեռավորության վրա։ Մակայն թուրքերը շատ շուրջ գրավելով գնդապետի հեծյալ բարձրերը, անմիջապես գնդապետ Ա. Մայիսի 26-ին մեր ճակատի կենտրոնը նահանջեց։ Հաջորդ օրը, մայիսի 27-ին, միայն մեծ կորուստների գնով հաջողվեց ետ գրավել մի օր առաջ այնքան անփոփորին կորցրած բարձունքը Դաբրագ գյուղի մոտ։ Մայիսի 27-ին ամբողջ ռազմաճակատում հաջողությունը հայ զորքի կողմն էր։ Խանդավառ զորքը և աշխարհազորայինները հերոսական գրոհներով նետվում էին սպինամարտի և ջախչախելով փախուստի էին մատնում հակառակորդին։ Կենտրոնում թուրքերը զգալի կորուստներ տալով, նահանջում էին դեպի Համամլու։

Մակայն մայիսի 27-ին ձեռք բերված հաջողությունը շամբապնդվեց հայկական հրամանատարության մեղքով։ Թուրքերը կարողացան լուսի-Փամբակում և Ապարանում գործող իրենց գրեթե բոլոր ուժերը հավաքել մեկ ճակատում և ստեղծել մեկ նպատակակետի հարվածող միասնական ուժեղ բունցք, այնինչ նույն հատվածում գործող հայ զորքի մեծ մասն անմասնակից մնաց վճռական կովկն։ Այդ ժամանակ Դսեղումն էր գտնվում Անդրանիկն իր շուրջ հինգակարանոց զորքով։ Գնդապետ Բեյ-Մամիկոնյանը նամակով դիմել էր նրան՝ խնդրելով մասնակցել կովկն, սակայն Անդրանիկը հնարավորություն չունեցավ այդ անելու, որի հետևանքով էլ թուրքերը կարողացան Զալալօղլիի վրայով թորշալու արշավող բանակն ազատ կերպով ետ դարձնել և թզովդալի լեռնացքից իջնելով շրջանցել մենակ մնացած Ղարաքիլիսայի հայ զորքի աջ թերը։

Քնացնելով Դրոյին՝ էսադ փաշան կարողանում է հարևան Բաշ-Ապարանի ճակատից վերցնել երկու գունդ և Գյա-

դա-Մայմեիմ լեռան վրայով շրջանցել հայ գորքի նաև ձախ թեր: Ետ ստացած գերիներով համալրելով իրենց շարքերը՝ թուրքերը մայիսի 28-ին հարձակման են անցնում նաև կենտրոնում և նույն առավոտյան գրավելով Դարբագ գյուղը, հրետանային ոմբակոծության են ենթարկում Ղշլաղ գյուղը, որտեղ գտնվում էր կենտրոնի շտաբը: Բաշ-Ապարանի ճակատից վերցված երկու գումդը մայիսի 28-ի երեկոյան Վարդանլու գյուղի մոտ անտառից դուրս գալով կտրում է Դիլիջան տանող խճողին: Դա արդեն կատարյալ պարտություն էր: Խուճապահար զորքի մի զգալի հատված հարկադրված եղավ երեկաթուղու կիրճով նահանջել դեպի Թիֆլիս և համարյա ամբողջովին ոչնչացվեց:

Հարաբիլիսայի ճակատամարտը տանուկ տրվեց գեներալ Նազարեկովի անճարակության հետևանքով: Լոռի-Փամբակում և Ապարանում հայ զորքի ընդհանուր թիվը 15 հազարից պակաս չէր, սակայն մայիսի 27-ին և 28-ին կռվում էր հազիվ 5—6 հազար մնացած Հարաբիլիսայի զորքը, որի դեմ թուրքերը կենտրոնացրել էին 10—12 հազար զորք: Գեներալ Նազարեկովը գնդապետ Բեյ-Մամիկոնյանին Հարաբիլիսայի ճակատի հրամանատար կարգելով, իր գործն ավարտված էր համարել և, ճկունություն շցուցաբերելով, չէր մտածել հայկական բոլոր զինված ուժերի փոխգործակցության մասին: Այս տեսակետից խիստ արժեքավոր է Հովհաննես Թումանյանի վկայությունը:

«Հարաբիլիսայի անկման օրից սկսած,— գրել է Հովհաննանը,— անդապար մարդիկ են պատահում, որոնք դատապարտում են Անդրանիկին, որ Հարաբիլիսայի պատերազմի ժամանակ նա՝ խոշոր ուժերով մնաց էնքան մոտիկ՝ Դսեղ նստած, մինչդեռ եթե օգնության հասներ Դվալից, պատերազմը բոլորովին ուրիշ ելք կունենար:

Այս՝ միանգամայն ճշմարիտ են ասում, որ եթե Անդրանիկը կոսու կողմից, Դվալից օգնության հասներ՝ պատերազմն անկախած ուրիշ ելք կունենար: Սակայն բոլոր խոսողները մի բան չգիտեն, որ հենց էղպես էլ ծրագրված էր և կատարվելու վրա էր, երբ զինվորական բարձր հրամանատարություն-

նից հրահանդ եկավ Անդրանիկին՝ մնալ Դսեղ և պաշտպանել երկաթուղու գիծը:

Դսեղից տրված տեղեկության հետևանքով մինչև էս հորամանը փոխվեց՝ արդեն երրորդ օրն էր և գրեթե միաժամանակ եկավ Ղարաբիլիսայի անկման բոթը» (Հայկ ՍՍԾ գիտ. ակադեմիա, գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, 255):

Այնուամենայնիվ իրողության տիսուր կողմն այն է, որ թուրքերը կարողացան իրենց բոլոր ուժերը հավաքել մեկ ճակատի վրա, մինչդեռ հայերն այդ բանն անել շկարողացան, եթե կարողանային, ապա պատերազմն անտարակուս բոլորովին այլ ելք կունենար:

Պարտության երկրորդ պատճառը ուազմամթերքի սուր պակասությունն էր: Ինչպես հայտնի է, Հարաբիլիսայում և Դիլիջանում զինապահեստներ չկային: Մայիսի 28-ին հայկական հրետանին մնացել էր առանց արկի, իսկ զինվորները շարունակ հաշվում էին իրենց վերջին փամփուշտները: Աշխարհազորայինները, որոնք փամփուշտ ունեին, թե՛ թվով շատ քիչ էին և թե՛ ավելի շուտ հեռացան կռվի դաշտից:

Ավագ, հմուտ զեկավարության և ճիշտ ուազմավարության գեղքում կարելի էր Փամբակի կիրճն ավելի մեծ գերեզման դարձնել թուրք բանակի համար, քան Սարդարապատի և Կարաբուրունի զըռերը, որովհետեւ հայ զորքը շատ լավ էր կռվում և տեղանքն էլ շատ ավելի բարենպաստ էր ինքնարդաշտպանության համար:

Հարաբիլիսայի կոիվների մասին նույն բանն է ասում նաև այդ կոփներին ականատես-մասնակից կոմունիստ Մ. Ղ.-ն, որը 1920 թվականին Թիֆլիսում լույս է ընծայել իր «Հարաբիլիսայի հերոսամարտը» գիրքը:

«Մայիսի 25-ին, — գրում է նա, — որոտաց հրետանին... թշնամին շփոթվեց. նրա հետախուզները փախստի դիմեցին: Մերոնք արբեցած առաջին հաջողությունից և արհամարհելով թշնամուն, կանգ առան: Կոփնը դադարեց, խլած դիրքը ամրապնդելու մասին մտածող շեղավ: Ռազմագիտությունը տեղի էր տվել անհատական խիզախության, սառնարտու-

թյունը՝ վայրի և ական ոգևորության։ Զեար կովելու մի որոշ ծրագիր, դրված չէր լուծելու որևէ խնդիր, ամեն ինչ թողնված էր տարերային ուժին, ամեն ինչ հանձնված էր պատահականության։ Մեր զինվորական հայտնի ուժերը — նազարբեկով, Բեկ-Մամիկոնով, Անդրանիկ և ուրիշներ — կորցնելով իրենց հավասարակշռությունը՝ շունեին հմայք ու հեղինակություն մասսայի աշքում» (Մ. Դ., «Ղարաքիլսայի հերոսամարտը, ականատեսի հիշողություններից», Թիֆլիս, 1920 թ., հրատարակություն Հովհաննես Հարությունյանի, էջ 17):

Սիսակ ու ազմավարության և աջ (արևելյան) ու ձախ (հյուսիսային) թերեն անպաշտպան թողնելու համար Մ. Դ.-ն շարունակում է:

«Այն ժամանակ, երբ թշնամու զորաբանակի մի մասը Փամբակի ու Թափա-Գյառուրի վրայով տիրում է Գյաղա-Մայմեխի բարձունքը, մյուս մասը դիմելով արևելք՝ Աղլազանի, Կախկալի, Շիշ-Թափի գագաթներով հասնում է Սարալ գյուղին և ամրանում է Ղուրսալի և Արշութի լեռներում — մեր զորքերը բռնել են միայն արևմտյան կողմը, Ղշլաղ-Դարբաղ-Արշութ ութվերստանոց տարածությունը, ստեղծել են միայն մի ֆրոնտ — կենտրոնացել են միայն այս ճակատում (այսինքն՝ միայն կենտրոնում). — Հ. թ.), դարձրել են «կուրած եկեղեցին» — իրենց վերդենը, ֆլանգների ուժեղացման մասին մտածող չկա. որքան ուժեղ է ճակատը, այնքան թույլ ու անպաշտպան է Դառը ու Շոր-Դաղ՝ հյուսիսային և Աշուրթ, Խալիսալ ու Մեծ Մայմեխ՝ արևելյան թերեր» (նույնառեղը, էջ 17):

Պոլիս գնացած հայկական պատվիրակությանը զրած նամակում Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը Ղարաքիլսայի ճակատամարտի մասին հաղորդում է.

«Երբ երկու օր անց ավտոմորինով Դիլիջանից վերադարձա Ղարաքիլսա, ականատես եղա սոսկալի փախուստի անսկարագրելի ավերին: 38 վերստ տարածություն ճանապարհ, լցված էր անթիվ սատկած կենդանիների լեշերով, կոտրտված սալերով, թափված բռներով, որոնց փթումից երկիրը պիտի ապականվի:

Հայ զինվորությունը Դիլիջանի ձորում հայ գաղթականության ահռելի պատկերի տպավորության տակ ցնցվեց և իրեկ մի մարդ պահանջեց իրենց գեներալներից նորից գնալ պատերազմի դաշտ և թշնամուն գուրս վանել իր մայրենի հողից: Եթե Ղարաքիլսայի պատերազմը, հակառակ հայ զինվորի անվեհեր քաջության, այնքան անփառունակ վերջացավ, դրա մեղքը ընկնում է միմիայն ապաշնորհ ղեկավարների վրա» (Հայկական ՍՍԾ պետարիսիլ, Փոնդ 222, գործ 12, թերթ 110—111):

Տալով ավելի քան 1000 սպանված ու վիրավոր (որ այդ ընդհանուր փախուստի ու անտարերության ժամանակ նշանակում էր սպանված), հայ զորքը անկանոն փախչում է գեսուղեն: Ղարաքաղցիները Դիլիջանի և Սեմյոնովկայի վրայով հասնում են Սկան՝ Ղարաքաղ ու Զանգեզուր անցնելու համար, հայրենասեր գնդապետ Սամարցյանը կարողանում է կոտայքցիներին կանգնեցնել Սեմյոնովկայում, շուրջ երեք հարյուր սպա հասնում են Դիլիջան, Նազարենկովը սենյակից գուրս չի գալիս և չի ուզում նրանց երեսը տեսնել, շտարի պետ Վիշինսկին ամոթանք տալով սպաներին, ետ է ուղարկում Նիկիտինո՝ կիրճը պահելու համար: Եֆրեմովի ոռւսական սպայական գործի մնացորդները նահանջում են երկաթզգի ձորով և ոչնչանում ու գերվում Քորեր կայարանի մոտ, թիֆլիսցիները, ավելի քան 500 հոգի, նույնպես կոռվա ձորով հասնում են մինչև Բոլնիս-Խաչեն, սակայն խարենությամբ, — որին միամտորեն զոհ էին դարձել նաև տեղացի հայեր, զինաթափ արվեցին ու մորթուստվեցին Խրամ գետի ափին:

Այսպիսի տիսուր վախճան ունեցավ նազարենկովի գըլխավոր զորաբաժինը:

Ղարաքիլսայի ճակատում հայ զորքի կրած պարտության պատճառների մասին իր ժամանակին շատ է խոսվել. Հրամանատարները դատափետել են միմյանց՝ մեղքը ցցելով մեկի անշարժության և մյուսի սխալ կարգադրության վրա: Իհարկե, գեներալներն ու գնդապետները չեին կարող տեսնել պարտության սոցիալ-դասակարգային ավելի խոր պատճառը, որի վրա դեռ իր ժամանակին, 1920 թվականին, ծանրա-

ցել է միմիայն կոմունիստ Մ. Ղ.-ն։ Բանն այն է, որ Անդրկովկասյան սեյմի կառավարության մասնակից կուսակցությունները՝ մենշևիկները, մուսավաթիստներն ու դաշնակցականները, հակածողովրդական քաղաքականություն վարելով և Սովետական Խուսաստանից անջատվելով հանդերձ, ժողովրդական մասսաներին խարած լինելու համար շարունակում էին իրենց դեմագոգիան մանավանդ ագրարային հարցում և ֆեռդալական մնացորդների դեմ գյուղացիության ռեվոլյուցիոն ելույթները կանխած լինելու համար դիմաւմ էին կիսատպուատ ռեֆորմների։ Կոնտրուլյուցիոն կուսակցությունների այդ կիսատպուատ ռեֆորմները, հասկանալի է, ռեվոլյուցիոն արմատական միջոցառումներ չեին։ Դրանք ո՞չ լիակատար բավարարություն էին տվել գյուղացիության արդար պահանջներին, ոչ էլ լրիվ արմատախիլ արել ֆեռդալական տարրերի մնացորդներին։ Ավելի ճիշտը՝ հողազուրկ գյուղացուն հուսախար էին արել, իսկ հողատիրոջը՝ գրգռել շոշնացնելով և գյուղական միջավայրից Հեռացնելով նրան։ Թուրքական սկսված արշավանքի ստեղծած խուճապային խառնակ իրադրության մեջ գրգռված, բայց շեղորդացված հողատերերը գլուխ էին բարձրացրել և անհամբեր սպասում էին թուրքերի գալուն, որ վրեժխնդիր լինեին։ Մ. Ղ.-ն իր վերոհիշյալ գրքում գրում է.

«Անդրկովկասյան սեյմի մարտի 7-ի հողային ռեֆորմը հիմնվին (ՏԻԸ) խորտակեց շրջանիս ճորտատիրական կարգերի մնացորդները։ Հողն անցավ իր բնական տերերին՝ գյուղացիությանը»։

Ահա թե ինչու կոռու սնանկ ու բարոյադերծ թավադները, զգալով վերաճառ վտանգի հետևանքները, օգտվելով քաղաքական խառնակ մոմենտից, աշխատում են, զանազան սուսու պատիր միջոցներով և պրովոկացիոն ու շինծու լուրերով, ետ խլել գյուղացիությունից հողը և վերականգնել իրենց դասակարգային իրավունքներն ու արտոնությունները։

1918 թ. ընթացքում, նամանավանդ թուրքական տիրապետության օրերում, մեր թավադները՝ մղարթեցի Մոսնանց վասիլը, իգահատցի Շահվերդյանները, արտվեցի Քալան-

թարովները, Պավլե աղան, Կտեանի «Թագուհին»— տիկին Խան-Աղյան, դսեղցի Սոսին և սրանց սև բլոկը հողը ետ խըլու, գյուղացիությանը դարձյալ ճորտացնելու համար, ինչ դավադրություն ասես, որ չեն նյութել, ինչ կլյաւուզնի գործ ասես, որ չեն ստեղծել, ինչ ինտրիգներ ասես, որ չեն հնարել...

Սոսին և գյուղի «աղսախկալները» աղ ու հացով և արևելյան շողոքորթությամբ դիմավորեցին թուրք ասկյարներին։ Այդ օրվանից դսեղցի Սոսին դառավ թուրք «փաշաների» աշքի լուսը և միակ խորհրդատուն։

Սոսին օգտվելով թուրքերի տրամադրությունից և իր գիրքց՝ զբաղվեց մատնությամբ ու շարախոսությամբ։ Սոաշին դավը նյութվեց կոռուտի դեմ։ Մի հարմար օր, Սոսի էֆենդին, մի խումբ ասկյարներով հասնելով Սոթա սարը՝ պաշարեց լոռուտեցոց բինաները՝ սարսափահար անելով միամիտ սարվորներին։ Թուրքերը գերեցին 15—20 երիտասարդ և կապկապած տարան «փաշի» մոտ... Վերջինս գերիներին իրու փրկանք՝ կոռուտից պահանջեց 15 հրացան։ Գյուղը կատարեց «փաշի» հրամանը, ներկայացուցիչները զենքը հասցրին Դսեղ. պատանդները շարձակվեցին։ Մի քանի օրից հետո «փաշան» հայտնեց լոռուտցիներին։

— Գյուղը պիտի տա Սոսի աղայի արենդը, հակառակ դեպքում տղերանց կսպանեմ կամ կուղարկեմ Գյումրի՝ մեծ փաշայի մոտ։

Գյուղացիները, հասկանալով թե շան գլուխը ուր է թաղված, ընկնում են «փաշի» ոտն ու աղերսում, որ գործը մի կերպ վերացնի... փաշայի միջնորդությամբ, Սոսին ստանում է լոռուտցիներից սարի արենդը...»

— Հմի կորեք,— ասում է թավադը,— ո՞ւմ մերը լաց էլավ։ Խի՞ էիք ինձ վրա ձիավորվել, զորություն անում։ Դուք հենց կարծում էիք ձեր հեղափոխությունը էստի՝ էլ քոմակ կգա։ Գնացեք, ուադ ըլլեք ու փառք տվեք ձեր փայ սաստծուն, որ զիմներդ տեղը մնացին» (նույն տեղը, էջ 73—75)։

Մարտի 7-ի հողային ռեֆորմն իհարկե հիմնվին շառտակեց ճորտատիրական կարգերի վերջին ներկայացուցիչնե-

րին, որոնք մնացին գյուղում, իրենց կողմնակիցների և իրենց ազդեցության տակ գտնվողների միջոցով, օգտվելով իշխանության ոչ թե թուրությունից, այլ կատարյալ բացակայությունից, ինչպես նաև թուրքական արշավանքի ստեղծած խուճապային խառնակ դրությունից, անարգել քայլայում էին ինքնապաշտպանության գործը և նպաստում թուրքերի առաջնապահմանը:

Վրաց մենշեկիները Բորչալվի կողմից Թիֆլիսն ապահոված լինելու համար զենքի և պարենամթերքի պահեստները լայնորեն բաց էին արել Հովհաննես Թումանյանի և Փիլիպոս Վարդապարյանի առաջ, որոնք ստանձնել էին լոռեցիների զնդի կազմակերպումը: Սակայն ճորտատերերի վարպետ ագիտացիան անմարտունակ էր դարձրել լոռեցիները գունդը: Ամենակրիտիկական օրերին Թումանյանը եկավ Ղարաբիլիսա, կովի հորդոր կարդաց իր հայրենակիցներին, բայց նրա ջանքերն ու կոչերն ապարդյուն անցան. ապա անցավ իր հայրենի Գունդը՝ Անդրանիկի մոտ: Անդրանիկը, որն սկզբնապես որոշել էր անառիկ կոռվա լեռնանցքները բռնել և ամրանալ այնտեղ, հուսախար էր եղել մեծ բանաստեղծի նման՝ այնքան զորեղ էր նարտատերերի հակառակ ագիտացիան:

Այս տգեղ երեսությը մենք նկատում ենք ոչ միայն Լոռիում, այլև Փամբակում: Ապրիլի սկզբից Սարիղամիշից և այլ վայրերից թուրք գերի ասքերներին, թվով 2000 հոգի, ներկալել էին Ղարաբիլիսայում: Ալեքպոլի անկումից հետո գեն. Արեշովը դասալքել ու փախել էր Թիֆլիս: Հայ զորքը նահանջել էր Դիլիջան և թուրք ասքերներին այլևս պահելու տերիտորիալ հնարավորություն շռնենալու պատճառով առանց Հոկողության թողել էր Ղարաբիլիսայում: Քաղաքի կապիտուլյանտական տարրերը, որոնք քաղաքն առանց կովով թուրքերի ողորմածությանը հանձնելու որոշում էին կայացրել, նախքան իրենց պատվիրակությունը Համամլու՝ թուրքերի փաշայի մոտ ուղարկելը՝ վերջինիս սիրտը շահած լինելու համար երկու հազար թուրք գերիներին շտապ ուղարկում են Համամլու: Էսադ փաշան այդ «նվերով» անմիջապես համա-

լրում է իր շարքերը՝ տեղանքին ու իրադրությանը իրաղեկ թարմ ուժերով: Կապիտուլյանտական տարրերը փաշայի ողորմածությունը հայցող իրենց պատվիրակությունը շլուծարեցին նաև բորբոքված սկզբում հաջող կովի մի քանի օրերին՝ փնքնապաշտպանության գործի հաջողության նկատմամբ նախապես թերահավատություն սերմանելով ժողովրդի մեջ: Մայիսի 28-ի երեկոյան նորից հանդես եկավ հաշտարար պատվիրակության նախագահ «կոմիտայր» Արսենանց Վանոն, որը գերմանացի մի լեյտենանտի, երկաթուղու պետ ինժեներ Մյաստեղովի, խճուղային ճանապարհների պետ Մուտափի, Ղարաբիլիսայի բնակիչներ Սարգիս Ղարաբեշիշյանի, Սարգիս Խանզադյանի, Ռշլաղեցի Գրիշա աղայի, Հաջիղարայի, Դարրազի և Բզովդալի աղսախկաների հետ խոնարհաբար ներկայացավ Զավիդ փաշային:

Այսպիսով, Ղարաբիլիսայի տիսուր պարտության գլխավոր պատճառներից առաջինն այն էր, որ կողի-Փամբակում հնարավոր շեղավ համաժողովրդական պատերազմ ծավալել: Այն ժամանակ, երբ Արարատյան դաշտում և Ապարանում կենաց և մահու կովի դուրս եկավ ամբողջ ժողովուրդը, բոլոր դասակարգերն ու բոլոր կուսակցությունները, և Սարդարապատի ու Բաշ-Ապարանի ճակատներում աշխարհագորայինները թվով միշտ գերազանցում էին կադրային զորքին, Ղարաբիլիսայի ճակատում աշխարհագորայինները կազմում էին կովողների ոչ ավելի, քան 10 տոկոսը: Իգիթներ Գարասը, Հակոբը, Ջելիմ-Խանը, Մուկուչը, Արթիկը գրեթե միայնակ մարդիկ էին, Արմենի և Տեր-Խորենի խմբերը շատ սակավամարդ էին: Բուն ղարաբիլիսեցիները մայիսի 24-ին ամենաեն էլ խանդավառությամբ ըլնդունեցին հայ զորքերի վերադարձ Դիլիջանից, շխանդավառվեցին նրա օրինակով և ոչ միայն կովի շգնացին, այլև շկազմակերպեցին այն հուսադրող և հուղող օգնությունը, որ Արարատյան դաշտը և Երևանը ցույց տվին Սարդարապատի կովողներին: Ավելի՞ն, Փամբակի և Լոռվա շատ վայրերում շորագալցիներին հետեւելով, հարազատորեն չէին վարփում կովող հայ զորքի հետ:

Բաշ-Ապարանի ճակատում, որտեղ ոչ մի կադրային հայ

զորք չկար, դիմադրությունն, ինչպես տրդեն ասել ենք, սկսել էին Քյուլուզա գյուղը հավաքված աշխարհագորայինները՝ տեղացիներ կոմունիստ Դավիթ Մելիքսեթյանի և Մատթեոս Հովհաննիսյանի ղեկավարությամբ։ Մայիսի 23-ին իրենց խմբերով նրանց օգնության են հասնում Արսեն աղան (Տեր-Պողոսյանը) և Սեթոն (Սեդրակ Ջալալյանը)։ Նույն օրը հնապավոր է լինում Սարդարապատի ճակատից վերցնել 6-րդ մարտունակ գունդը։ Կորուկովի հեծյալ պարտիզանական գունդը, բուլանըցի Մուրադի և բաշգյառնեցի Մակեդոնի խմբերը, ընդհանուր գումարով 1500—1600 սվին, ինչպես նաև կապիտան Սակելյարիի մարտկոցը և Դրոյի հրամանատարությամբ ուղարկել Բաշ-Ապարանի ճակատը։ Դրոն ոչ միայն իր պաշտոնով բարձր էր գեն։ Սիլիկովից (նա ոչ թե միայն Երևանի զորաբաժնի, այլև հայկական բոլոր զինված ուժերի գլխավոր հրամանատար գեն։ Նզարեքովի շտաբին կից հայկական բոլոր զինված ուժերի գլխավոր կոմիսարն էր), այլև դաշնակցության ազգու գեմքերից մեկը։ Նրան հաջողվում է դաշնակցական գրեթե բոլոր խմբերը տանել Բաշ-Ապարանի ճակատը։ Բացի վերոհիշյալ խմբերից, այդ ճակատն են գնում գանձակեցի Զեմլյակի (Նանումյանի), զանգեզուրցի Յապոնի, բաշգյառնեցիներ Մարտիրոսի, Քաշաւ Ղազարի, սասունցի Մանուկի, մակվեցի Մեսրոպի (Հինքայազետցիների) և այլոց խմբերը։ Դրանից առաջ Ալեքսանդրապոլում Նժե՞՞ը փորձել էր զորամաս կազմակերպել եղդիներից։ Նրան այդ բանը շեր հաջողվել։ Սակայն Դրոյին հաջողվում է զենքի ընդունակ բոլոր եղդիներին ոտքի հանել նրանց ճանաշված ղեկավար Ջհանգիր աղայի հրամանատարությամբ։ Այդ ժամանակ Արագածի երկու լանջերին և Արարատյան դաշտումն էին գտնվում երեք տարի առաջ Վանի վիլայեթից գաղթած Ջհանգիր աղայի եղդիները, որոնք կարող էին տալ մինչև 1500 կովող։ Այդ վայրերում էին գտնվում նաև Մինագի ոռուահպատակ եղդիները՝ հայկական կրթություն ստացած ճեմարանավարտ Ռւսուբեյի ղեկավարությամբ։ Կարսից հայերի հետ նահանջել և Արագածի հյուսիսային լանջերն էին ապաստանել Կարսի եղդիները, որոնք Ռւսուբեյի հետ

միասին կարող էին տալ մի քանի հարյուր կողմող։ Բաշ-Ապարանի կոիվների օրերին Ջհանգիր աղան միավորում է բուլոր եղդիներին և շուրջ 1500 հեծյալ ու հետևակ կըռվողներով մասնակցում է Բաշ-Ապարանի կոիվներին։ Խեղախ գնդապետ Ջալինովին հաջողվում է հավաքել իր ցրիկ եկած գունդը և 300 ձիավորով Եղվարդից անցնել Բաշ-Ապարան։ Վերջին օրերին Սարդարապատի ճակատից Ապարան է ուղարկվում նաև Իգիթիսանյանի մարտկոցը։ Հաշվելով կադրային զորքը, խմբերը, եղդիները և աշխարհազորայինները։ Բաշ-Ապարանի ճակատում կովի էր գուրս եկել ավելի քան վեց հազար ռազմիկ։ Այդ օրերի համար դա պատկառելի թիվ էր։ Հիշենք, որ դա առաջին համաշխարհային պատերազմի վերջին տարին էր և ամենուրեք, թե՛ արևմուտքի և թե՛ արևելքի բոլոր ռազմաճակատներում, խիստ նոսրացել էին կըռվողների շարքերը։

Առաջին օրերի մասնակի անհաջողություններից հետո, մայիսի 27-ին, երբ էսադ փաշան իր զորքի մի մասը ուղարկել էր հարձակման անցած Ղարաբիլիսայի հայ զորքի վրա, դրությունը փոխվում է հօգուտ հայ զորքի։ Ստացած նորանոր համալրումներով ուժեղացած Ապարանի ռազմիկներն ընդինուր հարձակման են անցնում և տաճիկներին դուրքում գրաված բոլոր զիրքերից։ Մայիսի 28-ին զեռ շարունակվում էին համառ մարտերը, երբ հայ զորքը կորցնում է սեբաստացի Ապարիկին և գանձակեցի Զեմլյակին, սակայն մայիսի 29-ին թուրքերն արդեն զիմովին շախչախված էին և խուճապահար փախչում էին զեպի Համամլու և Ալեքսանդրապոլ։ Հայ զորքը հաղթական առաջ է գնում և գրավում Դանագիրմազի իշխող բարձունքները։ Գրավում է ու կանգ առնում, որովհետև խուճապահար փախչող թուրքերը սպիտակ դրոշ պարզած պարլամենտյոր են ուղարկում Դրոյի մոտ և հայտնում, որ Բաթումում իրեն թե զինադադար է կնքվել։ Դրոն ընդունում է տաճիկների առաջարկությունը, դադարեցնում է նրանց հետապնդելը, հնարավորություն ընձեռելով, որ իր դեմ կովող էսադ փաշայի զորքերն օգնության գնան Ջավիդ փա-

շային և շարունակեն Ղարաբիլիսայում պարտված հայ զորքի բեկորների ջախջախումը կոռվա ձորում:

Ինչպես էտեսները ստորև ավելի հանգամանորեն, մայիսի 29-ին ոչ ոք ոչ մի դինադադար չէր կնքել, այդ օրը սոսկ լրանում էր մայիսի 26-ին Բաթումում Խալիլ բեյի ներկայացրած երօրյա վերջնագրի ժամկետը և հայ պատվիրակները վերջնագիրն ընդունելու նախնական համաձայնություն էին տվել: Այդ նախնական համաձայնության հիման վրա պայմանագիրն ստորագրվեց հունիսի 4-ին:

Սակայն, նախ, մայիսի 29-ին Բաթումում տված համաձայնության լուրը երբեք չէր կարող նույն օրը հասնել Դանագիրմաղի լեռները, երկրորդ, ամենագլխավորը, զինադադարը կնքվել էր ավելի քան մեկ ամիս առաջ, ապրիլի 25-ին, որը մայիսի 15-ին միակողմանի խախտել էին իրենք՝ թուրքերը, անակնկալ հարձակում գործելով Ալեքսանդրապոլի վրա: Զինադադար էին ուղում, թող իրենք ետ քաշվեին Առփալայի բնագիծը: Սակայն այժմ նրանք սպիտակ գրոշով և թղթի կտորով զինադադար էին հաստատում միայն այն ճակատներում, որտեղ իրենց գործերը վատ էին, բայց զինադադար չէին հաստատում այն միակ ճակատում, որտեղ իրենց գործերը հաջող էին ընթանում:

«Հիմա, — գրում էր արևմտահայ դաշնակցականների իրեանի օրդան «Աշխատանքը», — երբ ընկճված է թշնամին ու 22մած, երբ քիչ են իր ուժերը, իսկ մենք հաղթական ենք ու ոգևորված և հետզետե կստվարանան մեր մարտիկներու ցանցառ շարքերը, պետք է շարունակենք կոխվը նոր թափով ու համառորեն» (1918 թ. մայիսի 29):

Սա դաշնակցության գրավոր խոսքն է:

Սակայն նույն այդ օրը Դրոն Բաշ-Ապարանի ուղմանակատում, որ հայ ժողովրդի ինքնապաշտպանության կենտրոնն էր դարձել պատերազմական նոր իրադրության մեջ, չուզենալով զրկված լինել միստիկ Զավրիկի և մյուս վարժապետների դափնիներից, զինադադարի ընդունման գործով ասում է, թե երբ թշնամին ընկճված է ու 22մած, իսկ մենք հաղթական ենք, ապա պետք է մարդասիրաբար դադարեց-

նենք մեր զարկը, որ հայառակորդը հնարավորություն ստանա ուշքի գալու: Նման ուղմավարության հետևանքով ո՛չ միայն վերջնական ջախջախման ենթարկվեց Ղարաբիլիսայի հայ զորքը, այլև ապարդյուն անցան Բաշ-Ապարանի և Սարդարապատի այնքան փայլուն հաղթանակները:

Բաթումի բանակցություններում թուրքական պատվիրակության նախագահ Խալիլ բեյը Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատներում իրենց կրած ջախջախից պարտության մասին իր հուշերում գրել է.

«Իբրև կառավարական պատվիրակ Պաթում գացի, զինվորական պատվիրակն ալ վեհիպ փաշան էր... բանակցությունները կշարունակվեին՝ երբ մեր բանակը կովկի բռնվեցավ հայերու հետ. սաստիկ պատերազմ մը սկսավ. հայերը կանոնավոր զորագույն ունեին... պատերազմի երրորդ օրը, վեհիպ փաշա ըսավ, — ես Ղարս կերթամ՝ Յաղուր Շեվքեթ (կարդա՝ Շեվքի) փաշան հեռաձայնեց, նեղը մնացեր է:

Հինգերուր օրը վերադարձավ. շատ զղային էր, շփոթած: — «Աման, Հալիլ պեյ, ըսավ ինձի, ո՞ւ են սա հայ պատվիրակները, վերջացնենք և հաշտություն կենենք: «Հերթիները» ուշ կկովին, ձեռքս 12.000 հոգի ունիմ միայն. ետիս բնակ պահեստի ուժ չունիմ, Մեհմետը (այսինքն՝ թուրք ասերը. — Հ. Թ.) երե նահանջ ընե, մեր շունչը երգում կառնինք»:

Զինքը հանգստացուցի և ըսի.

— Փաշաս, այս վիճակով եթե հայերուն դեմ ելլես, հաշտություն լրվար: Գնա լվացվե և հանգչե քիչ մը: Իսկ վեհիպ փաշա՝ հետագային Եգիպտոսին մեջ ունեցած իր խոստովանությամբ հայտնած է թե՝ «Կպատրաստվեինք ետքաշվիլ, լրել Ալեքսանդրապոլը, նույնիսկ Ղարսը հայ ժողովրդի դիմադրության առաջ» (Տեղակալ Մ. Ավետյան, «Հուշամատյան և զոր. Անդրանիկ», Փարիզ, 1954 թ., էջ 193):

Այսպիսով հայ ժողովուրդը հերոսական ջանքերով և արյան գնով նվաճել էր հաղթանակը. մնում էր, որ մենշեկիների և մուսավաթականների հետ դաշն կնքելով ըստ էության և պատմականորեն թուրքերի կողմն անցած դաշնակցականները վիժեցնեին արդեն ձեռք բերված հաղթա-

նակը: Եվ Դրոն առաջինը ծախեց Սարդարապատի և Բաշ-Ապարանի փայլուն հաղթանակները:

Դրոյի այս քայլը ոչ թե մենք ենք այսօր դավաճանություն անվանում, այլ այդ ժամանակ արևմտահայ դաշնակ-ցականների երևանի օրգանն այն որակելով «Մեծ դավաճա-նություն», ինչպես ասում են՝ սկզբ սպիտակի վրա գրել է.

«Մենք այլևս ժառանգը չենք մեր հին, խնկելի հերոսնե-րուն, մեր հեղափոխական նախորդ սերունդին» («Աշխա-տանք», 1918 թ. հունիսի 8):

6. ԲԱԹՈՒՄԻ «ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Տրապիզոնի բանակցությունների (1918 թ. մարտի 14-ից ապրիլի 16-ը) անհաջողությունից հետո Բաթու-մում մայիսի 11-ից հաշտության նոր բանակցություններ սկսվեցին Թուրքիայի և Անդրկովկասյան կոալիցիոն կառա-վարության միջև:

Տիրահռչակ Ակակի Զիսենկելին երկու դեպքում էլ զրլ-իսավորում էր անդրկովկասյան պատվիրակությունը: Երկու բանակցությունների արանքում (ապրիլի 16-ից մինչև մայիսի 11-ը) Զիսենկելին նորից շարունակում էր իր թրքոֆիլ քա-ղաքականությունը: Այդ միջոցին նա ջլատել էր Բաթումի պաշտպանությունը և քաղաքը հանձնել տվել թուրքերին (ապրիլի 15-ին): Այս բացահայտ դավաճանությունը հար-կավոր էր «Ճաղկել», որովհետև վրաց մենշևիկները դեռ կազմակերպչորեն չեին անջատվել ուստական մենշևիկներից, և նրանց շարքերում, վրացիներից բացի, մեխանիկորեն մնա-ցել էին ուստաներ և հայեր, ինչպես, օրինակ, Արշակ Զուրաբ-յանը, Գևորգ Ղարաջյանը (Արկոմեդը), Արամայիս Երզնկյա-նը և ուրիշներ: Նոյ Ժորդանիան, որ վրաց մենշևիկների պա-րագուխն էր, հրապարակով «լվաց» Ակակի Զիսենկելուն, սակայն, մի քանի օր անց, 1918 թվականի ապրիլի 22-ին, նրա հոգ սանկցիայով Գեգեշկորին հրաժարվեց Անդրկովկասի կոալիցիոն կառավարության վարչապետի պոստից, և կազմ-վեց նոր կառավարություն «Ճաղկված» Ակակի Զիսենկելու

նախագահությամբ: Այսպիսով, եթե Գեղեցկորու նախագահության օրոք (1917 թ. նոյեմբերի 24-ից մինչև 1918 թ. ապրիլի 22-ը) «վրացական-մուսուլմանական կոնտրուլուցիոն ազնվականական բլոկի ոգին Ակակի Զիսենկելին» պետք է գործեր իրեւ թե խուսանավելով, որովհետև ժորդանիան ու Գեղեցկորին իրեւ թե հավատարիմ էին մնում «ոռուսական ռեռլյուցիային» և Անդրկովկասը դիտում էին «ռուսական դեմոկրատիայի անբաժան մասը», ապա 1918 թվականի ապրիլի 22-ից «վրացական-մուսուլմանական կոնտրուլյուցիոն ազնվականական բլոկն» ու նրա ոգին հանդիսացնդ Զիսենկելին այլևս հարկադրված չէին խուսանավելով գործելու: Թուրքերի ճնշմամբ Անդրկովկասն այդ օրը հայտարարվել էր Ռուսաստանից անջատված, և անջատված Անդրկովկասի ղեկը հանձնվել էր Ակակի Զիսենկելուն:

Ակակի Զիսենկելին իր կարինետի մեջ էական փոփոխություններ մտցրեց: Մուսավաթականներն ու դաշնակցականները թեև ստացան միևնույն մինիստրական պոստերը, սակայն էսենները գուրս մնացին նրա կարինետից և Դոնսկուի փոխարքն զինվորական մինիստր նշանակվեց զինվորական գործերի հետ առնչություն չունեցող ոմն Գեորգան: Անհարմար էր այդ պուտը տալ զինվորական գործերի հետ սերտ առնչություն ունեցող գեն. Օդիշելիձենին, որը թեև խիստացնկալի թեկնածուն էր Զիսենկելու համար, բայց խայտառակված էր որպես բացահայտ թքովիլ: Դաշնակցականներին խարելն, ինարկե, դժվար չէր, մանավանդ երբ նրանք նախատնս խարված էին կամ թե իրենց դրել էին պերմանենտ խարվողի վիճակի մեջ: Սակայն անիրազեկ և անկարող մինիստրի իրազեկ և կարող տեղակալն արդեն նշանակում էր ոչ միայն մինիստր, այլև մինիստրից մի բան էլ ավելի: Զիսենկելու կարինետում գեն. Օդիշելիձեն կարգվեց զինվորական մինիստրի տեղակալ: Այսպիսով, Զիսենկելու, այսինքն՝ մենշևիկների և մուսավաթականների կոնտրուլուցիոն բլոկի, բացահայտ տիրապետության առաջին գործը եղավ Կարսի հանձնումը թուրքերին: Կարսը գրավելով և Արփաշայ դուրս գալով՝ թուրքերն ամբողջ 20 օր, ապրիլի 25-ից

մինչև մայիսի 15-ը, — եթե Հաշվենք Օրդոֆի Կոմիլը, — տեղից շարժվեցին, խարվելու տրամադրի միամիտներին հավաստիցնելով, որ նրանց ուղածը թրեստի պայմանագրից ավելին չէր, որ նրանք ամենակին էլ չեն հետապնդում ինչ-որ պանթուրքիստական նվաճողական պլաններ և նրանց չի հրապուրում թաքվի նավթը:

Մեկ անգամ արդեն կնքված պայմանագրի թե՛ ոգում և թե՛ տառին «ազնվորնեն» հավատարիմ մնալու նման «հաշտ» պատրաստակամության մեջ մայիսի 11-ին թաթումում վերսկսվեցին հաշտության բանակցությունները: Անդրկովկասյան պատվիրակությունը, այս անգամ արդեն վարչապետի լիազորություններով, գլխավորում էր Զիսենկելին: Դաշնակցությունից պատվիրակության մեջ մտնում էին Ա. Խատիսովը և Հովհաննեսին:

Պատվիրակության առաջին հայ անդամը նորունծա դաշնակցական էր: Դաշնակցության շեֆերից մի քանիսը նրան չէին սիրում և չէին վստահում, սակայն, ինչպես ասում է Լեռն, «Մարդ չկար կարենոր, պատասխանատու պաշտոնների համար, և ահա կախվում էին այդ մարդու փեշերից» («Անցալից», էջ 357—358): Խատիսովը, ոռուսերենին հմուտ լինելուց բացի, կարողանում էր սեթենեթել 6—7 լեզվով: Լեռն էլ է ընդգծում, որ նա «խոսելու գեղեցիկ ընդունակություն ուներ, գործելու եռանդով լցված էր», «բայց անսկզբունք, պատեհական, կարիերիստ» լինելը «սնամեջ էր դարձնում այդ ընդունակությունը» (նույն տեղը): Խատիսովի նման օդիող տիպի համար Լեռյի այս որակումները շատ մեղմ են: Նրան լավ ճանաչելու համար հարկ չկա հիշեցնելու նրա խայտառակ արարքը 1920 թվականի գեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում, որ իր ժամանակին մերկացվել է սովորական մամուլում, բավական է բերել միմիայն մեկ տող նրա պոլիսյան շրջանի՝ սեփական ձեռքով գրած օրագրից: Էրզրումը, Կարսը, Ալեքսանդրապոլը դավաճանորեն թուրքերին հանձնելուց, Սարգսարապատի և Բաշ-Ապարանի ժողովրդական հաղթանակները ծախելուց հետո, երբ թուրք բանակը նստել էր Երևանի դռանը և հայ ժողովուրդը սովոր մեռնում էր աղքատիկ Կոտայ-

բում ու Սևանի ավագանում իրար վրա կուտակված, Խատիսյանն ու Ահարոնյանը Պոլիս էին գնացել Էնվերի ողորմածությունը հայցելու: Հայ ժողովուրդը թեև մեռնում էր Երևանում ու նրա շուրջը, սակայն Բաքուն դեռ չէր ընկել: Էնվերն ուզում էր ճերոս քաղաքն էլ հեշտությամբ առնել հայրին խարելու միջոցով և անձամբ, իր ապարանքում ճաշի էր հրավիրում ու զինակցություն առաջարկում Խատիսովին: «Մտերմական» ճաշից մեկ օր հետո զինակցության հարցի շուրջը իր օրագրում նշումներ կատարելիս Խատիսովը անմիջապես գրում է:

«Էնվերը զարմանալի գեղեցիկ կահավորություն ունի: Արևելյան ճաշակով դահլիճ («Կարմեն»), մոմեր...» (Հայկ ՍՍԾ պետարխիվ, ֆոնդ 68/200, գործ 27, թիրթ 118):

Լավ ճանաչելով այս էսթետին, զաշնակցությունը նրա հետ միասին Բաթում էր ուղարկել անձնապես անբասիր, բայց հույժ միամիտ մի մարդու:

Պատվիրակության ներկրորդ հայ անդամի՝ Հովհաննեսի պատվիրակության մասին ճիշտ զաղափար կազմելու համար բավական է ասել, որ նա թեև մյուս շատ շեֆերի նման զրազմունքով վարժապետ չէր, այլ ճարտարապետ, սակայն նա ոչ միայն որպես դիվանագետ, այլև որպես քաղաքացի ու հասարակական-քաղաքական գործիչ, վարժապետականության ամենահիպիկ ներկայացուցիչն էր: Հայ միլիոնատեր Բուլգարովի դրամով նա պրոլետարական Բաքվում կառուցել էր փառահեղ տաճար, իսկ նահապետական Վանում՝ մանր առետրականների աշխատանքային պարհակով՝ ժապավարյան սոցիալիզմի ակումբ՝ «Աշխատանքի տուն»: Ցարիզմի կողմից դաշնակցության դեմ սկսված հայածանքի պատճառով նա կիսատ էր թողել տաճարի կառուցումը Բաքվում և փախել Վան, որտեղ այդ ժամանակ, ինչպես բովանդակ Թուրքիայում, զաշնակցականներն ու ներիտասարդ թուրքերը սիրաբանում էին իրար հետ: 1914 թվականին, երբ զաշնակցականները ոչ միայն ներման էին արժանացել ցարիզմի կողմից, այլև իրենց դարձրել ցարիզմի ուղմա-իմպերիալիստական մեքենայի մի պնդողակը, Հովհաննեսի պատվիրակության մեջ այդպիսի կայուն անձնավորությունը բաթում ուղարկել Ս. Վրացյանին, որի հույժ սահմանափակ կարողությունը մենք տեսանք Սարիղամիշում:

Թուրքական պատվիրակության նախագահ Խալիլ բեյը և նրա տեղակալ՝ կովկասյան ճակատի ընդհանուր հրամանատար Փերիկ Վեհիրը նոր պրետենզիաներ են ներկայացնում Բաթումում: Նրանք ասում են, որ Բաթումն ու Կարսը մեզ վերադարձված է Բրիստով, սակայն դուք շընդունեցիք Բրիստը և մենք 1877—78 թվականների սահմանը դուրս գալու համար հարկադրված եղանք արյուն թափել, իսկ թափված արյունը հատուցում է պահանջում: Թուրքերն ըս-

կրդրում զգուշորին շեն դիպչում երկաթուղու վրացական գծամասերին, վրացական ազգային հողերին, որպեսզի կատարյալ դարձնեին հայերի մնակությունը:

Ի դեպ, երբ ապրիլի 16-ին Ակ. Զիսենկելին Տրապիզոնից ետ էր վերադարձել, ապա անդրկովկասյան պատվիրակության մուսավաթիստ անդամ Մ. Գ. Հաջինսկին ինքնակամ մնացել էր Տրապիզոնում և սեպարատ բանակցություններ վարել ինչպես Ռեռուֆ բեյի (Թուրքական պատվիրակության նախագահի), այնպես էլ այդ ժամանակ Տրապիզոն ժամանած էնվերի հետ: Աւշ վերադառնալով Թիֆլիս, Հաջինսկին Անդրկովկասյան սեյմի բոլոր մուսավաճական ֆրակցիաների համատեղ նիստում զեկուցում է տալիս իր սեպարատ բանակցությունների մասին: Թուրքերը Բաթումն արդեն գրավել էին ապրիլի 14—15-ին, որտեղ կամովին գերի էին հանձնվել Բաթումի բերդի պարետ գեն. Գեղելվանովն իր շտաբով և վրացական առաջին դիվիզիայի հրամանատար գեն. Արթմելաձեն նույնպես իր շտաբի հետ միասին: Բաթումի անկումը և վրացական թավադ գեներալների դավաճանությունը՝ վատ էր անդրադարձել մենշևիկների վրա, որոնք մինչև այդ կոփվը շարունակելու տրամադրություն էին ցույց տալիս: Հաջինսկին մենշևիկների և մուսավաթականների դաշինքը պահպանած լինելու համար խորհուրդ էր տվել Բաթումը վերադարձնել վրացիներին: «Տրապիզոնի կոնֆերանսի վերջանալուց հետո, — զեկուցում է Հաջինսկին սեյմի մուսավաճական ֆրակցիաների նիստում, — կարևոր իրադարձություն հանդիսացավ էնվեր փաշայի ժամանումը Տրապիզոն և Բաթում, ու մեր տեսակցությունը նրա հետ, որի ժամանակ մենք, ցանկանալով պահպանել թուրք և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը, ինչպես նաև ցանկանալով վրացիներին ետ պահել թուրքերի նկատմամբ այն թշնամական վերաբերմունքից, որին հետևում էին հայերը, — այս բանը մատնացույց արագ նաև էնվեր փաշան, — մի վերջին փորձ կատարեցինք Բաթումի համար, բայց այդ փորձը հաջողությամբ չպսակվեց: Էնվեր փաշան ընդգծեց Թուրքիայի անկապտելի և մուսաստանի ամենադեմոկրատական կառավա-

րության կողմից ճանաչված իրավունքը Բաթումի նկատմամբ, նշեց թուրքերի և վրաց ժողովրդի դարավոր անկեղծ բարեկամությունը և ավելացրեց, որ հայերի անմիտ քաղաքանության ողբերգական վախճանը վրաց ժողովրդին ետ կպահի նման վերաբերմունքից դեպի Թուրքիան, որը ցանկանում է վրաստանի համար երաշխավորել ազատ գոյության բոլոր բարիքները և նրան դարձնել իր ամենահուսալի հարևանությին» (Ալ. Ստավրովսկի, „Զակավազյա ու Օկտյաբր“, Մոսկվա, 1925 թ., ստ. 34—35):

Մեր զլաւավոր թշնամին՝ Անգլիան, — ասում էին թուրքերը, — մտել է իրանական Ատրպատական և սպառնում է մեղ: Մենք պետք է Ալեքսանդրապոլ—Զուլֆա երկաթուղով զորք փոխադրենք այնտեղ: Զեզ համար է ձեռնտու, որ մեր մեծ ընդհարումը անգլիացիների հետ տեղի ունենա ոչ թե ձեր հողում, այլ նրանից դուրս: Սա այնպիսի «տրամարանական» պահանջ էր Քաջազնունի-Խատիսով-Վրացյան երրորդության համար, որ նրանք անմիջապես հավատում են թուրքերի «անկեղծությանը» և ճիգ են թափում, որ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդն էլ հավատա թուրքերի այդ հերթական «անկեղծությանը»: Նրանք ամեններն էլ հարց չեն տալիս ո՛չ իրենց, ոչ էլ ուրիշներին, որ թուրքերի համար շատ ավելի ենշտ էր Մյուրսել փաշայի բանակը Հին-Բայազետից ոտքով տանել սահմանակից Պարսկաստան, իան թե Կարսի բանակը՝ երկարուղով: Այնինչ նրանք Մյուրսել փաշայի բանակը բերել էին Սուրմալու՝ երեանի վրա, իսկ Կարսի բանակն ուզում էին իրեւ թե տանել Պարսկաստան:

Մայիսի 13-ին թուրքական պատվիրակությունը Բաթումում Ալեքսանդրապոլը գատարեկելու վերջնագիր է տալիս, ուակայն հատիսով-Քաջազնունի-Վրացյան երրորդությունը փորձ անգամ չի կատարում Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին, անգամ հենց Ալեքսանդրապոլին (հայ բանակին) օր առաջ հայտնելու թուրքերի այդ նոր վերջնագիրը: Թե պապանձումն մարգարեից ո՛ւմ օգուտ բերեց, մենք այդ արդեն գիտենք:

Արևմտահայ դաշնակցականները երեանում գեռ 1918 թվականի հունիսի 1-ին էին Քաջազնունուն և ընկերության անվանում «ղեկավարության պարտականություն և թյուրիմացության ունեցողներ» և գրում՝

«Սակայն և այնպես մեր գոյամարտն ա՛լ ավելի արդյունք կրնար տալ, եթե մենք ամբողջապես կտրվենք Թիֆլիսեն ու բանակցություններեն» («Աշխատանք», 1918 թ. հունիսի 1):

Անդրկովկասյան պատվիրակությունը 1918 թվականի մարտ ամսին Տրապիզոն մեկնեց որպես բանակցություններ վարող կողմ, սակայն նույն տարվա մայիսին Բաթում մեկնեց որպես ողորմածություն հայցող խնդրատու: Թուրքերի թե՛ ամբողջ պատմությունը և թե՛ նրանց դարավոր դաշտությունները հայ ժողովրդի նկատմամբ ասում են, որ նրանք ամենից առաջ առհասարակ անընդունակ էին որևէ ողորմածության, իսկ հայկական հարցում ամեննեին չէին կարող զիշել: Ալեքսանդրապոլի հետ գրավումից հետո նրանք այլևս հարկ չեն զգում դիմելու դիվանագիտական խուսանավունների և բացերաց ասում են այդ, սակայն հայ պատվիրակները զարմանալի անգիտություն ու կուրություն ցուցաբերելով, շարունակում են մնալ ողորմածություն հայցողի դերում:

Խալիլ բեյի վերջնագիրը հայ պատվիրակների կողմից մայիսի 29-ին ընդունվելուց հետո Բաթումում առաջինը դիվանագիտությունը մի կողմ դրած խոսում է Կովկասյան բանակի ընդհանուր հրամանատար ֆերիկ Վեհիր Մոհամեդը: Նա ասում է.

«Ճակատագիրը կը քշե Թուրքիան արևմուտքեն արևելք. մենք հեռացանք Բալկաններեն, կը հեռանանք նաև Ափրիկեն, բայց մենք պետք է տարածվենք դեպի արևելք, հոն է մեր արյունը, մեր կրոնը և լեզուն: Եվ ասիկա տարերային ձգողություն ունի: Մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքեստան և Ասրբեջան են: Մենք պետք է ճամրա ունենանք դեպի հոն: Եվ դուք՝ հայերդ կանգնած եք մեր այդ ճամրուն վրա: Պահանջելով վանը՝ դուք կը փակեք մեր ճամրան դեպի Պարսկաստան: Պահանջելով նախիջեանը ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզ իշնելու Քուրիտը»:

և երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալակը կը փակեն մեր ճամրան դեպի Ղաղախ ու Գանձակ: Դուք պետք է մեկ կողմ քաշվեք և մեզ ճամրա տաք: Ահա թե ուր է մեր հիմնական վեճը» (Ա. Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», էջ 70):

Ուղիղ Խատիսովի երեսին ասված այս խոսքերը մեկնաբանության կարիք չունեն: «Դուք պետք է մեկ կողմ քաշվեք», նշանակում է բնաջնջվեք ու այլևս գոյություն չունենաք:

1918 թվականի մայիսի 11-ից սկսած մինչև հոկտեմբերի 30-ը Բաթումը դառնում է պանթուրքիստների Մեքքան ու Մեղինան: Բոլոր մյուս ճակատներում պարտված և պարտվող թուրքերն ունեն միայն մեկ հաղթական ճակատ, որտեղ նրանք դեռևս կարող էին իրենց շատ հեռուն գնացող ծրագրերի մոտալուտ իրականացման հույսով ապրել, որտեղ նրանք կարող էին ոչ միայն իրենց կամքը թելադրել վրացիներին ու հայերին, այլև սիրալիր ընդունել Հյուսիսային Կովկասի լեռնականներին, լազերից ու աջարցիներից զորահավաք կատարել և տանել Բաքվի վրա: Մայիսի 11-ից մինչև հոկտեմբերի 30-ը Բաթում այցելեցին երիտասարդ թուրքերի եռապետության անդամ, ծովային մինիստր Զեմալ Փաշան, երիտասարդ թուրքերի պարտիայի գաղափարախոս զեկվար Բեհանդիին Շաքիրը, էնվերը և շատ ուրիշներ:

Ալեքսանդրապոլի անկումից 7 օր հետո, մայիսի 22-ին Բաթում է ժամանում Զեմալ Փաշան: Նույն օրը նա ընդունում է անդրկովկասյան խառն պատվիրակության անդամներին:

«Ճեմալ Փաշա...— Հաղորդում է Խատիսովը, — շատ շերմ թոնով մը ըսավ, որ ատրբեջանցիք թուրքերու սիրելի եղբայրներն են... դառնալով Զիենկելիին և վրացիներուն Ճեմալ Փաշա խոսեցավ նույնպես սիրալիր... դառնալով, վերջապես, ինձ, անոր դեմքը մոռյլվեցավ և թոնը չորցավ. ան կը խոսեր արդեն թույլ և դանդաղ ձայնով մը, աշքերը լեցուն էին դաժան ու մոռյլ գույներով: Ան ըսավ. «Թուրքերու վեճը հայերու հետ հին է, և հայերը ոչ մեկ քայլ կընեն

Հաշտվելու համար թուրքերու հետ: Այս ընթացքը պատճառ պիտի դառնա հայերու նոր գժբախտությանց... անոր ամեն մեկ խոսքին մեջ կզգացվեր, թե որպիսի ահավոր անդունդ մը կա թուրքերու ու հայերու միջև, թե որպիսի անհաղթելի ատելությամբ լեցված է փաշային սիրտը հանդեպ հայերուն, որոնք կանգնած էին թուրքերուն ճամբուն վրա:

Ճեմալ փաշային ես հանդիպեց ատկե ետք նաև Պոլսու մեջ ու այնտեղ զինք գտա ավելի մեղմ տրամադրության մեջ, բայց Բաթումի մեջ իր դիրքը բացարձակապես թշնամական և անհաշտ էր մեղի հանդեպ» (Ա. Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», էջ 59—60):

«Ներելով» Խատիսովի շատ պակասությունները, դաշնակցականները նրան հյուրընկալել էին իրենց շարքերը որպես «զիվանագիտության էքսպերտի»: Եվ առա այս էքսպերտը անգամ, սեփական աշքերով տեսնելով և սեփական ականջներով լսելով հանդերձ, չի հասկանում, թե ինչու ջեմալը Պոլսում, Բաթումի համեմատությամբ, «ավելի մեղմ տրամադրության մեջ» էր:

Սարդարապատից առաջ հայ պատվիրակների հետ Բաթումում շատ ավելի անկեղծորեն է խոսում Բեհանդղին Շաքիրը: Անկեղծ խոսելու համար նա հիմքեր ուներ: 1908—1909 թվականի թուրքական այսպես կոչված ունվարությանց առաջ, երբ երիտասարդ թուրքերը սոսկ օպոզիցիոն ու անլեգալ պարտիա էին, դաշնակցականները Փարիզում և այլուր շատ էին օգնել նրա պարտիական դորժունելությանը և անձամբ նրան:

Խոսելով թուրքական պետության առաջին դեմքի՝ էնվերի այդ օրերի հայացքների մասին, թուրքական պետության երկրորդ դեմքը՝ Թալիհաթը պարզ ու մեկին ասում է.

«Էնվեր փաշան կտտներ, որ քանի որ հայերը եղած են և պետք է միշտ ըլլան մեր թշնամիները ու հանգիստ շպիտի թողուն մեր Անատոլուի նահանգները, ավելի լավ է, որ հիմնապես բնաշնչվեն անոնք նաև Կովկասի մեջ, ինչպես եղած են թուրքիո մեջ: Իսկ փորբիկ Հայաստան մը Կովկասի

մեջ պատճառ պիտի դառնա, որ միշտ ձգտի ընդարձակելու իր սահմանները և դառնա հավիտենական վտանգ թուրքիո համար» («Հայ. Հանր. ծագ. ու զարգ.», էջ 72):

Անդամ հետազոտմ, օգոստոսի 31-ին, երբ արդին «անկախություն» էր շնորհվել հայերին, և «բարեկամ» Խալիլ փաշան «բարեկամական այցի» էր եկել Երևան, Զանգեզուրի մասին խոսելիս, ինչպես հաղորդում է Փաշաղնունին, «Խալիլ փաշան բերնից թողնելով հայտնից իր ունեցած մի շատ կարևոր հրամանը... թուրքիային անհրաժեշտ է միայն անմիջական շփում ունենալ Աղրբեջանի հետ: Թուրքերն ունեն իրենց նախկին հայրենիքի՝ թուրքականի հետ (տերիտորիալ կապը) վերականգնելու իդեան, իսկ այդ բանը կարելի է անել միայն ցեղակից Աղրբեջանի միջոցով» (Հայկ. ՍՍԾ պետարխիվ, ֆոնդ 222, գործ 1, թերթ 403):

Մայիսի 26-ին, ուազմաճակատի դրությանն անտեղյակ, եալիլ բեյն անդրկովկասյան պատվիրակության անդամներին ներկայացնում է եռօրյա ժամկետով իր վերջնագիրը: Թուրքերն իրենց վերջնագրում ասում էին, որ «Կովկասի դրությունն ավելի քան կրիտիկական է ու երկմիտ», որ «Հարցուր հազարավոր թուրքեր ու մուսուլմաններ Բաքվում և նրա շուրջը կրում են դաժան բանդիտների, այսպես կոշված ունվարությունների արյունալի լուծը», որ Կովկասում անիշխանություն է տիրում, որ օսմանյան կայսրությունը չի կարող անտարբեր մնալ և հարկադրված է ըստ հնարավորին շուտ իր գորքերը տանել Բաքվի վրա, և Անդրկովկասյան կառավարությունից պահանջում է ապահովել իր զորքերի փոխադրումը երկրամասի բոլոր երկաթուղիներով, ինչպես նաև պարենամթերք տրամադրել նրան:

Նույն օրը, մայիսի 26-ին անդրկովկասյան պատվիրակները շտապ վերադառնում են Թիֆլիս: Սակայն, ինչպես շարունակում է նկատել սովորական զինվորական պատմաբանը, Բաթումի կոնֆերանսի ժամանակ «վրացական մենշևիկներն ու գերմանացիները, իսկ նրանից էլ առաջ մուսավաթականներն ու թուրքերը դադունի բանակցություններ էին վարում և համաձայնագրեր կնքում: Այդ նշանակում էր Ան-

դըրկովկասյան ֆեղերացիայի լիակատար քայքալում» (Կամաշեա, ստ. 58): Այրվող նավից խուս տալու կարգով մենշևիկները 1918 թվականի մայիսի 26-ին վրաստանը հրոշակեցին անկախ՝ մտնելով Թերմանիայի հովանավորության տակ. 27-ին նույն բանն արին մուսավաթականները՝ մտնելով օսմանյան կայսրության հովանու տակ: Մայիսի 28-ին հայերը մնացին մենակ և Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը փաստորին պետք է գործեր անկախ, բայց անկախություն հոշակելու սիրտ արեց, որովհետև հաստատ չգիտեր, թե այդ բանի համար կունենա՞ր արդյոք թեկուղ շատ փոքր տերիտորիա: Թուրքիան Հայոց ազգային խորհրդին կտրել էր ամբողջ աշխարհից, Գանձակը՝ Բաքվից, Բորչալուն ու Ղաղախը՝ հայկական բնօրրանից: Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը չգիտեր, թե ինչ է տեղի ունենում բուն երկրի ներսում, որի գինված ուժերին այլևս չէր հավատում, ծողովրդական շարժմանը դասակարգայնուեն դեմ էր: (Այսեղ փակագծերի մեջ ասենք, որ մեկ տարի հետո, երբ իրադրությունը փոխվել էր, դաշնակցականներն իրենց քաղաքական լիակատար մեկուսացման օրը՝ մայիսի 28-ը, առանց խորշանքի անկախության օր հոչակեցին:)

Դաշնակցությունը, մեկ կողմ թողած նրա ճառերն ու հավաստիացումները, ընթանալով կոսմոպոլիտ հայ բուժության պոչից, Անդրկովկասի ստվարաթիվ հայ բնակչություն ունեցող կուտուր-վարչական և արդյունաբերական կենտրոններ Թիֆլիսն ու Բաքուն գերազանց էր եղևանից և, սմենեին շհետապնդելով հայկական անկախություն, անտես էր առել հայկական բնօրրանը:

«Հակառակ անոր, — զրում է նրանց գլխավոր օրդանը, — որ մոտ քառասուն տարիներե ի վեր գոյություն ունեն մեր մեջ կազմակերպված քաղաքական կուսակցություններ, որոնք ձգտեր են հայ ժողովրդի ազատության, միայն 1918 թ. է որ Հայաստանի անկախությունը առաջին անգամ որոշակես կշեշտվի հայ աշցի ցիտակցության մեջ, նախ, իջրկ քանդվեծ դեպքերու բերումով ստեղծված փաստ և ապա՝ 1919 թ. իրեկ հստակորեն ձևակերպված քաղաքական պահանջ հայ-

կական հանրապետությունը ստեղծող կուսակցության՝ Հ. Դ. Դաշնակցության ծրագրին մեջ» (Դարբինյան, «Հայ քաղաքական մտքի դեգերումները», «Հայրենիք», 1923, հունիս, № 9): Իրոք որ մտքի դեգերումները Դաշնակցությունը ուղարկած հանրապետություն ստեղծող կուսակցություն, իսկ այդ անկախ հանրապետությունը «իրեւ գահավեծ դեպքերու բերումով ստեղծված փաստ», մի փաստ, որի դեմ դաշնակցությունը բողոքել է 1918 թվականի մայիսի 26-ին: Փաշա հորջորջված Ռուբենը Դարբինյանի ոլորապտույտ ոճը չունի: Նա պարզ ու մեկին ասում է. «Մինչև 1917 թվականը ոչ մի հայ կուսակցություն (այսինքն՝ հատկապես դաշնակցությունը. — Հ. Թ.) բնավ չէ ձգտած Երևանյան նահանգը բաժանել Ռուսաստանից, և նրանից կազմել Հայաստան» («Հայ հեղափոխականի մը հիշատակները», հ. է, էջ 120): Ճիշտ է, դաշնակցությունը, շհետապնդելով հայկական անկախության գաղափարը, — որ հնարավոր կլիներ կենսագործել միմիայն հայ բնօրրանում, — ի ծնե հար ու հանգունակ կոսմոպոլիտ հայ բուրժուազիային, դեռ քաղաքական անկախություն չնըլվածած, կկուի նման հուտ առնելով իր բնից, ձուն միշտ էլ ածում ու թուխս էր դնում ուրիշների բներում:

Այս ամենը Վրացյանն, իհարկե, շատ լավ գիտե: Բայց նա ճգնում է ծրագրային հիմք տաս «գահավեծ դեպքերու բերումով ստեղծված փաստին»: «Սեյմի լուծման օրն իսկ, — գրում է նա իր ցիտաված գրքում, — մայիսի 26-ի երեկոյան տեղի ունեցավ Հ. Հ. Դաշնակցության Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի և թղային կոմիտեների արտակարդնիստ», որն անհրաժեշտ է գտնում հայկական անկախության հոչակումը՝ «դեպի ինքնորոշում, դեպի ինքնակազմակերպում, դեպի հայրենի երկիր, ժողովրդի գիրկը» լուզունգներով (էջ 130): Պատմությունն ասում է, որ այդ ժամանակ և հատկապես այդ օրը հայերը, առաջին հերթին դաշնակցականները, Թիֆլիսից խուճապահար փախչում էին Հյուսիսային Կովկաս և դժվար թե նրանք կարողանային որևէ քիչ թե

շատ լիիրավ ներկայացուցչական ժողով գումարել: Բայց պատմությունն ասում է, և Վրացյանն էլ իր գրչով հաստա-

գըրկովկասյան ֆեդերացիայի լիակատար քայլայիւմ» (Կամիշև, ստ. 58): Այրպող նավից խուս տալու կարգով մենշևիկները 1918 թվականի մայիսի 26-ին Վրաստանը հրոշակեցին անկախ՝ մտնելով Գերմանիայի հովանավորության տակ: 27-ին նույն բանն արին մուսավաթականները՝ մտնելով օսմանյան կայսրության հովանու տակ: Մայիսի 28-ին հայերը մնացին մենակ և Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը փաստորին պետք է գործեր անկախ, բայց անկախություն հոշակելու սիրտ արեց, որովհետև հաստատ չգիտեր, թե այդ բանի համար կունենա՞ր արդյոք թեկուզ շատ փոքր տերիտորիա: Թուրքիան Հայոց ազգային խորհրդին կտրել էր ամբողջ աշխարհից, Գանձակը՝ Բաքվից, Բորչալուն ու Ղաղախը՝ հայկական բնօրբանից: Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը չգիտեր, թե ինչ է տեղի ունենում բուն երկրի ներսում, որի զինված ուժերին այլևս չէր հավատում, ծողովրդական շարժմանը դասակարգայնուեն դեմ էր: (Այստեղ փակագերի մեջ ասենք, որ մեկ տարի հետո, երբ իրադրությունը փոխվել էր, դաշնակցականներն իրենց քաղաքական լիակատար մեկուսացման օրը՝ մայիսի 28-ը, առանց խորշանքի անկախության օր հռչակեցին:)

Դաշնակցությունը, մեկ կողմ թողած նրա ճառերն ու հավատիացումները, ընթանալով կոսմոպոլիտ հայ բուրժուազի պոշից, Անդրկովկասի ստվարաթիվ հայ բնակչություն ունեցող կուլտուր-վարչական և արդյունաբերական կենտրոններ Թիֆլիսն ու Բաքուն գերազանցել էր Երևանից և, ամենաին շհետապնդելով հայկական անկախություն, անտես էր առել հայկական բնօրբանը:

«Հակառակ անոր,— զրում է նրանց զիխավոր օրգանը,— որ մոտ քառասուն տարիներե ի վեր գոյություն ունեն մեր մեջ կազմակերպված քաղաքական կուսակցություններ, որոնք ձգտեր են հայ ժողովրդի ազատության, միայն 1918 թ. է որ Հայաստանի անկախությունը առաջին անգամ որոշական կշեցտվի հայ ազգի գիտակցության մեջ, նախ, իբրև գահավեծ դեպքերու բերումով ստեղծված փաստ և ապա՝ 1919 թ. իրու հստակորեն ձևակերպված քաղաքական պահանջ հայ-

կական հանրապետությունը ստեղծող կուսակցության՝ Հ. Հ. Դաշնակցության ծրագրին մեջ» (Դարբինյան, «Հայ քաղաքական մտքի դեգերումները», «Հայրենիք», 1923, հունիս, էջ 9): Իրոք որ մտքի դեգերումները Դաշնակցությունը ուղիւ հայկական հանրապետություն ստեղծող կուսակցություն, իսկ այդ անկախ հանրապետությունը «իր գահավեծ դեպքերու բերումով ստեղծված փաստ», մի փաստ, որի դեմ դաշնակցությունը բողոքել է 1918 թվականի մայիսի 26-ին: Փաշաշահությանը մուրզությունը Դարբինյանի ոլորապտույտ ոճը չունի: Նա պարզ ու մեկին ասում է, «Մինչև 1917 թվականը ոչ մի հայ կուսակցություն (այսինքն՝ հատկապես դաշնակցությունը.— Հ. Թ.) բնավ չէ ձգտած Երևանյան նահանգը բաժանել Ռուսաստանից, և նրանից կազմել Հայաստան» («Հայ հեղափոխականի մը հիշատակները», հ. է, էջ 120): Ճիշտ է, դաշնակցությունը, շհետապնդելով հայկական անկախության գաղափարը,— որ հնարավոր կլիներ կենսագործել միմիայն հայ բնօրբանում,— ի ծնե հար ու հանգունակ կոսմոպոլիտ հայ բուրժուազիային, դեռ քաղաքական անկախություն չնըւվաճած, կկուի նման հոտ առնելով իր բնից, ձուն միշտ էլ ածում ու թուխս էր դնում ուրիշների բներում:

Այս ամենը Վրացյանն, իհարկե, շատ լավ գիտե: Բայց նա ճգնում է ծրագրային հիմք առա «գահավեծ դեպքերու բերումով ստեղծված փաստին»: «Սեյմի լուծման օրն իսկ,— զրում է նա իր ցիտված գրքում,— մայիսի 26-ի երեկոյան տեղի ունեցավ Հ. Հ. Դաշնակցության թիֆլիսի ներկայացուցչական ժողովի և թաղային կոմիտեների արտակարգ նիստ», որն անհրաժեշտ է գտնում հայկական անկախության հռչակումը՝ «ողեպի ինքնորոշում, դեպի ինքնակազմակերպում, դեպի հայրենի երկիր, ժողովրդի գիրկը» լոգունգներով (էջ 130): Պատմությունն ասում է, որ այդ ժամանակ է հատկապես այդ օրը հայերը, առաջին հերթին դաշնակցականները, Թիֆլիսից խունապահար փախչում էին Հյուսիային Կովկաս և դժվար թե նրանք կարողանային որևէ քիչ շատ լիիրավ ներկայացուցչական ժողով գումարել: Բայց պատմությունն ասում է, և Վրացյանն էլ իր գրչով հաստա-

տում է այդ, որ այդ նույն օրը վրացական անկախության հոչակումը «սարսափելի կացություն ստեղծեց հայերի համար... մայիսի 26-ի երեկոյան, Հայոց ազգային խորհուրդը, բուռն վիճաբանություններից հետո, ձևաների ճնշող մեծամասնությամբ, որոշեց բողոքել վրաց գործիչների ընթացքի և Վրաստանի անկախության գեմ» (նույն տեղը, էջ 130):

Կանգ շառնենք այն բանի վրա, որ միևնույն էջից բերված այս պնդումները հակասում են իրար: Ասենք միայն այն, որ դաշնակցության ղեկավարներն Ազգային խորհրդի «բուռն վիճաբանություններին» մասնակցելով շէին կարող շրացակայել ծրագրային որոշում կայացնող այնքան հույժ պատմական «ներկայացուցական ժողովից»:

Բայց դաշնակցության այդ օրերի զիմավոր օրդան՝ Թիֆլիսի «Հորիզոնը» վկայում է, որ «ներկայացուցական ժողովի» հարցում Ս. Վրացյանը պարզապես զոռ է տվել իր երեակայությանը: «Հորիզոնի» հունիսի 5-ի համարում կարդում ենք, որ այդ «պատմական» ժողովը հրավիրվում է միայն հունիսի 15-ին, այսինքն՝ մայիսի 26-ից ամբողջ 20 օր հետո միայն:

«Վրաստանի և Աղբքաջանի անկախության հոչակումով ստեղծված նոր գրության» առթիվ Հայոց ազգային խորհուրդը մայիսի 30-ին հատուկ հայտարարություն է հրապարակում, և Վրացյանը շտապում է եղբայրակել՝

«Այսպիսով, Հայաստանի անկախության հայտարարության օրը իսկապես պետք է համարվեր մայիսի 30-ը: Հակառակ դրան, համարվում է մայիսի 28-ը, այսինքն այն օրը, երբ Ազգ. խորհուրդը վճռեց հաշտության պատվիրակություն ուղարկել Բաթում: Անուղղակի կերպով, այս օրն էլ կարող է համարվել անկախության սկզբավորություն, որովհետև քուրքերը հաշտության բանակցություններ վարելու համար հախապայման էին դրել անկախության հայտարարությունը» (նույն տեղը, էջ 132):

Հաշտության պայմանագրի ստորագրումից մեկ օր հետո, հունիսի 5-ին, Ավ. Ահարոնյանի և Ն. Աղբալյանի սոռ-

րագրությամբ Երևանի Հայոց ազգային խորհրդին ուղարկված նամակում ասված է.

«Հայոց ազգային խորհրդին օրերս կհայտարարի հայկական հանրապետության անկախություն: Այդ քայլը հրամայական անհրաժեշտություն է, որպեսզի քաղաքական արժեքավորություն տանք մեր ստորագրած պայմանագրին» (Հայկ. ԱՍԾ պետարկիվ, Փ. 57, գործ 562, թ. 11):

Սակայն խոստումը մնաց անկատար, օրերս անկախության հոչակում պաշտոնապես տեղի չունեցավ:

Նույն այդ նամակի վերջում կարդում ենք:

«Զեր մղած մարտերի մասին իմացանք Վեհիք փաշայից, չգիտենք, թե որքան են հավաստի նրա տված տեղեկությունները. Համենայն դեպս, մեր թեկուզ և փոքր ու թշվառ Հայաստանով պարագան ենք մեր զորքի անձնութացությանը: Որքան մեզ հայտնի է, գերմանացիներն ու թուրքերը Կովկասը բաժանել էին Վրաստանի ու Աղբքաջանի՝ հայերի համար ապահովելով միայն ֆիզիկական գոյություն: Պետք է ենթադրել, որ մեր գորքի դիմադրությունը նրանց հարկադրեց ճանաչել Հայաստանը» (նույն տեղը Փ. 57, գ. 582, թ. 11):

Գոնե ինքնասիրություն ունենային և հայկական անկախության սկիզբը համարեն մայիսի 22-ը, Սարդարապատի առաջին ճակատամարտի օրը, այլ ոչ թե թուրքերի վերջնագիրն ընդունելու համար Թիֆլիսից հայկական առանձին պատվիրակություն ուղարկելու օրը:

Որպիսի անկում:

Մայիսի 29-ին լրանում էր Խալիլ բեյի վերջնադրի ժամկետը: Անդրկովկասյան երեք պատվիրակություններն արդեն նույն օրը վերստին ժամանել էին Բաթում, և դաշնակների պատվիրակությունն առաջինն է կուրզեկուրայն ընդունում վերջնագիրը: Մենշևիկներն այն ընդունում են դաշնակցականներից հետո, իսկ մուսավաթիստներն այն շատ վաղուց էին ընդունել ո՛չ թե ստորագրությամբ, այլ իրենց գործողություններով:

Սպանիչ վերջնագիրը մենշկիկներից առաջ ընդունելը Քաջազնունին պատճառաբանում է այսպես,

«Վերջնագորի ժամկետը նա (Վեհիրը, որն արդեն վերադարձել էր Ալեքսանդրապոլից.— Հ. Թ.) պատրաստ էր երկարաձեկու 12 ժամով, հակառակ դեպքում ևս 12 ժամով. ավելի մեծ ժամկետ նա չի կարող տալ. Իթե այդ ժամկետում դրական պատասխան չտրվի, ապա հետևանքները կարող են շատ լուրջ լինել» (Հայկ. ՍՍՌ պետարխիվ, ֆոնդ 68/200, գործ 11, թիրթ 11): Հայ պատվիրակի ոչ այնքան դիվանագիտական կարողության, որքան նրա կատարյալ անիրազեկության համար խիստ բնորոշ է այս «հետևանքները կարող են շատ լուրջ լինել» խուճապահարությունը: Պատերազմական գործողությունները թուրքերի կողմից դադարեցված էին և կարող էին վերսկսվել: Ո՞չ:

Ի՞նչ էր պատահել, որ ոչ միայն հայ պատվիրակները, այլև Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը չգիտեին:

«Վեհիք փաշան,— հաղորդում է իր զեկուցագրում Ա. Խատիսովը,— խունց հայ զինվորների հիանալի հատկությունների և Ղարաբեկիսայի մոտ տեղի ունեցած նշանավոր մարտի մասին, որտեղ թուրքերի 10 հազար զինվոր կռվում էին 7 հազար հայ զինվորների դեմ։ Նրա գեներալը, որ կը ունել է Դարդաննելում, Միջագիտքում, գտնում է, որ դա իր մղած ամենալուրջ կոիվն է, որը տեսել է երեք օր... ԱՀարոնյանը ոչինչ չդիտեր Ղարաբեկիսայի քառօրյա կոիվների մասին, մենք նրան հաղորդեցինք (Նոտաներիում, վագոնի մեջ.— Հ. Թ.): Նրանց կապը նաղարեելյանի հետ բոլորովին

Խորված էր» (Հայկ. ՍՍԾ պետարխիկ, ֆոնդ 68/200, գործ 23, թեսք 115):

Յարիկ Վահագիսի Հունիսի 2-ին Աշարոնյանին գրում է.
Ես առաջարկում ենք հարցում կատարել այս պահանջմանը:

«Նա որոշակի ասաց, որ թուրքին կողմաց այսպէս (թեկուզ փոքրիկ) պետության կազմակերպմանը համաձայնություն տալը շրջադարձային կետ է Թուրքիայի պատմության մեջ, որ դա հայերի հետ հաշտվելու առաջին քայլն է... Թուրքերի նման տրամադրությանը նպաստեց... հայրենիքը պաշտպանող հայերի հերոսությունը Ղարաբիլիսայում, որ հարգանք է ներշնչում» (նույն տեղը, թերթ 55):

թումիսի 1-ին հատիսովը ուղիղ հեռագրաթելով բարձումից կապվում է Կարճիկյանի (Թիֆլիս) հետ.

«Խատիսով.— ...գիտե՞ք՝ կարաքիլուայի առկանութեան
տի մանրամասնությունները»:

Կարենիկյան.— Ուինչ Հգիտենք

Խատիսով. — Վեհիր փաշան ասաց, որ Հարձակում է գործել Թուրքական 10 հազար զորք, Հայերի թիվը եղել է 7 հազար. արյունահեղ կոփիք տևել է շորս օր, Հայերը կռվել են հերոսաբար: Վեհիրը հիացմունքով է խոսում նրանց քա- ջության մասին, Հայերի կորուստները 1500 զինվոր է: Թուր- քերի կորուստներն ել շատ մեծ են: Գերի է վերցվել ավելի քան 1000 հայ զինվոր և 2 թնդանոթ: Թուրքերը Ղարաքիլի- սան գրավել են: Հայ զորքի մի երրորդը նահանջել է Սա- սահին, երկու երրորդը՝ Դիլիջան» (նույն տեղը, թերթ 82):

Իսկ իր գրքում, որ լույս է տեսել տասը տարի հետո,
1928 թվականին, Խատիսովը գրում է.

«Վեհիպ փաշան խոսակցության ժամանակ անձամբ ըստի ինձ, որ դիմադրական թափի, քաջության և արիության տիսակետով՝ Ղարաքիլիսեի ճակատամարտը իրեն հիշեցուցած էր Տարտանելի ամենին համառ կոիվները, որոնց ինքը մասնակցած էր» (Ա. Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ժագումն ու զարգացումը», Աթենք, 1928 թ., էջ 63):

Դակատամարտի և հայ ղիւղուստի ա-

բոստիթյան մասին այսքան դրվագական խոսքեր շուալլող ֆերիկ Վեհիրի մասին նույն ինքը Խատիսյանը գրում է.

«Թրքական երկրորդ պատվիրակը Վեհիպ փաշան էր: Այդ մարդը շատ ինքնավսաւա՞զ շարժուձներ ուներ, խլացնող ձայնի տեր էր, զարմանալիորեն գիտեր բացահայտորեն ստել ուղիղ նայելով աշքերուդ մեջ: Եթի Վեհիպ փաշան զարմանք կը հայտներ իր զորքերու կատարած այս կամ այն բարքարոսություններու մասին, այն տպավորությունը կը ձգեր, թե իսկապես անտեղյակ է այդ ցավալի իրադարձություններուն. բայց հետո փաստերը մեզ համոզեցին, թե ինքն էր հեղինակը իր զորքերու կատարած բոլոր վայրագություններուն» (Ս. Խառիսյան, նույն տեղը, էջ 51):

Սյստեղ, ի՞արկե, զարմանալին ոչ թե «ուղիղ նայելով աշքերուդ մեջ բացահայտորեն ստել» գիտնալն է, որ սովորական բան է դիվանագետի, այն էլ թուրք դիվանագետի համար, այլ հայ պատվիրակի կողմից Վեհիբի այդ հատկության վրա զարմանալը։ Վեհիբ փաշան փոքր, հոգնած և զգգղված զորքով իր երկրի համար կենաց և մահու նշանակություն ունեցող կռվի դուրս եկած բանակի հրամանատար էր, էլ չենք ասում, որ նա դաստիարակված էր նենդ ու արյունաբերու ֆաթիհների ու համբդների, էնվերների ու թալիաթների երկրում ու բանակում։ Նա կովում էր ոչ միայն զենքով, այլ նաև խոսքով, բայց Կովկասյան ճակատում ավելի շատ խոսքով՝ դիվանագիտությամբ, քան թե զենքով, որովհետև նա շատ լավ գիտեր, Մարդարապատն էլ նրան ավելի էր համոզել, որ իր զորքն էլ մի բանի նման չէր։ Եվ շարունակ Ղարաքիլիսայի գովքն անելը, Ղարաքիլիսայում հայ զորքի ցուցաբերած հերոսությունը դրվատելը նույնպես դիվանագիտություն էր, միևնույն հայ-թուրքական պատերազմի շարունակումը խոսքով, դիվանագիտությամբ։ Վրացական աղբյուրների տեղեկությամբ Վեհիբը Բաթումից Ալեքսանդրապոլ էր մեկնել մայիսի 22-ի երեկոյան, իսկ Ալեքսանդրապոլից Բաթում էր վերադառն մայիսի 27-ին։ Մայիսի 27-ին Բաթում հասած լինելու համար նա Ալեքսանդրապոլից դուրս եկած պիտի լիներ մայիսի 26-ին կամ

թե 27-ի վաղ առավոտյան։ Երկու դեպքում էլ Ղարաբիլիստ-
ի ճակատամարտը դեռևս չվերջացած։ Աւրեմն նա շեր կա-
րող այդ ձևով խոսած լինել Ղարաբիլիսայի ճակատամարտի
մասին, վկայաբերել այդ ճակատի թուրք հրամանատարի
կարծիքը և այլն։ Նրա վերագրածի օրը վերջացել էր միայն
Սարդարապատի ճակատամարտը։ Դարդանելի (Գելիբոլուի)
դիմիսիան գործում էր և շարաշար պարտություն էր կրել
Սարդարապատի ճակատում։ Այդ նա հաստատ գիտեր, սա-
կայն Սարդարապատի մասին թաթումում նա միայն ա-
սում է.

«Երևանի երկաթգծում իր զորքերը հասել են Մարդարապատ կայարանը, բայց զորքի փոխադրմանը նա գեռ ձեռնամուխ չի եղել, քանի որ թիկունքի (ո՞ր թիկունքի.—Հ. Թիմարական ապահովված չէ» (Հայկ. ՍՍԾ պետարկիվ, ֆոնդ թ.) վիճակն ապահովված չէ» (Հայկ. ՍՍԾ պետարկիվ, ֆոնդ թ. 68/200, զործ 11, թերթ 42):

մանակ հիմնական շեշտը դրվեց հրետանային նախապատրաստության և շրջանց մաների վրա: Թուրքերի հրետանին թույլ էր՝ լեռնային, մերը հզոր էր՝ մեծ մասամբ դաշտային: Թուրքերը հմուտ հրետանավորներ չունեին, մենք ունեինք: Ուժեղ էր նրանց գնդացիրը (ամենայն հավանականությաւը, գերմանացի հրահանգիշների ղեկավարությամբ). Սարդարապատում հայկական հրետանու առաջին առաջադրանքը միշտ էր թուրքերի գնդացրային կրակակետերը լուցնելն էր, այնինչ Դարաքիլիսայում այդ մոմենտը, — թեև շատ լավ զիտեին թուրքերի գնդացրային կրակի ուժը, — անուշադրության էր մատնվել: Այնուհետև, Սարդարապատում կովում էր ամբողջ ժողովուրդը, մեծից մինչև փոքրը: Այնտեղ ժողովուրդը կովում էր, ոմանք շապիկ-վարտիքով, պատանք հագած, այնտեղ սպայությունը մայիսի 25-ի օնոր կովի օրը գրոհի գնաց շղթաների առջեց և ավելի շատ կորուստ տվեց, քան զորքը, «նշանդար» (սնայպեր) աշխարհազորայինները սողոսկելով մոտենում էին թշնամու թնդանոթներին ու գնդացիրներին և դիպուկ կրակով ոչնչացնում հակառակորդի հրետանավորներին ու գնդացրորդներին, աշխարհազորայինները սիրահոժար, խանդավառությամբ ստանձնում էին ամենադժվարին խնդիրների կատարումը և անձնազոհությամբ թույլ չեն տալիս, որ ավելի նոսրանան կանոնավոր զորքի առանց այն էլ նոր շարքերը, այնտեղ պարտիզանական գունդը երգելով խոլական գրոհներ էր գործում ու շարունակ նետվում ավիշին և հրետանային կրակի տակ 14—15-ամյա երեխաները սողոսկելով վերցնում էին սպանվածների փամփուշտներն ու տիկների զենքն ու փամփուշտը: Սարդարապատի ճակատի հրամանատար Դանիել թիգ Փիրումյանը կովի երրորդ օրը, — երբ թուրքերը ձեռնարկեցին իրենց երկրորդ հարձակումը և առանձին հատվածներում նեղում էին հայկական զորամասերին, — միանգամայն վստահ, որ իր արդար կոփերը հաշմաժողովրդական բնույթ է ստացել և որ իր զորամասում քիչ շեն կովի այդ նոր բնույթը հասկացած և այդ զիտակցությամբ

ինանդավառված ձեռներեց հրամանատարներ, շուրջ 50 կիլոմետր ձգված ուղղաձակատի տարրեր հատվածների ինքնուրուցն ղեկավարումը թողել էր գնդերի և անգամ գումարութակների հրամանատարներին և շտաբը թողած շարունակ կրակի տակ կանգնած մնում էր այն զորամասերի մոտ, որոնք երերման նշաններ էին ցույց տալիս, իսկ կապիտան Սակելյարին, երբ նահանջի նշաններ էր տեսնում՝ ևս անշափ հոգնած եմ, պիտի քննեմ մի քան բռպեռվ, — ասում էր նա ու այժենականը փոռում հրանոթների կողքին և իսկապես քնում մի քան բռպեռ: Բոլոր զինվորների կողմից սիրված անվանի հրետանավորի նման քայլը դրության կայունության վստահություն էր ներշնչում երերացողներին: Նույն այդ երրորդ օրը Սակելյարիի դիվիզիոննի կրտսեր սպա Միքայելյանը Թուլքի թափայում ամրացած թշնամու հրետանին լուցնելու համար տաքացած՝ բաց դիրք է դուրս բերում իր երկու հրանոթները և, մենամարտի բռնվելով թշնամու մարտկոցի հետ, ուղիղ նշանառությամբ ոչնչացնում է թշնամու հրետանին և հրետանավորներին: Շեվքի փաշան այս ամենը կարող էր հաղորդած շինել Վեհիրին, սակայն Վեհիրին անձամբ Ալեքսանդրապոլում գտնված լինելով, չեր կարող շիմանալ, որ եթե մայիսի 22-ի առաջին հարձակման ժամանակ թուրքական դիվիզիային օժանդակում էին Կարսի շրջանի մի քանի հազար շուրջ ու թուրքեր, ապա նրանց աշքը վախեցած լինելու պատճառով մայիսի 24-ի հարձակման ժամանակ թուրքերը հարկադրված էին միայն կանոնավոր զորք դուրս բերել: Տեղական թուրքերից և քրդերից և ոչ մեկը սիրտ չէր արել երկրորդ անգամ կովի դուրս գալու Վերջապես, ամենակարևոր պարագան. Դարաքիլիսայում հայ զորքը վերջ ի վերջո ծանր պարտություն կրեց, մինչդեռ Սարդարապատում հայ զորքը փայլում հաղթանակ տարավ և արնաքամ արեց հակառակորդին:

Պարզ է, որ Վեհիր փաշան միայն Դարաքիլիսայի գովքը անելով նորից հետապնդում էր դիվանագիտական նպատակ: Նա ենթադրում էր, որ Դարաքիլիսայի ճակատամարտի լուրն ավելի շուտ թիֆլիս ու Բաթումի հայ պատվիրակնե-

թին կհասներ, քան թե Սարդարապատի և Բաշ-Ապարանի կոփներինը: Նա Ղարաբիլիսայի ճակատամարտի գովզով, նախ, կամխում էր հայերի մյուս հաղթանակների հուսադրող տպավորությունը, երկրորդ, ապացուցում էր հայկական թեկուղի հերոսական ջանքերի անհուսությունը: Ղարաբիլիսայում գուք ունեիք լավ, ընտիր զորք, թվով էլ քիչ չէր, հիանալի էլ կովեց, սակայն գուք պարտվեցիք: Այս նշանակում է, ուրեմն, թուրք զորքն ավելի ընտիր է և ավելի լավ է կովել: Իզուր են ձեր ջանքերը, մենք ձեզ կհաղթենք: Այս ամենից հետո եթե Սարդարապատի և Բաշ-Ապարանի հաղթանակների լուրը անգամ հասներ Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին և Բաթումի հայ պատվիրակներին, ապա նրանք չեին արժեքավորի այդ հաղթանակները՝ դրանք համարելով ժամանակավոր ու պատահական երևույթ:

Ահա և այս վարպետ խաղի զոհը:

«Եթե Վեհիբը,—ճգնում է համոզել Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին Քաջաղնունին իր ամբողջ հեղինակությամբ,— իր զորքերով Երևանը գրավելու դիտավորություն ունենար, ապա նա հարկ չէր ունենա դիմելու որևէ խարեռթյան, որովհետև նա այդ բանը կարող էր անել բացեիրաց, ամեն բոպե, երկյուղ չկրելով հանդիպելու որևէ լուրջ դիմադրության» (Հայկ. ՍՍԾ պետարխիվ, ֆ. 200, գործ 23, թիրթ 11):

Էլ ի՞նչպես չհաջուել թուրքերի հետ, երբ ամերիկացիներից առաջ նրանց «վեհանձն» է անվանում ինքը՝ Քաջաղնունին, Սարդիկ կարող նն ամեն բոպե գրավել Երևանը, բայց չեն գրավում: Ո՛չ թե դիմանագիտական մտքի սնանկություն, այլ ամեն մի մտքի կատարյալ բացակայություն: Եվ սրանք, այդ թշվառները, կոչված էին պաշտպանելու ամենադժբախտ ժողովրդի ամենաժժվարին դատը:

Քաջաղնունին որքան էլ հավաստիացներ, թե թուրքերը չեն ստում, գոնե հիմակուհիմա չեն ստում, այնուամենայնիվ, միմիայն դաշնակցականների վարժապետական մտածողությունը կարող էր համատ ընծայել այդ ստին: Խալիլն ու Վեհիբը Բաթումում շարունակ հետևողականորեն վարում

էին հայ ժողովրդին կատարյալ պարտության մատնելու և խպառ ընացնջելու էնվերյան քաղաքականությունը: Նրանք այդ քաղաքականությունից մազաշափ անգամ չեին նահանջել նաև այն ժամանակ, երբ հայերին կողմ էին ճանաշում, ընդունում էին նրա անկախությունը և զինակցության դաշինք էին առաջարկում նրան: Այդ ամենը նրանք անում էին ելնելով ուժերի առկա հարաբերությունների հաշվառումից, և ոչ թե ինչ-որ այլ նկատառումներով: Հայերի ու վրացիների հետ հաշիվը փակելուց հետո թուրքերի համար մնում էր ուղղուցիսոն Բաքուն նվաճելու և ավելի հեռուները գնալու խնդիրը՝ իրենց պանթուրքիստական ավանտյուրան իրագործելով համար: Մյուս կողմից, անգամ եթե հայկական բանակ համարյա այլևս չկար, ապա ժողովուրդը զինված էր, և աշխարհազորայինների խմբերը ստվարացած, Արարատյան դաշտը և Սևանի ավազանը դարձել էին անպարտելի, Ղարաբաղն ու Զանգեզուրը հերոսաբար ինքնապաշտպանվում էին, Նախիջևանի թուրքերը Մակիվի խանի աշակցությամբ և դրդումով չեին կարողացել հաղթահարել տեղի հայ բնակիչներին, Աղրբեջանի բեղերն ու աղաները ոտքի էին կանգնել, սակայն Բաքուն դեռ անձնատուր չէր եղել: Հարկավոր էր Բաքվի վրա արշավելու նախօրյակին այս բոլոր կնճուտ հարցերը լուծել հենց իրենց՝ հայերի ձեռքով՝ այժմ ժամանակավոր զինակցության դայթակղիլ առաջարկով խարելով այդ միամիտներին, նրանց իսկ ձեռքով ցրել աշխարհազորայինների խմբերը, նրանց անվանելով հրոսակախմբեր:

Անգամ Դ. Անանունը, որը տրամադիր էր ավելի շուտ դաշնակցության կողմը տաշելու, քան թե որևէ ուրիշի կողմ, գրում է:

«Ազգային խորհրդի կազմած զորքը պանծալի նկարագիր չցուցահանեց էրզրումում և Կարսում, բայց դա մասամբ տեղի ունեցավ նրա հրամանատարական կազմի ու ղեկավարների ապիկարությամբ և մասամբ էլ այն հակասական թելադրանքների շնորհիվ, որ գալիս էր Անդրկովկասի կառավարությունից... Բայց հենց որ թուրքական նվաճողական ախորժակն անկշատում դարձավ, և ժողովրդական տարնոքը

Հանդես եկավ դիմավորելու նվաճողներին, հայ զորքը քաջության և անվեհերության փառավոր ապացույցներ տվագւթյունին էին նրա կոխվները թուրք զորքի հետ Սարդարապատում մայիսի 22—23-ին (ն. տ.) և Ղարաբիլիսայում մայիսի 25—26-ին (ն. տ.): Այդ կոխվներն էին և ոչ թե գութնու մարդասիրությունը, որ հարկադրեցին թուրքիային Բաթումում կողմ ճանաչել նաև հայերին և հաշտության դաշինք կնքել նրա հետ» («Խուսահայերի հասարակական զարգացումը», հ. 3, էջ 61):

Դաշնակցության գլխավորած Հայոց ազգային խորհուրդը պարզապես խելքը գլխին մարդ չուներ, որը ճիշտ հասկանար իրադրությունը, ճիշտ կողմնորոշվեր այդ վերին աստիճանի պատասխանատու ժամանակ, հանդես բերելով անհրաժեշտ ճկունություն: Երբ ամենակրիտիկական պահին Հայոց ազգային խորհրդի նախագահ՝ Ավ. Ահարոնյանը գալիս է մինչև թուրքերի օկուպացրած տերիտորիայի սահմանամերձ Վրացական նոտաների կայարանը և Խատիսովին Բաթումից կանչում է տեսակցության, մինչդեռ Վրաց ազգային խորհրդի նախագահը գնում է թուրքերի օկուպացրած Բաթումը և տեղում ծանոթանում բանակցությունների մանրամասնություններին և հետևում նրանց ընթացքին, Խատիսովն անդամ նախանձով գրում է:

«Ժորդանիան կենտրոնական դեմքն է վրացիներու մեջ, ըլլալով վրաց. մենշևիկ կուսակցության կենտր. կոմիտեի, ինչպես նաև Վրաց ազգային խորհրդի նախագահը: 1900 թիվեն իսկ կճանշնամ դիմքը: Շատ խելացի և իր ժողովրդի հոգերանությունը լավ ըմբռնող հմուտ քաղաքագետ մըն է, տեսականապես լավ պատրաստված: Անոր ազգեցությունը վրացական զանգվածներու վրա հսկայական է: Կիսուի շատ գեշ կակազելով, բայց իր ճառերը կառուցվածքի և մտքերու տեսակետով գեղեցիկ են: Դեմքի մկանունքները գրեթե խաղ չունեն և կհիշեցնեն եգիպտական քրմապետի մը արտահայտությունը» («Հայ. Հանր. ժագ. ու զարդացումը», էջ 64—65):

Վրացիները ընդամենը մեկ դար էր, ինչ կորցրձլ էին պե-

տական անկախությունը, նրանց ազգային դեկավար ինտելեկտիվիան մեծ մասամբ ազնվականական ծագում և քաղաքագիտական մտածողության որոշ փորձ ուներ: Իշխառդենշական պարտիան ուներ իր ճանաչված ու կարող պարզությունը՝ նոյ ժորդանիան, կովկասյան մուսուլմանների և Թուրքիայի հետ լեզու գտնելու համար այդ պարտիան ուներ կարող դեմքեր հանձինս Ակակի Զիսենկելու և նոյ Ռամիշվիլու, հայերին սիրաշահելու համար՝ Եվգենի Գեղեցկորուն, Հումանակցության ասպարեզում գործելու և համառուսական դեմոկրատիայի անունից ճառելու Համար՝ Համառուսական անունու Սերեթելուն ու Զիսենկելին, տեսական հարցերի շուրջը հակառակորդի հետ վկիցնելու համար՝ Սիհիդ Ռևերիանուն և հենց իրեն՝ պարտիայի պարտպետի նոյ ժորդանիային:

Դաշնակցությունն այդպիսի ծանր հրեաւանի շուներ:

Անպետականության տիպուր դրոշմը կա: այդ պարտիայի գրեթե բոլոր դեկավար գործիչների վրա: Ահարոնյանին ու Քաջազնունուն, Կարճիկյանին ու Վրացանին, Խատիսովին ու Զավրիկյանին, Փափազյանին ու Նավասարդյանին տեսանք մեր այս աշխատության մեջ: Մնացածները շատ ավելի ողորմելի են, քան այս ողորմելիները, որոնց թվում քիչ չեն հայ ժողովրդի այդ օրհասական պահին դասաւլքության ուղին բռնողները: Ահարոնյանը պարտքի տակ չի մնում: Ալ. Խատիսովի գրքի լույս ընծացվելուց երեք տարի շանցած նա Բոստոնի «Հայրենիք» ամսագրում հանդես է գալիս «Ավարայրի ոգեկողություն» հավակնութ վերնագրով հոդվածով, որտեղ Ալ. Խատիսովի հետ միասին չի խնայում: Նաև ուրիշների: Քաջազնունին Բաթումից նրան գրել էր Բեռլին պատվիրակություն ուղարկելու անհրաժեշտության մասին և, թվարկելով հարմարագույն թեկնածուների անունները, հիշեցրել էր, թե «Խատիսյանը խնդրում է իրեն փոխանակել (երեկի փոխարինել) մի ուրիշ մարդով», «Օհանջանյանը խնդրում է, թե ընկերները իր ներկայությունը ավելի կարևոր համարում են Թիֆլիսում», «Ես իմ կողմից, — ավելացրել է նա իր մասին, — ասում եմ, թե որևէ ընկեր կա, ազատեցեք ինձ այն

անտանելի հոգեկան տանջանքներից, որ կրել եմ ևս Տրապիզոնում, կրում եմ Բաթումում և անկասկած կրելու կլինիկամբնում» («Հայրենիք», 1931, № 1,էջ 78): Վրացյանը ռաւղջում էր իմ մեկ «վրիպումը»: «Պետք կա ասելու, — զրում է Հա արհամարհանքով, — որ Վրացյանը Սարդարապատի օրերին նույնիսկ Բաթումում չէր» («Հուսաբեր», 1963 մարտի 14): Պետք է կարծել, որ Ս. Վրացյանն ավելի ճարպիկ է գտնվել: Ոչ այլ կերպ, քան «Ավարայրի ոգեկոշումով», նա էն գլխից ավանսով է ճղել և Բաթում չի գնացել, որովհետև նրա Բաթում գնալու մասին որոշումը կայցվել է:

Ահա սնամեջ Խատիսովին ու միամիտ Քաջազնունուն էր վիճակված Հունիսի 4-ին Բաթումում ստորագրելու հաշտության պայմանագիրը, որով թուրքերն ստանում էին ամբողջ երկաթուղին, Ալեքսանդրապոլը, Երևանի ու Էջմիածնի գավառների կեսը, Շարուր-Դարալագյաղն ու Նախիջևանը: Ղարաբիլիսան ու Լոռին պետք է դատարկվեին ու վերադարձվեին, սակայն չեն դատարկվում ու չեն վերադարձվում: Արաքսի կամուրջները բացվում են տաճիկների առաջ, Դիլիջանի ձորով Գանձակ զորք տանելու իրավունք է տրվում նրանց բանակին:

Այս բոլորից հետո թուրքերն այդ պայմանագրով ստիպում էին կտրել այն ճյուղը, որի վրա թառած միայն կարող էր պահպանվել Հայկական անկախությունը:

«Հայաստանի Հանրապետության կառավարությունը, — ասված է այդ պայմանագրի 5-րդ հոդվածում, — պարտավորվում է եռանգով դիմագրել Հրոսակախմբերի կազմավորմանն ու սպառագինմանն իր երկրի սահմաններում, ինչպես և դինաթափ անել ու ցրել այն բոլոր Հրոսակախմբերը որոնք կգան այնտեղ թաքնվելուա:

Թուրքերը դաշնակցական պատվիրակներից ավելի լավ գիտեին, որ Սարդարապատի և Բաշ-Ապարանի կոփներին թվով ավելի շատ աշխարհազորայիններ էին մասնակցել, քան թե կանոնավոր զորք: Ուրեմն, սեփական ձեռքով կազմալուծել, դինաթափել ու ցրել այդ վճռական ու բախտորոշ

մեծ գոյամարտի հերքսներին, զինաթափել և ցրել Անդրանիկի զորամասը, եթե այն փորձեր մտնել Հայաստանի սահմանները:

Սա ոչ թե աններելի, ճակատագրական սխալ էր, այլ ուղղակի դավաճանություն, դավաճանություն հանդեպ Սարդարապատում հաղթանակած հայ աշխարհազորի: Եվ սա սուկ պատմաբանի դատավճիռ չէ՝ կայացված ավելի քան շորս տասնամյակ հետո, երբ օրվա ծանր մղձավանջից սթափված հեշտ է ճիշտ կողմնորոշվել և իրերը կոշել իրենց անունով: Մեր ձեռքի տակ են օրվա թերթերը: Արևմտահայ դաշնակցականների երևանի օրգանն ավելին է ասում: Նրա աշխատակիցները այն ժամանակ տարագրության մեջ չեին և տարագրության ժամանակը ամբողջովին չէր կերել նրանց հոգին, նրանք այն ժամանակ գտնվում էին գերմարդկային ճիգերով և անօրինակ հերոսությամբ ինքնապաշտպանվող ժողովրդի ծոցում և «վշտի ծանրության տակ սահմուկած», տուրք չէին տալիս թայֆայամոլությանը: Ահա թե ինչ էր զրում այդ օրգանը Բաթումի սպանիչ հաշտության լուրն առնելով.

«Կատարվեցավ... Գրչի թեթև շարժումով մը վերջացավ ամեն ինչ. թաղվեցան ապագա հույսերն ու երազները, թողնելով սև, մոռայլ իրականությունն մը՝ ճնշող, խորովող և մահվան շափ սարսուղղեցիկ: Տրապիզոնի և Բաթումի կատակերգություններն անսպասելի ու ողբերգական վախճան ունեցան, թեաթափ ընելով հայ ժողովուրդը և մատնելով զայն ստրկական կենցաղի մը:

Նենդ ու դավադիր թշնամին այս անդամ ալ հաջողեցավ խարկանքով ի գլուխ բերել իր զենքի ուժով ընել չի կըրցածը:

Եվ թող անոնք, որ վախցան արյունին ու մահեն՝ զդանթե շարադես օր մը պիտի թաթախվեն արյան մեջ սպանդանոցի մը հանգույն, թող անոնք որ փախան կրիվեն՝ իմանան թե թշնամիին հետ կուրծ-կուրծքի եկած ատեն, դաշույն մը պիտի փնտռեն հուսահատական պայքարը մղելու համար, բայց շպիտի գտնեն:

Այս մեծ դավաճանության հանդեպ, վշտի ծանրության

տակ սահմոկած, մենք այլևս ուղեղ չունինք մտածելու, այլևս սիրո շունինք խոսելու, շփտենք ի՞նչ բառ և խոսք, ի՞նչ լեզու ու ոճ գործածենք, որովհետև մեկ անգամեն թաղվեցան մեր ամենանվիրական զգացումները, մեր հոգեկան ապրումները և մեր կոկորդին մեջ խեղդվեցան օգնության միշերը, գաղրեցան զայրութիւնը պորքիումները: Դարձեր ենք հիմա անզգա ու անլեզու, երկուու և ստրկամիտ:

Մենք այլևս ժառանգը չենք մեր հին, խնկելի հերոսներուն, մեր հեղափոխական նախորդ սերունդին: Այլևս ինչ սրտով ու երեսով մոտենանք անոնց ուրվականներուն, և ինչ լեզվով «ընկեր» կոչենք անոնց: Բայց մանավանդ վաղը, ահեղ դատաստանին օրը ինչպես արդարանենք անոնց առաջ, ինչպես հաշիվ տանք հարյուր հազարավոր անշիրիմ նահատակներուն և ինչով սրբենք մեր նակատի մուրը, երբ միայն անարգանքի սյունին բաժին պիտի ըլլանք, երբ միայն անեծքի պիտի արժանանք» («Աշխատանք», 1918 թ. հունիսի 8):

Դաշնակցության շարքային անդամները, և ոչ միայն շարքային անդամները, գժվարությամբ էին հասկանում իրենց կուսակցության այս «նոր» կուրսը: Նրանք չէին հասկանում, որ դաշնակցության ղեկավարությունը, իր բուժուական էությանը հավատարիմ, վրաց մենշևիկների և աղբաշանական մուսավաթիստների հետ կոնտրուելուցիոն գաշինք կնքելով, արդեն փաստորեն կանգնել էր թուրք օկուպանտների կողմում և նրա յուրաքանչյուր քայլը ծառայություն էր օսմանյան թուրքերին և դաշնանություն հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործին: Կառշելով իրենց իսկ արտահայտությամբ՝ «փաստորեն շեղած և անկայուն միւթյան իլլուզիային» («Հորիզոն», 1918 թ. մայիսի 28), նրանք այնպիսի անմիտ տրյուկներ էին կատարում քաղաքականության մեջ, որ վրաց մենշևիկների գլխավոր օրդան «Էրթորան» անդամ, որը կարողանում էր ճոճուան ֆրազներով վարպետորեն կոծկել իր թրքոֆիլությունը, հանդես էր դալիս թրքոֆիլության մեղադրանք ներկայացնելով դաշնականաներին: «Նրանց հակաթուրքական քաղաքականություն-

նը, — գրում էր այդ թերթը: — Համախ ինքն իրաս հապառ կում է և ծառայում թուրքերին իր հետեւանքներով» («Հորիզոն», 1918 թ. մայիսի 23, № 96, «Էրթորայի» առաջնորդողի թարգմանությունը):

Դաշնակցության այդ դավաճանական քաղաքականության դեմ իր ժամանակին արդար զայրույթ էր հայտնում ոչ միայն արևմտահայ դաշնակցականների երեանի օրգանը, ինչպես մենք այդ արդեն տեսանք, այլև այդ նույն կուսակցության թագվիթ օրդան «Արևը»:

Բաքվի «Արևը» 1918 թ. մայիսի 28-ի համարում (№ 98) առաջնորդողի տեղում «Մար» ստորագրությամբ զետեղել է իր ժամանակին վեճի առիթ տված բողոքի հոդված, որտեղ կարդում ենք:

«Ես հատկապես տարրերություն շղի ժորդանիայի և Կարճիկյանի հեռագրերի միջև...»

Տաճիկ բռնակալության նկատմամբ ոչ պակաս լավագության վերաբերմունք է նաև Քաջազնունու հայտարարությունը Թիֆլիսի սեյմում...»

Վերջին երկու-երեք ամիսներում (ուրեմն ոչ թե միայն Ալեքսանդրապոլի անկումից հետո, այլև գեռևս էրզրումի անկումից առաջ: — Հ. Թ.) հայկական տեսակետը Թիֆլիսում փախվում է այնշափ, որ ըստ այդ տեսակետի տաճիկ կառավարությունը մի գառն է, որին համարձակորեն կարելի է թողնել ոչխարի փարախը».

Եթե տաճիկ բռնապետն իրավունք ստանա Զովքայի երկաթուղուց օգտվել, թե Սուրմալվի և թե էջմիածնի գաղութը աղետների շնորհարկվի (տե՛ս «Արև», № 93, վառները կարճիկյանի հեռագիրը): Եթե Անդրկովկասն անջատվի Ռուսաստանից ու ամեն քայլում համաձայնվի տաճկի թելասատանից գրանքին, հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը կպահպանվի: Քաջազնունու հայտարարությունից միայն այդ կարելի է եղրակացնել...»

Կյողպես են վստահացնում մեզ Կարճիկյանն ու Քաջազնունին:

Հայ ժողովուրդը կարող է նստել հանգիստ և սպասել:

թե երբ պիտի գան տաճիկ զորքերը և իր ֆիզիկական գույթյունը «ապահովեն»...

Երեք տարի առաջ տաճիկ բռնապետության ուժն արհամարհել մինչև կուրություն* և հիմա այդ ուժի առաջ սարսափել ու երթալ ամեն զիջողության, դա մի պարզ քյուրիմացուրյուն չէ լոկ, այլ մի պատմական հակասուրյուն, որ իրրե մի շարիք մեր պատմության տխուր էջերից ամենատխուր և ամենասև էջը պիտի կազմի:

Բաքվի բոլշևիկյան «Տեղեկատուն» «Արևի» այս ինքնաբնադատությանն անմիջապես անդրադարձել է «Դաշնակցությունը դաշնակցության դեմ»՝ վերջին փոստով և ապամանքամասն հոդվածով։ «Տեղեկատուն» իր առաջին հապնեալ գրված հոդվածը եզրափակում է այսպիս։

«Իսկ ինչ վերաբերում է «պատմական հակասությանը», մենք պիտի ասենք, որ այս «պատմական հակասությունը», կամ ավելի ճիշտ ասած՝ դասակարգային հակասությունը, «դաշնակցության» համար ոչ միայն շարիք է, այլ իսկառ պատմական երեսությունը։ Հայ ժողովրդի, — շքավոր գյուղացու և բանվորի, — տեսակետը միշտ էլ զանազանվել է «Հայկական» պաշտոնական տեսակետից, հայ բորժուազիայի դասակարգային շահերից բխող գործելակերպից, իսկ «Հ. Հ. դաշնակցությունը, որպես «պատմական» շարիք հայ ժողովրդի համար, աշխատել է միացնել այդ տեսակետները»։

Արդյունքն այս դառը, բայց անորոշ, ոչ համարձակ խոստովանանքն է»։

(«Բանվոր, զինվոր և նավասահի պատգամավորների խորհրդի տեղեկատու», Բաքու, 1918 թ. մայիսի 20, № 93):

Թուրքերի հաղթանակը կատարյալ էր: «Նենք ու դավադիր թշնամին» կարողացել էր «խարկանքով ի գլուխ բերել զենքի ուժով ընել չի կրցածը»։

* Ակնարկում է երդրումի կոնգրեսում թուրքերի հետ լեզու շդուելու և ապա կամափրական շարժմանը ձեռնամուխ լինելու փաստերը դաշնակցության պատմությունից։—Հ. թ.

Ի՞նչ էր մնում անելու «նենք ու դավադիր թշնամուն», երբ նրան այդքան հեշտությամբ հաջողվել էր «խարկանքով ի գլուխ բերել իր զենքի ուժով ընել չի կրցածը»։ Քեզ անել, երգել ու պարել քաղցր նվազի տակ։

Խալիլ բեյն ու ֆերիկ Վեհիրը հունիսի 4-ի երեկոյան ժամը 9-ից մինչև գիշերվա 2-ը ճոխ ճաշկերույթ են տալիս ի պատիվ անդրկովկասյան «անկախ» հանրապետությունների պատվիրակների։

«Ճաշը, — զեկուցում է Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին խատիսովը, — շատ ճոխ էր, սեղանը զարդարված էր ծաղիկներով, զինին առատ էր, երաժշտությունը՝ քաղցր ճաշի ժամանակ Վեհիր փաշան ակնարկեց, որ իրենք սիրով ուազմական դաշինք կկնքեին հայերի հետ, ինչպես այդ արել են բուզարների հետ։ Խնդրեց մտածել այս մասին, և որ էնվեր փաշան հավանաբար կխոսի այդ թեմայի շուրջը։ Նա ընդհանրապես հարցը շատ հստակ ու պարզ է դնում» (Հայկ. ՍՍԾ պետարխիվ, ֆոնդ 66/200, գործ 23, թերթ 116):



Սարդարապատի ճակատի զորքերն ու աշխարհազորացին խմբերը, զինվորակորվելով Ալագյազ և Աղին կայարաններում, պատրաստվում էին վճռական գրոհ կատարելու Ալեքսանդրապոլի վրա։ Զորքի տրամադրությունը բարձր էր, բոլորն էլ տոգորված էին հաղթանակի անսասան հավատով։ Կային խիզախ հրամանատարներ, որոնք առաջարկում էին՝ մի կողմ թողնելով Ալեքսանդրապոլը, կարճ ճանապարհով շարժել Կարսի վրա։ Գեն. Սիլիկովը սկսել էր ճանաչել իր զորքին և հավատալ հայ ժողովրդի պոտենցիալ մեծ ուժին։ Նրա ստորագրությամբ արդեն դիմում էր տպագրված օրվա թերթերում, փակցված երկանի և մյուս կենտրոնների տների պատերին, որով նա պատմական էքսկուրսից հետո հայ ժողովրդին կոչ էր անում ամեն ինչով օգնել Ալեքսանդրապոլի վրա արշավող հայ զորքին։ Հետախույզները հասել էին Բայանդուր կայարանը և ոչ մի տեղ թուրք ասքերի չեն հան-

դիպել: հնչպես հետ հայտնի դարձավ, Յաղուր Շեմքի, Հիւմի և Քյազիմ Կարաբեքիր փաշաները նստել էին վագոնները և պատրաստվում էին փախչելու Ալեքսանդրապոլից:

«Սիլիկյանը, — վերհիշում է Ա. Աստվածատրյանը, — մանրամասն պատմեց զինվորական գործողությունների մասին: Զինվորների ցույց տված տոկունությունն ու քաջությունը գերազանցել էին բոլոր ակնկալությունները: Գիտեինք ու ըգին, որ ընդհարումների նախօրյակին նա հոռեանս էր, իսկ այժմ թշնամին հայ զինվորների հարվածների տակ փախչում էր և ինքը գծվարությամբ էր զարում այդ զինվորներին (ընդգծումը մերն է. — Հ. Թ.):

Բոլոր մտածում էին Ալեքսանդրապոլի մասին, — վերջացրեց խոսքը զորավարը («Հայրենիք», 1951 թ., № 2, էջ 43):

Իսկ ինքը՝ զորավարն իր կոչի մեջ գրում էր.

«Իսկ որ մենք կարող ենք պաշտպանվել, դա ցույց տվեցին մեր վերջին կոիվները մեր ճակատում, որ մեզանից թվով գերազանց թշնամին նահանջի է՝ դիմել մեր զորքերի հերոսական հարձակման առաջ» («Աշխատանք», 1918 թ. հունիսի 5):

Ինքնավատահության այս առողջ մթնոլորտում, երգ ծողովուրդը միակամ և միահամուռ ոտքի էր ելել՝ ժողովրդական նախաձեռնության զարմանալի օրինակներ ցույցերելով ամեն բոլե, անպատեհ «զինադադար» պատվավոր հաշտություն շէր խոստանում մաքառող հայ ժողովրդին: Բոլորն էլ, այդ թվում նաև շարքային դաշնակցականները, լավքան շէին սպասում «Թիֆլիս նստողներից»:

Արևմտահայ դաշնակցականների օրգանն ահազանդում էր:

«Իսկ Հայոց կենտ. ազգ. խորհուրդը, — գրում էր նա հունիսի 5-ին, դեռ անտեղյակ Բաթումի զավաճանությանը, — որ իր և Թիֆլիսեն զատ ուրիշ ուշնչի մասին մտածեց ու հոգաց և թողուց, որ հայկական շբքաները մեկուսանան, կտրվին, ապրին կամ մեռնին, և որ բոլոր սխալները գործեց իբր թե ստիպված, մյուս ազգությունների հետ միասին,

այսօր կրկին անգամ առանց կապ ունենալու Երևանի հայության հետ, առանց իրավունք ունենալու նման ճակատագրական ձեռնարկ մը կատարելու և վերջապես առանց հրահանդ ստանալու՝ բանակցություններ է սկսած, ո՞վ գիտե ինչ մեծ զոհություններով, և հայության բախտը տնօրինելու քայլըն է առած: Եվ եթե երբեք կնքված է հաշտությունը, ստորագրված են պայմանները, ընդունված է թուրքիության պայմանները, պիշված են այդ հողամասերը առանց հայության կամքին և կարծիքին, ապա ուրեմն գործված է հանցանելու ամենասեր, դավանակության ամենասուկալին, որոնց նմանը հայկական տարեգրության մեջ չէ եղած դեռ» («Աշխատանք», 1918 թ. հունիսի 5):

Գավաճանության ամենասուկալին արդեն կատարված էր, և հենց այդ օրն էլ, հունիսի 5-ին, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որ կենտրոնական էր համարվում, հավանություն էր տվել այդ սպանիլ հաշտությանը ու միջոցներ էր որոնում այն երևանի ազգային խորհրդին հասցնելու: Հակառակ իրենց իսկ կողմից առաջարկված «զինադադարին», թուրքերը պատերազմական գործողությունները կռովա ձորում շէին գաղաքացիներ և մոտենում էին Խրամ գետին: Այդ ճանապարհը փակ էր: Մնում էր Դաղախի ճանապարհը: Մուսավաթականները «սիրով» ընդառաջում են և հաշտության պայմանագրի տեքստը հունիսի 7-ին հասցնում երեվան: Եվ քանի որ Թիֆլիսի ազգային խորհրդի դաշնակցական դեկապարությունը կուածում էր, որ Երևանի ազգային խորհուրդը կարող էր ընդլայնել թուրքերին միայն ձեռնուու այդ սպանիլ պայմանագրիրը, Ա. Ահարոնյանն ու Ն. Աղբալյանը ճգնում են իրենց հեղինակությամբ ճնշում գործ դնել Երևանի Հայոց ազգային խորհրդի վրա և հատուկ նամակ են ուղարկում նրան: Միևնույն մուսավաթականների ջանքերով նրանց նամակն էլ միենույն Դաղախի վրայով շտապ հասցվում է Երևան (հունիսի 8-ին):

Վրդովված են բոլորը՝ ժողովուրդը, զորքը, անգամ Աղգային խորհուրդը: Մի շաբաթ առաջ նրանց հուզել էր շլատի «զինադադար» սակայն զինադադարը փառք էր հաշտու

Հության պայմանագրի համեմատությամբ: Զորքը զինադաս դարի ժամանակ կանգնած մնացել էր իր տեղում՝ արյունով նվաճած իր դիրքերում: Արարատյան շտեմարանը մնացել էր հայության ձեռքին: Սակայն այժմ պետք էր ետ բերել հաղթական զորքը, աշխց ու ճախից ճանապարհներ տալ թուրքին, զիջել նրան Արարատյան դաշտի հարուստ, ժողովրդի բառով ասած «զիսակեր» բերքը. թուրք զորքին տալ Երևանի հարավ-արևմտյան արվարձանները...

Ազգային խորհրդի շենքի առաջ Երևանի բուլվարը շարունակ լեփ-լեցուն էր հատկապես արևմտահայ բողոքավոր բազմությամբ: Նրանք պահանջում էին, որ Արամ Մանուկյանն իր վերաբերմունքը ցույց տար: «Դիկտատորը» չէր երեվում: Հուզված բազմությունը հանգստացնելու համար Ազգային խորհրդի շենքի կիսաքանդ պատշգամբում երեսում էին թեմականի ուսուցիչներ դաշնակցական Ս. Թորոսյանը, Էսիո Դ. Զուբյանը, սակայն ժողովուրդը Արամին էր պահանջում: «Դիկտատոր» հայտարարված Արամ Մանուկյանը այդ վճռական ժամին շկարողացավ պատշաճ վճռականություն ցուցաբերել, համարձակություն չունեցավ՝ մերժելու Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի կնքած սպանիչ պայմանագիրը և, զիսավորելով հերոսացած ժողովրդի խանդավառությունը, շարունակել հաղթական ընթացք ստացած պատերազմն ու միանալ հերոս Բարվի հետ, որը հարձակման էր անցել ու արդեն մոտեցել էր անդրկովկասյան ռեակցիայի միջնարերդ Գանձակին:

Բողոքող ժողովրդին միացավ նաև բողոքող զորքը: Հունիսի 8-ին «Աշխատանքը» տպեց գործող բանակի զինվորների բողոքը:

«Դրծող բանակեն. — իմանալով հաշտության կնքման մասին, մենք միաձայնությամբ կհայտարարենք. —

Ո՞ւ Թիֆլիսը, ո՞ւ ալ Բաթումը լիազորված շեն հայերու անուննեն վերջնական բանակցություն վարելու թուրքերու հետ:

Հաշտության պայմանները կատարելապես ամոթալի և ստորացուցիչ են հայերու համար:

Ինչ եղբակացության ալ որ հանգեն այս կամ այն ազգային կազմակերպությունները, քանի դեռ հայ ժողովրդի Փիզիկական գոյությանը կսպառնա ահավոր վտանգը, մենք զենքը չենք թողուր և կկովենք մինչև մեր արյան վերցին կաթիլը:

Կորչի՛ ամոթալի հաշտությունը»:

(Ստորագրություններ, Հունիսի 8)

Սա պաշտոնապես, պայմանագրի 5-րդ կետով հրոսակ հայտարարված արևմտահայ զինվորների բողոքն էր:

Նույն օրը, Հունիսի 8-ին, բողոքի դուրս եկավ Երևանի պաշտպանության վաշտը:

Հաջորդ օրը, Հունիսի 9-ին, ազդու ցույց կազմակերպեցին ղամարլվեցիները, որոնց շրջանը ըստ նոր պայմանագրի եղկաթօքի հետ անցնում էր թուրքերին: Սեփական միջոցներով զինված 1200 հոգի, հարյուրյակների ու տասնյակների բաժանված, ատրճանակներով զինված գթության քուրքերով, կուռ շարքերով ղամարլվեցիները եկան Թոխմախան լճի կողմից, խրոխտ, բայց լուր շարքերով անցան Ազգային խորհրդի շենքի առջևից ու ետ գնացին Ղամարլու այն շհանձնելու հաստատ որոշում կայացրած: Երևանի ազգային խորհուրդը հաշվի շառավ նրանց բողոքը:

Թուրքերի վարպետ քայլով հաշտության պայմանագրի 5-րդ կետը նորից հրահրել էր արևելահայի և արևմտահայի հակամարտությունը: Երևանի քաղաքային դումայի դաշնակցական նախագահ Թոշյանի մարդիկ գլուխ էին բարձրացրել Ազգային խորհրդում: Ուղիղ քսան օր առաջ նրանք ուզում էին առանց դիմադրության թուրքերի ողորմածությանը հանձնել Երևանը: Այսօր թուրքերն այնքան ողորմած էին գտնվել, որ շէին մտնում քաղաքը, էլ ի՞նչ էին ուզում այդ տաքզլուս արևմտահայերը և թյուրիմացության մեջ ընկած զորքը:

«Դիկտատորն» այստեղ պետք է ասեր իր վճռական խոսքը: Սակայն Արամը դիկտատորական հաստատակամությամբ

օժանած մարդ չէր^{*}: Ուժեղ կամք ու վճռականություն նա շուներ: Իրերին, ինչպես ասել ենք, նա ընթացք չէր կարող տալ, այլ միայն կարող էր գլխավորել իրերի ընթացքը, եթե այն համընկներ իր ըմբռնմանը:

Բայց, ավելի լավ է խոսք տանք իր պարտիալին պատկանող մարդկանց: Այդ օրերի նրա զինվորական գործակիցներից Ա. Աստվածատրյանը 33 տարի հետո վերջիշում է:

«Նազարեկյանի հետագիրը կաշկանդել էր Արամին: Նա ողբերգություն էր ապրում. լուս ու մոռալ, միայնակություն էր փնտռում: Կատարելապես անտեղյակ դրսի աշխարհի անցուղարձին՝ նա սպասում էր Նազարեկյանին ու գրերե չէր մասնակցում Ազգ. խորհրդի նիստերին: Խոկ Ազգ. խորհուրդը առանց նրան ալեկոծվում էր, բայց ընդհանուր լիզու չէր կարողանում գտնել» («Հայրենիք», 1951, № 2,էջ 43):

Ա. Աստվածատրյանից տարբեր բան չի ասում Ս. Վրացյանն իր գրքում: Նա գրում է:

«Կարելի է երևակայել, թե այս (հաշտության.— Հ. Թ.) լուրը ի՞նչ տպալորություն գործեց Երևանում ու բանակի մեջ. հուսահատությունն անսահման էր. Ազգային խորհուրդը անընդհատ նիստեր էր գումարում, բայց որոշ եզրակացության չէր կարող հանգել, մեծամասնություն չէր կազմվում: Արամը գրերե չէր մասնակցում այդ նիստերին. նա ամփոփվել էր իր մեջ և սպասում էր զոր. Նազարեկյանին: Ազգային խորհուրդն ալեկոծվում էր առանց նրան» («Հայաստանի Հանրապետություն», էջ 122):

Սակայն Արամն արդեն ստացել էր թե՛ հաշտության պայմանագիրը, թե՛ Թիֆլիսի ազգային խորհրդի որոշումը և թե՛ մանավանդ ԱՀարոնյանի ու Աղբալյանի նամակը: Պատասխանատվությունն ուրիշի վրա բարդելու գրավոր հիմք կար և Արամը այդ հիմքերը ձեռքին ներկայանում է ժողովին:

Հունիսի 9-ի երեկոյան գումարվում է Երևանի ազգա-

* Նման անվճռականություն Արամ Մանուկյանը ցուցաբերել էր նաև վանում 1915 թ. ապրիլի 4/17-ին, սակայն այնտեղ դրությունը փրկել և ինքնապաշտպանության հաջողությունն ապահովել էր ոչ-դաշնակցական Արմենակ Եղյարյանի (Եկարյանի) հաստատակամությունը:—Հ. Թ.

յին խորհրդի, հատուկ հանձնաժողովի, զինվորական հանձնաժողովի ընդլայնված նիստը՝ շտարի և գործող բանակի ներկայացուցիչների մասնակցությամբ: Բոլորն էլ զիտեհին Արամի տրամադրությունը՝ նա էլ էր անցել Թիֆլիսի ազգային խորհրդի կողմը: Գծից եկել էր Դանիել բեգ Փիրումյանը, Սարդարապատի հերոսամարտի խսկական կազմակերպիչը, որը պատրաստվում էր գրոհել Ալեքսանդրապոլի վրա, սակայն զինադադարը կաշկանդել էր նրան: Այդ քաջ ու խրոխազինվորականը համոզում է շընդունել հաշտության պայմանագիրը, նա դիտե, որ թուրքերը ուժ չունեն, լոկ դիվանագիտական հաղթանակ են տարել Բաթումում՝ ուղմանակատում կուած շարաշար պարտությունից հետո: Գնդապետ Փիրումյանն աղերսում է, նա բռնված է անզոր զայրույթով, երեխայի ական լաց է լինում այդ մեծ երեխաների առաջ, սակայն Արամը մնում է անդրդիւիլի: Արամը ժողովականների առաջ դանդաղ կարդում է Ահարոնյանի և Աղբալյանի նամակը և նորից գլուխ բարձրացրած երեկվա կապիտով յանաների վրա հենվելով, պատասխանատվությունը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ու նրա «Հեղինակավոր» անդամների վրա բարդելով, ընդունել է տալիս ամոթալի պայմանագիրը:

— Ես շեմ կարող իմ հաղթական զորքին,— հուզված ասում է գնդապետ Դանիել բեգ Փիրումյանը, — հայտնել այդ խայտառակ լուրը, նրան ետ դարձնել իր արյունով նվաճած դիրքերից: Նահանջը կազմալուծիլ կլինի իմ զորքի համար: Ես գիծը շեմ վերադառնա, գնացեք և այդ սկ զործը դուք ինքներդ կատարեցեք: — Նա այդպես էլ ճակատ շգնաց, ուրիշներին թողնելով զորքը ետ բերելու տիտոր պարտականությունը:

Հունիսի 12—14-ին զորքը Աղին կայարանից ետ է բերվում Թալին—Քյորիկալու—Հայի Զեյվա գիծը: Արաքսի կամուրջները բացվում են թուրքական միակ թարմ մնացած 5-րդ դիվիզիայի առաջ: Սկսվում է Արաքսի նաև ձախափնյագյուղացիության գաղթը: Նահանջը հուսալքում ու կազմալությունը կայացած է գյուղացիության գաղթը: Նահանջը հուսալքում ու կազմալությունը է զյուղացիության գաղթը: Գյուղացիության գաղթն ավելի է ծում է զորքի շարքերը, գյուղացիության գաղթն ավելի է

սաստկացնում զորքի քայքայումը: Պարտիզանական գնդերի ղինվորները մեծ մասամբ սուրմալվեցիներ, զամարլվեցիներ և Արաքսի ձախափնյա մյուս հայ գյուղերից էին: Գաղթում էին նրանց ծնողները և ընտանիքները: Աշխարհազորայիններն էլ այդ գյուղերից էին, տունուտեղ, ընտանիք ու զավակ ունեցող մարդիկ, որոնք չէին կարող այդ նոր գաղթի ժամանակ օգնության շշտապել իրենց ընտանիքներին: Մահապարտների 5-րդ գնդի լրացուցիչ գումարտակի զինվորներն էլ աղետի ենթարկված մոտակա գյուղերից էին: Նրանց մեծ մասն էլ ցրվեց: Մնացին միայն 5-րդ գնդի զարաբաղյան կորիզը՝ թվով շուրջ 700—800 սվին, հրետանային մարտկոցները և Պերեկրյուստկովի նոսրացած գունդը:

Հունիսի 14-ին շարժվելով երկաթգծի երկարությամբ և ազատ անցնելով Արաքսը, թուրքերը լրջորեն փորձում են կանգ չառնել էջմիածնի և Երևանի մատուցներում: Թեև թրքական զորքերի նոր վերախմբավորումն արդեն տեղի էր ունեցել և հայերի նկատմամբ ժամանակավորապես կուրս փոխելու համար Խալիլ փաշան արդեն նշանակվել էր Հայաստանի սահմանների վրա կանգնած «Շարքի» զորախմբի հրամանատար, բայց նա Միջագետքից գեռևս չէր ժամանել, դեռևս պաշտոնազրկված Վեհիրը մնում էր գլխավոր հրամանատարի իր պոստում և Սարդարապատում ջարդ կերած Յաղուր Շեվքի փաշան դեռևս նստած էր Ալեքսանդրապոլում և վրեժինդրության համար առիթը ձեռքից չէր ուզում բաց թողնել: Բաթումի պայմանագիրը թուրքերի համար հերթական դիվանագիտական խաղ էր վարժապետներին խարելու և Երևանի գրավումը հեշտացնելու համար: Հայ ժողովուրդը կանգնած էր նրանց «ճամբուն» վրա, և թուրքերը ոչ մի դեպում, եթե կարողանային, չէին հանդուժի այդ խոշընդոտի գոյությունը: Բանն այն է, որ չէին կարող նախ, նրանց թարմ մնացած 5-րդ դիվիզիան, որն արդեն անցել էր Արաքսը, շտապ կարգով փոխադրվում էր Զարաքիլիսա՝ Դիլիջանի ձորով Գանձակ ուղարկվելու համար: Թուրքերն ուրիշ մարտունակ դիվիզիա չունեին Գանձակ տանելու համար: Մնում

էր Շեվքի փաշայի հապճեպորեն համոլրված դիվիզիան, որ երեք շաբաթ առաջ լավ ջարդ էր ստացել Սարդարապատում: Այդ օրհասական ժամին զրությունը նորից փրկում է «բոլշևիկյան» հորջորջված Մահապարտների 5-րդ գունդը: Նահանջն ու փլուզումը բացասարար չէին աղղել միմիայն արդ գնդի հիմնական կորիզի վրա, որը կազմված էր նոր գաղթի հետ ընտանեկան առնչություն շունեցող դարարացիներից: Հունիսի 15-ին էջմիածնի մատուցները հասնելով, թուրքերը շուղեցին կանդ առնել, սկսվեց արյունակի կոփի, որ Արարատյան դաշտի գյուղացիների հիշողության մեջ Քյորփալու (Ներկայում՝ Արշալույս) գյուղի անունով մնացել է որպես Քյորփալովի կոփի: Այդ կովում, հունիսի 15—16-ին Մահապարտների 5-րդ գունդը, Պերեկրյուստկովի պարտիզանական գունդը, զնդապետ Կարաքեշիշյանի, Կապիտան Աթանեսյանի և կապիտան Կիլչի հրետանային մարտկոցները նորից սաստիկ դաս տվին Շեվքի փաշայի զորքերին և նրանց ետ շպրտեցին նոր պայմանագրով սահմանված դիմքը: Այդ կովում ծանր վիրավորվեց պարտիզանական գնդի հրամանատար, ուստի զնդապետ Պերեկրյուստկովը:

Այսպիսով, «Թիֆլիս նստողները» աճուրդի էին հանել Սարդարապատը, սակայն այս անգամ դրությունը փրկեց Քյորփալուն:

Մինչ այդ, ի կատարումն Բաթումի հաշտության պայմանագրի 5-րդ հոդվածի, գեներալ Նազարեհելով հատուկ հրամանով Անդրանիկին արտաքսել էր «Արարատյան հանրապետության» սահմաններից: Ի դեպ, նա ուժ չգործադրեց այդ սիրագործությունը կատարելու համար, որովհետև Անդրանիկին արդեն ինքն էր հեռանում «Արարատյան հանրապետության» սահմաններից: Զկարողանալով դիմագրել Զալալօղլիի (Ստեփանավանի) վրայով Թորշալու շտապով թուրք զորքի ճնշմանը, Անդրանիկին իր զորամասով և իր հետևորդներով մայիսի 23-ին իշնում է Լոռվա ձորը, կտրում երկաթգիծը և բարձրանում Դսեղ (Թումանյան), որտեղից իջևանի վրայով մայիսի 30-ին հասնում է Դիլիջան: Հունիսի 5-ին նա դուրս է դալիս Դիլիջանից և Սևանա ափերով, Սելիմի

լեռնանցքով ու Դարալագյազի վրայով՝ հունիսի 18-ին հասանում է Նախիջևան, որտեղ գրության տերը դեռևս գնդապետ Խարազյանն էր իր 1300 զինվորներով։ Հունիսի 21-ին Անդրանիկը իր մի քանի հազար զորքով և բազմահազար հետևորդներով Զովքայի կամուրջով անցնում է Պարսկաստան, սակայն Խոյի շրջանում հունիսի 22—24-ին մարտի է բռնըվում Վանից Պարսկաստան մտած թուրքական բանակի հետ և նահանջելով, հունիսի 25-ին վերադառնում է Զովքա։ Հունիսի 25-ից մինչև հուլիսի 18-ը Անդրանիկը մնում է Զովքա—Նախիջևանի շրջանում, որտեղից նա հեռագրով կապվում է Բաքու Ստ. Շահումյանի հետ, Նախիջևանը հայտարարում է անբաժան մասը Սովետական Ռուսաստանի, սակայն Ալեքսանդրապոլից երկաթուղով ժամանած թուրքական զորամասերի ձնշման տակ հուլիսի 20-ին անցնում է Զանգեզուր և տեղական բնակչության աջակցությամբ նրան հաջողվում է 1918 թվականին Զանգեզուրը զերծ պահել թուրքական ներխուժումից։

Սակայն հաշտության պայմանագրի 5-րդ հոդվածը միայն Անդրանիկին ու նրա զորամասին շնորհաբերում։ Թուրքերը շատ ավելի լավ, քան Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդն ու նրա պատվիրակները, գիտեին, որ հայ բնօրբանում ժողովրդական պատերազմ էր սկսվել։ Դրա համար էլ նրանք «Հրոսակախմբեր» էին անվանել այդ իսկական ժողովրդական ուժերը, և Բաթումի կոնֆերանսի հայ պատվիրակները ստորագրությամբ վավերացնում են իրենց մահվան դատավճիռը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է» ոչ միայն «զինաթափ անել ու դրել այն բոլոր հրոսակախմբերը, որոնք կան այնտեղ թաքնվելու», այլև «եռանդով դիմադրել Հիսուսիախմբերի կազմավորմանն ու սպառագինմանն իր երկրի սահմաններում։» Այս հոդվածն ուղղված էր ոչ միայն Անդրանիկի ու Սմբատի, Սեբաստացի Մուրադի և մյուսների խմբերի դեմ, որոնք դուրս էին մնացել «Արարատյան Հանրապետության» սահմաններից և կարող էին ապավինել այնտեղ, այլև Սարդարապատի և Բաշ-Ապարանի հերոս պաշտպաններ Պան-

գուիտի, Թոուցիկ Հովսեփի, Մակեղոնի, Արսեն Տեր-Պողոսյանի, Սեթոյի, սասունցի Մանուկի, բոլանըցի Մուրադի և շատ ուրիշների խմբերի դեմ, որոնք կավել էին և գտնվում էին Արարատյան Հանրապետության սահմաններում։ Հունիսի 5-ից մինչև 15-ը, երբ Անդրանիկը Դիլիջանից Սելմով ու Դարալագյազով անցնում էր Նախիջևան, Սարդարապատի և Բաշ-Ապարանի հերոս պաշտպաններից շատերը, մասնավորապես արևմտահայերը, հուսալքված և թուրքերին հանձնվելու հեռանկարից խուսափած լինելու համար, թողին Արարատյան Հանրապետության սահմանները և փոքր խրմբերով գնացին ու ճանապարհին միացան Անդրանիկի զորամասին՝ նրա հետ բաժանելով արևմտահայության այս նոր նահանջ բյուրոցի ինչպես բոլոր աղետները, այնպես էլ պատմությամբ արդարացված բոլոր սիրանքները։

Դասալքության հետ միասին, որ չեր կարող նորից ղեկավարության մեղքով ժայր շառնել, արևմտահայ աշխարհազորայինների այս հեռացումը խիստ թուլացրեց Երևանի պաշտպանունակությունը։ Դրանից հետո եթե թուրքերը մի փոքր ազատ ուժ ունենային, նրանք ամեն բոպե կարող էին Թալա գյուղից շարժվել և մտնել Երևան։ Այս ճշմարտությունն ասում ենք ոչ միայն մենք, այն էլ հիմա, այս ճշմարտությունը բացահայտ էր նաև այն ժամանակ, և Երևանի ինքնապաշտպանության ակտիվ մասնակից դաշնակցականն անդամ այն ասել է մեզնից շատ առաջ։

«Երբ բանը վերջացավ նրանով, որ տաճիկները հաստատվեցին Երևանից 6—7 կիլոմետրի վրա, քաղաքի համար սկսվեցին մղձավանշային օրեր։ Ո՞վ է կասկածում ալսօր, որ եթե Գերմանիան չպարտվեր, կամ քիչ երկար դիմանար, տաճիկները չին մտնելու թրւան։ Մարդարապատից հետո նրանց խանգարեց Բաքուն, իսկ Բաքվից հետո՝ Գերմանիայի պարտությունը։ Բայց Երևանը ոչինչ չգիտեր, ո՞չ Բաքվի, ո՞չ էլ Գերմանիայի մասին և չեր կասկածում, որ թուրքերը մտնելու են Երևան» («Հայրենիք», Բութոն, 1951 թ., № 2, էջ 43)։

Ինչո՞ւ պիտի կասկածեր, երբ դաշնակցության դավա-

ճանական գործունեության հետևանքով Սարդարապատի և Բաշ-Ապարանի հերոսների մեջը կոտրվել էր և բոլոր դրուները բացված էին հայ ժողովրդի ամենաանողորմ թշնառ մու առաջ:

Միմիայն Բաքվի կոմունայի հերոսական պաշտպանությունն է, որ խառնելով թուրքերի բոլոր հաշիվները, նրանց թույլ շրեան մտնելու Գերմանիայի պարտության (նոյեմբերի 13) և Բաքվի անկման (սեպտեմբերի 15) միջև ընկած մոտ 2 ամսվա ժամանակամիջոցում թուրքերը, եթե ուժ ունենային, ապա կմաքրեին ամրող Անդրկովկասի հայ բնակչության հաշիվը, սակայն Բաքուն ոչ միայն նրանց ուժ չէր թողել, այլև Բաքվի անկման օրը նրանք պարտվել էին իրենց մայրաքաղաքի դռներին:

Ծունիսի 4-ի պայմանագիրն ստորագրելուց և Անդրկովկասի հայ բնակչության բնաջնջման հարցը միառժամանակ հետաձգելուց հետո թուրքերն իրենց ուժերը հապճեազրեն տարան Բաքվի վրա, որը հարձակման էր անցել մուսավաթականների գորքերի գեմ և հասել Մյուսյուսլու կայարանը: Օրակարգի առաջին հարցը Բաքուն էր: Սակայն պրոլետարական Բաքուն հեշտ չէր ընկճել: Սուրմալվում կանգնած և միակ թարմ մնացած թուրքական 5-րդ դիվիզիան հունիսի 16—18-ի կոփվներում խիստ ջարդ կրեց Մյուսյուսլու կայարանի մոտ՝ Կարամարիան գյուղում: Այդ 22մեցուցիչ հարվածից հետո թուրքերն իրենց ունեցած ու շունեցած բոլոր ուժերը Անդրկովկասի բոլոր վայրերից տարան Բաքվի ճակատը: Հուլիսին նրանց հաջողվեց մոտենալ քաղաքին, սակայն օգոստոսի 5—6-ին նրանք նոր ջարդ ստացան Բաքվի մատուցներում: Միայն սեպտեմբերի 10-ից հետո տաճիկները կարողացան նոր հարձակում ձեռնարկել Բաքվի վրա, երբ այդ ճակատն էին տարել նաև Պոլսի մատուցներից բերված դիվիզիաները և Դաղստանի իմամի գորքերը: Հենց Բաքվի գրավման օրը, 1918 թ. սեպտեմբերի 15-ին, Պոլիսը վտանգի տակ ընկավ, և տաճիկներն այլևս ժամանակ չունեին ո՛չ թուրքեստան անցնելու և ոչ էլ Անդրկովկասի

գործերով զբաղվելու: Հարկավոր էր փրկել իրենց մայրաքաղաքը:

Բանն այն է, որ թուրքերը Պոլսո մատուցներում պահում էին իրենց ամենաընտիր զորքը՝ մուսուլման ալբանացիներից հավաքագրված դիվիզիան: Օգոստոսի 5—6-ի պարտությունից հետո այդ դիվիզիան նրանք կարողացել էին Բաքվի վրա տանել միայն այն բանից հետո, երբ դաշնակից բուղարներն ստանձնել էին Պոլսո պաշտպանությունը: Սակայն Բաքվի անկման օրը, սեպտեմբերի 15-ին, բուղարները Մակեդոնիայում շարաշար պարտություն են կրում դաշնակիցների միացյալ ուժերից: Նահանջող բուղար զինվորները ապստամբում, ջախչախում են իրենց գլխավոր շտաբը և սեպտեմբերի 27-ին ուսպուրլիկա հոչակում: Գերմանական զորքերին թեև հաջողվում է արյան մեջ խեղզել բուղարական ապստամբությունը, սակայն ժողովրդական մասսաների համակրանքը Գերմանիայի ու Թուրքիայի կողմը չէր և գերմանոֆիլ Ֆերդինանդ թագավորը հարկադրված է լինում հոկտեմբերի 3-ին հրաժարական տալ, գահը հանձնելով իր թորիս որդուն: Այս ամենի հետևանքով սեպտեմբերի 15-ից Պոլիսը մնում է անպաշտպան, և թուրքերը հարկադրված են լինում մտածել մայրաքաղաքի պաշտպանության մասին: Գեռ Գերմանիան շպարտված՝ բուղարների նոր թագավորը բանակցության մեջ է մտնում Անտանտի հետ: Այս հանգամանքը թուրքերին ստիպում է Գերմանիայի վերջնական պարտությունից առաջ զենքը վայր դնել և հոկտեմբերի 30-ին կնքել Մուղրոսի պայմանագիրը:

Երեանը փրկվեց թուրքերի օկուպացումից, սակայն հայ ժողովրդի կորիզը չփրկվեց սովոր: 1917 թվականի բերքի բամբակը ճանապարհների փակ լինելու պատճառով չէր վաճառվել և հյուսիսից հաց չէր ստացվել: Խոհեմ և տնտեսվար հայ գյուղացին բամբակի դաշտերում ցորին ու բրինձ էր ցանել: Յանքափոխությունը շատ դրական էր անդրադառնել բերքի վրա, և 1918 թվականի գարնանը հացահատիկի հարուստ բերք էր աճում ու հասկավորվում Արարատյան դաշտում: Գյուղացին, մի ձեռքին բահ ու մյուսին հրացան, իր

ցանքը շրելիս գոհունակությամբ նայում էր աճող առողջ ծիլերին, լցվող ծանր հասկերին, ապա սրտի դողով նայում էր անհանգիստ շրջապատին, և սպասվող հարուստ բերքն ու անհանգիստ իրադրությունը նրան հիշեցնում էին իր պապերի խոսքը՝

— Գլխակեր բերք!

Եվ իրոք, 1918 թվականի բերքն Արարատյան դաշտում զլիսակեր եղավ: Քաջ զամարլվեցիները, որոնք մասնակցել էին Սարդարապատի կոփլներին և կազմակերպված բողոքել Բաթումի Հաշտության դեմ, որոշեցին չզրկվել հարուստ բերքից: Բաթումի պայմանագրով երկաթգծի հետ միասին թուրքերին անցնող իրենց գյուղերից նրանք դուրս բերեցին կանանց ու երեխաններին, սակայն տղամարդիկ զինված մնացին բերքը հավաքելու համար: Տաճիկները հումսի երկրորդ կեսին գրոհում են Ղամարլվի շրջանի վրա: Սկսվում է կոփլ: Հայերը ցրված են այգիներում, ամեն մեկն իր հնձանում: Նրանց շի հաջողվում կազմակերպված հակատով դուրս գալ թուրքերի դեմ, սակայն ցրված փոքրիկ խմբերով, երբեմն էլ միայնակ, համար դիմադրություն են ցուց տալիս: Թուրքերը ետ են քաշվում և հրետանային կրակի տակ առնում ինքնապաշտպանվողներին: Երեւանը, պայմանագրի տառն իսկ խախտած լինելու համար, թեև պատրաստ վիճակի մեջ է զնում իր ուժերը, սակայն ոչ մի օգնություն ցուց շի տալիս զամարլվեցիներին, որոնք կորուստներ տալով նահանջում են Աղբաշ և Երևան: Տաճիկները նրանց հետապնդում են մինչև համարյա թոխմախան լիճը:

Հուլիսի 7—9-ը ծանր կոփլներ տեղի ունեցան նաև էջմիածնի գավառում:

Մերոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը կաթողիկոսի հանձնարարությամբ միկնում է Թիֆլիս՝ գերմանական ներկայացուցիչ ֆոն Կրեսից խնդրելու, որ նա միշնորդի և թույլտրվություն ստանա, որպեսզի սովամահության մատնված գաղթականները մի քանի օրով գնան ու հավաքեն իրենց հասունացած ու կծղող բերքը: Եպիսկոպոսի առաքելությունը ոչ միայն ձգձգվում է ճանապարհների փակ լինելու պատ-

ճառով, այլև ապարդյուն է անցնում: Ցորենը կծղում էր, թուրքերն էլ, իրենց զորքը Բաքվի վրա տարած լինելու պատճառով, թույլ պահակակետեր ունեին: Գյուղացիները սովորություն են դարձնում զիշերով գնալ և քիշ-միշ հավաքել ու շալակելով բերքը թուրքերը հեծելազոր են բերում ու քում հանդուգն գյուղացիներին:

Հուլիսի 7-ին թուրքերը երկու ուղղությամբ հանկարծակի հարձակում են ձեռնարկում էջմիածնի և Երևանի վրա: Սարդարապատից նրանք առաջանում են դեպի էջմիածնին և կարխուն-Ռուսիանվից Զանգիբասարի վրայով դեպի Երեվան: Միակ մարտունակ մնացած Մահապարտների ճ-րդ գունդը, աշխարհազորացինների հետ միասին, որոնց մի ձեռգունդը, հրացան էր, իսկ մցուսին՝ մանգաղ, դուրս է գալիս էջմիածնից և Քյորփալու հայաբնակ գյուղի մոտ նորից լավ չարդ է տալիս տաճիկներին ու նրանց քշում իրենց ելման դիրքերը: Սակայն կապիտան Մամաջանյանի Սարդարայի գումարտակին և փոխգնդապետ Հակոբյանի սահմանապահ գումարտակին շի հաջողվում կանգնեցնել Կարխուն-Ռուսիանվից Հարձակվող թուրքերին, որոնք գրավում են Վերին ու Ներքին Խաթունարի, Մեհմանդար, Չորանքյարա, Նեջրու, Թազաբյանդ և Աղհամզալու գյուղերը: Բայց Սարդարապատից Հարձակում գործած իրենց զորամասի պարտության պատճառով՝ թուրքերը Զանգիբասարում կանգ են առնում՝ շրջապատման մեջ լընկնելու համար: Մինչ այդ Երևանին հաշողվում է օգնության հասնել կապիտան Մամաջանյանին և փոխգնդապետ Հակոբյանին ու պահել ճակատը: Այսպիսով, նորից գրությունը փրկում է ճ-րդ գունդը:

Լեռն գրում է՝ «Իսկությունն այն էր, որ թուրքաց Հայաստանը ոչնչացնելուց հետո երիտասարդ թուրքերը ոչընչացնում էին նաև ոռուաց Հայաստանը: Այս ծաղրական հանրապետությունն էլ, իհարկե, ժամանակավոր խաղ էր: Պոլսում թուրքերը հրատարակել էին Այսրկովկասի քարտեզը, որի վրա այլև Հայաստան չէր մնում» («Անցյալից», էջ 404):

Սակայն թուրքերի համար ուրբաթը շուտ եկավ քան-

շարաթը, և նրանց Հաջողվեց գրավել Երևանն ու բնաջնջն հայ ժողովրդի կորիզը: Բայց նրանք սովի ճիրաններին մատնեցին յաթաղանից փրկված հայությանը: 9 հազար քառ. կիլոմետրի վրա, որի 8/10-ն անջրդի լեռներ են, կուտակվել էր շուրջ մեկ միլիոն բնակչություն, որի ոչ պակաս 2/3-ը հին ու նոր գաղթականներ էին, տնից-տեղից տեղահան արված ու անօգնական բազմություններ, որոնք խոսով էին սնվում Կոտայքի և Սևանա ավաղանի աղքատիկ լեռներում: Երկիրը նման էր մեծ գերեզմանոցի, սովոր զնալով ավելի ահավոր էր դառնում, բայց պարենամթերքի ներմուծման ոչ մի հույս չկար: 1918 թվականի երկրորդ կեսին սովից ու տիֆից ավելի շատ հայ կոտորվեց հայկական «անկախության» տերիտորիայում, քան թե նույն թվականի առաջին կեսին թուրքական յաթաղանից՝ թուրքերի օկուպացրած տերիտորիայում: Այդ ժամանակամիջոցում սովից կոտորվածների թիվը հաշվում էր 180 հազար:



1918 թվականի հունիսի կեսին Թիֆլիսի Հայոց աղքաղին խորհուրդը, որ կենտրոնականն էր մինչ այդ, ավարտեց իր անփառունակ գոյությունը:

Ավ. Ահարոնյանին, միշտ անխուսափելի Ա. Խատիսովի հետ, նա Պոլիս ուղարկեց դահիճների ողորմածությունը հայցելու համար, իսկ Հովհաննես Քաջազնունուն, ըստ երեկույթին ի տրիտուր նրա «Հայրենանվեր» գործունեության, Երևան ուղարկեց որպես վարչապետ:

Հունիսի 17-ին, Ղազախի վրայով, Քաջազնունին ժամանեց Երևան, որի բնակչությունը շատ սառն ու անդամ թշնամաբար ընդունեց նրան, թեև միջոցներ էին ձեռք առնելով առաջին վարչապետի մուտքը քիչ թե շատ հանդիսավոր դարձնելու համար:

Հայաստանի մայրաքաղաք Երևանն այն ժամանակ, իհարկե, արդյունաբերական կենտրոն չէր գիտակից պրոլետարիատի հուժկու բանակով: Այն, ինչպես ասվում էր, ավել-

լի շուտ մայրագյուղ էր: Նրա բողոքը չէր կարող դրսենորմել բանվորության հզոր ցուցերով, գործադուլներով: Կարշապեսի աթոռին էլ նախանձողներ չկային: Նրա վրա, ավելի ահավոր, քան դամոկլյան սուրը, կախված ճոճվում էր թուրքական յաթաղանը: Ստեղծված մղամանջային իրադրության մեջ, յաթաղանի տակ և սովի ճիրաններում «սահմոկած» ժողովուրդը, բնականաբար, անընդունակ էր գայրույթի կազմակերպված պոռթկումների:

Մակայն դժգոհություն ու բողոք կար, և զայրույթը պիտի պոռթկար յուրօրինակ ձևով:

Էլությամբ արտիստ, պաշտոնով պարետ Ա. Շահնամունուն առաջարկվում է կազմակերպել Թիֆլիսից ժամանող կառավարության ընդունելությունը:

Քառասուն տարի անց գաշնակցության իսկ ամսագրում տպագրելով իր հուշերը, մի պահ արտիստը հաղթահարում է զինվորականին, և նա իրեւ թե կատակի տալով գրում է.

«Ես իմ կարգին պատասխանեցի կատակով, թե ես պիտի նախընտրեի նրանց բոլորին բանտարկել» («Հայրենիք», 1959 թ., Ժ, էջ 91):

Բայց ժողովուրդը, մասսան կատակելու տրամադրություն չուներ:

Երևանում ու էջմիածնում հանրածանոթ դեմք էր քաջ սպա Եգոր Մինասյանը: Նա ծնվել էր Սարդարապատ գյուղում, մասնակցել հայ ժողովրդի մեծ հերոսամարտին, հաղթել, սակայն շատերի հետ նա էլ բռնել էր հարկադրական գաղթի ուղին և ճաշակել գաղթականի դառնությունները: Էջմիածնեցի Խաչատուր Կարճիկյանը դաշնակցության գլխավոր պարագլուխներից մեկն էր և, իրեւ Անդրկովկասյան սեյմի կառավարության ֆինանսների մինիստր, Գեղեցկորու և ապա Զիսենկելու հայ կցորդներից մեկը: Ժամանակին նա էր Եգոր Մինասյանին ներգրավել դաշնակցության շարքերը: Հայ ժողովուրդը Կարսի դավաճանական անկումը վերհիշելիս Կարճիկյանի անունն էր տալիս: Եվ ահա նա, էջմիածնեցի Կարճիկյանը, Քաջազնունու հետ, որպես Հայաստանի առաջին ֆինանսների մինիստր, ժամանել էր Երևան:

Դաշնակցական սպա Եգոր Մինասյանը գնում է իր պատրոնի՝ մոտ՝ անձամբ նրանից լսելու նրա բացատրությունները։ Բացատրություններից դժգո՞ն Եգոր Մինասյանը զայրացած հանում է ատրճանակը և սպանում հայրենադավ պատրոնին։ Այնուհետև պարտքը հատուցած մարդու նման հանգստացած՝ նա դուրս է գալիս ու հայտնում, թե մինիստրին սպանեցի, կարող եք ինձ ձերքակալել։ Դաշնակցականների կառավարությունը թեև ձերքակալեց նրան, դատեց, բայց չհամարձակվեց պատժել։ Այնքան մեծ էր դժգո՞ններին անգամ շարքային կուսակիցների շարքերում։ Ա. Խատիսովը այսպես է հաղորդում վրիժառության և բողոքի այդ ակտը։

«Սպանիչը Եգոր Մինասյան, դաշնակցական մըն էր, որ բանտարկված էր։ Դատարանին մեջ ան հայտնեց, թե սպանած է Կարճիկյանը նկատելով դայն մեղավոր այն բանի համար, որ Կովկասյան իշխանությունները զրկեցին Կովկասը ուստական օգնութենե և այդպիսով թուրքերուն հանրավորություն տվին Պագվի մեջ կոտորած սարքել» (էջ 97)։

Ընդհանուր փլուզման ու անկման, սուլի և անգործության, անորոշության և անհետանկարության պայմաններում տիրել էր ընդհանուր հուսալրում, արժեքազրկվել էին փրուն հեղինակությունները։ Նման պայմաններում աշխարհազորային խմբերի թե՛ ղեկավար և թե՛ շարքային շատ անդամներ, որոնք երեկ քաջության հրաշքներ էին գործել ու հաղթել, բայց չեին վայելել հաղթանակի պտուղները, չեին կարողանում գտնել իրենց ուժի և ունակությունների ճիշտ գործադրություն և զուրկ էին ապրուստի միջոցներից։ Այդ մարդիկ դարձել էին աջ ու ձախ խժդություններ գործող կամակոր ու խոլական մասուղերիստներ։ Դրանց մեջ ամենից ավելի աշքի էին ընկնում հենց Գրոյի զինվորները, նրանք, որոնք երեկ պաշտպանել էին Արաքսի գետանցները, կովել էին Սարդարապատում և Բաշ-Ապարանում։ Բայց հիմա պատուհաս դառնալով, մասուղեր առած խժդություններ էին գործում քաղաքացիների զլիին, տարբեր խմբեր կազմած հոշոտում էին միմյանց։

Բերենք մի բնորոշ օրինակ։ Իր տեղում խոսեցինք

Սարդարապատի հերոսներից տրապիզոնցի Թոռոցիկ Հովհաննի մասին։ Հովսեփի դաշնակցության հին մարտիկներից էր Թաթումում գործող տեսորիստների խմբի անդամ։ Մասնակցել էր կամավորական շարժմանը և 1918 թվականին ուներ ձիավորների իր հարյուրակը։ Նրա հեծյալներից կարկառի եղիշը, որն իր 16-ամյա եղբոր հետ կովել էր Սարդարապատում, դաշնակցության տիրապետության ժամանակ միզոյդ եղ էր ճարիկ և բեռներ էր փոխազրում։ Մասուղերիստներ իգդիրցի Միհրանն ու Կուկուլը և կողքեցի Կոկոլը այդ դույդ եղը համշաբակելու համար էջմիածնի մոտ սպանում են հարկացի եղիշին։ Թոռոցիկ Հովսեփը, որ զինվորական պաշտոն ուներ, կուահելով, որ իր նախկին զինվորին սպանողներն այդ երեք հոգին կլինեն, սպանում է նրանց պատժել։ Սակայն Միհրանը, Կուկուլը և Կոկոլը «կորպորացիայի» ամելի ստորին օղակի պտուտակներ էին, իսկ ավելի բարձր օղակի «գործիչներ»՝ իգդիրցիներ Ֆրանգենց Ալեքը, Արարուն ու Գասպարը չեն հանդուրժում Թոռոցիկ Հովսեփի այդ քայլը և օր-ցերեկով մեջտեղից վերացնում են ինքնագլուխ խոշընդոտին։ Եվ անվանի մարտիկ Թոռոցիկ Հովսեփին սոլանողները մնում են անպատճի, որովհետև նրանք վայելում էին Գրոյի հովանավորությունը։

Ուրիշ օրինակ։

Այս միևնույն իգդիրցի Միհրանն ու Կուկուլը և կողմանիցի Կոկոլը երկաթուղու կայարանից տուն վերադառնալու ժամանակ երևանում սպանում են Վանեցիների գնդի զինվոր Մանվել Արազյանին։ Վանեցիները մեծ ցույց են կազմակերպում մասուղերիստների խժդությունների զեմ։ Յուցարարները Վանի ինքնապաշտպանության հինգ անվանի դիրքապետների ընտրում են իրենց բողոքը հայտնելու վարչապետ Խատիսովին։ Կառավարական շենքում նրանց տռաջըլտրում է ինքը՝ Գրուն և գոռգոռում նրանց վրա՝ «հակակառավարական ցույց» կազմակերպելու համար։ Դիրքապետներից մեկը մասուղերը քաշում և փորձում է Գրոյին տեղնուտնեղը գետին փոել, սպակայն մլուսները խանգարում են։ Աղմուկի վրա կարինետից դուրս է գալիս Խատիսովը և աշխա-

Հնարակվորությանը: Այստեղ էլ նա մեռնում է անտերության մեջ, 1920 թվականի ամռանը:

Բայց դաշնակցությունը գաժան հաշիվ տեսավ նաև Սարդարապատի և Բաշ-Ապարանի հերոսամարտերի մասնակից կոմունիստների և հատկապես Մահապարտների 5-րդ գնդի հետ:

Օսմանյան թուրքերի արշավանքը դասակարգայնորնն և քաղաքականապես ուղղված էր ամենից առաջ Հոկտեմբերյան ուլուցոցիցի նվաճումների դեմ Անդրկովկասում: Պրոլետարական Բաքվում հաստատված սովետական իշխանությունը բուրժուական կարգի տապալման հետ մեկտեղ սպառնում էր վերացնել բնական հողատիրությունը, ոչնչացնել այն ֆեոդալական տարրերի տնտեսական ու քաղաքական ուժը, որոնք օսմանյան բռնապետության հավատարիմ գործակալներն էին Անդրկովկասում: 1917 թվականի վերջերից հանցավոր դաշինքի մեջ մտնելով բնական ու թավազների հետ, դաշնակցության վարած քաղաքականությունն իրապես դարձել էր օսմանյան օկուպացիային ընդունածող և ի վերջո նաև օկուպանտներին սպասարկող գործոններից մեկը: 1918 թ. մայիսին, ժողովրդական պատերազմի ծավալման օրերին, երրորդ ժողովուրդը արդար ցասումով լցված զենքը ձեռքին մեն-մենակ կենաց ու մահու պայքարի էր դուրս եկել իր № 1 թշնամու դեմ, որ ֆիզիկական մահ էր բերում նրան, դաշնակցությունը ոչ միայն համոզված էր, այլև արդեն տեսնում էր, որ № 1 թշնամու հետ հաշիվը փակելուց հետո հայ ժողովուրդը չէր հապաղի նաև վերջ տալու № 2 թշնամու՝ դաշնակների խարիսխած ղեկավարությանը: Դաշնակցությունն իր դիրքերը պահպանելու համար հարկադրված էր շտապելու, հարկադրված էր շուտափությ ծախելու Սարդարապատի ու Բաշ-Ապարանի հերոսամարտերը, որպեսզի երկարագույն իր նողկալի տիրապետությունը: Եվ դրա համար էլ շակերտավոր հրոսակախմբերի դեմ ուղղված 5-րդ հոդվածի հետ միասին, շխորշելով թուրքի օգնությունից, սիրով ստորագրում էր նաև 4-րդ հոդվածը.

«4. Օսմանյան կայսերական կառավարությունը պար-

տում է խաղաղեցնել բոլորին՝ խոստանալով գտնել և պատժել հանցավորներին:

Հանցավորները շեն բռնվում ու շեն պատժվում, սակայն Գրոյի վրա մառվեր քաշած վանեցի դիրքապես Արարագի Սենոն հարկադրված է լինում հեռանալ Հայաստանի սահմաններից:

Դաշնակցականներն ունեին թուրքացի Գրիգոր (Գեղյան) անունով մի հին հայուկ, որը թուրքարիայի իր ապահով կյանքը թողած՝ դաշնակցության շարքերում տարիներ շարունակ դինվորություն էր արել Վանում: 1915 թ. ապրիլյան ժարաերի ժամանակ նա ընտրվել էր զինվորական եռյակի անդամ և ակտիվորեն մասնակցել Վանի հերոսական ինքնապաշտպանության ղեկավարմանը: 1918 թվականին նա վանի ամբողջ վիւայեթի զինված ուժերի ղեկավարն էր, որոնց հետ հարկադրական նահանջի ժամանակ ընկել էր Միջագետք, սակայն 1919 թվականին ծովեր ու ցամաքներ կըտրելով շտապել էր վերջապես «անկախ Հայաստանի» մայրաքաղաքը՝ Երևան: Բայց իրականացած երազն անմիջապես հիմասթափեցրել էր նրան, և նա չկարողանալով տանել մառվերիստների վայրագությունները ու կառավարող կլիկի կամայականությունները, թքում հեռանում է և հայրենի Բուլղարիայի ճանապարհին, հիվանդ ու ընկճված, 1920 թվականին մեռնում է Պոլսում: «Պուլկարացի Գրիգորը, — պատմում է իր հուշերի մեջ Սմբատը, — զայրացած եղած անարդարություններին ու հայրենիքի ապագան վտանգող մութ ձեռնարկներն, պիտի ձգեր հեռանար: Ուզեցի զինքը համոզել... բոլոր ճիգերս անօգուտ եղան և Գրիգոր մեկնեցավ թուրքարիա» (Հայկ. ՍՍԾ պատմության թանգարան, Սմբատի հուշերը, տետր 4, էջ 53):

Տիսուր վախճան ունեցավ հնչակյան խմբապետ Պանդուխտը: Գաղափարական Պանդուխտը (Միքայել Սերյանը) պատշաճ տեղ շգտնելով մայրաքաղաքում, իր շատ նոսրացած խմբավ գնացել էր անհյուրընկալ Սարիղամիշ՝ սպասելով հայրենի Մուշ ու Սասուն վերադառնալու առաջին իսկ

տավորվում է ղենքի ուժով օգնություն հասցնել Հայաստանի Հանրապետության կառավարության այն դեպքում, երբ Կիրշինս նրան կխնդրի այդ մասին կարգը և հանգստությունը երկրում ապահովելու համար» («Հորիզոն», 1918 թ. հունիսի 11):

Օսմանյան տեսակետով Կովկասում կարգը, հանգստը խանգարում էին մանավանդ «դաժան բանդիտները, այսպիս կոչված ուսուցիչներները», որոնք Բաքվում հաստատած իրենց «արյունալի լուծով» «ավելի քան կրիտիկական ու երկմիտ» էին դարձնում «Կովկասի դրությունը» (Խալիլ բեյի մայիսի 26-ի վերջնագրից): Բաթումում կնքված պայմանագրի շորորդ հոդվածով դաշնակցությունն շտապում էր ոչ միայն ընդառաջելու թուրքերի ռեակցիոն ծրագրի իրագործմանը, այլև կանխաճռիդրեն ապահովելու իր տիրապետությունը:

Պայմանագրի շորորդ հոդվածով գոտեպնդիլած դաշնակցությունը պայքար սկսեց զորամասերում եղած կոմունատների դեմ և առաջին հերթին կազմալուծեց Մահապարտների 5-րդ գունդը, որն ուներ իր գնդային կոմիտեն: Վերհիշելով 5-րդ գնդի «բոլշևիկյան» անունը, նրա ըմբռուտացումը վանի Տրլաշին գյուղում, տրոհեց այդ գունդը, նրա մի մասը հանձնեց գնդապետ Սամարցյանին և անվանեց 3-րդ գունդ, իսկ նախկին հրամանատար Պավել Փիրումյանին (գեներալ Սիլիկովի հետ միասին) քշեց նոր Բաքազիտի երկրորդական շրջանը:

7. ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՈՒԽ ՀԱՅԵԼՈՒ ՄԵԶ

Մենք տեսանք, որ Երգնկայից մինչև Սարդարապատ թուրք բարձր հրամանատարությունն իր զիվանագիտությամբ հեշտացրեց իր քայքայված և անմարտունակ զորքի առաջնադրությունը: Տեսանք նաև, թե ինչպես անդրկովկասյան կոնտրուևլուցիոն պարտիաների հակասովետական կոռալիցիան,— որին միանալու իր տխմար ու հանցավոր քաղաքականությամբ դաշնակցությունը հայ ժողովրդին զրկել էր Սովետական Ռուսաստանին ապավինելու հնարավորությունից,— զանազան գաղտնի ու հայտնի միջոցներով նպաստել էր թուրքերի այդ առաջնադրացմանը: Տեսանք նմանապիս, թե ինչպես Սարդարապատի մայիսի 22-ի հաղթանակը շրջադարձային նշանակություն ստացավ հայ ժողովրդի համար:

Եթե 1918 թվականի մայիսի 22-ին հայ զորքն ու աշխարհազրայինները փայլուն հաղթանակ շտանեին Սարդարապատում, ապա թուրքերը մի քանի ժամ հետո կմըտնեին էջմիածին, իսկ մի օր հետո՝ Երևան: Թուրքերը դեպի Արքքաջան և ապա Գաղստան ու Թուրքեստան տանող ճանապարհի վրա խոշընդոտ շին թողնի: Սակայն Սարդարապատն ու Բաքուն խառնեցին նրանց բոլոր հաշիվները և ապահովե-

ցին հայ ժողովրդի կորիպի ֆիզիկական գոյությունը և ճանապարհ բացին նրա հետագա պատմության առաջ:

Դաշնակցությունն իր տիրապետության երկուսկես տարվա ընթացքում, հասկանալի պատճառներով, շարժեքավորեց ինչպես Սարդարապատի առաջին և հետագա ճակատամարտերը, այնպես էլ Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի մեծ կոփիլները, շուտումնասիրեց այդ կոփիլների պատմությունը, փորձը, չնշեց Սարդարապատի ո՞չ առաջին, ո՞չ էլ երկրորդ տարեդարձը, որովհետև դրանք ժողովրդական կոփիլներ էին և մղվել էին իր անփառունակ ղեկավարության վրա դրված վերջակետից հետո միայն: Գտնվեց միայն մի կոմունիստ (Մ. Ղ.-ն), որ մասնակցել էր Ղարաքիլիսայի կոփին և ականատես էր եղել հայ զորքի հաղթանակին ու պարտությանը Ղարաքիլիսայի ճակատում, որը մի բարակ բրոցյուր տպագրեց Թիֆլիսում 1920 թվականին, դեռ մենշևիկների տիրապետության օրոք: Սակայն Բաշ-Ապարանի և Սարդարապատի մասին ոչինչ շպրվեց, բացառությամբ մի երկու փոքրիկ հոգվածի, որ 1920 թվականին լույս տեսան «Ռազմիկ» պինդորական թիրթում: Ինչո՞ւ: Որովհետև այդ հերոսամարտերը դաշնակցությանը չեին, այլ ժողովրդինը, իսկ ժողովրդից դրանց դափնին խլելը հեշտ չեր: Դաշնակցականները լավ էին ըմբռնել, անշուշտ, որ նշված հերոսամարտերի ճշմարտացի պատմությունը կարող էր միայն վարկարենել իրենց:

Դառն տարագրության մեջ, երբ կապիտալ է հարկավոր դաշնակցության սնանկացած ֆիրման և եղկելի գոյությունը մի կերպ պահպանելու համար, և երբ արդեն կենդանի չէ ճակատամարտի մասնակիցների մեծ մասը, դաշնակցությունը տեր է կանգնել Սարդարապատի հերոսամարտին և թըմբկահարել իր օգտին:

Նրանք գրում են հուշեր, հաստահատոր զոքերում առանձին էջեր են նվիրում Սարդարապատի դրվատմանը, փառարանում են իրենց մարդկանց: Եվ քանի որ սուտ է նրանց զրածն ու միտումնավոր, ապա այն հերքելու համար կարելի

է հոռուն չգնալ, այլ բավարարվել իրենց իսկ աղբյուրներով երևանցի բժիշկ Հ. Մելիքյանը գրում է.

«Երբ այս (Ալեքսանդրապոլի.— Հ. Թ.) նահանջի մասին լուր է առնում երևանի Ազգային խորհուրդը, որոշում է ճակատագրական կոփիլ տալ Սարդարապատում և Բաշ-Ապարանում: Այս որոշումը հանձնվում է զինվորական իշխանությանը ի կատար ածելու համար» («Հայրենիք», 1925 թ., № 7, էջ 74):

Բայց երևանցի բժիշկն այդ ժամանակ երևանում չէր գտնվում, այլ Ղասարբաշյանի զորամասի հետ Ալեքսանդրապոլից նահանջում էր Կոչ գյուղը: Ուստի երևանցի բժիշկը չի կարող գիտվել որպես օրհասական օրերին երևանում կատարված դեպքերին իրազեկ վկա: Դաշնակցական զինվորական գործիչ Ա. Աստվածատրյանն այդ ժամանակ երեվանում էր գտնվում և ի պաշտոնի սերտ առնչություն ունեց այդ օրերի իրադարձությունների հետ: Նա էլ է նույն ամսագրում տպագրել իր հուշերը, բայց նրա հուշերի մեջ երևանի ազգային խորհրդի այդպիսի վճռական որոշման հիշատակություն չկա: Նախ, նա գիտեր, որ այդպիսի որոշում չի եղել, երկրորդ,— սա կարող է մանրուք լինել,— այդ ժամանակ երևանի ազգային խորհրդից արդեն առանձնացված էր Հատուկ հանձնաժողովը, որը միայն կարող էր այդ տագնապալի օրերին որևէ որոշում կայացնել: Իսկ ճակատամարտ տալու նպատակահարմարության և տեղի ընտրության որոշումը կարող էր կայացնել միայն բարձր հրամանատարությունը: Իսկ այդ հրամանատարությունն ինչո՞ւ պիտի նախապատվությունը տար Սարդարապատին, նրա ո՞ր դիրքային առավելության համար: Սարդարապատն անապատում ընկած մի փոքրիկ կայարան էր, միանգումայն անպաշտպան վերևից՝ Կարաբուրուն—Արաքսից իջնող և այդ բարձունքից կրակող թուրք զորքի առաջ: Գեն. Սիլիկովի ուղմավարության մասին մեծ կարծիք չունենք, սակայն և այնպես նա զինվորական էր ու գեներալ, նա շատ լավ գիտեր, որ Կարսն Ալեքսանդրապոլը պաշտպանելու ի վիճակի շեղած զոր-

քին չի կարելի կույի հանել Սարդարապատի հարթավայրում։ Նրան լավ ծանոթ էր Ուկուսանլուն և նա մտածում էր, — բայց միայն նախքան Երևանի քաղաքային դումայի կապիտուլյանտական որոշումը, — թե միգուցե հնարավոր լինի որևէ մի բան անել Կարխուն-Ուկուսանլուի ճահճուտներում։ Բայց ուշագրավ է, որ իրազեկ Ա. Աստվածատրյանը, հարգանքի տուրք տալով գեն. Սիլիկովին, նույն ամսագրում համեստուրեն ասում է՝ «զիտեհինք արդեն, որ ընդհարումների նախօրյակին նա հոռետես էր» («Հայրենիք», 1951 թ., № 2, էջ 42):

Շատ ավելի իրազեկ Ա. Շահնաթունին, միևնույն ամսագրում, վկայում է, որ բարձր հրամանատարությունը կոփէ մզելու որոշում կայացրեց միայն կոփէն սկսվելուց հետո:

«Այո՛, լուսմ եմ. սա Սարդարապատի թնդանոթների ձայներն են։ Բայց ձայներն ավելի մոտ են լսվում։ Դա վատ նշան է...»

Վերջապես հավաքվեցինք: Երկու վայրկյան հետո եկալ սպարապետ Նազարենյանը: Ներկա էր նաև դժիգ մասնավորապետ եկած գորավար Սիլիկյանը:

Երկու հարց կար: Առաջինը նահանջել ու լքել Երևանը և բարձրանալ բարձունքները, ամրանալ այնտեղ ու այնաեղից շպրտել թշնամուն: Երկրորդն էր՝ դիմել ամեն միջոցի, որպեսզի թույլ շտրվի տաճիկներին մտնելու Երևան ու էջմիածին:

Զնայած հարցի երկու կողմն էլ շատ լուրջ էին, կարճ անեց ժողովը:

Սպարապետը ոչ մի բառ չէր արտասանում և լսում էր, թեև որոշումը ինքը պիտի գործադրեր: Սիլիկյանը համաձայն չէր Երևանը հանձնելուն: Արամը նույնպես: Վերջին խոսքը ինձ տրվեցավ: Ես ասացի.

— Մեր ժողովուրդը կարող է քայլայիլել և այլև ոչ մի դիմադրություն ցույց շտալ թշնամուն, եթե Երևանը և էջմիածինը հանձնվեն:

Սիլիկյանը ասաց.

Բայց կա մի պայման: Կարո՞ղ եք վստահեցնել ինձ, թե վաղը կամ մյուս օրը Երևանից ինձ կհասնեն օժանդակ

պահեստի ուժեր՝ իրենց հետ բերելով ամեն տեսակ մթերք, ուսպանյութ և անհրաժեշտ առարկաններ:

Արամը ցատկեց տեղից և ասաց.

— Ես և Շահնաթունին երաշխավորում ենք: Ամեն ինչ կանենք, որ գեներալը ունենա իր ցանկացածը մեր լիակատար աջակցությամբ:

Ղողանջում էին Երևանի եկեղեցիների զանգակները» («Հայրենիք», 1959 թ., № 6, էջ 98 և 99):

Այստեղ անվիճելի չէ այն ամենը, ինչ Շահնաթունին ասում է իր մասին: Սակայն միանգամայն անվիճելի է այն, որ նրա հիշատակած նիստը, — եթե այդպիսին իրոք տեղի է ունեցել, — ապա տեղի է ունեցել միայն այն ժամանակ, երբ Սարդարապատի կոփէն արդեն սկսվել էր («Այո՛, լուսմ եմ, սա Սարդարապատի թնդանոթների ձայներն են»), երբ էջմիածնին ձայնակցելով արդեն «զողանջում էին Երևանի եկեղեցիների զանգակները»: Ճիշտն այն է, որ Երևանը կը ուղելու որոշում կայացրեց միայն Սարդարապատի առաջին հաղթանակից հետո:

Այսպիսով, Երևանցի բժիշկ Հ. Մելիքյանի գրածը մտացածին է:

Ս. Վրացյանը դաշնակցության թե՛ այդ նույն օրգանում և թե՛ առանձին հրատարակած գրքում այդ առթիվ գրում է.

«Թուրքերի թշնամուր հարձակումը մի պահ Երևանում առաջ բերեց անսպասելի իրարանցում ու սարսափի: Դիմադրությունը շատերին թվում էր անհնար ու անիմաստ: Հաղթության վստահություն չէին ներշնչում և մինչև այդ բանակից հասնող տեղեկությունները. զոր. Սիլիկյանի հաղորդագրությունները մոայլ գույներով էին ներկայացնում զորամասերի դիմադրական կարողությունը: Բնակչությունը պատրաստվում էր փախուստի» («Հայաստ. Հանր.», էջ 118):

Հ. Մելիքյանը խոսում է նաև Սարդարապատի ճակատամարտին մասնակցած զորամասերի, նրանց թվի մասին և այլն: Նրա տեղեկությունները տեսնդենցիող են և սխալ: Իստ նրա ցուցակի մոտ 10 հազար հոգի է մասնակցել Բաշնապարանի և Սարդարապատի կոփէներին, որոնցից խմբերի

բաժինը ընդամենը 500 սլին է, ուրեմն կաղրային զորքի թիվը եղել է 9500 զինվոր: Մինչդեռ, ինչպես տեսանք, խմբերի և աշխատավոր գյուղացիության մասնակցությունը թվական տեսակետից երբեք պակաս չի եղել կաղրային զորքի թվից, այնինչ Հ. Մելիքյանը աշխատավոր գյուղացիության՝ աշխարհազորայինների մասին ոչ մի խոսք չի ասում: Երբերից էլ տալիս է միայն երեքի անունը, այն էլ անձիշտ: Պանդուխտի և Թոուցիկ Հովսեփի մասին նա նույնպես ոշինչ չի ասում: Հ. Մելիքյանի ցուցակը շատ սխալ է: Բերենք միայն մեկ օրինակ: Նա Բաշ-Ապարանի և Սարդարապատի կովողների ցուցակի մեջ է մտցնում «Վանի Ա. և Բ. հրայանածիդ գնդերը — 2500 սլին», Վանեցինների գնդերը միասին երբեք այդպիսի մեծ կազմ չեն ունեցել: Նրանց առավելագույն թիվը եղել է 1200, ոչ ավելի, իսկ Սարդարապատի կոփենների օրերին Վանի Ա. և Բ. գնդեր չկային, այլ կար միայն մեկ գունդ՝ 800 սլին կազմով, որը ո՞չ այդ օրերին և ոչ էլ հետագայում ամեննեին Սարդարապատի կամ Բաշ-Ապարանի ճակատներում չի եղել: Նա 1918 թվականի մայիսի սկզբից Չորրորդ գունդ անունով գործում էր Ղամարլու-Յուլայի ճակատում՝ պահպանելով Գայլի Դրունք գետանցը:

Հ. Մելիքյանը շատ ծիծաղելի է դառնում, երբ փորձում է պատկերացնել կովի ընթացքը:

«Տաճիկները, — գրում է նա, — թողնելով մեզ իրենց զիրքերը և Յ օր հետո դեպի Ալեքսանդրապոլ նահանջելուց հետո, տեսնում են, որ իրենց հետապնդող չկա, նորից վերադառնում և Արաքս կայարանի մոտերը, մայիսի 25-ին, Հանդիպում են մեր բանակին: Տեղի է ունենում տաք կոփվ. մեր բանակը կարծելով, որ իրենց առաջ մեծ ուժ է կանգնած, զիշերը նահանջում է, իսկ տաճիկներն էլ տեսնելով հայերի ուժեղ դիմադրությունը, իրենց հերթին նույն զիշերը նահանջում են դեպի Ալեքսանդրապոլ» («Հայրենիք», 1925 թ., № 7, էջ 75):

Պարզվում է, որ Հ. Մելիքյանը մանկական գրողի շնորհը էլ է ունեցել: 10—12 տարեկան հասակում «աշիրաթ» կազմած ճիշտ այսպես էին կովում մեր թաղի տղաները:

Մնում է ենթադրել, որ կամ «Հայրենիքն» ունի նաև մանկական գրականության բաժին, կամ թե սա Սարդարապատի հերոսամարտը նսեմացնելու մի անձունի փորձ է:

Հ. Մելիքյանը հավակնում է նաև տալ եղրակացություններ ու գնահատականներ: Նա գրում է, «Մեր հաղթանակի հերոսներն էին զոր. Միլիկյանը, գնդապետներ՝ Գանինել բեզ Փիրումյանը, Հասան Փաշայանը, Վեքիլյանը, Դրուն և ուրիշներ» (նույն տեղը, էջ 74):

Շատ մեծ կարծիք ունենալով ախալցիսցի երիտասարդ գնդապետ Կարո Ղասարբաշյանի (Հասան Փաշայանի) մասին, այնուամենայնիվ գիտենք, որ նրան շվիճակվեց մասնակցելու Սարդարապատի կոփեններին: Մինչ նա կվերակազմեր իր և իրեն տրված զորամասերը և կովի դուրս կրերեր այն, «...մայիսի 29-ի զիշերը հայտնվեց Բաթումում կնքված դաշնագրության մասին» (նույն տեղը, էջ 75), և նրա վերակազմված զորամասը հարկադրված եղավ կանգ առնել և շփման մեջ շմտնել թուրքերի հետ: Էլ ի՞նչպես կարելի է նրա անունը թվարկել Սարդարապատի և Բաշ-Ապարանի հերոսների շարքում: Հ. Մելիքյանը հերոսների ցուցակի մեջ չի մտցրել Մահապարտների գնդի հրամանատար Պավել Փիրումյանին, նույն գնդի գումարտակի պետ, հերոսաբար զոհված Վարդան Զաղինյանին, ուստի գնդապետներ Միլինին, Կորուկովին, Պերիկրյոստկովին, չի հիշատակել այդ օրերին բոլորի կողմից սիրված հրետանավորներ Իգիթիանյանի, Աթանհսյանի, Կարաքեշիշյանի, Կլիշի և Սակելլարիի անունները, Պանդուխտի անունը: Հերոսների շարքում նա չի հիշատակում նաև հոգեորականներին, թեև գիտե Գարեգին եպ. Հովսեփյանի խաղացած զերը: Նա երեխ, չի լսել անգամ ուսական ծառայության սպա, ծագումով ֆրանսիացի փոխգորնդապետ Շնեուրի անունը, մինչդեռ Շնեուրը 1918 թվականի հայկական ինքնապաշտպանության ամենահերոսական դեմքերից մեկն է և Դանիել բեգ Փիրումյանի առաջին օգնականը Սարդարապատի կովի օրերին:

Սակայն Սարդարապատի մասին խոսելիս Հ. Մելիքյանի մակարդակից վեր չեն բարձրանում նաև Ա. Վրացյանն ու Ա.

Ահարոնյանը: Նրանց նպատակը պատմական ճշմարտության վերհանումը չէ, այլ ցուց տալ, որ այդ հերոսամարտերի կազմակերպումը դաշնակցության է: Այս տեսակետից ոեկորդը պատկանում է, իհարկե, Ահարոնյանին: Նա զլանում է դրվատական խոսք ասելու, ասենք, Դանիել բեգ Փիրումյանի, Պավել Փիրումյանի, Շնեուրի ու Պերեկրյոստկովի, Կլիշի կամ Սակելյարիի մասին: Երևի նա շի էլ լսել վերջինս ներիս անունները: Նրան հարկավոր է Դրո և Արամ, Արամ և Դրո, որպեսզի ցուց տա, որ Սարդարապատի և Բաշ-Ապարանի հաղթանակներն իրենցն են: Եվ որովհետև Դրոն գործում էր Բաշ-Ապարանի ճակատում, իսկ Սարդարապատի ճակատի հրամանատարներից և ոչ մեկը դաշնակցական չէր, ապա ահարոնյանական սիլլոգիզմի ուժով՝ Սարդարապատի ճակատի դրությունը պետք է միշտ վատ լիներ, անկայուն, իսկ Բաշ-Ապարանինը՝ միշտ հաջողակ ու հաղթական: Նրա ի՞նչ փուլթն է, որ Սարդարապատի ճակատը հմուտ զեկավարության շնորհիվ ոչ միայն միշտ հաղթական է եղել, իսկ Բաշ-Ապարանի ճակատը Դրոյի խակ ուղղմավարության հետեւ վանքով միշտ տագնապ է ներշնչել գեն. Սիլիկովին, և վերջինը շարունակ հարկադրված է եղել, այլ պահեստի զորք շունենալու պատճռով, Սարդարապատի ճակատից օժանդակ ուժեր վերցնել և ուղարկել Բաշ-Ապարան՝ Դրոյին: Այսպիս է իսկությունը: Այս բանն ասում եմ ոչ միայն ես, որ աշխատել եմ պարզել հայ ժողովրդի մեծ գոյամարտի ընթացքն ու պատկերը, այս բանն ասում է նաև Վարդգես Ահարոնյանը: Եվ հայրն ու որդին մինույն ամսագրում ժիտում են իրարի ինչպես ասել ենք, հայ-թուրքական պատերազմին քաջ իրազեկ և մասնակից ուստ սպա Մուրատովը և անգլիացի Ալլընը համատեղ աշխատություն են գրել Կովկասյան ուղղմաճակատի մասին, իսկ որդի Ահարոնյանն այն համառոտագրել ու թարգմանարար զետեղել է «Հայրենիք» ամսագրում՝ «Կովկասյան ռազմադաշտը և հայերը» վերնագրով:

«Սիլիկյանը, — գրել են նրանք և թարգմանել է որդի Ահարոնյանը, — զորացրեց Դրոյին երկրորդ հեծյալ զնդով և մայիսի 25-ին Դրոն դիմեց հարձակման... կոիվը շարունակ-

վեց մայիսի 26-ին, և մայիսի 28-ին Սիլիկյանը ուժեղացրեց Դրոյին հետևակով: Մայիսի 29-ին Դրոն ի վիճակի եղավ ետք պրտելու թուրքերին Բաշ-Ապարանից և ամուր կերպով պահելու այդ կարևոր անցքը» («Հայրենիք», 1955, № 10, էջ 31):

Իսկ ո՞ւմ հաշվին էր Սիլիկովը երկու անգամ ուժեղացնում Դրոյին, չէ՞ որ նա ոչ մի պահեստի ազատ ուժ շուներ, չէ՞ որ այս տիտուր ճշմարտությունը նույն ինքը «Հայրենիքն» է տպագրում:

«Թուրքերը հառաջանում են գեպի Սարդարապատ—Քարխուն ճակատից... Չունիմ որևէ պահեստի զինվոր՝ թշնամուն դիմադրելու համար» (էջմիածնից գեն. Սիլիկովի հեռագիրը Երևանի Հատուկ հանձնաժողովին, «Հայրենիք», 1959 թ., № 8, էջ 21):

Իր տեղում մենք արդեն տեսանք, որ գեն. Սիլիկովը դգալի ուժեր է վերցնում Սարդարապատի ճակատից և ուղարկում Բաշ-Ապարան:

Հայրը գործ շունի ճշմարտության հետ: Նա գրում է.

«Այսո, Դրոն սեղմել է թուրքերին և հալածում է անխնայորեն, բայց Սարդարապաշտը, Սարդարապաշտը» («Հայրենիք», 1931 թ., № 1, էջ 85):

Կամ թե.

«Բաշ-Ապարանում անհաղթելի Դրոն թուրքերին նեղելով՝ շպրտում է գեպի Ալեքսանդրապոլ: Սարդարապատում սակայն, հակառակ մեր զինվորների առասպելական հերոսության, զրությունը շարունակում է ծանր մնալ մեզ համար» (նույն տեղը, էջ 84):

Անպատասխանատու պոռոտախոսություն:

Ահարոնյանը դրվատանքի շատ ավելի ճոռում խոսքեր է տառում Արամ Մանուկյանի հասցեին: Արամ Մանուկյանին հերոսի դափնիներով պասկելը շատ ավելի հեշտ էր, քան որևէ մեկ ուրիշ դաշնակցականի: Ինչո՞ւ նախ, նա արդեն մեռած էր (բժավոր տիֆը նրան տարավ դեռ 1919 թվականի հունվարի 28-ին): Իսկ մեռածներին միշտ ավելի հեշտ է և հերոսացնել, և սրբագրուել:

Երբորդ, Արամ Մանուկյանն իր շրջապատի մյուս դաշտակցականներից, անտարակույս, մի գլխով բարձր էր, սա էլ սոսկ այն պատճառով, որ մյուս գաշնակցականները գլուխ բոլորովին շունեին և չգիտեին, թե ինչ են անում, իսկ Արամ Մանուկյանը գիտեր, թե ինչ էր անում: Երբորդ, Սարդարապատի կրիտիկական օրերին Արամ Մանուկյանը, անտարակույս, շոշափելի ժառայություններ է մատուցել Հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործին: Բայց և այնպես, զիկտատոր և ինքնապաշտպանության գործի կազմակերպիչ չի եղել:

Սակայն Ահարոնյանը միևնույն ամսագրի հաջորդ էջում ամեն տիսակ դրվատանքի խոսք ասելով Արամի հասցեին, շափաղանցության մեջ ընկնելով, եղրափակում է այսպես.

«Համակ գիտակից և իմաստուն անդթություն է այդ մարդը: Ինչպես բոլոր իրական առաջնորդները, որոնք անողորմ օրերին են ծնվում և մեծ լինելուց առաջ գիտեն անողորմ լինել նույնքան, որքան բախտն է անողոք զեպի իրենց ազգն ու հայրենիքը»:

Կամ թե՝

«Տեսողի իր ուժեղ, հստակ իմացականությունը փարոսի պես բարձրանում էր իր հզոր կամքի երկաթի պատվանդանին և իր վճռականության առջև ամեն ինչ ծովում է ու խոնարհվում»:

«Ամեն ինչ ծովում է ու խոնարհվում»՝ բացի դաշնակցությունից ու նրա այդ օրերի առաջին շեֆ Ահարոնյանից, որովհետև այսպիսի դրվատականից հետո մնում էր սպասել, որ Ավետիք Ահարոնյանը, որպես Հայոց կենտրոնական ազգային խորհրդի նախագահ, Արարատյան հանրապետության տուածին վարչապետ կկարգեր Արամ Մանուկյանին, որը թե՛ իր մատուցած ծառայություններով և թե՛ ինելքով բոլոր դաշնակցականների մեջ գուցե միակ հարմարագույն թեկնածուն կարող էր լինել այդ պոստի համար. ավելի՛ն. իրերի բերումով, պատմության ընթացքով արդեն գտնվում էր այդ պոստում: Սակայն այսքան դրվատական խոսքեր շուալլող Ահարոնյանը, հենց որ ի վիճակի եղավ, անմիջապես անտես առավ Արա-

մին և առաջին վարչապետի պոստը հանձնեց մեկ ուրիշի, որը Համեմատության մեջ դրվել չի կարող իրատես Արամ Մանուկյանի հետ:

Ահարոնյանը և մյուս «Թիֆլիս նստողները» չեին կարող Արամին ներել նրա մեծ զանցանքները,— այն, որ նա հաճախ հակառավել էր իր պարտիային: Վանում, որտեղ էր Հիմնականում գործել Արամ Մանուկյանը, նա քանիցս խոստովանել էր, թե «Իս իրեն հայ մարդ տարբեր կմտածեմ, իսկ իմ մեջ դաշնակցական Արամը այլ կերպ կվճռե» (Հ. Երամյան, «Ճուշարձան», Ալեքսանդրիա, 1929 թ., հ. Բ., էջ 61): Հանրահայտ է, որ դաշնակցությունը միշտ էլ անտեսել էր այդ «իբրև հայ մարդ այլ կերպ մտածող» գործին, նրան առաջ չեր բաշել, երբեք չեր ընտրել որևէ բյուրոյի կազմի մեջ, նրա ձայնը լսելի չեր գարձրել իրենց շարքերում և իրբեք նրան չեր վստահել որևէ կազմակերպություն: Շատ լավ գիտենալով Արամի ուսալիստական դիրքորոշումը, դաշնակցությունը նրան մասնակից շդարձրեց էրզրումի 1914 թվականի վճռական ժողովին: Հանրահայտ է, որ Արամը 1914 թվականին վճռականորեն բողոքել էր կամավորական շարժման դեմ, որ նա 1917—18 թվականների զեկուհմեքեր-Հունվարամիսներին Երևանից պաշտպանում էր Ստ. Շահումյանի հետ բանականացներին, իսկ 1918 թվականի ապրիլին հայոց հատուկ պատվիրակ էր ուղարկել մեծ Լենինի մետ, այլև Երևանի նահանգում գործակցություն էր հաստատել կոմունիստական ուժերի հետ:

Արամ Մանուկյանը ուսալիստ էր, գուցե և միակ ուսալիստը ոսմանտիկ վարժապետների շրջանում: Նա ճանաչում էր հայ ժողովրդին, գիտեր նրա հնարավորությունները և համամիտ չեր հայ ժողովրդին մեկուսացման դատապարտելու քաղաքականությանը: «Մեր մեջքը որ ամուր վիճի, կկրկնվի 1915 թվականը»— գրել էր նա Թիֆլիս՝ Ռ. Տեր-Մինասյանին, իսկ Երևանում հայկական զինված ուժեր կազմակերպելու ժամանակ իր գործակից Ա. Աստվածատրյանին ասել էր.

«Ես մի բանից եմ վախենում, վախենում եմ սևերես

դուրս դանք մեր ժողովրդի առաջ, չկարողանանք կաղման կերպել գործը և կորցնենք նրա հավատն ու վստահությունը... Հետագա մեր պատմությունը վկա, որ Արամի վախն անտեղի շեր»— ավելի քան երեք տասնամյակ հետո հզրափակում է այդ գործակիցը («Հայրենիք», 1951, № 2, էջ 32—33):

Ճիշտ է, Վանի 1915 թվականի հերոսական ինքնապաշտպանությունից հետո դաշնակցությունը մի պահ, միայն մի պահ, երկինք բարձրացրեց Արամ Մանուկյանին, բայց նա այդ բանն արավ միայն հետին մտքով, միայն այդ հերոսության իսկական դեկավարի անունը մոռացության մատնելու և հաջողված ինքնապաշտպանությունը միայն դաշնակցությանը վերագրելու դիտավորությամբ: Բայց Վանի գաղթից հետո անմիջապես մոռացավ Արամ Մանուկյանին և նյութական հնարավորություն չստեղծեց, որ այդ հիվանդ մարդը կարողանար մտածել բուժման մասին:

1917 թվականի սկզբին, փետրվարյան ռեռլյուցիայից անմիջապես առաջ, անգործության դատապարտված Արամ Մանուկյանը Թիֆլիսում ձեռնամուխ է լինում իր հուշերը գրի առնելուն: Մեծ պատերազմը շարունակվում էր, և նրա վերջը դեռ չեղ երևում: Թուրքերն արդեն կոտորել էին հայ ժողովրդի կեսը: Յարական կառավարությունը կազմալուծել էր կամավորական շարժումը ու խաչ էր քաշել այդ շարժման հետ կապված վարդագույն հովսերի վրա: Յարիզմը բացահայտուին հականայկական քաղաքականություն էր վագում, մանավանդ նվաճված հայկական վիլայեթներում: Վանի հերոսամարտն արդեն պատմություն էր դարձել, իսկ վանեցիները՝ գաղթական: Այդ անբարենպաստ իրադրության մեջ իրատես Արամը գրում է:

«Պատերազմից հետո հայերի համար պիտի ստեղծվեն շատ սուվալի պայմաններ, հասարակական տրամադրությունը պիտի երթա դեպի ետ (մի բարերախտ անակնկալ միայն կարող է փրկել մեզ, որը շատ անհավանական է): Բոլոր արժեքները պիտի վերագնահատվեն: Նոր դարագլուխ պիտի բացվի մեզ համար: Հին արժեքներից շատերը պիտի ընկնեն: Կարե՛ մեր ամբողջ հին գործունեությունը պիտի դառնա

պատմություն» («Արամի հուշերի նախարանը», «Հայրենիք», 1922, դեկտ., էջ 23):

Սա մեղադրական եզրակացություն է դաշնակցության ամբողջ քյալազյողական գործունեության դեմ: Եվ բազմաշարշար հայ ժողովրդի առաջ սկսերես դուրս եկողները, նրա հավատն ու վստահությունը կորցնողները, նրանք, որոնք իրենց իսկ կերտած պատմությամբ դատապարտված էին պատմության արխիվը նետվելու, հասկանալի է, քանի դեռ շահատակելու հնարավորություն ունեին, ամենելին չեին կարող ներողամիտ լինել այն մարդու նկատմամբ, որը հայ ժողովրդի փրկության հույսը դրել էր միայն այժմ արդեն իրականաւթյուն դարձած մի բարեբախտ անակնկալի վրա:

8. ԳԵՆԵՐԱԼ ՍԻԼԻԿԱՎԸ ԵՐԵՎԱՆԻ ԶՈՐԱԲԱԺՆԻ ԵՎ ՆՐԱ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զեռնամուխ լինելով այս գործին, տեսա, որ դաշնակցականները արխիվային շատ աղքատիկ ժառանգություն էին թողել: Այդ բանի համար չի կարելի մեղադրել միայն նրանց: Երևանը մինչ այդ հայ ժողովրդի հասարակական կյանքի կենտրոնը չէր եղել և դրա համար էլ ի վիճակի չէր պատշաճ ձեռվ գրառելու այն մեծ երկունքը, որ պատմությունը հայ ժողովրդին՝ վիճակել էր վերապրելու երևանի դռներին: Նյութերի և փաստաթղթերի այն հարստությունը, որ այժմ կամ եր պետական արխիվում, պատմության թանգարանում և գրադարանների հատուկ ֆոնդերում, մեծ մասամբ ձեռք է բերվել սովետական օրոք:

Այդ նյութերի մեջ՝ մեր թեմայի համար՝ առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում գեներալ Նազարենկովի հուշերն ու բացատրագիրը և հատկապես գեներալ Սիլիկովի նամակները:

Հայկական ՍՍՌ հեղափոխության թանգարանը Սարդարապատի հերոսամարտի տասնամյակի առթիվ գեն. Նազարենկովին հանձնարարում է գրել իր հուշերը: Գեներալ Նազարենկովը կարգի է բերում իր արխիվը, գրում է իր հուշերը, սակայն Երևանի զորաբաժնի գործողություններին հասնելիս բարվոք է համարում Թիֆլիսից, որտեղ ապրում էր նա, դիմել Երևան՝ գեն. Սիլիկովին, որն այն ժամանակ ուղղմագիտու-

թյուն էր դասավանդում Երևանի բուհերից մեկում, խնդրելով, որ նա իրեն օգնի Սարդարապատի և Բաշ-Ապարանի կոփլների մասին գրելիս: Գեն. Սիլիկովը 1929 թ. մայիսի 25-ին գրում է իր առաջին նամակը: Ծերացած գեներալը դժո՞ն է մնում իր առաջին նամակից: Անցել էր 11 տարի, հիշողությունն էլ թուլացել էր: Դրա համար էլ որոշ ժամանակ անց, երբ նորանոր մանրամասնություններ է վերհիշում, նա գրում է իր երկրորդ, երրորդ, չորրորդ և ապա հինգերորդ նամակները: Այդ նամակներում, բնականաբար, կան կրկնություններ, բայց և կան լրացուցիչ նոր տեղեկություններ, որոնք ի մի գումարած որոշ լույս են սփռում այդ հերոսամարտերի վրա:

Կրճատելով միմիայն Դիաղին-Խնուսի և Մակվի շրջանների վերաբերյալ որոշ մանրամասնություններ, թարգմանաբար ամբողջությամբ բերում ենք այն ամենը, ինչ գեներալը, կրկնելով իրեն, հայտնել է իր նամակներում: Մենք միմիայն կատարել ենք որոշ ընդգծումներ, որոնց այնուհետև կանորադառնանք:

25 մայիսի 1929 թ.

«1918 թվականի մայիսին,— գրում է նա,— Երևանում իմ տրամադրության տակ կային հետեյալ զորամասերը՝ 5-րդ և 6-րդ հրացանաձիգ գնդերը, Պարտիզանական հրացանաձիգ գունդը, Սահմանապահ գումարտակը, վանեցիների առաջին ու երկրորդ գնդերը, որոնք քայքայվեցին ու վերածվեցին մեկ գնդի: Բացի դրանից, հրետանու շորս մարտկոց՝ զնդապետ Արարատովի հրամանատարությամբ և զեյթունցիների հեծյալ գունդը: Իսկ Ալեքսանդրապոլի նահանջից հետո իմ ուժերին միացան 2-րդ հեծյալ գնդի (Զալինովի) մնացորդները և երկու գումարտակ Հասան Փաշայանի (Ղասարբաշյանի) ու Մանիկի հրամանատարությամբ (անունները չեմ հիշում), որոնք ես իրար միացրի Հասան Փաշայանի հրամանատարությամբ (մոտավորապես 600 սլին):

Արաքսի ձախ ափին անցնելուց և կամուրջները ոչնչացնելուց հետո (գետը վարարած էր) վանեցիների գունդը պահ-

պանում էր Գայլի Դրունքի գետանցը: Այդ գունդը կազմված էր ոչ ավելի, քան 800 սվինից և, կարծիք, ուներ հրեանու մեկ մարտկոց: Մարդարա գյուղում տեղական բնակիչներից կազմակերպվել էր մեկ կամ երկու վաշտ՝ Արաքսի գետանցին և այրված կամուրջին հսկելու համար: Նրանց կցված էր միոցյին 4 հրանոթ: Բացի դրանից, սուրմալվեցիներից չոկատուներ էին կազմակերպվել երկու կետերում (Մարդարա գյուղից հյուսիս ու հարավ) գետանցներին հսկելու համար: Կարակալյանի գետանցին (որը Կողբից տանում է դեպի Արաքս երկաթուղարին կայարանը) հսկում էր զեյթունցիների գունդը: Ահա, կարծյոք, այն ամենը, ինչ ևս կարող էի հավաքել ու կազմակերպել այն ժամանակաշրջանում, երբ թուրքերն սկըսեցին առաջ խաղալ դեպի Երևան: Բայց պետք է ավելացնեմ, որ մենք կարողացանք երկրորդ հեծյալ գունդը հավաքել միայն մասսամբ (300 ձիավոր), մնացածներն այնպես էլ գունդը չվերադարձան: Դուք ինքներդ գիտեք, որ Զեյթունցիների գունդը ոչ մի արժեք չուներ և մարտական գործողություններին համար անպետք էք: Այդպես էլ նա մասնակցություն չունեցավ մարտական գործողություններին և մնաց Կարակալյանի գետանցի վրա:

Յ Հունիսի 1929 թ.

Ես Երևան եմ ժամանել 1918 թվականի հունվարի երկրորդ կեսին: Այդ ժամանակ դիվիզիայի և մյուս զորամասերի կազմակերպումը հետևյալ պատկերն ուներ: Կազմվել էր դիվիզիայի շտաբ, որի պետն էր փոխգնդապետ Վերիովը: 'Ի-վիզիվիայի ժամանակավոր հրամանատար էր կարգված գնդապետ Փիրումովը (Դանիել բեդ. — Հ. Թ.): Դիվիզիայի կազմի մեջ մտնում էին հայկական 4-րդ գունդը, որ գտնվում էր վաղարշապատում (գնդի հրամանատարն էր գնդապետ Հովսեփյանը) և 5-րդ գունդը, որ գտնվում էր Վանում և ուներ մեկ լեռնային մարտկոց: Գնդի հրամանատարն էր Պավիլ Փիրումովը: 7-րդ գունդը կազմակերպվում էր Ալեքսանդրավոլում, գնդի հրամանատարն էր իշխան Արդութինսկի-Դոլոռովին, 6-րդ գունդը կազմակերպվել էր հունվար-փետրվար

ամիսներին, գնդի հրամանատարն էր գնդի Դոլուխանովը Հրետանային դիվիզիոնը Արարատովի ղեկավարությամբ կազմակերպվել էր Թիֆլիսում և Երևան ժամանեց մարտի վերջերին: Այս զորամասերից բացի Քանաքեռում կազմակերպվում էր Զալինովի Հեծյալ գունդը: 1918 թվականի փետրվարին սկսվեց պարտիզանական գնդի կազմակերպումը, որի կազմակերպման և ղեկավարման համար Ալեքսանդրավոլից հրավիրվեց գնդապետ Պերեկրյոստկովը: Սահմանապոլից հրավիրվեց գնդապետ կազմակերպումը հանձնարարվեց փոխգնդապետ Կորոլյովին, որն այսուհետև կազմակերպեց հեծյալ ջոկատ, իսկ գումարտակը հանձնեց Սիլինին: Այդ բոլոր զորամասերից 2-րդ հեծյալ գունդը մարտ ամսին ուղարկվեց Սարիղամիշ: Փետրվար ամսին Երևան եկավ գնդապետ Ն. Բաղդասարովը, որին հանձնարարվեց բրիգադ կազմակերպել ժանեցիներից կազմված երկու հետևակային գնդերից: Բրիգադի կազմակերպումը ձգձգվում էր ու բարդանում դասաւագանապով: Անպատմելի դժվարություններով կազմակերպվեց Երեխական գումարտակ: Այդ գնդերից մեկի հրամանատարն էր գնդապետ Կոլտովիչը, իսկ մյուսին՝ գնդապետ Յովովիչը:

Էրզրումում գտնվող առաջին ու չորրորդ գնդերն ուժեղացնելու համար Քանաքեռում և Վաղարշապատում կազմակերպվեցին երեք գումարտակ, որոնց կազմը հասցվեց մինչև 500 սվինի: զինվորների զինավարժությունը տեսեց մեկ ամսի: Քանի որ առաջին և չորրորդ գնդերը շտապ համալրման կարիք էին զգում, կորպուսի շտաբը հրամայեց կազմակերպված գումարտակներն ուղարկել իրենց գնդերը: Երբ երկաթուղային գնացքը պատրաստվեց և ևս հայտարարեցի, որ վաղը նրանք մեկնելու են, ապա զինվորների մեծ մասը փախսավ: Պատժիշտ ջոկատը դժվարությամբ կարողացավ հավաքել դասաւորների մի մասը և համալրել գումարտակները: Այս էպիզոդը ես պատմեցի, որ բնութագրեմ բնակչության վերաբերմունքը կացության հանդեպ, թեև այս բանը Զեղ նույնպես քաջ հայտնի է: Զորամասերի կազմակերպումն առնասարակ դժվարանում էր զենքի ու հանդերձանքի պակասի պատճառով, որն,

ըստ որում, հափշտակվում էր բնակչության կողմից: Տեղական մուսուլմանական բնակչության թշնամական վերաբ'րմունքը, որն ուժեղանում էր թուրքական էմիսարների ազիտացիայով, խիստ բացասաբար էր ազգում զորամասերի կազմակերպման վրա և քայլայում էր առաջացնում: Տրանսպորտը առհասարակ և հայկական գյուղերի բնակչության կապն իրար ու Երևանի հետ խափանված էր հայերի վրա մուսուլմանների ու քրդերի հարձակումների և սպանությունների հետևանքով: Մուսուլմանները ոչնչացրել էին հեռազրական և հեռախոսային կապը, այն պահպանվում էր միայն հայկական գյուղերի շրջանում: Սուրմալվի գավառի հայկական գյուղերը, ըրոնց բնակիչները հարձակումների էին ենթարկվում թաթարների և քրդերի կողմից, դժվարությամբ կարողացանք էվակուացնել հատուկ ջոկատների պահպանությամբ: Երկարությամբ Ռուսական կայարանի շրջանում գտնվում էր մուսուլմանների ձեռքին, ոչ մի հայ չէր կարող գնացք նստել. թաթարները խիստ ստուգում էին վագոնները և հայերին բռնում էին ու իջեցնելով սպանում էին հենց գնացքի մոտ: Հայերի կաղմակերպված և զինված ուժեղ ջոկատները միայն կարող էին անցնել Ռուսական կայարանից:

24 Հունիսի 1929 թ.

Երևանի զորաբաժնի կազմի մեջ մտան նաև կայծային հեռագրի երկու երթային կայան և երեք ինքնաթիռ, որոնք մենք ստացանք ուստական բանակի ետ քաշվող զորամասերից: Սակայն պետք է ասել, որ ավիացիոն ջոկատը 1918—1919 թթ. ժամանակաշրջանում ոչ մի արժեքավոր և գործնական նշանակություն ունեցող տեղեկություն չրերեց մեզ, իսկ կայծային կայանը մեծ դժվարությամբ կարողացավ կապ հաստատել մայիս ամսին երկաթուղով Ալեքսանդրապոլից Վաղարշապատ նահանջող ջոկատի հետ:

Երևանի զորաբաժնի մեջ 1918 թվ. մարտ և ապրիլ ամիսներին մտան Վանից և Խնուս-կալեից նահանջող զորամասերը (5-րդ գունդը, 2-րդ գնդի մեկ գումարտակ և երկու կամ երեք խումբ): Եթե հիշում եք, ինձ առաջադրանք էր տրվել՝ մեկնել

Խնուս-կալե և ղեկավարել ճակատը այդ կետից մինչև Վան: Այդ նպատակով ես իմ շտաբի հետ մեկնեցի Ալեքսանդրապոլ, որտեղ տեսա Զեզ և գեն. Արեգովին, որտեղից էլ պետք է զնայի Վերոհիշյալ ուղղմաճակատը: Թուրքերի հարձակման անցնելուց և էրզրումի տակ ու հետագայում մեր կրած անհաջողություններից հետո ինձ առաջադրված խնդիրը փոխվեց և ես վերադարձա Երևան: Նկատի ունենալով հարավից թուրքերի հարձակման հասրավորությունը, ինձ նոր առաջադրանք տրվեց՝ կասեցնել թուրքերի հարձակումը Դիաղին—Վան գծի վրա: Վանի զորաբաժնը (5-րդ գունդը, մարտկոցը և տեղական աշխարհազորը) ուժեղացնելու համար մարտ ամսին Երևանից Իգդիր—Հին-Բայլազետի վրայով մեկնեց գնդապետ Բաղդասարովի բրիգադը (վանեցիներից կազմված երկու գունդը, ցավոյ սրտի այդ բրիգադից Հին-Բայլազետ հասան նազիվ 500—600 մարտիկ, որոնք երածարվեցին առաջ գնալ և ետ վերադարձան Իգդիր, որտեղ ես նրանց կանգնեցրի և հրամայեցի կարգի բերել:

Երևանի բնակչության խիստ հուզված լինելու պատճեռով ես իմ շտաբը փոխադրեցի Էջմիածին, որտեղ և մնացի մինչև մարտական գործողությունների վերջը: Թուրքական զորամասերի հետ առաջին ընդհարումները տեղի ունեցան միայն ապրիլի երկրորդ կեսին: Առաջին ընդհարումները հետախուզության բնույթ էին կրում թուրքերի կողմից: մեզ հաջողվեց պարզել, որ այդ կողմից հարձակվում է թուրքական միայն 5-րդ դիվիզիան: Կարսի իրադարձություններից և մեր զորամասերի դեպի Ալեքսանդրապոլ ետ բաշվելուց հետո ոչ մի բան տեղի չունեցավ Զովֆայից մինչև Կարավան-Սարայի լեռնանցքը ձգված ուղմանակատում: Նկատի ունենալով որ Զովֆա—Շահթախտի կողմից կարող են թուրքական ու քրդական ջոկատներ երևալ և սպառնալիք ստեղծել մեզ համար, գնդապետ Բաղդասարովի բրիգադից մեկ գունդ ուղարկվեց այդ կողմ: Մարտ ամսին Թիֆլիսից Երևան նկավ Զեյթունցիների գունդը:

Ի պարզաբանումն իմ նախորդ նամակների ես Զեղ Համար կշարադրեմ, թե ի՞նչ վիճակում գտա զորամասերը, երբ Զեր հրամանով ժամանեցի Երևան և ընդունեցի դիվիզիան: Երբ դուք սկսեցիք կազմակերպել կորպուսը՝ գնդերը, ինչպես գրում եք Դուք, կազմված էին երեքական գումարտակից: Հիմա ես լավ հիշում եմ, որ 7-րդ գունդը կազմակերպում էր Թեյ-Մամիկոնյանը Սարիղամիշում, իսկ 8-րդ գունդը՝ Արդութինսկին Ալեքսանդրապոլում: 5-րդ գունդը գտնվում էր Վանում (հրամանատարն էր գնդապետ Պավել Փիրումովը, որը հետագայում ինքնասպանություն գործեց Երևանի բուլվարում): 4-րդ գունդը գտնվում էր Վաղարշապատում: Այդ գունդը Զեր իսկ հրամանով այնուհետև, կարծեմ փետրվարի վերջերին կամ թե մարտի սկզբին, գնաց Սարիղամիշ՝ առաջին դիվիզիայի գնդերին միանալու: Գնդի հրամանատարն էր գնդապետ Հովսեփյանը:

Երևանում կազմակերպվեց պարտիզանական հետեակ գունդ, որի հրամանատարն էր գնդապետ Պերեկրյոստկովը, և պարտիզանական հեծյալ գունդ, որի հրամանատարն էր փոխգնդապետ Կորոլկովը:

Երևանում գնդապետ Բաղդասարովի հրամանատարությամբ կազմակերպվեցին նմանապես վանեցիների առաջին գունդը (հրամանատար՝ գնդապետ Յովզբաշե) և վանեցիների երկրորդ գունդը (հրամանատար՝ Չախմախչե): Այդ գնդերը կազմակերպվում էին արևմտահայերից և պետք է մտնեին Անդրանիկի զորաբանի մեջ, սակայն փաստորեն գտնվում էին իմ հրամանատարության տակ:

Բացի դրանից, կազմակերպվեց չորս վաշտից բաղկացած սահմանապահ գումարտակ: Քանաքեռում ավարտվում էր 2-րդ հեծյալ գնդի կազմակերպումը (գնդ. Զալիհնով): Ղամարվում կանգնած էր 6-րդ գունդը, որն այնուհետև փոխադրվեց Էջմիածին (գնդ. Դոլուխանով): Այդ ամենից հետո Երևանում սկսեցինք 4-րդ գումարտակ կազմակերպել 5-րդ գնդի համար:

Սկզբում ինձ առաջադրանք էր տրված՝ պաշտպանել և պահպանել Խնուս-կալե—Վան ճակատը, իսկ թուրքերի ճընշման տակ նահանջել Ալաշկերտի հովիտը, որտեղ ամրանալ Դիրադինի դիրքում: Վանի գնդին կարգադրված էր ինքնուրույնաբար գործել ըստ իրադրության և նահանջել միայն այն գեպքում, երբ թուրքական զորամասերը ճնշում գործ ոնենին Հին Բայազետի վրա: Բայց մեզ չհաջողվեց կատարել այդ առաջադրանքը, քանի որ ելման դիրք գրավելուց առաջ թուրքերը հարձակման անցան: Այն ժամանակ Դուք մեր զորաբաժնին հրամայեցիք պաշտպանել Քարվանսարայի լեռնանցքը:

Երգրումի անկումից հետո երկրորդ գունդը Խնուսից և 5-րդ գունդը Վանից տեղից շարժվեցին և նահանջեցին: 5-րդ գունդը ամբողջ կազմով եկավ հգդիր և ես նրան տեղադրեցի Ղուրդուղովի, իսկ երկրորդ գնդից հգդիր եկավ միայն մեկ գումարտակ՝ գնդի հրամանատար Սամարցիկ հրամանատարությամբ, իսկ մյուս գումարտակը նահանջեց Սարիղամիշ: 2-րդ գնդի գումարտակն իր գնդացրերով հրամանատարի հետ միասին ուղարկվեց Սարիղամիշ: Ցուցբաշեի վերաբերմամբ Դուք սխալվում եք, նա վանեցիների առաջին գնդի հրամանատարն էր, իսկ բրիգադի հրամանատարը Բաղդասարովն էր: Սպանվել է վանեցիների երկրորդ գնդի հրամանատար գնդապետ Զախմախչեր Օրգոֆ գյուղի մոտ լեռնանցքում: Նա մարտի է բռնվում բուրքական մի ջնկատի ենտ, երբ բուրքերը նրան շրջանցել էին թեից, իսկ իր վաշտերն էլ ետ էին բաշվել. Տան զինվորով նա երկար կովում է, սակայն գնդակից զարկված սպանվում է և մարմինն էլ բռնվում է այնտեղ, միայն մի բանի խիզախների է հաջողվում զիշերով բերել նրա մարմինը: Նա թաղված է Վաղարշապատում՝ Գայանե վանքի գավթում:

Երևանում պահեստի գումարտակ շկար: Խնուսից և Վանից նահանջած գնդերի հետ հգդիր եկան նաև մի քանի խըմբեր, որոնք ես ուղղում էի մտցնել իմ զորաբանի մեջ, բայց նրանցից ոչ ոք չուղեց հնթարկվել զինվորական հրամանատարությանը. այն ժամանակ ես նրանց բոլորին հրամայեցի

լուծարվել-ցրվել: Նրանցից մի քանիսը լուծարվեցին-ցրվեցին, իսկ մի մասն էլ թաքնվեց տարբեր կետերում և ծանր բեռ դարձավ բնակչության վրա: Ինքնազում բռնագրավումներ, կողոպուտներ, ճնշումներ գործադրելով՝ խմբերը պատճառ դարձան բազմաթիվ բողոքների և բնական զայրույթ առաջ բերեցին բնակչության մեջ: Առանձնահատուկ դաժանությամբ աշխի էր լնկնում խմբապետ Քուրք-Ղազոն, որ կողոպուտներ կատարելու համար դատական պատասխանատվության կանչվեց, բայց միանգամայն պատահականորեն ազատվեց պատժից: Ես Զեղ արդեն գրել եմ, որ վանեցիների գնդերն ուղարկվեցին վան, բայց երկու գնդից Հին-Բայազետ հասավ հազիվ 400 սլին, իսկ մնացած բոլորն էլ դասալքեցին: Վանից 5-րդ գնդի ետ գալու պատճառով, այդ 400 սլինն էլ Բայազետից վերադարձան Խզդիր և ետ դառնալու ժամանակ վանեցիների երկրորդ գունդը Զինդիլի լեռնանցքում կռվի բռնվեց թուրքական մի գումարտակի հետ: Մերոնք չդիմացան ու կորուստներ տալով ետ նահանջեցին, ըստ որում, սպանվեց գնդի հրամանատար գնդապետ Զախմախչել:

Այսպես, ուրեմն, Երևանի զորաբաժնը կազմված էր 5-րդ, 6-րդ և Պարտիզանական հետեւակային գնդերից, Սահմանապահ գումարտակից, Վանեցիների երկու գնդից, Պարտիզանական հեծյալ գնդից, Հրետանային բրիգադայից և Վանից նահանջած կես մարտկոցից, երկու երթային կայծային կայանից և Ավիացիոն գնդից, որն ուներ 3 կամ 4 ինքնաթիռ: Այդ զորաբաժնին միացան տեղական բնակչությունից ինազմված երկու խումբ՝ մոտ 158 ձիավոր: Հետագայում Թիֆլիսից եկավ Զեյթունցիների գունդը: Հարձակումը թուրքերն երգորումից գործում էին գնդի Կարս—Ալեքսանդրապոլ: Մինչև Սարիղամիշի կոխմները Երևանի զորաբաժնի ուղղմանակառում թուրքական զորամասեր չերևացին: Երևանի զորաբաժնի կազմավորման սկզբից մինչև ապրիլի կեսերը կը ուվել ենք միայն տեղական մուսուլմանների և քրդական բանուաների դեմ, որոնք հարձակվում էին հայկական գյուղերի վրա, ոչնչացնում էին հեռագրի և հեռախոսի գծերը, գնդակոծում էին բոլոր երթևեկողներին, քչում տանում էին անա-

սունները, սպանում էին մարդկանց: Ուշումանլու—Զուգա երկաթուղին թաթարարնակ վայրերում գտնվում էր թաթարների ձեռքին, և ոչ մեկ հայ չեր կարող երթեւեկել գնացքով: Թաթարները գնացքներից իշեցնում էին հայերին և տեղն ու տեղը սպանում: Երևանը կտրված էր Ալեքսանդրապոլից ու Թիֆլիսից: Ալեքսանդրապոլ գնալու համար հարկավոր էր զնացք նստել էջմիածին կայարանում:

Ամբողջ ուշադրությունը և ամբողջ պայքարն ուղղված էր մեկ նպատակի՝ վերականգնել կարգը. վերականգնել կապը, հաղորդակցության ճանապարհները, ապահովել ժողովրդի անվտանգությունը: Ամենուրեք վխտում էին թուրք-թաթարական էմիսարներ, որոնք հրահրում էին թաթարներին:

7 սեպտեմբերի 1929թ.

Երևանի զորաբաժնի ոչ-բարդ գործողությունները զարգացան Կարսի զորաբաժնի մարտական գործողությունների հապակցությամբ: Սողանլվի և ապա Կարսի օպերացիաներից առաջ իմ զորաբաժնին առաջադրված խնդիրների մասին ես արդեն Զեղ գրել եմ: Երևանի զորաբաժնը շարունակ կազմավորվում էր և կոիվներ էր ունենում միմիայն թաթարական ու քրդական բանդաների հետ: Թուրքական զորամասեր Երևացին միայն ապրիլի վերջերին կամ թե մայիսի սկզբին: Առաջին մարտը մենք մղեցինք Քարվանսարայի և Զինդիլի լեռնանցքի վրա, Օրգոփ գյուղի մոտ, որտեղ սպանվեց վանեցիների 2-րդ գնդի հրամանատար Զարուխչել: Իմ նախորդ նամակներում ես Զեղ հաղորդել էի, որ վանեցիների առաջին գնդի հրամանատարը գնդապետ Յուզբաշն էր: Դա ճիշտ չէ: Այդ գնդի հրամանատարը գնդապետ Գյուրջին էր, որն ալկոհոլիկ էր ու վախկոտ, միանգամայն անպետք, անպատրաստ և գործը շիմացող մի մարդ:

Ես նախապես Զեղ գրել էի, որ թուրքական զորքերի առաջխաղացման հետ գուգընթաց ավելի ու ավելի կատաղի էր դառնում թաթարական և քրդական բանդաների գործունեությունը: Հեռախոսային և հեռագրական կապն ամրող տերիտորիայում խանգարված էր: Քանի որ այդ գծերն անց-

Նում էին թաթարական գյուղերով, ապա ոչ մի կերպ չէր հառ չողվում վերականգնել կապը: Ոչ միայն կտրտված էին հետապրաթեթերը, այլև հսկայական տարածության վրա ոչնչացված էին հեռագրասյուները: Շատ տեղերում շարդված էին հնդեվրոպական հեռագրի շուգունե սյուները: Այդ բանդաները բռնել էին բոլոր ճանապարհները, նրանք հարձակվում էին հայերի վրա և կոտորում նրանց: Երևանի երկաթուղին նույնպես կտրված էր. Ուզուխանլու գյուղի մոտ թաթարները գրավել էին կայարանը: Երթեեկությունը վերականգնելու համար հարկադրված եղա գնդակոծել հիշյալ կայարանի մոտակա թաթարական գյուղերը: Այս հանգամանքն աղմուկ բարձրացրեց Թիֆլիսում՝ Սեյմում, որից հետո հանձնաժողով կազմվեց հետաքննության համար: Կարսի և այնուհետև Ալեքսանդրապոլի անկումից հետո այդ գործը կարձվեց: Թուրքերի կողմից Ալեքսանդրապոլը գրավելուց և դեպի Հարաբելիսա շարժվելուց հետո մենք էվակուացրինք իդղիրը. Էվակուացիան կատարվեց լրիվ: Արաքս գետի վոա Կարս-Կալայի և Մարգարայի կամուրջներն այրվեցին, քանի որ Արաքս գետը այն ժամանակ վարարած էր, ապա ժանձագուտներ շկային: Թուրքական 5-րդ դիվիզիայի առաջավոր ջոկատները հասան իդղիր, բայց առաջ շշարժվեցին: Մայիսի 15-ի դեպքերից հետո սկսեցի ուշդիոգրամներ ստանալ երկաթուղով Ալեքսանդրապոլից, ըստ Երևույթին թուրքերի ճնշման տակ, դեպի Երևան նահանջող զորամասերից: Դրանք, կարծեմ, Երզնկայի և մեկ էլ ինչ-որ մի ուրիշ գումարտակ էր, որի հրամանատարն էր գնդապետ (անունը շեմ հիշում), իսկ շատրի պետը՝ գլխավոր շտարի ինժեներական ծառայության փոխզնդապետ էր: Դուք, հավանաբար, հիշում եք Գնդերի հրամանատարներն էին Ղասարբաշյանը և Մանիկը: Ես նրանց ուղարկեցի Կոշ գյուղը և հրամայեցի հանգստանալ ու կարգի բերել իրենց զորամասերը: Երկրորդ հեծյալ գունդը (Զալինով) ինձ ներկայացավ 30 ձիավորով: Ես հրամայեցի գունդը հավաքել Եղվարդ գյուղում (Աշտարակից հյուս): Մի քանի օրից հետո մարդկանց մի մասը հավաքվեց և գնդի կազմը հասցվեց 100—120 ձիավորի: Մայիսի 20-ին

նկատվեց թուրքերի առաջինադրում Արագածի արևմտյան լանջին և երկաթգծի երկարությամբ: Երևանի մուսուլմանների ազգային խորհուրդը կապ հաստատեց թուրքերի հետ և թախանձագին կոչ անում գալ ու գրավել Երևանը: Երեվանի գորաբաժինը դասավորվեց երկու խմբով— 1. Գնդապետ Փիրումովը Սարդարապատ—Քյորփալու գծի վրա առաջադրանք ստացավ՝ թուրքերին ետ շպրտել Արփաշյի արևմտյան ափը: 2. Դրոն լիռնային հրանոթների երկու գումարտական գնդով Աշտարակ-Բաշ-Ապարան խճուղու վրա պետք է գրոհեր թուրքերի վրա և նրանց ետ շպրտեր գեպի արևմուտքը: Թուրքերի եետ առաջին հանդիպական մարտը Դրոն ունեցավ Բաշ-Ապարանի մոտ: Զդիմանալով թուրքերի ճնշմանը, նրա ջոկատը հապճեպորեն ետ նահանջեց դեպի հարավ և թարնվեց Ղազնաֆարի կիրճում, որտեղ սկսեց կարգի բերել իրեն և սպասել օժանդակ ուժերի ժամանմանը: Ես օժանդակ ուժեր նշանակեցի երկրորդ հեծյալ գունդը, և, կարծեմ, երկու հրանոթ (գուցե և շրու), ավելի ճիշտ՝ շրու հրանոթ: Հիշյալ օդնական ուժերը հասնում են, ջոկատը մայիսի 27-ին կամ թե 28-ին հարձակման է անցնում Բաշ-Ապարանից դեպի հարավ և, ինչպես զեկուցեց Դրոն, նրա դեմ կանգնած էին թուրքերի գերազիտ ուժերը թուրքերը պարտություն են կրում և հապճեպորեն նահանջում են մասամբ դեպի Ալեքսանդրապոլ, մասամբ էլ դեպի Համամլու:

Սարդարապատի ջոկատը, որի կազմի մեջ մտնում էին 5-րդ գունդը, պարտիզանական հետեւակ գունդը, երկու մարտկոց (12 հրանոթ) և հեծյալ կամավորներ, մարտի մտավ մայիսի 22-ին: Մարտը արդյունք չավեց: Թուրքերը, օժանդակ ուժեր ստանալով, մայիսի 26-ին հարձակման անցան: Սեր գորամասերը շդիմացան և բարեւերի ճնշման տակ դանդաղ ետ բաշվեցին մինչև Զեյվա գյուղը: Մեր գնդերը, կամավորներով և սահմանապահ գումարտակով ուժեղացված, դժվարությամբ կանգնեցրին. թուրքերի առաջինադրումը՝ Այն ժամանակ Կոշ գյուղի մոտ Ղասարբաշյանի հրամանատարությամբ իրար միացնելով երկու գումարտակը, հրամայեցի

լեռան լանջով շարժվել դեպի նյութիս և այնուհետև լուսաբացին շարժվել դեպի արևմուտք և բարձունքներում (շարտեզի վրա նիշտ ցույց տվի բարձունքները) անցնել բարեւերի թիկունքը: Մայիսի լուս 28-ի գիշերը այդ գումարտակները մաներ կատարեցին և մայիսի 28-ի ցերեկվա ժամը 1-ին թուրքերը հապճեպորեն դատարկեցին դիրքերը և նահանջեցին 5-րդ և պարտիզանական գնդերի ճնշման տակ: Նահանջն այնքան հապճեպ էր, որ հետախուզական զոկատը թուրք չհայտաբերեց մինչև Անի կայարանը: Զեյթունցիների հեծյալ գումդը և կապիտան Մամաջանովի վերակազմած Մարգարյի հատուկ գումարտակը դաշտային (մինոցային) շրութնանոթով հսկում էին Արարատի գետանցների վրա՝ պատրաստելով ու զինելով դիրքերը: Եզրիցիների հեծյալ խմբերը հսկում էին գետի երկարությամբ: Գնդապետ Դանիել բեղի զեկուցմամբ երա դեմ գործում էին երկու դիվիզիա, իսկ ես կարծում եմ, որ դա շատ է շափազանցված: Թուրքական 5-րդ դիվիզիան իգդիրի կողմից բոլորովին չէր գործում և չէր անհանգստացնում մեզ: Ութօրյա մարտերը (մայիսի 22—29) ավարտվեցին թուրքերի լիակատար պարտությամբ, որոնք նահանջեցին մինչև Ալեքսանդրապոլ» (Հայկ. ՍՍՌ պետարիւիլ, Գոնդ 92/45, ցուց. 1, գործ 18, թերթ 157—164):

Գեներալ Սիլիկովը ծնվել է 1862 թվականին: Այս նամակները նա գրել է 67 տարեկան հասակում: Այդ տարիքում նա կարող էր շատ բան մոռացած լինել, սակայն բացահյուտ է նաև այն, որ նա այդ պատասխանատու և պատվավոր պոստում գտնված ժամանակ շատ բաներ էլ պարզաւես չի իմացել, խորամուխ չի եղել գործին, որովհետև նրա նամակներում անճտություններ կան, որոնք չի կարելի սոսկ մոռացկոտությամբ բացատրել:

Երևանի զորաբաժնի կազմակերպումն սկսվել էր գեն. Սիլիկովի նշանակումից առաջ, 1917 թվականի նոյեմբերից, երբ Երևանում գումարվում էր հայ սպայության համագումարը (1917 թ. նոյեմբերի 20): Զորաբաժնի պետը հայրե-

նասեր խիզախ գնդապետ Դանիել բեգ Փիրումյանն էր, իսկ նրա շտաբի պետը՝ գնդապետ Ալեքսանդր Վերիլյանը: 1918 թվականի սկզբին, տուրք տալով գեներալամոլությանը, գեներալ Նազարբեկովը Երևանի գորաբաժնի հրամանատար է կարգում գեներալ Մոխսեյ Սիլիկովին, իսկ նրա շտաբի պետ՝ գնդապետ Զենկվչին, որը մինչ այդ Անդրանիկի հատուկ ջոկատի շտաբի պետն էր եղել և էրզրումից նահանջելուց հետո անցել էր Երևան:

Գեներալ Սիլիկովը շատ համեստ կարողության տեր զինվորական էր, բարեբախտաբար, նա նաև բավական համեստ բնավորություն ուներ: Նա իր մոտ պահեց որպես տեղակալներ թե՛ զորաբաժնի նախկին հրամանատար գնդապետ Դանիել բեգ Փիրումյանին և թե՛ շտաբի նախկին պետ գնդապետ Ալեքսանդր Վերիլյանին, որոնք և փաստորին ղեկավարեցին Սարդարապատի ճակատամարտը:

Դաշնակցական պարագուխներից Գևորգ Ղազարյանը դրվատելով բժ. Զավրիկի գործունեությունը նվաճված վիլայեթների կառավարչի տեղակալի պոստում, գրում է՝ «Ճակատից ոսւս զորքի հեռանալուց հետո նրան հաջողվում է կազմել Զեյթունի, Ս. Կարապետի, Խանասորի, Մակվի գնդերն ու գումարտակները և բավականաշատի միլիցիական խմբեր, որոնց անդամների թիվը հասնում է 3—4 հազարի» («Հառաջ», 1920 թ. ապրիլի 18, № 79): Բժ. Զավրիկի կազմած միլիցիական խմբերի մասին մենք արդեն գիտենք: Դրանց մեջ գլխավորը էրզրումի խումբն էր Արմենակ Միրոյանի գլխավորությամբ, որի մասին մենք բերեցինք դաշնակցական Սեպուհի կարծիքը: Բնորոշ է, որ դաշնակցականների ավելի քան երկամյա տիրապետության ժամանակ այդ միլիպետի անունը Ասվեց Հայաստանում: Իսկ Զեյթունցիների հեծյալ գնդի մասին, ինչպես տեսնում ենք, սպանիլ կարծիք է հայտնում գեն. Սիլիկովը: «Դուք ինքներդ գիտեք, — գրում է նա վեն. Նազարբեկովին, — որ Զեյթունցիների գունդը ոչ մի արժեք չուներ և մարտական գործողությունների մասնակցելու համար անպետք էր: Այդպիս էլ նա մասնակցություն չունեցավ մարտական գործողություններին»: Մենք կարող ենք

ավելացնել, որ բժիշկ Հ. Զավթիկի, այսինքն՝ դաշնակցության կազմակերպած զորամասերի մեջ, այնուամենայնիվ լավագույնը Զեյթունցիների այս հեծյալ գունդն էր և Մակվի գումարտակը, որոնք թեև Սարդարապատի կոփվներին շոշափելի մասնակցություն չունեցան, սակայն որպես միավոր պահպանվել էին մինչև կամացանիայի վերջը: Իսկ Ս. Կարապետի և Խանասորի մեծադղորդ անուններով կազմակերպված զորամասերի ո՛չ թե մարտական զործողությունների, այլև գոյության մասին ոչ ոք ոչինչ լսեց 1918 թվականին: Այդ գնդերը, կրկնում եմ, մեծադղորդ անուններով և հատուկ գեղեցիկ համազգեստով կազմակերպվեցին թիֆլիսում: Նրանց մեջ մտավ դաշնակցության այսպես ասած ուսկե երիտասարդությունը. դրանք դարձան դաշնակցության գվարդիան. այդ գվարդիականներն իրենց հարուստ և շատ գեղեցիկ համազգեստով հաղթանակներ էին տանում թիֆլիսում, քանի ճեմում էին Գոլովինյան պողոտայում, սակայն նրանց ամենալավագույն զորամասն անգամ, ինչպես վկայում է գեն. Սիլիկովը, ուսումնակատի համար «ոչ մի արժեք չուներ»:

Երևանի զորաբաժնի ամենամարտունակ գունդը 5-րդ գունդն էր, որ կազմվել էր դեռևս 1916 թվականի վերջերին, Ռևանդուզի հովից հետո: Պարսկաստան ետ բերված գեներալ Ռիբալենկոյի զորամասի մեջ մտնող Քեռու կամավորական գնդի արևելահայ զինվորներից առանձին հայկական գունդ է կազմակերպվում գնդապետ Պողոս (Պավել) Փիրումյանի հրամանատարությամբ: Գնդի կազմակերպումը ձգձգվում է 1916 թվականի վերջերից մինչև 1917 թվականը, երբ ընդհանրապես հայկական առանձին գնդեր կազմակերպելու հրամանն արդեն տրված էր: 1917 թվականին գունդը Պարսկաստանից փոխադրվում է Վան, որտեղ պահում է Աստանի ճակատը: 1917 թվականի երկրորդ կեսից ուստի զորքերն սկսում են լքել նաև Վանի ճակատը, որտեղ մնում են միայն 5-րդ գունդը և Լևոն Շաղյանի տեղական աշխարհագործները, ինչպես նաև գերմանական ծագում ունեցող մի քանի ուսաւական հրետանավոր սպա, որոնք նահանջող

ոուս զորքի ինքնադատաստանից խուսափելու համար հարել էին հայ զորքին, սակայն թուրքերի մոտենալու ժամանակ ձևի համար մի քանի արկ են արձակում, իսկ հետո անցնում են թուրքերի կողմը:

Տեսնելով, որ այդ սակավաթիվ զորքով հնարավոր չէ Վանը պահել, մանավանդ որ երգրումը արդեն ընկել էր, 5-րդ գունդը, որը հրամանատար գնդ. Պավել Փիրումյանի բաշակայության (արձակուրդի) պատճառով ղեկավարում էր փոխգնդապետ Տեր-Պողոսյանը, ընտրում է իր գնդային կոմիտեն՝ պոդպորուչիկ Սմբատ Զատիխյանի նախագահությամբ (ներկայումս՝ հին բոլշևիկ), ինքնակամ թողնում է Ոստանը, քաշվում Վան, ապա մարտի 20-ին բռնում է հգդիրի ճամփան: Նահանջի խառն ժամին վեճ է սկսվում Վանի լիազոր կոստյա Համբարձումյանին ենթարկվելու հարցի շուրջը: Թիմարի շրջանի Տոլաշեն գյուղում վիճը հասնում է զինված ընդհարման: Դաշնակցական սպաներ ժամհարյանը, Մելքոնյանը, Գասպարյանը, Հովհաննիսյանը, Աբրահամյանը, Խաչիկյանը, Միքարյանը և Հախնազարյանը 70 զինվորով անցնում են կոստյա Համբարձումյանի կողմը և նրա հետ նահանջում դեպի Պարսկաստան՝ անգլիական բանակին ապավինելու հույսով, իսկ գնդի մեծ մասը, շուրջ 700 սկին, իր հետ բերելով լեռնային հրանոթների մի մարտկոց (առանց հրետանավորների), Հին-Բայազետի վրայով նահանջում է Արարատյան դաշտ: Գումարտակների հրամանատարներն էին շտաբս-կապիտաններ Վարդան Զաղինյանը, Տաճատ Հովհաննիսյանը, Աղասի Հովհաննիսյանը, Կարապետ Սարգսյանը և Միքայել Օհանջանյանը: Գնդի բժիշկն էր՝ Աղամիրյանը: Սպաներ՝ պորուչիկ Ալեքսանդր Միքոյանը, պոդպորուչիկներ նիկողայոս Թոփչյանը, Սաքո Նահապետյանը, Աղասի Կոռնելյանը, Գրիգոր Շիրինյանը, Գրիգոր Մարգարյանը, Սմբատ Զատիխյանը, Թեհիկ Առաքելյանը, Տիգրան Ժամհարյանը, Շահենը (իգդիրցի), Արսեն Սարգսյանը, Հովհաննես Հովհաննիսյանը և Գառնիկ Հովհասափյանը կազմում էին գնդի մարտական կորիզը: Արարատյան դաշտը հասնելիս գնդապետ Պավել Փիրումյանը, որ ճանապարհների

փակ լինելու պատճառով չէր կարողացել օգտագործել իր արձակուրդը և մնացել էր Երևանում, ստանձնում է գնդի հրամանատարությունը: Նա իր հետ գունդ է բերում իր քրոջ տղային՝ պոդպորուշիկ Արրաջամ Կարապետյանին, իր եղբոր որդուն՝ պոդպորուշիկ Փիրումյանին, իր աղյուսանտ Զերքիշտյանին, տեղակալ՝ պոդպորուշիկ Վարձիկովյանին, Անդրկովկասյան բանակային երկրորդ համագումարին գնդից պատգամավոր գնացած և տարբեր ժամանակ արձակուրդ ստացած ու այդ ժամանակ Երևանում գտնվող պոդպորուշիկներ Ստեփան Թոփչյանին, Ախմոն Հակոբյանին, կապիտան Ստեփան Խաչատրյանին, Ղարաբիլիսայի գնդի սպաներ Մանասեր Մանասերյանին, Երվանդ Տեր-Միմոնյանին և ուրիշների:

Ապրիլի սկզբին 5-րդ գունդը, որի ղինվորների մեծ մասը դարձարացիներ էին, Զինգիլից իշնում է Արարատյան դաշտը:

Ղարաբաղցիների Թիֆլիսի հայրենակցական միությունը մուսավաթականների կողմից պաշարված Շուշի քաղաքին և Ղարաբաղի հայ գյուղերին օգնություն ցույց տալու նպատակով գնդապետ Շահնազարյանի հրամանատարությամբ Թիֆլիսի ղարաբաղցիներից գունդ-գումակ է կազմակերպում: Այդ գունդ-գումակը հասկանալի պատճառով չէր կարող Շուշի գնալ Եվլախի վրայով: 1918 թվականի սկզբին գունդը Թիֆլիսից դուրս է գալիս Ղարաբիլիսա-Դիլիջան-Սևանա ավազան ճանապարհով: Մարտ ամսին Սևանա ափին լնկած թուրքաբնակ Օրդաքու գյուղի մոտ մուսավաթականները հարձակվում են երկար ճաված գունդ-գումակի վրա և սպանում 30 հոգի: Երբ 5-րդ գունդը հասնում է Արարատյան դաշտ և շուրջ 7 հարյուր սվին կազմով կանգ առնում էջմիածնի գավառում, Օրդաքուի դեպքն արդեն տեղի էր ունեցել: Ղարաբաղցի ղինվորները տեսնելով, որ տուն վերադառնալու ճանապարհը փակ է, ինքնակամ գալիս համախմբում են 5-րդ գնդի շուրջը, մտնում նրա շարքերը: Այս գնդի շարքերն են մտնում նաև ինչ-ինչ պատճառներով Երևանում և նրա նահանգում գտնվող շատ ղարաբաղցիներ, գան-

ձակեցիներ և զանգեզուրցիներ, որոնց տուն վերադառնալու ճանապարհը նույնպես փակ էր: Այդպիսով, հակառակ այդ ժամանակվա անբարենպաստ հանգամանքներին, գնդի շարքերը ոչ թե նոսրանում, այլ ստվարանում էին: Սարդարապատի առաջին կովի օրը գունդը ուներ շուրջ 1000 սվին: Կովի երկրորդ օրը, մայիսի 23-ին, 5-րդ գնդին է միացվում նաև Ղարաբիլիսայի գնդի մեկ գումարտակը, 320 սվին, որը Սարդարամիշից նահանջելիս բաժանվել էր իր հիմնական գնդից և Կաղզվան-Կողբի վրայով նահանջել էր Արարատյան դաշտ և Սարդարապատի առաջին կովի օրը գտնվում էր Երևան քաղաքում: Այս 5-րդ գունդը, ավելի քան 1300 սվին կազմով, լինացին հրանոթների իր մարտկոցով և իր հատուկ գնդացրային վաշտով, Սարդարապատի կոփների գլխավոր հերոսն էր, այն հուսալի և անսասան միջուկը, որի շուրջը համախմբվելով թև էին առնում թվով նրանից ավելի շատ աշխարհազորայինները:

Սարդարապատի կոփների նախօրյակին գունդը զասավորված էր Ղուրդուղովի-Էջմիածին-Դաշբուռուն եռանկյան վրա: Մայիսի 22-ի առաջին վճռական ճակատամարտին մասնակցել է միայն վանից եկած հիմնական կազմը, իսկ մայիսի 24-26-ի կոփներին՝ նրա բոլոր գումարտակները: Վրաց թավագների և ադրբեջանական բեգերի հետ դաշնակցած Ս. Վրացյանը, նկատի ունենալով այս գունդը, Երևանի զորաբաժնի զորամասերի մասին կարճամիտ արհամարհանքով գրում է՝ «գնդերում իշխում էին ղինվորական կոմիտեները. բոլշևիկյան ոգին տիրող էր և նրանց մեջ: Ամեն օր պահանջներ էին ներկայացնում» («Հայաստանի Հանրապետություն», էջ 103): Հակառակ Վրացյանի դատողության, բոլշևիկյան ոգին ոչ թե խանգարեց, այլ ավելի նպաստեց գնդի մարտական ոգուն և ապահովեց Սարդարապատի փայլուն հաղթանակը:

Երևանի զորաբաժնում իր մարտունակությամբ երկրորդ տեղը բռնում էր գնդապետ Դոլուխանյանի 6-րդ գունդը, թվով շուրջ 800 սվին, որ հիմնականում կազմված էր դամարլվեցի ու սուրմալվեցի կադրային ղինվորներից, որոնք

ոռուսական բանակի քայլքայումից հետո տեսն վերադառնալու երկրորդ օրն իսկ երեանի Հայոց ազգային խորհրդի կոչով մտել էին այդ նորակազմ գնդի մեջ: Այս գումարը մասնակցել է Սուրբալվի կոփլներին, պահել է Պամարլվի ճակատը, մասնակցել է Սարդարապատի առաջին (մայիսի 22-ի) հաղթանակին, որից հետո մայիսի 23-ին փոխադրվել է Բաշ-Ապարան, որտեղ, ինչպես 5-րդ գումարը Սարդարապատի ճակատում, մինչև կամպանիայի վերջը հանդիսացել է այն անսասան միջուկը, որի շուրջը շարունակ համախմբված են մնացել ինչպես աշխարհազորայինները, այնպիս էլ բազմաթիվ խմբեր, որոնք գործում էին այդ ճակատում:

Բացառապես կադրային գինվորներից կազմված այդ գնդում նույնպես ուժիղ էր բոլցեկիյան ոգին, որը խիստ բարձրացրեց գնդի մարտունակությունը Հայ ժողովրդի վրա ծառացած ահեղ վտանգի օրերին: Բոլշևիկ սպա Բադիկ Բադիկյանը, — երկու տարի անց Մայիսյան ապստամբության նոր-Բայազետի հերոսն ու զոհը, — իր հարյուրյակով կովելով միշտ դժվարին տեղամասերում, անձնուրաց հայրենասիրության օրինակ էր ծառակում մյուսներին: Այդ գնդի գրչության դասակը դեկամբրում էր Պուկաս Պուկասյանը՝ Մայիսյան ապստամբության մյուս հերոսն ու զոհը: Այդ գընդումն էին ծառայում ներկայումս հին բոլցեկիներ էլիդում Թաղենույանը, Լյուդվիգ Հովհաննիսյանը, Գարեգին Պապյանը: Այդ գնդին կից ուղիուկայանն սպասարկում էին սպարտակիստներ Խորեն Տեր-Անդրեասյանը, Գուրգեն Ռոկանյանը, Դրիգոր Շահսուլարյանը, Խաչատուր Մանոյանը, Գարեգին Թումանյանը և ուրիշներ:

Խոսելով Երևանում կազմակերպված 6-րդ և մյուս մարտունակ գնդերի մասին, պետք է նշել, այն էլ դաշնակցական հայտնի պարագուի Ռուբեն Տեր-Մինասյանի բառերով, որ «Բացի Շահումյանի հետ այդ բանակցություններից, Երևանում գործակցություն կար բոլցեկիների հետ: Ասացի, որ Երևանը Կովկասյան Հայաստանի կեղրոն էր գարձած այդ ժամանակներում: Իսկ այդ կեղրոնի կեղրոնական անձն էր Արամը» (Ռուբեն, «Հայ հեղափոխականի մը հիշատակները»,

Հ. է, էջ 143), որը, ինչպես տեսանք իր տեղում, Ռուբեն Տեր-Մինասյանի, բժիշկ Զավրիկի և Արշակ Զամալյանի հետ ճգնում էր անցնել սովետական օրինտացիայի:

Թիֆլիսի բանակցությունների ձախողումից հետո Արամ Մանուկյանը, գաշնակցության՝ Թիֆլիս նստող պարագուիսների մեծ մասի կամքին հակառակ, կոմունիստ Պողոս Մակինցյանին ուղարկում է Բաքու՝ Շահումյանի և Մոսկվա Լենինի մոտ: Վատահ լինելով, որ Թիֆլիսում կիսանգարեն նրա ուղևորությանը, Արամ Մանուկյանը այդ ժամանակ սովետական օրինտացիայի կողմնակից Ռուբեն Տեր-Մինասյանին գրել էր հետևյալ նշանակալից երկուողը: «Ապահով անցկացրեք: Անհրաժեշտ է: Պետք է մենք ամեն կերպ միանանք Ռուստոմին» (Բաքվին): Քո էշը քշիր: Մեր մեջքը թե ամուր չինի, կը կրնակի 1915 թիվը» (Ռուբեն, «Հայ հեղափոխականի մը հիշատակները», Հ. է, էջ 143):

Իր տեղում տեսանք Ավ. Ահարոնյանի ձեռքով գրված Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի «Ահարոննդը»: Այն իր տարտամությամբ և անգործնականությամբ այնքան պերճախոս էր, որ նրա վրա հարկ չկար կանգ առնելու: Երևանի Հայոց ազգային և զինվորական խորհրդաների կոչը բոլոր կողմերով Ահարոնյանի «Ահարոննդի» հակապատկերն էր: Հունվարի հենց սկզբին նոր տարվա և ծննդյան տոների օրերին, անհիշապես արձագանքելով Ազգային խորհրդի զորակունին, գյուղական երիտասարդությունը մի քանի օրվա ուտելիք վերցրած, գնոլ-զուռնայով ճանապարհ էր ընկել դեպի Երևան ու էջմիածին: Սակայն Արամ Մանուկյանը գիտեր, որ իշխանության բացակայության ու կարգապահության թուլության այդ ժամանակաշրջանում սոսկ միայն գյուղական երիտասարդությամբ չէր կարելի գիտակցականորեն կարգապահ բանակ ստեղծել: Եվ Արամ Մանուկյանը ամենին շվախենալով մտավորական ուժի ներկայությունից բանակի շարքերում, ընդհակառակն, գիտակցելով այդ ուժի անհրաժեշտությունը,

¹ Ռուստոմը (Զորյան) 1918 թ. գործում էր Բաքվում և նապատել էր Բաքվի Հայոց ազգային խորհրդի համական զորքերը Բաքվի սովետի տրամադրության տակ գնելուն:

Երևանի Հայոց ազգային և դինվորական խորհուրդների իր իսկ ձեռքով գրած № 2 կոչի մեջ ասում էր.

«Մենք համոզված ենք, որ նակատի բայցայումը, հայ ծողովրդի ու կովկասի զլիխին ծանրացած վտանգը և Խոսաւտանի ազատության վտանգվիլը շատ մոտ են Հայ զիտակից տարրերի սրտին, որ նրանք շեն կամենա թշնամու երիվարների ոտքերի տակ նետել մեծ հեղափոխության փրկարաց սկզբունքները, ուստի և վստահությամբ կանչում ենք նրանց Հայ ժողովրդի ազատության դործին մասնակցելու (ընդգրծումները մերն են.— Հ. Թ.):

Ամենից առաջ ձեզ ենք դիմում, Հայ ուսանողներ ու աշակերտներ, դուք զեռ կյանքի խճճված պայմաններում շեք մեոցրել ձեր արյունը, դուք զեռ ապրում եք վասվոռն գաղափարների աշխարհում։ Ամենից առաջ ձեր սրտերումն է արձագանք գտնելու ժողովրդի փրկության կոչը։

Դիմում ենք և ձեզ, Հայ ուսուցիչներ, բժիշկներ, փաստաբաններ, ինժեներներ ու այլ մասնագիտության մտավորականներ։ Դուք մինչև այսօր ձեր շնորհըները ծառայեցրել եք ազգի խաղաղ կուլտուրական առաջադիմության։ Այսօր, երբ ուսադի շեփորն է հնչում, պիտի դուքս գաք ձեր առանձնասենյակներից և դեպի պատերազմական պահանջներ դիմեք։

Բաց ճակատով ենք դիմում ձեզ, փորձված Հայ մարտիկներ, դուք մեր ժողովրդի ամենանձնվեր պահապաններն եք և միշտ պատրաստ եք եղել զոհել ձեզ։ Այսօր կրկին ձեր դոներն է բաղխում Հայ ժողովրդի բախտը։

Երեանի Հայոց ազգային ու Զինվորական խորհուրդների
հատուկ կոմիտե։
(Հայկ. ՍՍՌ պետարշիվ, ֆոնդ 57, գործ 582, թեր 6):

Թուրքական արշավանքն սպառնում էր միաժամանակ թե՝ Հայ ժողովրդի փիզիկական գոյությանը և թե՝ ուսուցիչացի նվաճումներին։ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որ կենտրոնականն էր, անտեսեց այդ ռեալ ճշմարտությունը։ Երևանի Հայոց ազգային խորհուրդը, ընդհակառակն, լավ էր

հասկանում այդ ճշմարտությունը։ Ճիշտ է, նա ըստացակ սովետական իշխանության ուղիով, սակայն իր պայքարով հաստատագես դարձավ ուսուցիչն թաքվի ֆորպոստը։ Նրա կոչին հայկական բնօրբանում արձագանքեցին բոլոր կոմունիստները։ Երևանի բոլշևիկների ղեկավար Արշավիր Մելիքյանը գինվորական համազգեստ էր հագել և մտել աշխարհազորայինների շարքերը։ Նրա հետ սերտորեն կապված երիտասարդ կոմունիստները և սպարտակիստները, որոնց թիվն այն ժամանակ մեծ չէր, մտել էին զորամասերի շարքերը և օրհասական ժամին հերոսաբար կովում էին Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատներում։

Երևանի զորաբաժնում մարտունակ գնդեր էին ուսւագիտներ Սիլինի, Պերեկրյոստկովի և փոխգնդապետ Կորուկովի զորամասերը։

Ուսւագիտ Պերեկրյոստկովը* և կազակ փոխգնդապետ Կորուկովը 1918 թվականի հենց սկզբից Երևանում ձեռնամուխ են լինում առաջինը՝ պարտիզանական, իսկ երկրորդը՝ սահմանապահ գնդերի կազմակերպմանը։ Նրանք կարողանում են կարճ ժամանակամիջոցում իրենց շուրջը հավաքել տարբեր ուսադանակատներից արդեն տուն վերադարձ կազմակերպել մարտունակ զորամասեր։ Գնդապիտ Պերեկրյոստկովին հաջողվում է իր գնդի սվինների քանակը հասցնել շուրջ 800-ի։ Կազակ փոխգնդապետ Կորուկովն իր նորակազմ սահմանապահ գումար հանձնում է ուսւագիտ Սիլինին և ինքը ձեռնամուխ լինում հեծյալ պարտիզանական գնդի կազմակերպմանը։ Երկու գնդերն էլ կանգնած էին Սուրմալվում։ Սուրմալվի էվակուացման ժամանակ Պերեկրյոստկովի պարտիզանական գումարը անցումը կատարում է Մարգարայի կամուրջով, իսկ Սիլինի սահմանապահ գումարը, թվով մոտ 500 սվին, անցումը

* Դաշնակցականները շարունակ թմրկաներել են, թե 1915 թվականին հերոսաբար ինքնապաշտպանվող վանեցիներին առաջինը օգնության հասան Հայ կամավորական խմբերը։ Հայ կամավորական խմբերը 1915 թ. մայիսի 4/17-ին Վան հասել են գնդապիտ Պերեկրյոստկովի զորամասի հետ միայն

կտտարում է Կարակալայի գետանցով և մայիսի 21-ին, թուրքերի կողմից Սարդարապատի միօրյա գրավման ժամանակ դեռ զանգում էր Սարդարապատ գյուղից հարավ ընկած հայկան գյուղերում:

Կազակ փոխգնդապետ Կորոլկովին հաջողվում է լեզու գտնել հայկական աշխարհագորային խմբերի մասնակիցների հետ և կարճ ժամանակամիջոցում կազմակերպել պարտիզանական հեծյալ գունդ՝ գնդի կազմը հասցնելով շուրջ 400 ծիամլորի:

Կորոլկովի գունդը փոխադրվում է Բաշ-Ապարանի ճակատը: Ի դեպ, աշխարհագորայինների հետ ճիշտ լեզու էին պտել ուսա սպաներ Պերկերյոստկովն ու Սիլինը, որոնցից առաջինի գնդի հետախուզությունն իր հարյուրյակի վրա էր ստանձնել տրապիզոնցի Թոուցիկ Հովսեփը, իսկ երկրորդի գունդն ուժեղացված էր դուրդուղուեցի սպա Եգոր Տեր-Մինասյանի (Յաշոնց Յագորի) համապյուղացիններից հապճապորեն հավաքագրած հարյուրյակով:

Սարդարապատի ճակատամարտի օրերին Երևանի զորաբաժնի մեջ էր մտել նաև Երդնկայի գումարտակը, որը շարունակ գտնվել էր առաջավոր դիրքերում և շատ նոսրացած հասել էր Արարատյան դաշտը: Ալեքսանդրապոլից նահանջած Ղասարբաշյանի Երդնկայի և Մանիկի Մակովի գումարտակները վերադասավորման համար կանգ են առնում Կոշ գյուղում: Գումարտակներն իրար են միացվում երիտասարդ հմուտ գնդապետ Կարո Ղասարբաշյանի (Ղասան Փաշայանի) հրամանատարությամբ, որը կարողանում է ընդամենը չորս օրվա դադարից հետո կռվի դաշտ տանել 600—700 սվինից բաղկացած զորամաս, թեև այդ զորամասին չի վիճակվում շոշափելի մասնակցություն ունենալ պատմական կռվին: Մարդարայի գետանցը պաշտպանում էր եռանդուն կապիտան Երվանդ Մամաջանյանի կազմակերպած զորամասը, էջմիածին կայսրանի մոտ Զանգիբարին վերահսկելու համար կանգնած էին փոխգնդապետ Հակոբյանի սահմանապահ զումարտակը՝ մի քանի հարյուր սվինով և կապիտան Կլիշի Հրետանային մարտկոցը:

Գեներալ Սիլիկովը շատ բացասաբար է խոսում գնդապետ Զալինովի հեծյալ գնդի մասին: Գնդապետը գիորդիկայն խաչի արժանացած քաջ և հմուտ զինվորական էր: Ցարական բանակում ոչ-ուսա զինվորականները հազվադեպ էին արժանանում այդ բարձր շքանշանին: Երևանի ճնշաժամային օրերին դիկտատոր որոնելու ժամանակ տրվում է նաև այս քաջ զինվորականի անունը: Իսկ Սիլիկովը չէր սիրում խիզախ զինվորականներին, որոնք հաճախ նախաձեռնություն ցուցաբերելով շեղվում էին ի վերուստ գծված ծրագրից: Կուցե նաև այս է նրա բացասական կարծիքի հիմքը: Սակայն Զալինովին հաջողվում է իր զորամասի կազմը հասցնել 300 ծիամլորի և վճռական մասնակցություն ունենալ Բաշ-Ապարանի կոփվներին:

Երևանի զորաբաժնի փառքն ու պարծանքը հրետանին էր, ժամանակակից պատերազմի աստվածը: Սարդարապատում և Բաշ-Ապարանում գործող թնդանոթների թիվը մեծ չէր, ընդամենը 28, սակայն նրանց հրամանատարների մեջ կային ժողովրդի ծոցից ելած, հայ ժողովրդի ինքնապաշտպանությանը չերմորեն նվիրված տաղնդավոր զինվորականները: Բավական է ասել, որ հրետանավոր սպաների մեջ ամենակրտսերը՝ կրտսեր սպա Գևորգ Քրիստափորի Զայլախյանը սովետական բանակի շարքերում հասավ հրետանու գեներալի աստիճանի: Երկրորդ մարտկոցի հրամանատարը հույն Սակելլարին էր, հայկական ինքնապաշտպանությանը չերմորեն նվիրված մի սպա, որը մեծ հաջողությամբ մասնակցեց Սարդարապատի առաջին պատմական հակագրուն, ապա փոխադրվեց Բաշ-Ապարանի ճակատը: Սակելլարին իրեն շրջապատել էր ինտելիգենտ հայ հրետանավորներով, որոնց մեջ քիչ չէր կոմունիստների թիվը: Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրից Սակելլարին մտավ Կարմիր բանակի շարքերը և հրետանային գնդի հրամանատար էր տարբեր քաղաքներում: Իր կյանքի վերջին շրջանում, մինչև 1938 թվականը, նա սկզբով յան ամբողջ առավելյա պաշտպանության հրետանու պետն էր Օդեսայում: (Մահացել է 1941 թվականին):

Սակայն Սակելլարիից է՛լ ավելի անվրեալ էր կրակում քսաներեքամյա տաղանդավոր հրետանավոր կապիտան Կլիշը: Սարդարապատի և Բաշ-Ապարանի կոփվների օրերին ամենասիրված ու ամենատարածված անունները Սակելլարիի և Կլիշի անուններն էին, որոնք որտեղ որ երեսում էին, այնտեղ բերում էին հաղթանակի հավատ ու ոգեվորություն և ապահովում էին թշնամուն ջախչախելու գործը: 1921 թվականին կոմունիստական պարտիայի շարքերն ընդունվելու առթիվ լրացրած հարցաթերթիկում՝ «մայրենի լեզվից բացի ուրիշ ի՞նչ լեզուներ գիտեք» հարցին Կլիշը պատասխանել է «հայերեն, ապա թուրքերեն, գերմաներեն ու ֆրանսերեն»: Կլիշը ծնվել է Կարսում, հրետանավոր սպայի ընտանիքում, ավարտն է Թիֆլիսի սպայական դպրոցը: Կովկասյան ուղղմաձակատում Կլիշը մասնակցել է էրզրումի գրավմանը և շատ ուրիշ կոփվների: 1917 թվականի դեկտեմբերին նա յոթշաբաթյա արձակուրդ է վերցնում և ընտանիքը կարսից տեղափոխում է Երևան: 1918 թվականի հունվարի վերջերին նրա արձակուրդը լրանում է, սակայն Կլիշը չի կարողանում գտնել իր զորամասը, այն արդեն չկար, ետ էր քաշվել և կազմալուծվել: Կլիշը ներկայանում է գնդապետ Արարատյանին, որին հանձնարարված էր հայկական հրետանու կազմակերպումը, և նշանակվում է 5-րդ ու ապա առաջին մարտկոցների հրամանատարի օգնական, Ուլումանլվի ապատամբությունը ճնշելու ժամանակ, 1918 թվականի փետրվարին, նա աշքի է ընկնում իր անվոքալ հրետանաձգությամբ և նշանակվում առաջին մարտկոցի հրամանատար:

Կլիշի տաղանդը բնորոշելու համար բավական է ասել, որ նա Սովետական Միության մեջ առաջիններից արժանացավ հրետանու գեներալ-լիեյտենանտի բարձր կոչմանը: Սարդարապատի կափվների ժամանակ նա շարունակ Սարդարապատի ճակատումն էր Քյորփալուից սկսած մինչև Ղարաբուրունի բարձունքները: Կովի ժամանակ իր զինվորների հետ հայերեն խոսող ոռւս սիրված սպան, երբ հայ սպաներից շատերը հայերեն շգիտեին, առանձնահատուկ զերմություն էր ստեղծում իր մարտկոցում:

Բայց Կլիշից և Սակելլարիից ամեներն ետ չէին մնում հայ հրետանավոր սպաները: Պատերազմից առաջ մաթեմատիկայի ուսուցիչ, պատերազմից հետո երկար տարիներ նրեւանում բարձրագույն մաթեմատիկա դասավանդած Սերգո Աթանեսյանը միայն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ էր զինվորական դարձել և հրետանու կապիտանի աստիճան ստացել: Նա ամբողջ ժամանակ կովում էր Սարդարապատի ճակատում և կրակում էր բացառիկ ճշտությամբ: Սարդարապատի ճակատում իր մարտկոցն ուներ և լավ էր կովում գնդապետ Կարաքեշիշյանը: Սարդարապատի, իսկ վերջին երկու օրում Բաշ-Ապարանի ճակատումն էր կովում կապիտան Խորեն Իգիթիսանյանի մարտկոցը, որն ամենամեծն էր այդ օրերին: 5-րդ գունդը Վանից իր հետ բերած 4 լեռնային թնդանոթները, հրետանավոր սպա չունենալու պատճառով, տալիս է Խորեն Իգիթիսանյանին, որն այդպիսով ունենում է 10 թնդանոթ: Նրա աջ բազուկներն էին հրետանավոր սպաներ Բեկզադյանը և Սուլթան-շահը:

Գեներալ Սիլիկովն իր նամակներում շատ բացասարար է խոսում վանեցիների գնդերի մասին: «Յավոք սրտի, — զըրում է նա հունիսի 24-ի նամակում, — այդ բրիգադից Հին-Բայազետ հասան հազիվ 500—600 մարտիկ, որոնք հրածարվեցին առաջ գնալ և ես վերադարձան իգիր, որտեղ ես նրանց կանգնեցրի և հրամայեցի կարգի բերել: Իսկ սեպատեմբերի 7-ի նամակում ասում է. «Երկու գնդից Հին-Բայազետ հասավ հազիվ 400 սվին, իսկ մնացած բոլորն էլ դասալիքցին»: Այստեղ Հին Բայազետ հասած մարտիկների թիվը 100—200 սվինով պակասեցնելուց հետո գեներալը բարերախտաբար վերծիշում է, որ գնդերի մարտիկները ոչ թե հրածարվել են առաջ գնալ, ոչ թե ինքնակամ ետ են դարձել, որ ինքը հարկադրված լիներ կանգնեցնել նրանց իգիրում և հրամայել կարգի բերել, այլ էրզրումի անկումից հետո Վանի հարկադրական էվակուացիայի հետևանքով «5-րդ գնդի ետ գալու պատճառով, այդ 400 սվինն էլ Բայազետից վերադան իգիր»: Բայց այս կարևոր ուղղումը կատարելուց

Հետո էլ գեներալը չի ուղղում հունիսի 24-ի նամակում թույլ տված մի ուրիշ խոշոր սխալ: Այդտեղ ասված էր:

«Կարսի իրադարձություններից և մեր զորամասերի դեպի Ալեքսանդրապոլ նա քաջվելուց հետո (այսինքն՝ ապրիլի 25-ի զինադադարից հետո.—Հ. Թ.) ոչ մի բան տեղի չունեցավ Զուլֆայից մինչև Կարավան-Սարայի լեռնանցքը ձըդված ուղմանակատում»:

Ս. Վրացյանն անգամ, որ վանեցիների երկու գնդերի կազմը չափազանցելով հաշվում է «2500 սվին», գիտե, որ շվանի երկու գնդերը, որոնք զրավում էին Բարթուլյան բարձունքները, ապրիլի 27-ին ենթարկվեցին հարձակման թուրքերի կողմից, որոնք, հակառակ կնքված զինադադարին, փորձեցին այս կողմից խուժել Արարատյան դաշտը: Հայկական զրբերը ցույց տվին բուռն դիմադրություն» («Հայաստանի Հանրապետություն», էջ 117):

Իգդիրի և Զինգիլի միջև ընկած քրդական Օրդոֆ գյուղի մոտ տեղի ունեցավ կատաղի կոխվ, որի ժամանակ վանեցիների գունդը տվից 183 սպանված և միայն 19 վիրավոր: Այդ կոփին այն ժամանակ շատ մեծ իրարանցում առաջ բերեց Երևանում և նրա ղեկավար շրջաններում, և մենք կարծում ենք, որ գեներալի «մոռացկոտությունն» ունի իր տիսուր բացատրությունը:

Վանեցիների գնդերի մասին քիչ ավելի մանրամասն կիսում, որովհետև նրա օրինակը շատ բնորոշ է այդ օրերի վատառողջ մքնոլորտի և ուզմավարական սխալ կուրսի համար, որոնց դժբախտաբար, տուրք տալով գեն. Սիլիկովն այդպես բացասաբար է խոսում հիշյալ գնդերի մասին:

Վատառողջ մթնոլորտը արևմտահայի և արևելահայի տիսուր հակառակությունն էր, որի արմատները գուցե ավելի խորն էին, բայց անհեթեթ և տգեղ դրսերումներով երևան էր եկել 1915 թվականից, իսկ գեն. Նազարբեկովի ուղմավարական սխալ կուրսի պատճառով խիստ ուժեղացել էր 1918 թվականի պարտության օրերին:

Հակառակությունն այնքան մեծ էր, որ միևնույն պարտիայի շարքերում մնալով հանդերձ, իրար դեմ լարվել էին

նաև արևելահայ և արևմտահայ դաշնականներից ոմանք: Այսպես, 1917 թվականի մայիսի 6—15-ը Երևանում տեղի ունեցավ Արևմտահայ առաջին համագումարը: Կազմակերպիչներից և գլխավոր գեկուցողներից մեկը Արամ Մանուկյանն էր: Համագումարին մասնակցում էին 64 պատգամավոր, որոնցից 41-ը դաշնակցական, իսկ մնացած 23-ը ուսկավար, հնչակյան, սոցիալ-դեմոկրատ: Բայց չնայած դաշնակցականների ճնշող մեծամասնությանը, պատգամավորների մեծ մասը համառեց և Արամ Մանուկյանին, որպես արևելահայի, ընտրեց Արևմտահայ խորհրդի անդամ: Վահան Փափազյանին, որ միայն ծնունդով էր արևմտահայ, համագումարն ընտրեց Արևմտահայ խորհրդի և նրանից առանձնացված բյուրոյի նախագահ, իսկ Արամ Մանուկյանին, որ միայն ծնունդով արևմտահայ չէր, Արևմտահայ խորհրդի կազմի մեջ ընտրեց անգամ որպես նրա հասարակ անդամ: «Ինչ որ անկեղծ ցալով նկատեցի, — գրում է այդ առթիվ իր հուշերում Վ. Փափազյանը, — և այդ առթիվ արտահայտեցի իմ ցասումը, նեղմիտ մտայնությունն էր արևմտահայ համագումարի որոշ հոսանքներու և քանի մը ազդեցիկ անձերու — Արամին շուղեցին ընտրել, որովհետև ծագումով բուրքահայ չէր... Մարդ մը, որ իր գիտակցական տարիքին նվիրվեցավ թուրքահայ դատին... նետվեցավ անոր ազատագրական գործին, կրեց անհուն հոգեկան և ֆիզիկական տառապանք այդ ժողովրդին համար. բայց... ծագումով իրենցմեն շհամարկեցավ — անհեթեթ և անարդար էր» (Վ. Փափազյան, «Իմ հուշերը», հ. Բ., էջ 441):

Այս հակառակությունը կար նաև արևելահայերի Ազգային կենտրոնական խորհրդի և Արևմտահայ բյուրոյի հաջորդ Ապահովության խորհրդի միջև, որոնք կոչված էին համատեղ ջանքերով ղեկավարելու հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը 1918 թվականի արհավրալից օրերին:

Սարդարապատի կովի նախօրյակին արևելահայի և արևմտահայի, Արարատյան դաշտում և Երևանում այն ժամանակ տարածված ձևով «եռլականի» և «գաղթականի» տգեղ հակամարտությունն իր հաշող անդրադառն է գտել նախ-

րի Զարյանի «Պարոն Պետրոսը և իր նախարարները» վեպի մեջ: Այդ վեպում Սարգարապատի ճակատամարտի նախօրյակին Երևանում անընդհատ գոմարվող ժողովներից մեկում սրեւրածայ դաշնակցական Վելիխանը մինչև վերջին շունչը դիմադրություն պահանջող մի արևմտահայի վրա գոռում է ասելով: «Էսի՛ր, գաղթական, այս բոլորի համար դուք եք մեղավոր: Զեր Երկիրը քանդեցիք, զիմա էլ ուզում եք այստեղ քանդել» (էջ 203): Կապիտովյանտական տրամադրությամբ սոգորված Վելիխաններն արևմտահայերի համառությունը կուրած լինելու համար այդ օրհասական օրերին նողկալի բամբասանքներ էին տարածել արևմտահայերի ամենաբազմամարդ զորամասի՝ վանեցիների զնդերի մասին: Արևմտահայ դաշնակցականների օրգան «Աշխատանք» թերթը հարկադրված եղավ ուղղմանակատից ուղարկված «խումբ մը զինվերներ»-ի նամակով «զայրույթ ու քամահրանք» հայտնել «Երևանի մայթերը չափչփողներու» կամ տաքուլ սենյակները նստող «ազգային գործիչներուն», այսինքն՝ վելիխաններին, որովհետև «գեռ մեր թանկ զոհերու հիշատակը մտքերնու մեջ թարմ լուրեր կուգան Երևանին, որ զանազան շրջանակներու մեջ վանյան Բ. գունդը կհամարվի դավաճան ու դաստիք, որովհետև անոր զինվորներն իրը թե լրելով Օրգոֆը՝ կոնակ դարձուցեր են թշնամին» («Աշխատանք», Երևան, 1918 թ. մայիսի 2, № 99):

Կարևորն այստեղ այն չէ, որ գեն. Սիլիկովը հայերին շփիտեր և չեր կարող կարդալ այս հերքումը, այլ այն, որ նա նույնպես, ելնելով արևմտահայ զինված ուժերի գեմ Սարիղամիշի դավը կազմակերպած ուսակցիոն զեներալների քաղաքականությունից, Արարատյան դաշտումն էլ փորձեց վարել այդ կործանարար քաղաքականությունը, սակայն Արարատյան դաշտում այլ էր ուժերի փոխհարաբերությունը և նա, բարեբախտարար, ի վիճակի շեղավ մինչև վերջը հասցնելու արևմտահայ զինված ուժերին վարկարեկելու և ցրելու նապարբեկովյան սխալ գիծը:

Վանեցիների զնդերը կամավորության սկզբունքով կաղմակերպվեցին 1918 թվականի հունվար-փետրվարին, Երե-

վանում, և պետք է մտնեին Անդրանիկի զորաբաժնի մեջ: Առաջին գնդի հրամանատարն էր գնդ. Յուզբաշեր, երկրորդինը՝ ախալցխացի գնդապետ Զարուխչեր (թեև Սիլիկովը այս ազգանունը երբեմն շփոթում է): Երկու գնդի կազմը միասին 1200 սվին էր: Գումարտակների և վաշտերի հրամանատարները կադրային սպաներ էին, սակայն կադրային սպաներից բացի վաշտերում կային նաև Վանի ինքնապաշտպանության զիրքապետները, որոնք կադրային սպաների՝ փաստորեն միանգամայն շեղոքացված օգնականներն էին: Գնդերը պիտի գնային Վան, սակայն Հին Բայցպետից, որտեղ նրանք հասել էին լրիվ կազմով, 1200 սվին, ոչ թե ինքնակամ ետ դարձան, այլ Վանի էվակուացման պատճառով ետ կանչվեցին և պահվեցին Սուրմալվի գավառում, որտեղ նրանց վաշտերը ապրիլ ամսին պահպանում էին Զինգիլի լեռնանցքը, Օրգոֆ գյուղը և Արճաջի սարերը: Ապրիլի սկզբին, Սարիղամիշի մեր հիշատակած դավի հետ միաժամանակ, գունդը պաշտոնապես հանվեց Անդրանիկի զորաբաժնից և լրիվ ենթարկվեց Երևանի զորաբաժնին, որի հրամանատարն էր գեն. Սիլիկովը: Այս փոփոխությունից հետո դիրքապետ-խմբապետները, որոնք վառող տեսած մարդիկ էին և վայելում էին զինվորների հարգանքն ու սերը, տուն ուղարկվեցին: Գնդում տերուտնօրեն մնացին միայն կադրային սպաները: Ապրիլի 28-ին գնդերի պաշտպանած գիրքերի վրա միաժամանակ հարձակում գործեցին թուրքական 5-րդ դիվիզիան, Մասսի լանջերին ապրող ջալացի քրդերը և Արճաջի սարերը քաշված տեղական թաթարները: Երկրորդ գնդի հրամանատար գնդ. Զարուխչեր կայանը քրդական Օրգոֆ բարձրագիր գյուղն էր Իգդիրից Զինգիլի լեռնանցքը տանող միակ և հույժ կարևոր ուղղմական ճանապարհի վրա: Պատերազմի սկզբից՝ 1914 թվականից Օրգոֆի մուսուլման քրդերը լքել էին իրենց գյուղը և ամբողջ 4 տարի գյուղն ամայի էր: Ապրիլի 28-ի առավոտյան, երբ Զինգիլի լեռնանցքից հարձակման է անցնում թուրքական 5-րդ դիվիզիան, Օրգոֆի քրդերը, որոնք մինչ այդ ապաստանել էին Արարատի լանջերին ապրող ջալացի քըրդերի մոտ, օգտվելով թանձր մառախուղից, մտնում են իրենց

գյուղը և ծոծրակին կրակելով սպանում իր բնակած տնից դուրս եկող գնդապետին։ Գնդ. Զարուխչի տեղակալը ազգությամբ գերմանացի փոխնդապետ Կիտերն էր, որը ոռւսերեն շիմացող իր վանեցի զինվորների հետ խոսում էր կոտրատված թուրքերենով։ Ահա այս գերմանացին գնդապետ Զարուխչի սպանության լուրն առնելով, անմիջապես ընդհանուր նահանջի հրաման է տալիս և ինքն էլ շտապում է իգդիր՝ ամեննեին հոգ շտանելով, որ իր հրամանը հաղորդվի աշ և ձախ թևերում գտնվող վաշտերին։ Զինգիլի լեռնանցքում գտնվող վաշտը շկարողանալով դիմանալ թուրքական ծ-րդ դիվիզիայի գրոհին, արդեն ետ էր նահանջուա։ Այդ վաշտը կորուստներ տալով հասավ իգդիր։ Իսկ ձախ թևում՝ Արհաջի լեռներում գտնվող վաշտը, որը վերահսկում էր Արարատի լանջերին ամրացված տեղական թաթարներին, նահանջի հրամանին անտեղյակ, մնում է իր տեղում և շրջապատման մեջ ընկնելով առաջացած ջալացիների և թուրքական 5-րդ դիվիզիայի առաջապահ գումարտակների կողմից, համարյա ամբողջովին կոտորվում է անհավասար մարտում։ Թուրքական հարձակումն սկսվել էր ապրիլի 28-ի լուսարացին։ Բրիգադի հրամանատար գնդապետ Ն. Բագդասարովը հրետանին գործի է դնում միայն կեսօրից հետո։ Ինչո՞ւ Որովհետև նա համառորեն չէր ուզում հավատալ, որ թուրքերը խախտել են զինադադարը և հարձակում են սկսել, թեև իգդիրի իր կայանի դիրքն այնպես էր, որ նա այդ ամենը կարող էր տեսնել անդամ անդեն աշքով։

Այդ կովում վանեցիների գնդերը մեծ կորուստ կրելով՝ ամրացան իգդիրի մոտակա Սուլթանաբադի խրամատներում։ Շրջապատման մեջ ընկած երկրորդ վաշտի բեկորները ապրիլի 29-ի գիշերը մի կերպ հասան գնդերի դասավորության նոր շրջանը։ Երկու օր հետո Վանի ինքնապաշտպանության ղեկավար Արմենակ Եկարյանի գլխավորությամբ Երևանից եկան մի երկու շաբաթ առաջ տուն ուղարկված դիրքապետները։ Գնդերն անմիջապես ոգի առան և աշխուժացան։ Կիտերի գլխի վրայով, դիրքապետների առաջնորդությամբ, նըրանք առաջ շարժվեցին և գնացին սպանվածների դիակները

բերելու։ Այդ սիրագործությունը նրանց միաժամանակ Հնարավորություն տվեց վերագրավելու իրենց նախկին դիրքերի մեծ մասը։

Մայիսի սկզբին վանեցիների գնդերը, արդեն մեկ հազար սվին մնացած, վերակազմավորման համար բերվեցին Երևան, որտեղ մեկ-երկու օրով տուն արձակված զինվորների մի մասը գունդ շվերադարձավ։ Գեներալ Սիլիկովի հիշտակած դասալքությունը, այսպիսով, տեղի է ունեցել ո՞ւ թե Հին Բայազետ գնալու ճանապարհին, այլ Օրգոֆի կովից հետո՝ Երևան քաղաքում։ Ինչո՞ւ Որովհետև այդ գնդերը կազմվել էին շատ հապճեպ՝ հայրենիք վերադառնալու կոչով և նրա շարքերում, բացի Վանի փառավոր ինքնապաշտպանության մասնակիցներից, մտել էին ինչպես ալեհեր գյուղացիներ, այնպես էլ 15—16 ամյա անփորձ պատանիներ։ Գնդի շարքերը շվերադարձան հենց այդ ալեհերները և դեռահասակները։ Դրանից գունդը միայն շահեց, նրա շարքերում մնացին 800 գիտակից խիզախներ, որոնք թեև չեն մասնակցել ո՞չ Սարդարապատի և ո՞չ էլ Բաշ-Ապարանի կոիվներին, սակայն շատ մեծ գործ են կատարել Ղամարլու—Յուվայի ճակատուն և Դիլիջանի ձորում։ Գունդը մարտական դարձավ միայն այն բանից հետո, երբ գերմանացի փոխնդապետ Կիտերը և կադրային ուրիշ սպաներ հանվեցին գնդից և այն հանձնվեց թուրքական ծառայության սպա՝ շատախցի Տիգրան Բաղդասարյանին (ՀՀփոթել բրիգադի նախկին հրամանատար գնդն, Բագդասարովի հետ)։ Նոր հրամանատարը գնդերը և իո հետ Վանից բերած 150 զինվորներին միացրեց և մեկ գունդ դարձեց, ետ կանչեց Վանի ինքնապաշտպանության դիրքապետներին, ընդլայնեց նրանց իրավունքները։ Այս ամենը նա կատարեց ընդամենը երեք օրում, և 800 սվինից բաղկացած մարտունակ գունդը, որի ղեկավարների մեծ մասը իսկական սնայպերներ էին, տարապ Ղամարլու—Յուվայի շըրջանը։ Սարդարապատի ճակատամարտերի օրերին գունդը մեծ հաջողությամբ կովում էր, որի կողմից, Բոյուք Վեդիով բռն դրած մուսավաթականների ղեմ, իսկ մյուս կողմից՝ պաշտպանում գետանցը, թույլ շտալով, որ թուրքական 5-րդ

գիվիդիան անցնի Արաքսի ձախ ափը և միանա Բոյուք Վեդիի մուսավաթականներին:

Բաթումի հունիսի 4-ի պայմանագրով թուրք զորքը Դիլիջանի ձորով Գանձակ գնալու իրավունք էր ստացել: Գեներալ Սիլիկովը Ղամարլու—Յուլայի շրջանից, որն արդեն պայմանագրով անցնում էր թուրքերին, վանեցիների գոմզը վերցնում և ուղարկում է Դիլիջան: Հունիսի կեսերից մինչև նոյեմբեր թուրքական շատ զորք անցակ Դիլիջանի ձորով, սակայն այդ հինգ ամիսների ընթացքում Դիլիջանի ձորով անցնող թուրքական և ոչ մեկ զորամաս, քաջ գիտենալով, որ ձորք պաշտպանում է վանեցիների գունդը, սիրտ շարեց գըծված կարգը խախտելու և վնաս պատճառելու որեւէ հայ զուղի կամ անհատի, այնինչ Արարատյան դաշտում նրանք քանիցս փորձեցին խախտել պայմանագրով գծված սահմանը:

1918 թվականի առաջին կեսին, հիմնականում մուսավաթականների դիվերսիայի ղեմ պայքարելու համար, ինքնապաշտպանության բազմաթիվ խմբեր էին գոյացել Բաշ-Գառնիից մինչև Բաշ-Ապարան և Սևանա ափից մինչև Սուրմալու: Այդ խմբերը, նայած անհրաժեշտության, աճում էին ու նվազում, սակայն նրանց հիմնական կորիզը միշտ մնում էր. ժողովուրդը ճանաշում էր նրանց դեկավարներին և աղետի մեծանուն դուդընթաց ապավինում էր նրանց ու համախմբվում նրանց շուրջը: Դասալքությունը, որի մասին խոսում է Սիլիկովը և զեն, Նազարեկովին էլ իրոնիայով հայտնում, թե այդ երեսութեար քաջ հայտնի է ձեզ էլ, բացատրվում է ոչ միայն այն բանով, որ հայ զինվորը չէր հավատում՝ իր «ղեկավարներին», այլ նաև այն բանով, որ ավելի մոտիկ ուազմաճակատը, այսինքն՝ ուազմաճակատի վերածված նրա գյուղը, նրան հրամայաբար թելադրում էր շգնալ ավելի հեռավոր ուազմաճակատը, այլ զենք ստանալ և զինված վերադառնալ իր տունը: Երևանի զորաբաժնի հրամանատարը պետք է մտածեր այս ուղղությամբ: Նա ասում է, որ «Երևանի բնակչության խիստ հուզված լինելու պատճառը եմ իմ շտարը փոխադրեցի էջմիածին»: Կարող ենք բաց անել փակագծերը և հիշեցնել, որ Զանգիբարի ան-

Հանգստության պատճառով ոչ միայն ընդհատվել էր երկաթուղային երթևեկությունը, այլև վտանգավոր էր դարձել երևան-էջմիածին խճուղին: Փոխգնդապետ Հակոբյանի պահակային գումարտակը շարունակ հակում էր Կարսուն և Մեհմանդար գյուղերի վրա, որ հնարավոր լիներ օգտագործել մոտակա էջմիածին կայարանը: Գեներալ Սիլիկովն իր շտարը էջմիածին էր փոխադրում, որպեսզի անխափան կապ ունենար իգդիրի և Ալեքսանդրապոլի հետ, քանի դեռ վերջինս չէր ընկել: Նման պայմաններում ճիշտ կիրակ արդյոք ինքնապաշտպանության խմբերի ցրումը: Դժբախտաբար ո՛չ Այդ խմբերը ոչ միայն մասնակցեցին Սարդարապատի հերոսամարտին, այլև նախապես արմատախիլ էին արել զիվերսիայի ամեն մի փոք, որի վրա այնքան մեծ հուզմունք էին դրել թուրքերը Արարատյան դաշտը ներխուժելուց առաջ:

Գեներալ Սիլիկովից թե՛ շատ ավելի հմուտ ու զիտուն և թե՛ հայկական ինքնապաշտպանության գործին շատ ավելի նվիրված զեներալ Ղորդանյանը (Կորդանովը) այդ առթիվ գրում է. «Անդրկովկասյան կառավարության ստիպողական պահանջին վրա ընդհանուր հրամանատարը ապրիլի 15-ին զորավար Նազարեկյանին տված հրահանգով կարգիշեր պատժիչ արշավախմբեր ուղարկել մահմեղական ազգաբնակչության դեմ... Այս կարգադրությունները վերջնականապես կիրորակեն բարոյական կորովը զորքերու, որոնք ժողովված էին հրոսակախմբերու հրամայականությանը ենթակա վայրերին: Ցուրաքանչյուր զինվոր կագութեր վերադառնալ տուն՝ զենքով պաշտպանելու իր օջախը, վասնզի իրականության մեջ չկար ոչ իշխանություն, ոչ ալ կառավարություն, որոնք կարող լինեին ստանձնել այդ պարտականությունը» («Հայրենիք», 1928 թ., № 3, էջ 123):

Գեներալ Սիլիկովը չի զնահատում աշխարհագորայինների մասնակցությունը: Թեև իր ժամանակին տպված հաղորդագրությունների մեջ նա «կամավորների» մասին ասում է մի երկու ժեատ խոսք, սակայն պատճեան համար իր նամակները գրելիս միանգամայն ուրացել է նրանց: Բերենք մի ցայտուն օրինակ:

Սարդարապատի ճակատում թուրքերը մայիսի 24—25-ին երկրորդ անգամ հարձակում են ձեռնարկում, երբ գեներալ Սիլիկովը երկու օր առաջ 6-րդ գումզը, կաղակ փոխգնդապետ Կորուկովի հեծյալ գումզը և կապիտան Սակելյարի մարտկոցը Սարդարապատի ճակատից վերցրել և փոխադրել էր Բաշ-Ապարանի ճակատը։ Դրանց փոխարեն գեն. Սիլիկովը Սարդարապատի ճակատն է ուղարկում Կոչ գյուղում վերակազմավորված Հասան Փաշայանի գումարտակը։ «Քարտեզի վրա,— գրում է նա, մատնացույց անելով բարձունքները, որտեղ մինչ այդ ամրացել էին թուրքերը,— Հասան Փաշայանի զորամասին հրամայեցի մեկ գիշերվա ընթացքում շրջանց կատարել և դուրս գալ ճակառակորդի թիկունքը»։ Կոչ գյուղից, որտեղ գտնվում էր այդ զորամասը, դեպի ամենամոտակա՝ 440-րդ բարձունքը ուղիղ գծով 35 կիլոմետր է։ Զորամասը պիտի շարժվեր շրջանց ճանապարհով Արագածի ստորին լանջերով։ Այդպիսով հեռավորությունն ավելի է մեծանում՝ հասնելով 45—50 կիլոմետրի։ Եթե Հասան Փաշայանի զորամասին, որ հեծելազոր չէր, հաջողվեր անգամ մեկ գիշերվա ընթացքում կտրել այդ մեծ տարածությունը, ապա տեղ հասնելով նա միանգամայն անպետք կլիներ մարտական հաջող գործողության համար։ Թուրքերը գերճողնած դրոքին հեշտությամբ կկոտորեին։ Բայց գեն. Սիլիկովն ասում է, որ «մայիսի լույս 28-ի գիշերը այդ գումարտակները մաները կատարեցին և մայիսի 28-ի ցերեկվա ժամը 1-ին թուրքերը հապճապորեն դատարկեցին դիրքերը և նահանջեցին 5-րդ ու պարտիզանական գնդերի ճնշման տակ» (փակագծերի մեջ ասենք, որ 1918 թվականին նոր էր մտցվել նոր տոմարի գործածությունը, որը կայուն իշխանության բացակայության պատճառով ընդհանրական չէր դարձել. այս հոդի վրա օրերի անձտություններ կան։ Մեզ հաջողվել է պարզել, որ մայիսի 27-ից հետո Սարդարապատի ճակատում այլևս մարտական գործողություններ չեն եղել. այստեղ խոսքը վերաբերում է մայիսի 26-ին), 5-րդ և պարտիզանական գնդերի առանձին գումարտակները, իրոք, մայիսի 27-ին արդեն գրավել էին հիշյալ բոլոր բարձունքները։ Բայց նրանք էլ այդ բարձունք-

ները գրավել էին շհանդիպելով որևէ դիմադրության։ Աթանեսյանի և Կլիշի ճրետանին լսեցրել էր ճակառակորդի հրետանային և գնդացրային կրակակետերը։ Հնչակյան Պանդուխտը (Միքայել Սերյան) երկու հարյուր մշեցիներով իշել էր Մաստարայից ու Վերին Թալինից և ընդհանուր ոգմորության պայմաններում համալրելով իր շարքերը, մայիսի 26-ին թիկունքից հարվածել էր 440-րդ բարձունքի վրա ամրացած թուրքերին, կոտորել, գերել ու ոշնչացրել էր նրանց՝ նախքան հայկական կանոնավոր զորքը կհասներ կովի վայրը։ Խոսելով Սարդարապատի ճակատում մղված այդ վերջին կովի մասին՝ Վարազդատ Թուչունյանը «Ծագմիկ» թերթում գրում է. «Մեր թնդանոթները մեր շղթայի հետեւից ոմբակոծում էին թուրքերին, Պանդուխտը իր 200 հոգի մշեցի ձիավորներով աշից հարվածում էր օսմանցիներին, խելել էր նրանցից մի թնդանոթ և գերի էր վերցրել 4 օսմանցի սպա։ Սարդարապատի մոտ գլխավոր շղթան առանց մի գնդակ արձակելու և առանց մի զոհ տալու մոտեցավ բլուրին, թուրքերը սարսափած, փախան, թողնելով դիակներ և բազմաթիվ վիրավորներ... Այդ վերջին կովին, ասացի, ոչ մի զոհ չենք տվել, միայն թեթև կերպով վիրավորվել էր մի տեղեփոնիստ» («Ծագմիկ», 1920 մայիսի 28, № 3, էջ 10—11)։

Գեներալ Սիլիկովն իր նամակներում ցուցաբերում է նաև տարօրինակ անիրազեկություն։ Սարդարապատի մայիսի 22-ի կովի մասին նա ասում է, որ մարտը արդյունք չտվեց։ Մայիսի 21-ին գրավելով Սարդարապատ գյուղն ու կայարանը, թուրքերը մայիսի 22-ին հասել էին Ղամշլու կիսակայարանը։ Հայ զորքն ընդհանուր հարձակման է անցնում կեսօրից հետո և թուրքերը ջարդված նահանջում են մոտ 20 կիլոմետր, թողնում են Գելըլու, Սարդարապատ գյուղերը և կայարանը ու ամրանում Արաքս և Կարաբուրուն գծամասից հյուսիս ընկած բարձունքների վրա։ Այս մարտն էր, որ թնդաց, խանդավառեց և ոտքի հանեց բոլորին՝ հաղթանակի հավատ ներշնչելով անգամ հոնետես գեն. Սիլիկովին։ Գեներալ Սիլիկովը ճիշտ չեն երե, երբ գրում է՝ «թուրքերի հետ առաջին հանդիպական մարտը Դրոն ունեցավ Բաշ-Ապարանի մոտ»։ Բաշ-Ապարա-

նորի անցնող ամբողջ խճուղային ճանապարհի վրա ոչ մի հայ ուրբ շկար, Այդ խճուղու վրա թուրքերին դիմագրություն ցույց տալու փորձը նույնպես կատարվել է մայիսի 22-ին, Քյուլուզա գյուղի մոտ, տեղական աշխարհազորայինների նախաձեռնությամբ: Դրան այդ ճակատն է ուղարկվել միայն մայիսի 23-ին, այսինքն՝ Սարդարապատի պատմական ճակատամարտից հետո, որը հաղթանակի և փրկության հույս ներշրջելով՝ այդ ճակատն ևս ամրացնելու անհրաժեշտություն էր առաջ բերել:

Այսպիսով, պատմությունը գալիս բախում է գեներալ Մոխոնյ Սիլիկովի դռները և ուզում է նրան մատուցել բազմաշարժար հայ ժողովրդի փառավոր հաղթական գոյամարտի դափնին, իսկ նա ճգնում է նսեմացնել այդ կովի և հաղթանակի արժեքը, ասելով, թե «դա շատ է շափազանցված»:

Այս նամակների ուշադիր ընթերցումը հիմա, երբ մենք արդեն գիտենք, թե ինչ հոյակապ հաղթանակ էր դա, մեզ հանգեցնում է այն հաստատ համոզմանը, որ գեն Սիլիկովը ո՛չ այդ հաղթանակի կազմակերպիչն ու նախապատրաստողն է եղել, ո՛չ էլ նրա իսկական հերոսը: Սարդարապատի հաղթանակը դարձնել է հերոսացած ամբողջ ժողովուրդը— հայ զորքն ու աշխարհազորայինները— ուղմաճակատի հրամանատար գնդապետ Դանիել բեգ Աբիսողոմի Փիրումլանի ղեղավարությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան

1. Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և հայ ժողովրդի բաղադրական մեկուսացումը	3
2. Հայկական զորքի կազմակերպումը	20
3. Թուրքական արշավանքը	42
4. Ալեքսանդրապոլի անկումը	62
5. Սարդարապատի ժողովրդական պատերազմը	108
6. Բաթումի «հաշտությունը» և նրա հետևանքները	123
7. Սարդարապատի հերոսամարտը դաշնակցության ծուռ հայելու մեջ	169
8. Գեն Սիլիկովը Երևանի զորարածնի և նրա մարտական գործողությունների մասին	221
	232

Թուրշյան Հարուրյան Գևորգի

Սարդարապատի հերոսամարտը

Խմբագիր՝ Աշոտ Հովհաննիսյան
Հրատ., խմբագիր՝ Ս. Կ. Խաչատրյան
Նկարիչ՝ Լ. Հ. Մանասերյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Խուդիկյան
Տեխ. խմբագիր՝ Ե. Ա. Ալիմրյան
Վերստուգող սրբագրիչներ՝ Ե. Ս. Զարեհյան,
Ժ. Գ. Միրզոյան

«Հ» 05225

Պատկեր 271

Տիրամ 10 000

Հանձնված է արտադրության 25/II—1965 թ.:

Ստորագրված է տպագրության 30/VI 1965 թ.:

Թուղթ՝ 84×108^{1/32}, տպ. 17 մամ.=13,94 պայմ. մամ., հրատ. 11,9 մամ.,
Գինը՝ 50 կուլ.:

ՀՍՍՌ Մինհստրների սովորի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆ
արդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան,
Ալավերդյան փող. № 65: